

ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Երևան
Արդարադատության ակադեմիա
2020

ՀՏԴ 347
ԳՄԴ 67.410
Մ 586

**Հրատարակության Է երաշխավորել
Արդարադատության ակադեմիայի գիտական խորհուրդը**

Մեղոյան Ս.Գ. – իրավ. գիտ. թեկն., ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

Մեղոյան Սերգեյ

Մ 586 ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ /
Ս. ՄԵՂՐՅԱՆ: Եր., Արդարադատության ակադեմիա, 2020: - 341
էջ:

Մասնագիտական խորհրդատուներ՝

Խունդկարյան Ե.Հ., ՀՀ վճարելի դատարանի նախագահ
Մկրտչյան Ա.Ս., ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի
նախագահ

Մարկոսյան Տ.Ա., ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի
ասիստենտ, իրավ. գիտ. թեկն., ՀՀ ՏՄՊԴՀ անդամ

Գրախոսներ՝

Հովհաննիսյան Վ.Վ., ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Չոհրաբյան Ա.Գ., ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, իրավ.
գիտ. թեկն.

Մենագրությունում ՀՀ և այլ երկրների քաղաքացիական դատավարության օրենսդրության, ՄԻԵԴ վճիռների, ՀՀ սահմանադրական դատարանի, վճարելի դատարանի որոշումների, դատական պրակտիկայի այլ նյութերի, ինչպես նաև տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են քաղաքացիական դատավարությունում ապացուցման տեսության մի շարք արդիական հիմնախնդիրներ: Տրված է ապացուցման, ապացույցների և ապացուցման միջոցների ընդհանուր բնութագիրը, քննարկվել են ապացուցման առարկային, ապացուցման պարտականությանը, ապացույցների վերաբերելիությանը և թույլատրելիությանը, հետազոտմանը և գնահատմանը, ապացույցների առանձին տեսակներին վերաբերող հարցերը, վեր են հանվել ներկայումս գործող իրավակարգավորման թերություններն ու բացթողումները, կատարվել են ինստիտուտի հետագա զարգացման ուղղված որոշ առաջարկություններ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել դատավորների, դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ապացուցման հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 347
ԳՄԴ

67.410

ISBN 978-9939-9240-1-4

© Մեղոյան Ս. Գ., 2020

© Արդարադատության ակադեմիա,

2020

ԲՈՎԱԼԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	7
ԳԼՈՒԽ I.	
ԴԱՏԱԿԱՆ ԱՂԱՑՈՒՑՈՒՄ.....	9
§1. Դատական ապացուցման հասկացությունը և նպատակը: Ապացուցողական գործունեության տարրերը.....	9
§2. Ապացույցների հասկացությունը և դասակարգումը	12
2.1. Ապացույցների հասկացությունը և հատկանիշները	12
2.2. Ապացույցների դասակարգումը.....	20
§3. Փաստեր վկայակոչելը որպես ապացուցողական գործունեության տարր.....	31
§4. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և ապացուցման առարկան...44	
4.1. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի և ապացուցման առարկայի հասկացությունը.....	44
4.2. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմը.....	47
4.3. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը կազմավորելու աղբյուրները..	54
§5. Ապացուցելուց ազատելու հիմքերը.....	63
5.1. Հանրահայտ փաստեր.....	64
5.2. Նախադատելի փաստեր.....	66
5.3. Նոտարական կարգով հաստատված փաստեր.....	75

5.4. Անվիճելի փաստեր.....	80
§6. Ապացուցման պարտականությունը.....	84
6.1. Ապացուցման պարտականության հասկացությունը, ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական նշանակությունը.....	84
6.2. Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնները.....	91
6.3. Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնները (ապացուցողական կանխավարկածներ).....	105
§7. Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը.....	115
§8. Ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու դատավարական կարգը.....	122
8.1. Ընդհանուր դրույթներ.....	122
8.2. Ապացույցներ պահանջելը.....	136
8.3. Ապացույցների ապահովումը.....	139
§9. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը.....	149
9.1. Ապացույցների վերաբերելիությունը.....	149
9.2. Ապացույցների թույլատրելիությունը.....	155
9.3. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը որոշելու դատավարական կարգը.....	169
§10. Ապացույցների հետազոտումը և գնահատումը. .	173
10.1. Ապացույցների հետազոտումը.....	173
10.2. Ապացույցների գնահատումը.....	182

ԳԼՈՒԽ II.
ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....191

§1. Վկաների ցուցմունքները.....191

§2. Գործին մասնակցող անձանց ցուցմունքները.....213

§3. Գրավոր ապացույցները.....222

§4. Իրեղեն ապացույցները.....245

**§5. Լուսանկարները, ձայնագրությունները և
տեսագրությունները.....252**

§6. Փորձագետի եզրակացությունը.....275

§7. Մասնագետի բացատրությունը.....323

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....330**

ՆԱԽԱԲԱՆ

Դատական ապացուցման և ապացույցների հիմնահարցերը կենտրոնական են դատավարագիտության և դատավարական օրենսդրությունների մեջ: Դրանց նկատմամբ հետաքրքրությունն առաջին հերթին պայմանավորված է դատավարության մրցակցային ձևի պայմաններում ապացուցողական գործունեության գործնական նշանակությամբ: Անհերքելի է այն իրողությունը, որ դատարանն իր վարույթում գտնվող գործով կարող է ճիշտ արդարադատություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում սահմանված ընթացակարգային կանոնների պահպանմամբ կբացահայտի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը և հաստատված հանգամանքներին (փաստերին) համապատասխան ու ճիշտ կկիրառի օրենքը: Բացի դրանից, Հայաստանի քաղաքացիական դատավարության հիմքում ներկայումս դրված մրցակցության սկզբունքի պայմաններում անձը կարող է ակնկալել իր խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրենքով պահպանվող շահերի դատական պաշտպանություն միայն այն պարագայում, երբ դատավարական օրենքով սահմանված կարգով ապացուցում է իր հայցի (դիմումի) հիմքում ընկած հանգամանքների առկայությունը: Ճիշտ նույն կերպ էլ անձինք, որոնց դեմ հայց է ներկայացվել դատարան, պետք է ապացուցեն հայտարարված պահանջների դեմ իրենց առարկությունների և հակընդդեմ պահանջների հիմքում ընկած հանգամանքները, ինչից ուղղակիորեն կախված է հարուցված հայցից պաշտպանվելու արդյունավետությունը:

Ճշմարտությունը բացահայտելու համար դատարանը և գործին մասնակցող անձինք պետք է անշեղորեն պահպանեն և կիրառեն յուրաքանչյուր գործով իրականության բացահայտմանն ուղղված դատավարական նորմերի պահանջները: Այլ կերպ ասած՝ օրինական ու հիմնավորված

դատական ակտերի կայացումը և խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությունը մեծապես պայմանավորված են դատարանի և գործին մասնակցող անձանց ապացուցողական գործունեության ճիշտ կազմակերպումից և իրականացումից: Ապացուցողական գործունեության առանձին հարցերի որակյալ լուծումը կանխորոշում է ճիշտ վճռահատությունը և խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությունը:

Առաջարկվող աշխատության մեջ ՀՀ-ում վերջին երկու տասնամյակի ընթացքում կատարված դատաիրավական բարեփոխումների և ձևավորված դատական պրակտիկայի լույսի ներքո և ժամանակակից դատավարագիտության ձեռքբերումների հիման վրա լուսաբանվել և վերլուծության են ենթարկվել ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապացուցման և ապացույցների հետ կապված հիմնական ինստիտուտները, հասկացությունները և ապացուցման տեսության արդիական հիմնախնդիրները:

ԳԼՈՒԽ Ի.

ԴԱՏԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

§1. Դատական ապացուցման հասկացությունը և նպատակը: Ապացուցողական գործունեության տարրերը

Քաղաքացիական դատավարությունը, ինչպես հայտնի է, հետապնդում է մի շարք նպատակներ: Դրանցից ամենահիմնականը՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, օրինական շահերի պաշտպանությունն է¹:

Այդ նպատակին հասնելու համար դատարանը լուծում է մի շարք խնդիրներ, այդ թվում՝ գործի ըստ էության քննությունը և լուծումը: Նշված խնդրի լուծումն անհնար է առանց տվյալ գործի փաստական հանգամանքների, վիճող կողմերի իրական փոխհարաբերությունների, գործին մասնակցող անձանց պահանջների և դրանց դեմ արվող առարկությունների հիմքում ընկած փաստերի, ինչպես նաև նյութական օրենսդրության նորմերով արժևորվող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության մասին հավաստի գիտելիքներ ձեռք բերելու:

Նշված գիտելիքների ձեռքբերմանն ուղղված՝ դատարանի և գործին մասնակցող անձանց մտավոր-տրամաբանական և պրակտիկ-դատավարական գործունեությունը, որն իրականացվում է որոշակի դատավարական ձևի շրջանակներում, դատավարագիտության մեջ ավանդաբար կոչվում է **դատական ապացուցում**: Վերջինս գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության մասին հավանական դատողություններից դեպի հավաստի

¹ Տե՛ս **Жилин Г.А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. М.: «Городец», 2000, էջ 12:

գիտելիքները տանող միակ ուղին է, որը միջնորդավորում է դատական ճանաչողության գործընթացը և ապահովում է վիճելի իրավահարաբերության վերաբերյալ օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը:

Դատական ապացուցման նպատակը գործի իրական հանգամանքների, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատումն է, որն իր հերթին հնարավորություն է տալիս իրականացնել քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի իրական պաշտպանություն¹:

Եվ իրոք, քաղաքացիական գործի ճիշտ լուծման համար դատարանը պետք է հնարավորինս ստույգ գիտելիքներ ձեռք բերի հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ինչպիսի՞ փաստերի վրա են հենվում գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները,

- ներկայացված պահանջների և առարկությունների պայմաններում գործին մասնակցող անձի կողմից վկայակոչվող փաստերի հետ օրենքը կապում է արդյոք ակնկալվող իրավական հետևանքները, վկայակոչված փաստերի շրջանակի ուսումնասիրությունը բավարար՞ է արդյոք գործն ըստ էության ճիշտ լուծելու համար, թե՞ անհրաժեշտ է պարզել նաև օրենքով արժևորվող այլ փաստեր,

- արդյո՞ք իրականում գոյություն ունեն գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը, ինչպիսի՞ փաստական տվյալներով (ապացույցներով) են դրանք հաստատվում կամ հերքվում, կարելի՞ է արդյոք այդ փաստական տվյալները դիտարկել որպես դատական ապացույցներ:

Հնարավոր չէ գործը լուծել ըստ էության և հասնել քաղաքացիական դատավարության նպատակներին առանց

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 343:

առաջադրված հարցերի պատասխաններն ունենալու: Դատական ապացուցման առաքելությունը հենց այդ պատասխանները ստանալու մեջ է: Հետևաբար դատական ճանաչողության (ապացուցման) միակ նպատակն օրենքով սահմանված ձևով և միջոցներով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը պարզելն է:

Այդ մասին է վկայում նաև ՔԴՕ 57-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդրի կողմից սահմանված ապացույցների բնորոշումը: Ըստ նշված նորմի՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը *պարզում է* գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Տվյալ դրույթի ուշադիր ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ օրենսդիրն ըստ էության կանխորոշել է ապացույցներ ներկայացնելու, դրանք հետազոտելու և գնահատելու նպատակը, այն է՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը պարզելը:

Քաղաքացիական գործի իրական հանգամանքները պարզելը (դատական ճանաչողությունը) գործնականորեն կատարվում է գործին մասնակցող անձանց և դատարանի կողմից ապացուցողական գործունեություն ծավալելու միջոցով, այն է՝

1. պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու (դրանք վկայակոչելու),
2. գործի լուծման համար նշանակություն ունեցող, այդ թվում՝ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու,
3. ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու,
4. ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված

միջնորդությունները ներկայացնելու (ապացույցները հավաքելու),

5. ապացույցներն սահմանված կարգով հետազոտելու (ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու),

6. ապացույցները գնահատելու ճանապարհով:

Նշված բոլոր գործողությունները, ուղղված լինելով միևնույն նպատակին, ունեն կարևոր ապացուցողական նշանակություն և դատավարագիտության մեջ դիտարկվում են որպես **ապացուցողական գործունեության տարրեր** (փուլեր): Դրանցից յուրաքանչյուրը ենթարկվում է մանրակրկիտ իրավական կարգավորման, քանի որ դրանց հաջորդական և պատշաճ կատարման միջոցով է բացահայտվում դատական ճշմարտությունը, որն իր հերթին դատարանին հնարավորություն է տալիս հաստատված փաստերի հիման վրա լուծել գործը՝ կայացնելով օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր¹:

§2. Ապացույցների հասկացությունը և դասակարգումը

2.1. Ապացույցների հասկացությունը և հատկանիշները

Արդարադատության հիմնական նպատակին՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հասնելու համար դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է պարզի հայցվորի մոտ այն սուբյեկտիվ իրավունքի առկայությունը, որի պաշտպանությունը հայցվում է, ինչպես նաև պատասխանողի մոտ համապատասխան սուբյեկտիվ պարտականության առկայությունը, դրա բո-

¹ Ապացուցողական գործունեության տարրերն առանձին-առանձին լուսաբանվում են սույն գլխի հետագա շարադրանքում:

վանդակությունը և կատարման պայմանները, այլ կերպ ասած՝ դատավիճող կողմերի իրական փոխհարաբերությունները: Սակայն, ինչպես հայտնի է, սուբյեկտիվ իրավունքները և պարտականություններն ինքնին չեն առաջանում: Դրանց ծագումը, փոփոխումը և դադարումն օրենքը բոլոր դեպքերում կապում է որոշակի իրավաբանական փաստերի հետ: Ուստի վիճելի իրավահարաբերությունները ճշգրիտ որոշելու համար դատարանը նախևառաջ պետք է պարզի, թե ինչպիսի իրավաբանական փաստեր են իրականում կատարվել կամ տեղի ունեցել: Այսպես, եթե անշարժ գույքի սեփականատերը հայց է ներկայացնում դատարան ընդդեմ վարձակալի՝ վարձավճարի բռնագանձման պահանջի մասին, իրականացման ենթակա պահանջի իրավունքի առկայության փաստը հաստատելու համար դատարանը նախ պետք է պարզի, թե կողմերի միջև սահմանված ձևով արդյո՞ք կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, վարձակալի իրավունքն արդյո՞ք սահմանված կարգով գրանցվել է անշարժ գույքի պետական կադաստրի մարմիններում, վարձավճարի ինչպիսի՞ չափ և վճարման պայմաններ են նախատեսված պայմանագրով, վրա՞ է հասել արդյոք վարձավճարը վճարելու ժամկետը, արդյո՞ք վարձակալը չի վճարել այն և այլն: Այլ կերպ ասած՝ դատարանը պետք է պարզի բոլոր այն փաստական հանգամանքները (իրավաբանական փաստերը), որոնցով պայմանավորված է կողմերի իրավահարաբերությունը:

Արդարադատությունը գործունեություն է, որն իրականացվում է խստիվ սահմանված դատավարական ձևով: Վերջինիս կարևորագույն պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանի վճիռը կարող է հիմնվել բացառապես այն փաստերի վրա, որոնք ապացուցվել են դատավարության ընթացքում հետազոտված դատական ապացույցների միջոցով:

ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապա-

ցուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը: Ինչպես նշվել է վերը, գործին մասնակցող անձանց այն գործունեությունը, որն ուղղված է իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերի ճշմարտացիությունը որոշակի դատավարական ձևի շրջանակներում հաստատելուն, դատավարագիտության մեջ կոչվում է դատական ապացուցում, իսկ այն միջոցները, որոնց օգնությամբ իրականացվում է ապացուցումը՝ դատական ապացույցներ:

Դատական ապացույցի լեգալ բնորոշումն ամրագրված է ՔԴՕ 57-րդ հոդվածում, որի համաձայն՝ ***ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:***

Ընդ որում, օրենքը սպառնիչ կերպով սահմանում է, թե ինչպիսի աղբյուրներից և ինչ միջոցներով ստացված տեղեկությունները դատարանում կարող են օգտագործվել որպես ապացույցներ: Մասնավորապես ՔԴՕ 67-րդ հոդվածից բխում է, որ գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել՝

- 1) վկաների ցուցմունքներով,
- 2) գրավոր ապացույցներով,
- 3) իրեղեն ապացույցներով,
- 4) լուսանկարներով (լուսաժապավեններով), ձայնագրություններով և տեսագրություններով,
- 5) փորձագետի եզրակացությունով,
- 6) մասնագետի բացատրություններով:

Օրենքը ոչ միայն ամրագրում է թույլատրելի ապացույցների սպառիչ ցանկը, այլ նաև սահմանում է դրանց ձեռքբերման և օգտագործման դատավարական կարգը:

ՔԴՕ-ի շրջանակներում ապացույցների ամեն տեսակի նվիրված է իրավանորմերի առանձին խումբ, որը կանոնակարգում է դրանց ձեռքբերման և հետազոտման կարգը: Այսպես, սահմանվում է, թե ով կարող է հանդես գալ որպես վկա, ինչ կարգով է իրականացվում վկայի հարցաքննությունը, ինչպես է նշանակվում և անցկացվում փորձաքննությունը, ինչպես են զննվում իրեղեն ապացույցները և այլն:

Ապացուցման տեսության մեջ ավանդաբար սահմանագատվում են «ապացույց», «ապացույցի աղբյուր» և «ապացուցման միջոց» հասկացությունները:

ՔԴՕ 57-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ գործով **ապացույցներ** են այն *փաստական տվյալները*, որոնց հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն՝ օրենսդիրն ապացույց է համարում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները (փաստական տվյալները)¹:

ՔԴՕ 67-րդ և բազմաթիվ այլ հոդվածներից բխում է, որ որպես այդ տեղեկությունների (ապացույցների) ստացման **աղբյուրներ** դիտարկվում են այն *անձինք (գործին մասնակցող անձինք, վկաները, փորձագետները, մասնագետները) և իրերը (փաստաթղթերը, էլեկտրոնային և այլ կրիչները, առարկաները)*, որոնցից ստացվում են նշված

1 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տեղեկություն է համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

փաստական տվյալները: **Ապացուցման միջոցներն** օրենքով կանոնակարգված այն *եղանակներն* են, որոնց օգնությամբ նշված աղբյուրներից ստացվում են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայության կամ բացակայության մասին փաստական տվյալները: Այդպիսիք են վկաների, գործին մասնակցող անձանց հարցաքննությունը, փորձաքննության իրականացումը և փորձագետի եզրակացության հետազոտումը, մասնագետի բացատրությունը, իրեղեն ապացույցների զննությունը և գրավոր ապացույցների ուսումնասիրությունը:

Դատական ապացույցների կատեգորիայի ընկալման հիմնական դժվարությունը նրանում է, որ վերը նշված հասկացությունների սահմանազատումը խիստ պայմանական է. տեսության և օրենսդրության մեջ ապացույց է անվանվում և՛ առանձին ապացուցման միջոցը կամ աղբյուրը (վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը, կողմի ներկայացրած գրավոր փաստաթուղթը և այլն), և՛ այն տեղեկությունը (փաստական տվյալը), որը ստացվում է տվյալ աղբյուրների հետազոտման արդյունքում¹:

Ապացույցի հասկացության բազմիմաստությունը պայմանավորված է այն դիալեկտիկական կապով, որն առկա է փաստական տվյալի (տեղեկության), այն կրող սուբյեկտի կամ իրի (ապացույցի աղբյուրի) և դրա ստացման դատավարական միջոցների միջև: Ելնելով նշված դիալեկտիկական կապից՝ գիտական միտքը դատական ապացույցների մեջ տեսնում է աղբյուրի բովանդակության (հաղորդվող տեղեկության) և դատավարական ձևի (ապացուցման միջոցների) միասնություն²: Եվ իրոք, եթե աղբյուրը փաստի մասին տեղեկություններ չի պարունակում, ապա այն ոչինչ չի ապացուցում, իսկ եթե տեղեկությունները

1 Ст'ю Гражданское процессуальное право. Под ред. М.С. Шакарян. М.: ««Проспект»», 2004, էջ 163:

2 Ст'ю, օրինակ, **Новицкий В.А.** Теория российского процессуального доказывания и правоприменения. Монография. Ставрополь, изд. СГУ, 2002, էջ 205-206:

ստացվել են օրենքով չնախատեսված աղբյուրներից կամ միջոցներով, ապա դրանք չեն կարող օգտագործվել որպես դատական ապացույցներ:

Այլ կերպ ասած՝ դատական ապացույցների հասկացության մեջ ներառվում են և՛ փաստական տվյալները (տեղեկությունները), և՛ ապացուցման միջոցները՝ որպես բովանդակություն և դատավարական ձև: որոնվող փաստերը հաստատող կամ հերքող փաստական տվյալները և այդ տվյալների ստացման միջոցներն իրար հետ կապված են անխզելի կապով: Այս կամ այն տեղեկատվությունը չի կարող ճանաչվել ապացույց, եթե չունի որոնվող փաստին վերաբերող բովանդակություն, անհայտ է դրա ստացման աղբյուրը կամ խաթարված է այդ տվյալների ստացման, հետազոտման և գնահատման դատավարական կարգը:

Թե՛ դատավարագիտության, թե՛ դատավարական օրենսդրության մեջ դատական ապացույց է դիտարկվում բացառապես այն տեղեկատվությունը, որն ունի որոշակի հատկանիշներ: Դրանք հանգում են հետևյալին:

1) Ապացույցների բովանդակությունը կազմող տեղեկությունները պետք է լինեն ոչ թե պարզապես «տվյալներ», այլ «փաստական տվյալներ», այսինքն՝ դրանք չպետք է հանդիսանան վերացական գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ պետք է բովանդակեն կոնկրետ տվյալներ մարդկանց գործողությունների, որոշակի իրադարձությունների վերաբերյալ, որոնք թույլ են տալիս պատասխանել այն հարցին, թե ինչ, երբ, որտեղ, ինչ կերպ է տեղի ունեցել: Եթե ստացված տվյալը զուրկ է ճանաչողական բնույթի բովանդակությունից, այն ապացույց համարվել չի կարող:

2) Մյուս հատկանիշը բնութագրում է ապացուցման ենթակա հանգամանքների և ստացված փաստական տվյալների միջև գոյություն ունեցող կապը՝ ապացույցների այնպիսի հատկանիշը, ինչպիսին է դրանց վերաբերելիությունը: Ապացույցները որոշակի փաստերի վերաբեր-

յալ այնպիսի տեղեկություններ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

Այս կամ այն փաստական տվյալը կարող է դիտարկվել որպես ապացույց միայն այն դեպքում, երբ վերաբերում է դատարանի վարույթում գտնվող գործին, այսինքն՝ հաստատում կամ հերքում է գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութաիրավական բնույթի փաստերի, ապացուցողական փաստերի կամ դատավարական բնույթի իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

3) Ապացույցի հաջորդ հատկանիշը նրանում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով սահմանված աղբյուրներից և օրենքով կանխորոշված միջոցներով: ԶԴՕ 67-րդ հոդվածին համապատասխան, այդ փաստերը կարող են հաստատվել կամ ժխտվել վկաների ցուցմունքներով, գրավոր, իրեղեն ապացույցներով, լուսանկարներով, լուսաժապավեններով, ձայնագրություններով, տեսագրություններով, փորձագետների եզրակացություններով, մասնագետների բացատրություններով: Ուշագրավ է, որ ապացուցման միջոցների (ապացույցների) ցանկը սպառիչ է, որը նշանակում է, որ գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը, ընդհանուր կանոնի համաձայն, կարող են պարզվել միայն թվարկված միջոցների (ապացույցների) օգտագործմամբ:

4) Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ փաստական տվյալները կարող են ճանաչվել ապացույց միայն այն դեպքում, երբ ձեռք չեն բերվել մարդու հիմնական իրավունքների խախտմամբ կամ չեն խաթարում արդար դատաքննության իրավունքը: Խոսքն ապացույցների թույլատրելիության սահմանադրական կանոնի մասին է, ըստ որի՝ հիմնական իրա-

վունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է (Սահմանադրության 63 հոդ., մաս 3):

Անկախ իրենց հնարավոր արժեքից, նման փաստական տվյալներն իրավաբանական ուժ ունենալ չեն կարող, դրանք չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում, քանի որ դրանց ձեռքբերման եղանակները հակասության մեջ են մտնում մարդու՝ սահմանադրորեն երաշխավորված հիմնական իրավունքների հետ, որոնց հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության (այդ թվում՝ դատական) պարտականությունն են (Սահմանադրության 3 հոդ.): Հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությունը ոչ միայն ամրագրում է հիմնական իրավունքների և ազատությունների շրջանակը, բացահայտում է դրանց բովանդակությունը, այլ նաև երաշխավորում է դրանց անմիջական գործողությունը (հոդ. 3, մաս 3) և դրանց վերաբերող սահմանադրական դրույթների էության անխախտելիությունը (80 հոդ.):

Ելնելով ներկայացված սահմանադրական կարգավորումներից և նպատակ հետապնդելով ապահովելու մարդու հիմնական իրավունքների, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ սահմանադրական դրույթների անխախտելիությունը՝ դատավարական օրենսդրությունը մանրակրկիտ կարգավորում է գործի լուծման համար նյութաիրավական և դատավարական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ փաստական տվյալների (ապացույցների) ձեռքբերման, հետազոտման և գնահատման ընթացակարգը, որի խախտումը էապես կարող է ազդել ստացված տվյալների ապացուցողական ուժի (արժանահավատության) վրա կամ հանգեցնել դրանց օգտագործման անթույլատրելիության:

Ապացույցների ձեռքբերման, հետազոտման և գնահատման օրենքով սահմանված ընթացակարգը հավաստի գիտելիք ստանալու, այսինքն՝ գործով ճշմարտության

հասնելու լրջագույն երաշխիքներ են:

Ապացույցների վերը թվարկված բոլոր հատկանիշների առկայությունը պարտադիր է: Դրանցից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է նշված տեղեկությունը որպես ապացույց օգտագործելու անհնարինության մասին:

2.2. Ապացույցների դասակարգումը

Դատական ապացույցները դատավարագիտության մեջ ենթարկվում են որոշակի դասակարգման:

Դատական ապացույցների դասակարգումը տրամաբանական գործողություն է, որի արդյունքում ապացույցները բաժանվում են տեսակների¹:

Ապացույցների դասակարգումն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կարևոր նշանակություն, քանի որ թույլ է տալիս վեր հանել ապացույցների առանձին տեսակների առանձնահատկությունները և վերջիններիս հաշվառմամբ որոշել գործնականում դրանց օգտագործման լավագույն ուղիները²:

Ապացույցները (տեղեկությունները) իրարից տարբերվում են ապացուցվող (որոնվող) փաստի հետ ունեցած կապի բնույթով, կազմավորման եղանակով, առաջացման աղբյուրներով, արտահայտման ձևով և այլն: Դատավարագիտության մեջ ապացույցները դասակարգվում են ըստ նշված հատկանիշների:

Ապացուցման տեսության մեջ համընդհանուր ճանաչում է գտել ապացույցների դասակարգումն ըստ կազմավորման եղանակի և ըստ որոնվող փաստի հետ ունեցած կապի:

1. *Ըստ ապացույցի և ապացուցման ենթակա փաստի միջև գոյություն ունեցող կապի* ապացույցները դասակարգվում են երկու խմբի՝ **ուղղակի** և **անուղղակի**:

Քննարկվող հիմքով ապացույցների դասակարգումը

1 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 94:

2 Տե՛ս Гражданское процессуальное право. Под ред. М.С. Шакарян. М.: «Проспект», 2004, էջ 178:

կատարվում է ելնելով այն հանգամանքից, թե ստացված տեղեկություններից որոնվող փաստի գոյության կամ բացակայության վերաբերյալ քանի հնարավոր հետևություն կարելի է անել:

Ուղղակի են համարվում այն ապացույցները, որոնց բովանդակությունը միանշանակ կապ ունի ապացուցման ենթակա փաստի հետ, ինչը հնարավորություն է տալիս որոշակի եզրակացություն անել փաստի գոյության կամ բացակայության մասին: Այլ կերպ ասած՝ եթե ապացույցը թույլ է տալիս մեկ կոնկրետ, թեկուզ հավանական, հետևություն անել փաստի գոյության կամ բացակայության վերաբերյալ, ապա այն ուղղակի է: Օրինակ, դատարան ներկայացված փոխառության ստացականի ուսումնասիրության արդյունքում դատարանը կարող է մեկ կոնկրետ հետևություն անել կողմերի միջև փոխառության իրավահարաբերության ծագման փաստի վերաբերյալ, ուստի այն ուղղակի ապացույց է: Ականատես կամ ոչ ականատես վկայի ցուցմունքը, առ այն, որ գործարքը կնքելիս հայցվորի նկատմամբ կիրառվել է բռնություն, ուղղակի ապացույց է, քանի որ այդ տեղեկությունն ուղղակիորեն հաստատում է գործարքը կնքելիս բռնություն գործադրելու հանգամանքը:

Այսպիսով, ուղղակի ապացույցը հնարավորություն տալիս է որոնվող փաստի մասին անել միայն մեկ՝ որոշակի հետևություն: Ուստի ուղղակի ապացույցի հետազոտման և գնահատման ընթացքում դատարանի կողմից լուծման ենթակա հիմնական խնդիրը դրա արժանահավատության ստուգումն է:

Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ ուղղակի ապացույցների բովանդակությունը վիճարկվել և հերքվել չի կարող: Որևէ ապացույց, այդ թվում՝ ուղղակի, դատարանի համար նախապես հաստատվածի ուժ չունի և պետք է գնահատվի գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համակցության մեջ: Այդ իսկ պատճառով գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի հետազոտման պա-

հանջը դատարանի կողմից պետք է իրագործվի անգամ այն դեպքերում, երբ առկա են վիճելի փաստը հիմնավորող ուղղակի ապացույցներ:

Ի տարբերություն ուղղակի ապացույցների, *անուղղակի են համարվում այն ապացույցները, որոնց բովանդակությունը բազմաբնույթ կապ ունի ապացուցման ենթակա փաստի հետ, ինչը հնարավորություն է տալիս որոնվող փաստի վերաբերյալ առաջ քաշել մի քանի վարկածներ, հանգել մի քանի հավանական հետևությունների:*

Գործնականում անուղղակի ապացույցների օգնությամբ ապացուցումը բարդ է այն առումով, որ պետք է որոշել, թե բավարար են արդյոք անուղղակի ապացույցները որոնվող փաստի առկայության կամ բացակայության վերաբերյալ ճշմարիտ հետևություն կատարելու համար: Ի տարբերություն ուղղակի ապացույցների, երբ հաճախակի միայն մեկ ուղղակի ապացույցի առկայությունը բավարար է լինում որոնվող փաստի մասին հավաստի եզրահանգում կատարելու համար, մեկ անուղղակի ապացույցը նման հետևություն կատարելու համար երբեք բավարար լինել չի կարող: Քանի որ ելնելով անուղղակի ապացույցների բնույթից՝ դրանց միջոցով հնարավոր է հանգել մի քանի հավանական եզրակացությունների, ապա հավաստի հետևություն կատարելու համար անհրաժեշտ է կա՛մ անուղղակի ապացույցների, կա՛մ միաժամանակ ուղղակի և անուղղակի ապացույցների համակցություն¹:

Անուղղակի ապացույցներով հաստատված փաստերն են, որ, համադրվելով գործով մյուս ապացույցների ու փաստերի հետ, հնարավորություն են տալիս հաստատել կամ ժխտել իրավաբանական փաստերը, իհարկե, եթե այդ փաստերն ինքնին արժանահավատ են²: Այդ փաստերն ապացուցման տեսության մեջ կոչվում են «ապացուցողական փաստեր»: Դրանք իրավաբանական փաս-

1 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 101:

2 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 349:

տեր չեն, բայց իրենց համակցության մեջ դատարանին հնարավորություն են տալիս եզրակացություն անել գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութափրավական փաստերի առկայության կամ բացակայության մասին:

Քանի որ անուղղակի ապացույցը հնարավորություն է տալիս միայն ենթադրել փաստի գոյությունը կամ բացակայությունը, այդպիսի ապացույցի հետազոտման և գնահատման ընթացքում դատարանը պետք է ոչ միայն ստուգի դրա արժանահավատությունը, այլ նաև բաղդատի այն, համադրի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, հետազոտի գործի բոլոր հանգամանքներից ելնելով և ստանա իրար հետ ամուր կապված անուղղակի ապացույցների մի շղթա¹: Այսպես, ըստ գործող օրենսդրության շարժական գույքի վարձակալության պայմանագրի կնքման փաստը կարող է հաստատվել ինչպես կողմերի ստորագրությամբ կնքված համաձայնագրով կամ օֆերտա և ակցեպտ պարունակող փաստաթղթերով (ուղղակի ապացույցներով), այնպես էլ այլ գրավոր և իրեղեն ապացույցներով: Մասնավորապես վարձակալության պայմանագրի կնքման փաստը կարող է հիմնավորվել՝ 1) գույքը վարձակալության հանձնելու խնդրանքով գրությամբ, 2) գույքը տվյալ անձին հանձնելու մտադրություն պարունակող պատասխանով, 3) գույքը ենթադրյալ վարձակալի մոտ գտնվելու փաստով, 4) որոշակի գումարով ամենամսյա բանկային փոխանցումները հաստատող վճարման հանձնարարագրերով: Թվարկված ապացույցները, որքան էլ արժանահավատ լինեն, ինքնին ոչինչ չեն հաստատում: Դրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած թույլ է տալիս միայն ենթադրություն անել, որ կողմերի միջև կարող է կնքված լինել վարձակալության պայմանագիր: Սակայն նշված ապացույցներով հաստատված բոլոր փաստերն իրենց համակցության մեջ դիտարկելու դեպքում դատարանը կարող է որոշակի եզրահանգում կատարել կողմերի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 350:

միջև վարձակալության հարաբերությունների ծագման փաստի վերաբերյալ:

2. *Ըստ փաստերի վերաբերյալ տեղեկությունների կազմավորման եղանակի* ապացույցները բաժանվում են **սկզբնականի** և **ածանցականի**:

Տվյալ դասակարգումը կապված է օբյեկտիվ իրականության արտացոլման տարբեր ձևերի հետ¹:

Փաստերն ու երևույթները կարող են անմիջականորեն ընկալվել մարդկանց կողմից և հետքեր թողնել նրանց գիտակցության մեջ, ներգործել տարբեր առարկաների վրա՝ նրանց վրա թողնելով նման ներգործության հետքերը: Օբյեկտիվ իրականության արտացոլման տվյալ ձևը կոչվում է սկզբնական:

Արտացոլումն ունի ածանցական բնույթ, եթե օբյեկտիվ իրականության փաստերի ու երևույթների մասին տեղեկությունը ստացվում է միջնորդավորված ձևով՝ ոչ թե անմիջական ներգործության ենթարկված սկզբնաղբյուրներից (հետքեր կրող իրերից, փաստն ընկալած մարդկանցից), այլ դրանց վերարտադրություններից (փաստաթղթերի պատճեններից, իրերի լուսանկարներից, այն մարդկանցից, ովքեր փաստի մասին տեղեկությունները ստացել են այն անմիջականորեն ընկալած այլ մարդուց, և այլն):

Սկզբնական են կոչվում այն ապացույցները, որոնք ձևավորվել են տեղեկության կրիչի վրա որոնվող փաստի անմիջական ներգործության արդյունքում: Մասնավորապես՝ սկզբնական ապացույցներ են, օրինակ, ականատես վկայի հարցաքննության, փաստաթղթերի բնօրինակների կամ թերթություններ պարունակող իրերի գննության արդյունքում ստացված տեղեկությունները: Դրանք ստացվում են ոչ թե միջնորդավորված ձևով, այլ ուղղակիորեն սկզբնաղբյուրներից, որոնք ձևավորվել են որոնվող փաստի անմիջական ընկալման կամ ներգործության արդյուն-

¹ Տե՛ս **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе. М.: «Юрайт», 2010, էջ 102:

քում: Սկզբնական ապացույցի բովանդակությունը վկայում է այն մասին, որ այն ձևավորվել է ապացուցման ենթակա փաստի հետ անմիջական փոխներգործության (շփման) արդյունքում:

Ածանցական են այն ապացույցները, որոնք վերարտադրում են սկզբնական ապացույցների բովանդակությունը: Այդպիսիք են, օրինակ, փաստաթղթի պատճեններից, ոչ ականատես վկաների ցուցմունքներից, իրերի վրա առկա հետքերի լուսանկարներից ստացված տեղեկությունները: Ի տարբերություն սկզբնական ապացույցների, ածանցական ապացույցները ոչ թե օբյեկտիվ իրականության արտացոլումն են, այլ՝ արտացոլվածի արտացոլումը¹: Դրանք ստացվում են ոչ թե ուղղակիորեն սկզբնաղբյուրներից, այլ միջնորդավորված ձևով՝ սկզբնաղբյուրների վերարտադրություններից: Ածանցական ապացույցի և որոնվող փաստի միջև միշտ առկա է առնվազն մեկ ապացույց ևս: Հենց դրա բովանդակությունն էլ վերարտադրում է ածանցական ապացույցը: Սկզբնական ապացույցների դեպքում նման միջնորդավորող օղակ չկա²:

Ապացույցների դասակարգումը սկզբնականի և ածանցականի չի նշանակում, սակայն, որ սկզբնական ապացույցները, ի տարբերություն ածանցականի, առաջնային նշանակություն ունեն և առավել հավաստի են: Ինչպես սկզբնական, այնպես էլ ածանցական ապացույցների գնահատումը կախված է կոնկրետ իրավիճակից: Ե՛վ սկզբնական, և՛ ածանցական ապացույցի հավաստիության աստիճանը դատարանը գնահատում է այդ ապացույցը գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Միաժամանակ պետք է նշել, որ օրենքը որոշ դեպքե-

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 349:

2 Տե՛ս Гражданское процессуальное право. Под ред. М.С. Шакарян. М.: «Проспект», 2004, էջ 179:

րում թույլ է տալիս դատարան ներկայացնել սկզբնական ապացույցների վերարտադրությունները: Այսպես, ՔԴՕ 74-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը կարող են ներկայացվել կամ բնօրինակով, կամ պատճենի ձևով, իսկ եթե քննվող գործին վերաբերում է փաստաթղթի միայն մեկ մասը, կարող է ներկայացվել դրա քաղվածքը: Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է, որ փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն դատարանի պահանջով կամ այն դեպքում, երբ համապատասխան փաստերն օրենքի, այլ իրավական ակտերի կամ պայմանագրի համապատասխան կարող են հաստատվել միայն բնօրինակով (ՔԴՕ 74 հոդ., մաս 3), իսկ ամբողջական փաստաթուղթը կարող է պահանջվել այն դեպքերում, երբ քաղվածքը վավերացված չէ օրենքով սահմանված կարգով կամ իր մեջ պարունակում է փաստաթղթի մյուս մասերի վերաբերյալ տեղեկատվություն, և դրա բովանդակությունը կարող է պարզվել փաստաթղթի մյուս մասի կամ ամբողջ փաստաթղթի բովանդակությամբ (ՔԴՕ 74 հոդ., մաս 6):

3. Դատավարագիտության մեջ ապացույցները դասակարգվում են նաև *ըստ աղբյուրի*:

Տվյալ դասակարգման կապակցությամբ դատավարագետներն արտահայտում են տաբեր տեսակետներ: Առավել տարածված է այն դիրքորոշումը, ըստ որի քննարկվող չափանիշոբ ապացույցները դասակարգվում են երկու խմբի՝ **անձնական** և **իրեղեն**՝ կախված նրանից, թե ով կամ ինչն է ապացուցի աղբյուր՝ մարդը, թե նյութական աշխարհի օբյեկտները (իրերը):

Անձինք և իրերը, որոնք ենթարկվել են որոշակի փաստերի ներգործության, ես փաստերի մասին տեղեկություններ կրողներ են՝ աղբյուրներ, որոնցում տարբեր ձևերով ամրագրված և պահպանված է ինֆորմացիան: Եթե փաստերի մասին տեղեկությունները ելևում են մարդուց և դատարան են հասցվում մարդու կողմից, ապա դրանք անձնական ապացույցներ են: Եթե փաստերի մասին տե-

ղեկությունները «դրոշմված են» անկենդան առարկաների վրա, դրանք իրեղեն ապացույցներ են¹:

Անձնական ապացույցներ են այն տեղեկությունները, որոնց աղբյուրը մարդիկ են՝ կողմերը, երրորդ անձինք, վկաները, փորձագետները և այլն: Դատավարագիտության մեջ առանձնացվում են անձնական ապացույցների հետևյալ հատկանիշները՝

ա) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների աղբյուրը մարդն է, որը կարող է ցուցմունք կամ բացատրություն տալ, այսինքն՝ դատարանին պատմել (պարզաբանել) անմիջական ընկալման արդյունքում իր հիշողության, գրառումների մեջ արտացոլված փաստերը.

բ) անձնական ապացույցի ձևավորման գործընթացը ներառում է փաստի ընկալումը, հիշելը (ամրագրումը) և վերարտադրումը դատարանում.

գ) նշված հատկանիշներն ունեն սուբյեկտիվ բնույթ, որը հատուկ է միայն մտածելու ունակություն ունեցող մատերիային և որոշակիորեն ազդում է ապացույցի բովանդակության վրա²:

Անձնական ապացույցների թվին են դասվում նաև փաստաթղթերում, էլեկտրոնային կրիչներում, տվյալների բազաներում պարունակվող տեղեկությունները, այսինքն՝ գրավոր ապացույցները: Չնայած դրանք ունեն առարկայացված ձև՝ ամրագրված են փաստաթղթերում կամ այլ նյութական կրիչներում, սակայն բխում են որոշակի անձից: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանին հետաքրքրում է ոչ թե փաստաթղթի բովանդակությունը, այլ նրա վրա եղած հետքերը: Փաստաթղթի վրա ջնշումներ, քերվածք, ուղղումներ և այլ հետքեր լինելու դեպքում այն ոչ թե անձնական, այլ իրեղեն ապացույց է:

1 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 98:

2 Տե՛ս **Новицкий В.А.** Теория российского процессуального доказывания и правоприменения. Монография. Ставрополь, изд. СГУ, 2002, էջ 218:

Իրեղեն ապացույցներ են այն տեղեկությունները, որոնք ստացվում են կյուբական աշխարհի օբյեկտներից (իրերից): Դրանք ձևավորվում են կյուբական աշխարհի օբյեկտների վրա փաստերի ներգործության արդյունքում:

Որոշ հեղինակներ, ըստ առաջացման աղբյուրի ապացույցները դասակարգելիս, բացի անձնական և իրեղեն ապացույցներից, առաջարկում են նաև երրորդ տեսակը՝ **խառը** ապացույցներ: Որպես այդպիսին են դիտարկվում այն փաստական տվյալները, որոնք ստացվում են միաժամանակ երկու աղբյուրներից՝ անձից և իրերից: Այսպես, որոնվող փաստի մասին փորձագետի եզրակացության մեջ տեղ գտած տեղեկությունների ստացման աղբյուր է գիտակ անձը՝ փորձագետը, և այն իրերը, որոնք նա հետազոտում է:

Դատական ապացույցների դասակարգումն անձնական և իրեղեն ապացույցների ունի չափազանց կարևոր գործնական նշանակություն: Անձնական ապացույցները հետազոտելիս դատարանը պետք է պարզի, իսկ դրանք գնահատելիս՝ հաշվի առնի դատարանին տեղեկություններ հաղորդող անձի անհատական հատկանիշները (գործի ելքում շահագրգռվածության առկայությունը, դրա աստիճանը, փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, այն պայմանները, որոնց առկայությամբ անձն ընկալել է որոշակի փաստեր, նրա սուբյեկտիվ հատկանիշները՝ գիտակ լինելը, փաստերն ընկալելու, ընկալածը հիշողության մեջ պահելու, ճիշտ վերարտադրելու ունակությունը և այլն): Ինչ վերաբերում է իրեղեն ապացույցներին, ապա, հաշվի առնելով դրանց առարկայական և ոչ սուբյեկտիվ բնույթը, կարելի է ասել, որ դրանք հիմնականում գերծ են սուբյեկտիվ բնույթի աղավաղումներից, գոյություն ունեն օբյեկտիվորեն: Ուստի դատարանի խնդիրն է պարզել իրեղեն ապացույցների լավորակությունը և պահպանման պայմանները՝ դրանք ձեռք բերելու պահից մինչև դատարան ներկայացնելը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք կարող են այս կամ այն կերպով ազդել

իրերից ստացված տեղեկությունների հավաստիության վրա:

4. Ապացույցները, ըստ արտահայտման ձևի, դատավարագիտության մեջ դասակարգվում են ևս երեք խմբի՝ **իրեղեն, բանավոր և գրավոր**:

իրեղեն են այն ապացույցները, որոնք արտահայտվում են առարկայացված եղանակով, ունեն այն ձևը, որը ստացել է իրը (կյուրը) արտաքին ներգործության արդյունքում (վնասվածք, քերվածք, կազմի փոփոխություն, թերության առկայություն, մասի բացակայություն, փլուզում, տեղակայման վայրի փոփոխություն և այլն): Դատավարագիտության մեջ իրեղեն բնույթ ունեցող ապացույցների թվին են դասվում նաև լուսանկարները, լուսաժապավենները, ձայնագրությունները և տեսաձայնագրությունները¹:

իրեղեն ապացույցները հետազոտվում են դիտողական ճանապարհով՝ զննության, դիտման կամ հատուկ գիտելիքներով օժտված փորձագետների և մասնագետների միջոցով:

Բանավոր են այն ապացույցները, որոնք դատարան են ներկայացվում և հետազոտվում են բանավոր խոսքի ձևով՝ ցուցմունքի կամ բացատրության միջոցով: Այդպիսի ապացույցների թվին են դասվում վկաների, այդ թվում գործին մասնակցող անձանց հաղորդած տեղեկությունները, փորձագետների և մասնագետների հարցաքննության միջոցով ստացվող տեղեկությունները: Բանավոր ապացույցները հետազոտվում են դրանք լսելու միջոցով:

Գրավոր են այն ապացույցները, որոնց բովանդակությունը դատարանին է ներկայացվում որոշակի կյուրական կրիչների վրա՝ տառերի, թվերի, ծածկագրերի կամ այլ նշանների միջոցով կատարված գրառումների (տեքստի)

¹ Քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ լուսանկարների, լուսաժապավենների, ձայնագրությունների և տեսաձայնագրությունների իրավական բնույթը բանավեճային է: Մանրամասն տե՛ս **Չոհրաբյան Ա.Գ.**, Ապացուցման միջոցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., «Հայրապետ» հրատ., 2016, էջ 128-154:

ձևով: Այդպիսիք են գործին մասնակցող կամ այլ անձանց կողմից դատարան ներկայացված փաստաթղթերը (այդ թվում՝ Էլեկտրոնային եղանակով կազմված և որոշակի նյութական կրիչների վրա ֆիքսված), փորձագետների, խնամակալության, հոգաբարձության կամ այլ մարմինների եզրակացությունները, ապացույցների ապահովման արձանագրությունները, դատական հանձնարարությունների կարգով ստացված նյութերը և այլն:

Գրավոր ապացույցները դատական նիստում հետազոտվում են դրանք ընթերցելու (հրապարակելու) միջոցով:

5. Ապացույցները դասակարգվում են նաև **անհրաժեշտ և լրացուցիչ** ապացույցների:

Անհրաժեշտ են այն ապացույցները, որոնց ձեռքբերումը և հետազոտումը պարտադիր է տվյալ կատեգորիայի գործով օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու համար: Փաստը հաստատված կամ ժխտված համարելու համար դատարանը պետք է այլ ապացույցների հետ մեկտեղ հետազոտի և գնահատի օրենքով ուղղակիորեն նախատեսված անհրաժեշտ ապացույցները: Դրանց շրջանակը յուրաքանչյուր դեպքում որոշվում է՝ ղեկավարվելով դատավարական և նյութական օրենսդրության նորմերով:

Այսպես, ՔԴՕ 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային որդեգրելու մասին դիմումին պետք է կցվեն՝ որդեգրել ցանկացող անձանց անձը հաստատող փաստաթղթի, ամուսնության վկայականի, որդեգրվող երեխայի ծննդյան վկայականի, նրա ծնողների մահվան վկայականների պատճենները, 10 տարին լրացած երեխայի համաձայնությունը, որդեգրվող երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանքը, լիազորած մարմնի եզրակացությունը որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին և մի շարք այլ փաստաթղթեր:

Անգործունակ ճանաչելու գործերով քաղաքացու հոգեկան վիճակը, իր գործողությունների նշանակությունը

հասկանալու կամ դրանք ղեկավարելու ունակությունը պարզելու համար դատարանը պետք է նշանակի դատահոգեբուժական փորձաքննություն (ՔԴՕ 252, 255 հոդ.): Փորձագետի եզրակացությունն օրենքի ուղղակի ցուցումով նշված գործերով ճանաչվում է անհրաժեշտ ապացույց, և եթե դատարանը քաղաքացուն անգործունակ է ճանաչում կամ անգործունակ ճանաչվածին կրկին գործունակ է ճանաչում առանց դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու և փորձագետի եզրակացությունը հետազոտելու, կայացված դատական ակտը ենթակա է բեկանման, քանի որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Միևնույն ժամանակ դատարանն իրավասու և պարտավոր է անհրաժեշտ ապացույցների (տվյալ դեպքում՝ փորձագետի եզրակացության) արժանահավատությունը ստուգելու նկատառումներով հետազոտել նաև գործում առկա այլ (լրացուցիչ) ապացույցները (վկաների ցուցմունքները, հիվանդության պատմությունից կատարված քաղվածքները և այլն)՝ անհրաժեշտության դեպքում նշանակելով կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն:

6. Ըստ ապացուցման նպատակների հետ հարաբերակցության՝ դատավարագիտության մեջ քննարկվում են **հաստատող** և **հերքող** ապացույցները: Հաստատող են կոչվում այն ապացույցները, որոնց հիման վրա դատարանը եզրահանգում է անում գործի համար նշանակություն ունեցող փաստերի առկայության վերաբերյալ: Հերքող են այն ապացույցները, որոնք ժխտում են ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի առկայությունը, հաստատում են դրանց բացակայությունը:

§3. Փաստեր վկայակոչելը որպես ապացուցողական գործունեության տարր

Դատական ապացուցումն առաջին հերթին ենթադրում է ոչ թե որոշակի թեզի հիմնավորում, այլ դրա առա-

շաղրում¹: Այլ կերպ ասած՝ որպեսզի այս կամ այն փաստը դառնա դատական քննության, այդ թվում՝ ապացուցման առարկա, այն պետք է նախևառաջ առաջադրվի:

Քաղաքացիական խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ժամանակակից մոդելը, որի հիմքում դրված են կողմերի մրցակցության, իրավահավասարության և տնօրինչականության սկզբունքները, ենթադրում է դատարանի պարտականությունը՝ գործը քննելու որոշակի սահմաններում: Ինչպես հայտնի է, դատարանն իրավունք չունի դուրս գալու հարուցված հայցի (դիմումի) և դրա դեմ ներկայացված առարկությունների շրջանակից և պարտավոր է դատական քննության առարկա դարձնել բացառապես գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված պահանջները և այն փաստերը, որոնց հիման վրա ներկայացվում են այդպիսի պահանջները կամ դրանց դեմ առարկությունները:

Մյուս կողմից, արդարադատությունն իրականացնելու գործառույթը պատշաճորեն իրականացնելու համար գործը քննող դատարանի համար դատական քննության առարկան և դրա սահմանները պետք է որոշակի լինեն: Վարույթի ընթացքը և ապացուցման գործընթացը կազմակերպելու և գործը ճիշտ լուծելու համար դատարանը նախևառաջ պետք է հստակ պատկերացում կազմի այն մասին, թե կողմերից ով, ումից, ինչ և ինչու է պահանջում, ենթադրյալ պարտավոր անձն ինչու այդ պահանջը չի կատարում: Հակառակ պարագայում դատական քննությունը կլինի առարկայազուրկ, իսկ պահանջը կամ առարկությունը՝ անհիմն և բավարարման ոչ ենթակա:

Այդ նկատառումներից ելնելով՝ դատավարական օրենսդրությունը հայցով (դիմումով) դատարան դիմող և այդ հայցից (դիմումից) պաշտպանվող անձանց վրա, նախ դնում է իրենց պահանջների և առարկությունների

¹ Տե՛ս **Баулин О.В.** Время доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 149:

հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականություն, որը դատավարագիտության մեջ հաճախ կոչվում է «հաստատման բեռ», իսկ ապա՝ այդ փաստերն «ապացուցելու բեռ»¹, որն անվանվում է նաև «ապացուցման պարտականություն»:

Պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականությունը հարկ է հստակորեն սահմանազատել ապացույցներ ներկայացնելու (ապացուցելու) պարտականությունից: Ապացուցողական գործունեության մեջ փաստի վկայակոչմամբ առաջադրվում է ապացուցման ենթակա թեզ, իսկ ապացույցի ներկայացմամբ իրականացվում է այդ թեզի հիմնավորումը (փաստի ապացուցմանն ուղղված գործողությունը):

Թեև ապացուցողական նշված գործողությունները խիստ փոխկապակցված և փոխալայմանավորված են, դրանցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն: Դրանով էլ պայմանավորվում է այն իրողությունը, որ գործող ՔԴՕ-ը, ըստ էության, սահմանազատել է փաստեր վկայակոչելու և դրանք հաստատող ապացույցներ ներկայացնելու դատավարական գործողությունները՝ դրանց իրավական կարգավորմանը նվիրելով առանձին նորմեր:

Դատական ապացուցման գործընթացի պատշաճ կազմակերպման տեսակետից ապացուցողական գործունեության քննարկվող տարրը ելակետային է: Դրա կարևորությունը չափազանց մեծ է, քանի որ, ինչպես կնկատենք հետագա շարք դրանքում, այն կանխորոշում է ապացու-

1 Դատավարագիտության մեջ «բեռ» եզրույթն օգտագործվում է ելնելով այն նկատառումներից, որ թե՛ փաստեր վկայակոչելը և թե՛ ապացույցներ ներկայացնելը դասական իմաստով կողմի դատավարական պարտականությունն է: Քննարկվող դատավարական գործողությունները կատարելու հնարավորությունը ՔԴՕ 32-րդ հոդվածը դիտարկում է որպես գործին մասնակցող անձի դատավարական իրավունք: Բայց քանի որ այդ դատավարական իրավունքից չօգտվելը, այն պատշաճորեն չիրականացնելը կարող է առաջացնել նյութաիրավական և դատավարական բնույթի անբարենպաստ հետևանքներ, դատավարագիտության և դատավարական օրենսդրության մեջ քննարկվող իրավունքի իրականացումը դիտարկվում է որպես «որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով ապահովված անհրաժեշտություն»՝ «բեռ», որը պայմանականորեն կոչվում է նաև «պարտականություն»:

ցողական գործունեության մյուս տարրերի բովանդակությունները՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, ապացուցման ենթակա և ապացուցման ոչ ենթակա հանգամանքների կազմը, ապացուցելու (ապացույցներ ներկայացնելու), ներկայացված ապացույցները հետազոտելու անհրաժեշտությունը և այլն:

Գործող դատավարական օրենսդրությունը հաստատման բեռն ամբողջությամբ դրել է գործին մասնակցող անձանց վրա: Արդարադատություն հայցող սուբյեկտը ոչ միայն պետք է հստակորեն և որոշակիորեն ձևակերպի իր պահանջը, ցույց տա այն սուբյեկտիվ իրավունքը, որի պաշտպանությունը հայցում է դատարանից, ձևակերպի այդ իրավունքի պաշտպանության հայցվող եղանակը, այլ նաև ցույց տա այն փաստական հանգամանքները, որոնք, իր կարծիքով, հիմնավորում են այդ պահանջը, իր իրավունքը (օրինական շահը) պաշտպանելու, իրավունքի պաշտպանության տվյալ եղանակը կիրառելու անհրաժեշտությունը: Նմանապես ներկայացված հայցի (դիմումի) դեմ առարկող անձը պետք է մատնանշի այն փաստական հանգամանքները, որոնք բացառում են ներկայացված պահանջը բավարարելու հնարավորությունը:

Ընդ որում, շարադրվածը վերաբերում է ոչ միայն հայցային, այլ նաև ոչ հայցային վարույթների, ինչպես նաև պարզեցված ընթացակարգով քննվող վարույթների կարգով քննվող գործերին:

Ըստ գործող օրենսդրության՝ գործին մասնակցող անձանց պահանջները, այդ պահանջների և դրանց դեմ ներկայացվող առարկությունների հիմքերը պետք է բացահայտվեն վարույթի սկզբնական փուլերում՝ հայցը (դիմումը) ներկայացնելիս, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում՝ նախքան ապացուցման բուն գործընթացը սկսվելը (ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելը, ապացուցման բեռը բաշխելը, ապացույցներ ներկայացնելը, դրանք հետազոտելը և գնահատելը):

ՔԴՕ 121-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը հայցով (ոչ հայցային գործերով՝ դիմումով) դատարան դիմող սուբյեկտներին պարտավորեցնում է հայցադիմումում (դիմումում) նշել այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են պահանջները: Քանի որ և՛ հակընդդեմ հայցը, և՛ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցը ներկայացվում են հայց հարուցելու ընդհանուր կանոններով, նշված պահանջը տարածվում է նաև նրանց վրա:

Դատավարական օրենսդրությունը հաստատման ծանրություն է դնում նաև պատասխանողի վրա (ընդ որում և՛ սկզբնական, և՛ հակընդդեմ, և՛ երրորդ անձի հայցով):

Գործող օրենսդրությունը հայցադիմումի պատասխան ներկայացնելը դիտարկում է որպես պատասխանողի պարտականություն, որը պետք է կատարվի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ օրենքի պահանջների խախտմամբ հայցադիմումի պատասխան ներկայացնելու դեպքերում մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը (ՔԴՕ 139 հոդ., մաս 1, 7): Օրենքը սահմանում է, որ հայցադիմումի պատասխանը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի հայցադիմումում ներկայացված պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը: Վերջին դեպքում պատասխանում պետք է անդրադարձ կատարվի հայցի փաստական հիմքերին՝ նշելով այն փաստերը, որոնք դրված են առարկությունների հիմքում (ՔԴՕ 139 հոդ., մաս 5-7):

Ակնհայտ է, որ գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակը կարող է որոշվել, իսկ ապա նաև կազմակերպվել դրանց ապացուցմանն ուղղված գործունեությունը կողմերի փոխադարձ պահանջների, դրանց վերաբերյալ նրանց դիրքորոշումների, ներառյալ այդ պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստական

հանգամանքների վերաբերյալ հստակ, հնարավորինս լիարժեք ու գրեթե վերջնական տեղեկությունների առկայության պայմաններում: Թերևս դրանով են պայմանավորված ՔԴՕ-ի այն կարգավորումները, որոնց նպատակն է որոշակի ժամկետներով սահմանափակել գործին մասնակցող անձանց կողմից մի շարք տնօրինչական գործողություններ կատարելու հնարավորությունը:

Նպատակ հետապնդելով վարույթի սկզբնական փուլում ապահովելու գործով կողմերի իրական դիրքորոշումների բացահայտումը, ինչպես նաև այն ամրապնդող փաստական նյութն օպերատիվ ձևով և հնարավորինս լրիվ ծավալով հավաքելու հնարավորությունը, օրենսդիրը նախատեսել է, որ`

ա) հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը (ՔԴՕ 170 հոդ., մաս 1),

բ) հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողի պետք է տրամադրի փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետ (139 հոդ., մաս 8),

գ) պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի` սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար (140 հոդ., մաս 1),

դ) գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու

մասին որոշում կայացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 168 հոդ., մաս 1),

ե) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են հայցադիմում ներկայացնելու միջոցով գործի մեջ մտնել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը (ՔԴՕ 37 հոդ., մաս 1),

զ) ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը կայացնելուց հետո, գործին մասնակցող անձինք զրկվում են իրենց նյութափրավական պահանջները և առարկությունները հիմնավորելու համար նոր փաստ վկայակոչելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ նոր փաստ վկայակոչելու անհրաժեշտությունն առաջացել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո սահմանված կարգով կատարված դատավարական գործողության կամ միջնորդության բավարարման արդյունքով կամ նոր փաստ վկայակոչողը հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 171 հոդ.):

Թվարկված իրավանորմերի նպատակը կողմերի տնօրինչական բնույթի գործողությունների իրականացման ժամկետային սահմանների ռացիոնալ սահմանափակումն է, որը պայմանավորված է դատական քննության առարկան վարույթի սկզբնական փուլում որոշակիացնելու, հետազոտման (ապացուցման) ենթակա փաստական նյութի շրջանակները ճշգրտելու և ապացուցման գործընթացը պատշաճորեն կազմակերպելու համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտությամբ:

Օրենսդիրը, փաստորեն, ոչ միայն կողմերի վրա դրել է իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականություն, այլ նաև սահ-

մանել է պահանջներ ներկայացնելու, ինչպես նաև դրանք հիմնավորելու համար նյութափրավական փաստեր վկայակոչելու որոշակի վերջնաժամկետ, որը լրանալուց հետո, ընդհանուր կանոնի համաձայն, ներկայացված պահանջները դառնում են վերջնական, իսկ կողմերի վրա դրված «հաստատման բեռը»՝ իրենց պահանջները և առարկությունները հիմնավորելու համար նյութափրավական նշանակություն ունեցող փաստեր վկայակոչելու հնարավորությունը իրացված:

Հետևում է, որ եթե ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվելուց հետո գործին մասնակցող անձը դատարան ներկայացված դատավարական փաստաթղթում, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ կամ դիրքորոշում հայտնելու ընթացքում ձևակերպում է նոր պահանջներ (ներառյալ լրացում, փոփոխում է դրանք) կամ իր պահանջի կամ առարկության հիմքում դնում է նյութափրավական բնույթի նոր փաստեր, այդպիսի գործողությունները թույլատրելի համարվել, հետևաբար նաև ակնկալվող դատավարական հետևանքներն առաջացնել չեն կարող, քանի որ նման դատավարական գործողություններ կատարելու դատավարական իրավունքը, ընդհանուր կանոնի ուժով, համարվում է դադարած¹: Իսկ դա նշանակում է, որ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված հակընդդեմ կամ երրորդ անձի հայցադիմումը պետք է վերադարձվի, հայցի առարկայի կամ հիմքի փոփոխության վերաբերյալ միջնորդությունը՝ մերժվի, վկայակոչված նոր փաստերն էլ՝ չընկարկվեն (չներառվեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում):

Հարկ է սակայն, նկատի ունենալ, որ գործող ԶԴՕ-ի համաձայն, բաց թողնված ցանկացած դատավարական

1 ԶԴՕ 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **դատավարական ժամկետի ավարտից հետո գործին մասնակցող անձինք զրկվում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից**, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

ժամկետ կարող է վերականգնվել, եթե գործին մասնակցող անձը հիմնավորում է այն հարգելի պատճառներով բաց թողնելու հանգամանքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համապատասխան դատավարական գործողությունն սահմանված ժամկետում կատարելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Բացի դրանից, կարևոր է նկատի ունենալ, որ քննարկվող ժամանակային սահմանափակումները կիրառելի չեն նաև այն դեպքերում, երբ համապատասխան դատավարական գործողությունը կատարելու անհրաժեշտությունն առաջանում է ապացուցման բեռը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո սահմանված կարգով կատարված դատավարական գործողության կամ միջնորդության բավարարման արդյունքում (օրինակ՝ ապացուցման բեռը բաշխելուց հետո վեճի առարկայի մասին ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու, ներկայացված հակընդդեմ հայցն ընդունելու կամ հայցի փոփոխությունը թույլատրելու պարագայում ներկայացված նոր պահանջների և/կամ դրանց հիմքերի կապակցությամբ):

Գործին մասնակցող անձանց դիրքորոշումները (պահանջները և առարկությունները), դրանց փաստական և իրավական հիմքերը պարզելուց հետո դատարանը նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ քննարկում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների, այդ թվում՝ ապացուցման ենթակա և ապացուցման ոչ ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու և ապացույցներ ներկայացնելու ժամկետների հարցերը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 7-9), որից հետո կայացնում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում (ՔԴՕ 169 հոդ.): Հիշյալ որոշումն առանցքային նշանակություն ունի գործով ապացուցման ողջ գործընթացի պատշաճ կազմակերպման առումով, քանի որ դրանով են ըստ էության սահմանվում գործի լուծման հա-

մար նշանակություն ունեցող, այդ թվում՝ ապացուցման ենթակա և ապացուցման ոչ ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման ենթակա փաստերից յուրաքանչյուրն ապացուցելու պարտականություն կրող սուբյեկտը, ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետները: Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը, ըստ էության, կարելի է բնորոշել որպես գործով ապացուցողական գործունեության «ճանապարհային քարտեզ»:

Հաշվի առնելով քննարկվող որոշման նշանակությունը վարույթի հետագա ընթացքի և ուղղվածության վրա՝ հարկ է նկատի ունենալ, որ դատարանն այն պետք է կայացնի կողմերի բոլոր դատավարական իրավունքների և երաշխիքների պահպանմամբ: Ընդ որում, դատարանը ոչ միայն պետք է հավասար պայմաններ ստեղծի գործին մասնակցող անձանց համար, այլ նաև ամեն կերպ նպաստի, որպեսզի նրանք ժամանակին և լրիվ ծավալով ներկայացնեն իրենց պահանջները, առարկությունները, հակափաստարկները և այլն: Եթե կողմը չի ներկայացրել իր դիրքորոշումը կամ ներկայացված դատավարական նյութը պարունակում է էական թերություններ, օրինակ՝ ձևակերպված պահանջը հստակ չէ, չի վկայակոչվել նման պահանջ կամ առարկություն ներկայացնելու համար նյութական օրենսդրությամբ կարևորվող փաստը, չի ներկայացվել հայցադիմումի պատասխան կամ խախտվել են դրա բովանդակությանը ներկայացվող պահանջները և այլն, դատարանը պետք է մատնացույց անի այդ բացթողումները, պարզաբանի կողմին նրա իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնի դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, այլ ոչ թե բավարարվի որոշակի թերությունների արձանագրմամբ: Փաստը, որը վրիպել է կողմի ուշադրությունից կամ որը կողմը չի արժևորել, կարող է դրվել վճռի հիմքում միայն այն դեպքում, երբ դատարանը նախնական նիստում կողմերի հետ քննարկել է

դրա վերաբերելիությունը, մտցրել է այն ապացուցման առարկայի մեջ և կողմին տվել է հնարավորություն դրա վերաբերյալ ներկայացնել դիրքորոշում:

Նախնական դատական նիստում նախքան ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակի և այդ հանգամանքներն ապացուցելու բեռը բաշխելու հարցերը կողմերի հետ քննարկելու պարտականությունը դատարանի վրա դնելը և նշված որոշումը կայացնելուց հետո նոր նյութափրավական փաստեր ներկայացնելու արգելքն իրենց ամբողջությամբ մեջ հանդես է գալիս որպես դատավարական գործիք, որը, լիովին համապատասխանելով «ակտիվ դեր ունեցող և գործի քննությունն ու կողմերի մրցակցությունը կազմակերպող դատարանի» ժամանակակից կոնցեպցիային, թույլ է տալիս օր առաջ ճիշտ կողմնորոշվելու վարույթի ուղղվածությունը որոշելու, կողմերի թերացումներն ուղղելու հարցերում, ինչպես նաև կողմերի համար խթանիչ նշանակություն է ունենում իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած ամբողջ վերաբերելի փաստական և ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու և գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտելու հարցերում: Այն նաև թույլ է տալիս նախքան դատաքննության անցնելն ուրվագծելու վերաբերելի փաստերի շրջանակը և, հետևաբար նաև՝ վերահսկելու դատավարական նյութի հոսքը՝ խուսափելով գործի համար նշանակություն չունեցող փաստական և ապացուցողական ծավալուն նյութեր դատական քննության առարկա դարձնելուց:

Պետք է նկատի ունենալ, որ գործող օրենսդրությունը պահանջների և առարկությունների հիմքերը վկայակոչելու պարտականությանը չի տալիս այն բովանդակությունը և նշանակությունը, որն ընդունված է մրցակցային դատավարության անգլո-ամերիկյան «մաքուր» մոդելի շրջանակներում: Անգլո-ամերիկյան համակարգում ապացուցման

առարկան ուրվագծվում է դատարանից անկախ՝ բացառապես կողմերի պահանջների և առարկությունների հիման վրա: Դատարանը պարտավոր է վեճը լուծել բացառապես կողմերի վկայակոչած փաստական հանգամանքների հիման վրա: Եթե վիճող կողմը սխալ է կողմնորոշվում իր պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի հանգամանքներ դնելիս և դրանք դատարանին ներկայացնելիս, ինքն էլ կրում է դրա անբարենպաստ հետևանքների ռիսկը: ԱՄՆ-ում և Անգլիայում դատարանն իրավունք չունի կողմերի ուշադրությունը հրավիրել իրավական նորմերով արժևորվող հանգամանքներին և իր նախաձեռնությամբ դրանք ներառել ապացուցման ենթակա հանգամանքների կազմում: Այստեղ դատարանն ապացուցմանն օժանդակող գործառույթներ չի իրականացնում¹:

ՀՀ գործող օրենսդրությունը, հաստատման ծանրությունը կողմերի վրա դնելով հանդերձ, սահմանում է «մեղմ» պահանջներ², որոնցում արտացոլվում է օրինականության գերակայությունը մրցակցության սկզբունքի նկատմամբ: Գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը Հայաստանի քաղաքացիական դատավարությունում որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկու-

1 Այդ մասին մանրամասն տե՛ս **И.В. Решетникова.** Доказательственное право Англии и США. М.: «Городец», 1999, Гл. 2:

2 Ըստ գործող ՔԴՕ-ի՝ հայցադիմումը, հայցադիմումի պատասխանը, հայցադիմումի լրացումը, դրա դեմ ներկայացված պատասխանը, գործին հոդվածում դիտարկվում այլ առարկությունները դատարանի կողմից պետք է ընդունվեն նաև այն դեպքերում, երբ դրանց հիմքում դրվել են օրենքով չարժևորվող հանգամանքներ, կամ անհրաժեշտ հանգամանքների մի մասը: Հայցադիմումը վերադարձնելու հիմքերի թվում ՔԴՕ 127-րդ հոդվածում դիտարկվում է բացառապես այն իրավիճակը, երբ ներկայացված հայցադիմումը (դիմումը) ընդհանրապես չի պարունակում հղում այն հանգամանքներին, որոնք դրվում են հայցապահանջների հիմքում: Ուշագրավ է, որ տվյալ հիմքով հայցադիմումների վերադարձման դեպքերը պրակտիկայում գրեթե չեն հանդիպում, քանի որ պահանջ ներկայացնելիս հայցվորներն ինչ-որ (թեկուզ անհեթեթ) հանգամանքների վրա հենվում են, իսկ օրենքը վերջիններիս բնույթին որևէ հատուկ պահանջ չի առաջադրում:

յունների հիման վրա և ղեկավարվելով կիրառման ենթակա իրավական նորմերի բովանդակությամբ: Դատարանն ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելիս չի կարող սահմանափակվել գործին մասնակցող անձանց ներկայացրած փաստերով և իր նախաձեռնությամբ դրա մեջ պետք է մտցնի նաև գործի համար եական նշանակություն ունեցող այլ փաստեր: Նման իրավակարգավորումը, որը հատուկ է խառը մրցակցային դատավարություն ունեցող գրեթե բոլոր երկրների դատական համակարգերին, հիմնականում պայմանավորված է դատարանի օժանդակող գործառույթներով: Վերջիններիս օրենսդրական ամրագրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է քաղաքացիական դատավարությունում «փաստաբանական մենաշնորհի» բացակայության, իրավագիտակցության ոչ բարձր մակարդակի, բնակչության սոցիալական որոշակի խավերի անվճարունակության պայմաններում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների պաշտպանության համար:

Ապացուցման առարկան որոշելու դատարանի պարտականության ամրագրումը չի նշանակում, որ օրենքը դատարանի վրա ևս դնում է հաստատման ծանրություն: Դատարանն ըստ գործող օրենսդրության ապացուցելու պարտականություն չի կրում: իրավակիրառ պրակտիկայում արտահայտված այն կարծիքը, որ ապացուցման առարկայի մեջ որոշակի հանգամանքներ մտցնելով կամ կողմի վկայակոչած հանգամանքները գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակից հանելով՝ դատարանը խախտում է մրցակցության սկզբունքը՝ ըստ էության իրականացնելով կողմի գործառույթ¹, հիմնավորված չի թվում: Դատարանի իրավասությունը և գործին մասնակցող անձի հաստատման ծան-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշումը «Քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

րութիւնը պետք է դիտարկել տարբեր հարթութիւններում: Ապացուցման ենթակա փաստերի շրջանակ որոշելիս դատարանն իրականացնում է օրենսդրությամբ իր առջև դրված խնդիրները՝ ուրվագծելու այն փաստական հանգամանքների շրջանակը, որոնք գործը լուծելու համար ունեն նշանակութիւն, թույլատրելիութեան և վերաբերելիութեան կանոններից ելնելով կանխորոշելու դատաքննութեան սահմանները և բացառելու գործի քննութեան ընթացքում ավելորդ հանգամանքներ և ապացույցներ հետազոտելու անհրաժեշտութիւնը: Գործին մասնակցող անձինք էլ հետապնդում են իրենց նպատակները, որոնք դատավարութեան ընդհանուր խնդիրների և նպատակների հետ կարող են չհամընկնել:

§4. Գործի լուծման համար նշանակութիւն ունեցող փաստերի շրջանակը և ապացուցման առարկան

4.1. Գործի լուծման համար նշանակութիւն ունեցող փաստերի և ապացուցման առարկայի հասկացութիւնը

Արդարադատութեան և կողմերի շահը պահանջում են գործի փաստական կազմը, այսինքն՝ գործն ըստ էութեան ճիշտ լուծելու համար նշանակութիւն ունեցող բոլոր իրավաբանական փաստերը որոշել և պարզել սպառնիչ լրիվութեամբ¹:

Այն հանգամանքները, որոնք տվյալ գործով կիրառման ենթակա նյութական և դատավարական իրավունքի նորմերին համապատասխան նշանակութիւն ունեն քննվող գործի լուծման համար և այդ իսկ պատճառով պետք է հանդիսանան դատական ճանաչողութեան առարկա և հետազոտվեն դատական քննութեան ընթացքում, դատավա-

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարութիւն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 350:

րագիտության և դատավարական օրենսդրության մեջ կոչվում են **գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր**, իսկ այն փաստերի ամբողջությունը, որոնք որոշակի դատավարական ձևի պահանջների պահպանմամբ ենթակա են ապացուցման՝ **ապացուցման առարկա**:

Ակնհայտ է, որ «գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր» հասկացությունը դիտարկվում է որպես շատ ավելի լայն, քան «ապացուցման առարկա»-ն: Ապացուցման ենթակա փաստերի հետ մեկտեղ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում կոնկրետ գործով կարող են ընդգրկվել փաստեր, որոնց դատական ճանաչողությունն իրականացվում է ոչ թե ապացուցման միջոցով, այլ դրանց հանրահայտությունը, կանխորեն որոշված լինելը կամ անվիճելիությունն արձանագրելու միջոցով: Նման փաստերը դատավարական օրենսդրությանը համապատասխան, ապացուցման կարիք չունեն (հանրահայտ փաստեր, նախադատելի փաստեր, նոտարական կարգով հաստատված փաստեր), ինչպես նաև այնպիսի փաստեր, որոնք ապացուցելու պարտականությունից գործին մասնակցող անձինք ազատվում են՝ ելնելով դատավարական իրավիճակի փոփոխությունից (անվիճելի փաստեր)¹: Դրանով է պայմանավորված ՔԴՕ 60-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը ենթակա են ապացուցման, բացառությամբ այն փաստերի, որոնք ենթակա չեն ապացուցման:

Իհարկե, գործնականում հազվադեպ չեն իրավիճակները, երբ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը ենթակա են ապացուցման: Նման դեպքերում քննարկվող երկու հասկացությունները բովանդակային առումով համընկնում են, սակայն զուտ եզրութաբանական առումով չեն նույնանում: Հարկ է նկատի ունե-

¹ Ապացուցման ոչ ենթակա փաստերի մասին մանրամասն տե՛ս հաջորդ ենթագլուխը:

նալ, որ գործի քննության ընթացքում կարող են վկայակոչվել ապացուցման կարիք չունեցող նոր փաստեր, ինչի արդյունքում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը կարող է ընդլայնվել, իսկ ապացուցման ենթակա փաստերի կազմը մնալ անփոփոխ: Միևնույն ժամանակ ապացուցման ենթակա փաստերի ընդունման արդյունքում ապացուցման ենթակա փաստերի շրջանակը կարող է նեղանալ, սակայն դա որևէ կերպ չի կարող ազդել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմի վրա:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կենտրոնական խնդիրներից մեկն է (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 7, 169 հոդ.), որի պատշաճ լուծումը առանցքային նշանակություն ունի գործի քննությունը ճիշտ կազմակերպելու, վարույթի ընթացքը, ուղղվածությունը և բովանդակությունն ուրվագծելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր կայացնելու տեսանկյունից: Եթե գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում դատարանը չի ընդգրկում գործը ճիշտ լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստ, դա անխուսափելիորեն հանգեցնում է գործի փաստական հանգամանքները ոչ լրիվ պարզելուն և, որպես հետևանք, չհիմնավորված դատական ակտի կայացման: Եվ ընդհակառակը, տվյալ գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերի անհարկի հետազոտումը, ապացուցման ոչ ենթակա փաստերն ապացուցման առարկայի մեջ ընդգրկելը և հետազոտելն ուղղակի հակասության մեջ է մտնում դատական խնայողության սկզբունքի հետ՝ հանգեցնելով դատարանի և գործին մասնակցող անձանց ժամանակի և ռեսուրսների անհարկի վատնման, իսկ հաճախ նաև ոչ արդարադատական ակտի կայացման:

Նկատի ունենալով նշվածը, ինչպես նաև այն, որ գործը քննող դատարանն է կրում վարույթի բնականոն ընթացքը և կողմերի մրցակցությունը պատշաճորեն կազմակերպելու, առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ գործը քննելու և լուծելու պարտականությունը (ԴՕ 70 հոդ., մաս 2, կետ 6)՝ օրենսդիրը հետևյալն է դրել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու բեռը:

ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով*: Նման նորմով օրենքն ըստ էության կանխորոշում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմը, սահմանում է այդ փաստերի շրջանակը կազմավորելու աղբյուրները, նախատեսում է այդպիսի փաստերի կազմն ուրվագծելու՝ դատարանի իրավասությունը և նախանշում է այն իրականացնելու սահմանները:

4.2. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմը

Ուշագրավ է, որ ՔԴՕ 60-րդ հոդվածում ամրագրելով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու կանոնները՝ օրենսդիրն ընդգծել է այդ հանգամանքների գործի լուծման համար նշանակություն ունենալու և ամենևին էլ չի արժևորել դրանց իրավաբանական փաստ լինելու հանգամանքը:

Այդուհանդերձ, դատավարագիտության մեջ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազ-

մում, առաջին հերթին, դիտարկվում են **Նյութաիրավական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերը**, որոնք պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավա-հարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի (նորմերի) ճիշտ կիրառման և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար, այն հանգամանքները, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են որոշակի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք արգելակում են սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների առաջացմանը (գործարքի հակաօրինականությունը, խաբեությունը, բռնությունը, անգործունակությունը և այլն):

Գործնականում հաճախ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նյութաիրավական նշանակություն ունեցող հանգամանքների կազմի մեջ են մտնում ոչ միայն փաստական հանգամանքները, այլ նաև կիրառման ենթակա իրավական նորմերը (ներառյալ դրանց ուժի մեջ լինելու կամ ուժը կորցրած լինելու փաստերը, ինչպես նաև օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը): Նման դիրքորոշումն ընդունելի համարվել չի կարող: իրավական նորմերն օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթներ են, որոնք ապացուցելու անհրաժեշտություն չկա: Դրանք ընդհանրապես դատական ճանաչողության օբյեկտ չեն: իրավական նորմերը դատարանի կողմից կիրառվում են, իսկ իրավակիրառական գործունեությունն ապացուցում դիտարկվել չի կարող, քանի որ այս կամ այն իրավանորմի կիրառման անհրաժեշտությունն օրենքով նախատեսված միջոցներով ապացուցելու կարիք չի զգում:

Հարկ է նկատել, որ իրավունքի կիրառման հարցում ելակետային է «*jura novit curia*» («դատավորը գիտի օրենքը») սկզբունքը, որի ուժով վեճը լուծող դատավորը համարվում է «իրավունքի հարցերով փորձագետ» և, համա-

պատասխանաբար, վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմի ճիշտ կիրառման ամբողջ բեռն ու պատասխանատվությունը դրվում է նրա վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ներպետական, այլ նաև կիրառելի օտարերկրյա իրավունքի նորմերի մասին է: Վերջիններիս կապակցությամբ ուշագրավ է այն, որ, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նկատառումներից ելնելով, ԶԴՕ 4-րդ հոդվածի 4-րդ մասով դատարանի վրա է դրվել կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը՝ օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկային համապատասխան «ի պաշտոնե» պարզելու գործառույթը: Ամենևին էլ պատահական չէ, որ օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը պարզելու նպատակով դատարանին վերապահվում է անհրաժեշտության դեպքում ոչ թե փորձաքննություն և շանակելու կամ կողմերից ապացույցներ պահանջելու, այլ նրանցից համապատասխան հիմնավորում պահանջելու, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանում գտնվող իրավասու մարմինների աջակցությանը դիմելու հնարավորություն: Ակնհայտ է, որ նման հիմնավորումը, ինչպես նաև միջազգային-իրավական աջակցության կարգով ստացված պարզաբանումը կոչված է «ամրապնդելու դատարանի իրավական դիրքորոշումը», այլ ոչ թե հետապնդում է գործով ապացույց ձեռք բերելու նպատակ:

Ապացուցման կարիք կարող են զգալ միայն վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի օրենքով չնախատեսված համապարտադիր վարքագծի կանոնների՝ գործարար շրջանառության սովորույթների առկայությունը և դրանց բովանդակությունը: Գործարար շրջանառության սովորույթների նկատմամբ «դատավորը գիտի օրենքը» սկզբունքը կիրառելի չէ, ուստի եթե գործին մասնակցող անձն իր պահանջների կամ առարկությունների հիմքում դնում է գործարար շրջանառության սովորույթ, նա պարտավոր է ապացուցել և՛ նման սովորույթի առկա-

յության փաստը, և՛ տվյալ սովորույթի բովանդակությունը (ՔԴՕ 4 հոդ., մաս 2): Հետևաբար, տվյալ հարցերը ևս պետք է ընդգրկվեն գործն ըստ էության լուծելու համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստերի կազմում:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շարքում պետք է դիտարկել նաև նյութափրավական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի հաստատման միջոց հանդիսացող **ապացուցողական փաստերը**, որոնք իրավաբանական փաստեր չեն, բայց առանձին վերցրած կամ իրենց համակցության մեջ դատարանին հնարավորություն են տալիս եզրակացություն անել գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութափրավական փաստերի առկայության կամ բացակայության մասին¹:

Ինչպես կտեսնենք հետագա շարա դրանքում, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելիս դատարանը որոշակի սահմաններում պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը: Եվ եթե օրինակ՝ վնասի հատուցման վերաբերյալ վեճի շրջանակներում պատասխանողն իր առարկությունների հիմքում դնի վնասի պատճառման պահին իր՝ այլ վայրում գտնվելու փաստը, վերջինս չի կարող անտեսվել և, որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, չներառվել ապացուցման առարկայի մեջ:

Քաղաքացիական գործով դատարանի ճանաչողության առարկա են նաև տարատեսակ **դատավարական բնույթի իրավաբանական փաստեր**՝ այնպիսի հանգա-

1 Ապացուցողական փաստերի բնույթը հաշվի առնելով՝ դատավարագիտության մեջ դրանք դիտարկվում են ոչ միայն որպես «որոնվող»՝ ապացուցման ենթակա փաստեր, այլ նաև իբրև անուղղակի ապացույցներ, որոնք ինքնին կամ այլ ապացույցների (նաև այլ ապացուցողական փաստերի) համակցությամբ կարող են հաստատել կամ հերքել գործի ընկության համար նշանակություն ունեցող «գլխավոր» որոնվող փաստը: Տե՛ս, օրինակ, **Осокина Г.Л.** Гражданский процесс: общая часть. Учебник. 3-е изд. М.: «Норма», 2013, էջ 593-594:

մանքներ (դատավարական գործողություններ, անգործություն, իրադարձություններ), որոնց հետ դատավարական օրենքը կապում է համապատասխան դատական ատյանում գործի հարուցման, քննության և լուծման ընթացքը միջնորդավորող իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Նման փաստերի իմացությունը դատարանին հնարավորություն է տալիս ճիշտ լուծել վարույթի ընթացքում ծագող դատավարական (ընթացակարգային) հարցերը, այդ թվում՝ հարուցված վարույթի իրավաչափության վերաբերյալ:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատավարական բնույթի իրավաբանական փաստերը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում չեն ընդգրկվում, քանի որ ուղղակիորեն չեն ազդում գործի ըստ էության լուծման վրա:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելիս անհրաժեշտ է այդ փաստերը հստակորեն սահմանազատել այն հանգամանքներից, որոնք ունեն զուտ ընթացակարգային նշանակություն և դատավարական օրենքի ուժով էական նշանակություն ունեն այս կամ այն դատավարական հարցի (հայցադիմումը վերադարձնելու, ժամկետը վերականգնելու, բողոքի ընդունումը մերժելու և այլն) քննության և լուծման համար: Վերջիններիս թվին պետք է դասել, օրինակ, ընդունելիության վրա ազդող թերություններով հայցադիմում, դիմում կամ բողոք ներկայացնելը, դատավարական փաստաթղթի հանձնումը, դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը, ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելը և դրանք կապակցությամբ միջանկյալ դատական ակտեր կայացնելը, վերջիններիս պահանջների կատարումը կամ չկատարումը, պահանջների կամ վկայակոչված փաստերի ընդունումը, դատական նիստին չներկայանալը, սահմանված ժամկետում ապացույցներ չներկայացնելը, դատական նիստը հետաձգելու կամ վարույթը կասեցնելու հիմքի ի

հայտ գալը, վարույթը կասեցնելու հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը, դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարք կատարելը, ապացույցներ ոչնչացնելը կամ թաքցնելը, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելը, բողոք ներկայացնելու ժամկետի լրանալը և այլն: Բոլոր նշված և նմանատիպ դատավարական նշանակության իրավաբանական փաստերը, թեև դատական ճանաչողության առարկա են և ենթակա են ապացուցման, այդուհանդերձ գործի լուծման համար ուղղակի նյութափրավական նշանակություն չունեն:

Միևնույն ժամանակ, ըստ դատավարական օրենսդրության, մի շարք դատավարական բնույթի իրավաբանական փաստեր ուղղակիորեն ազդում են գործի ելքի վրա, կանխորոշում են նյութափրավական վեճի ճակատագիրը և, ըստ այդմ, գործի լուծման համար ունեն Էական նշանակություն: Խոսքն այն փաստական հանգամանքների մասին է, որոնք ԶԴՕ 180-րդ հոդվածի 1-ին և 182-րդ հոդվածի 1-ին մասերին համապատասխան, առանց գործն ըստ Էության լուծելու վարույթն ավարտելու՝ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքեր են: Նման փաստերը գործի ելքի վրա ունենում են ուղղակի ազդեցություն (հանգեցնում են վարույթի ավարտի, գործի լուծման), հետևաբար չեն կարող չընդգրկվել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների կազմում, եթե դրվում են հայցի (դիմումի) դեմ ներկայացված առարկությունների հիմքում:

Բոլոր մյուս դատավարական փաստերը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում չեն ընդգրկվում. ԶԴՕ 60-րդ հոդվածի իմաստով դրանք հարկ է դիտարկել ոչ թե որպես գործի լուծման, այլ դրա քննության, այս կամ այն դատավարական հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող հան-

գամանքների կազմը քննարկելիս հարկ է նկատի ունենալ, որ գործող դատավարական օրենսդրությունը որոշ նյութաիրավական և դատավարական փաստերի տալիս է **առաջնային նշանակություն**: Դրանք այն փաստերն են, որոնց առկայությունը կամ բացակայությունը պայմանավորում է կողմերի պահանջների և առարկությունների հիմքում դրված այլ փաստերի նշանակությունը գործի լուծման համար:

Դատավարական օրենսդրությունն առանձնացնում է այնպիսի փաստեր, որոնց առկայությունն ինքնին բավարար է գործը լուծելու համար, և այդպիսի փաստերի առկայության դեպքում պարտավորեցնում է դատարանին գործը լուծել դրանց հիման վրա՝ առանց անդրադառնալու կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած այլ փաստերին: Խոսքը, Մասնավորապես վերաբերում է հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու, հայցն առանց քննության թողնելու և գործի վարույթը կարճելու հիմքերին: Գործին մասնակցող անձանց կողմից նման փաստեր վկայակոչելու դեպքում, այդպիսի փաստերը ձեռք են բերում առաջնային նշանակություն, քանի որ հաստատվելու պարագայում դատարկվում են որպես գործը լուծելու ինքնուրույն և բավարար հիմք, ինչը, դատական խնայողության սկզբունքից ելնելով, վերացնում է կողմերի պահանջների և առարկությունների հիմքում դրված մյուս փաստերը հետագոտելու անհրաժեշտությունը:

Այսպես, ԶԴՕ 168-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը նախքան գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելը և դրանց ապացուցման պարտականությունը բաշխելն առաջնահերթ քննում է նշված միջնորդությունը՝ պարզելով վերջինիս և դրա դեմ բերված առարկությունների հիմքում դրված փաստերը: Ընդ որում, վարույթի հետագա ընթացքը կախված է հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմումի կապակցությամբ դատարանի եզրահանգումներից: Մասնավորապես հայցային

վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերին (ՔԴՕ 168 հոդ., մաս 6), իսկ նման հիմքերի բացակայության դեպքում մերժում է միջնորդությունը՝ շարունակելով գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները (ՔԴՕ 168 հոդ., մաս 5):

Գործնականում նման կարգով են քննվում նաև հայցն առանց քննության թողնելու և գործի վարույթը կարճելու մասին գործին մասնակցող անձանց միջնորդությունները: Եթե համապատասխան հիմքը վկայակոչվում է նախքան գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելը և դրանց ապացուցման պարտականությունը բաշխելը, դատական խնայողության սկզբունքի ուժով դատարանը, նախ, պետք է պարզի այդպիսի հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ ըստ այդմ կայացնելով վարույթը շարունակելուն կամ ավարտելուն ուղղված դատական ակտ: Բնականաբար, քանի որ վարույթը տվյալ փուլում ավարտելու հիմքերի առկայության դեպքում գործն ըստ էության լուծելու համար նշանակություն ունեցող մյուս փաստերին անդրադառնալը դառնում է անիմաստ, հայցային վաղեմություն կիրառելու, հայցն առանց քննության թողնելու և գործի վարույթը կարճելու մասին գործին մասնակցող անձանց միջնորդությունների և դրանց դեմ ներկայացվող առարկությունների հիմքում դրված փաստերը պարզելը ձեռք է բերում առաջնահերթ նշանակություն. դրանց առկայությունը կամ բացակայությունը պայմանավորում է նախ կողմերի պահանջների և առարկությունների հիմքում դրված այլ փաստերի նշանակությունը գործի լուծման համար և ապա՝ գործի հետագա ընթացքը և կատարվելիք դատավարական գործողությունների բնույթն ու ծավալը:

4.3. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը կազմավորելու աղբյուրները

Գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների կազմը ճիշտ որոշելու հարցն ունի չափազանց կարևոր գործնական նշանակություն:

ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը կազմավորվում է երկու աղբյուրներից՝

1) հայցի (դիմումի) հիմքի և դրա դեմ արվող առարկությունների հիմքի փաստերից,

2) կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի (նորմերի) հիպոթեզով և դիսպոզիցիայով նախատեսված փաստերից:

Ինչպես նշվել է վերը, պահանջը կամ դրա դեմ ներկայացվող առարկությունները հիմնավորող փաստերը դատարանին հայտնելու պարտականությունը, այսինքն՝ հաստատման ծանրությունը, գործող դատավարական օրենքը դնում է գործին մասնակցող անձանց վրա: Գործին մասնակցող անձանց հաստատման շնորհիվ է որոշվում գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը և հետագոտման ենթակա փաստական նյութի ծավալը: Նշվածը քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի կարևորագույն դրսևորում է: Իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելով՝ գործին մասնակցող անձինք մեծապես կանխորոշում են վարույթի ընթացքը, ուղղվածությունը և նույնիսկ կայացվելիք դատական ակտի բովանդակությունը՝ դատարանին կաշկանդելով ներկայացրած պահանջների և առարկությունների շրջանակով և ուրվագծելով դատական քննության սահմանները:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ գործին մասնակցող անձինք իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի հանգամանքներ դնելիս կարող են սխալվել: Նրանք կարող են վկայակոչել փաստեր, որոնք կիրառման ենթակա իրավանորմերով չեն արժևորվում,

չունեն ապացուցողական նշանակություն (իրավաբանական փաստերի հաստատման միջոց՝ ապացուցողական փաստեր չեն), հայցի առարկային չեն վերաբերում, այլ կերպ ասած՝ որևէ նշանակություն չունեն տվյալ գործի լուծման համար՝ վերաբերելի փաստեր չեն: Մեկ այլ դեպքում տարբեր պատճառներով և շարժառիթներով գործին մասնակցող անձինք կարող են անտեսել իրավաբանական նշանակություն ունեցող որոշակի վերաբերելի փաստեր կամ աղավաղել դրանց բնույթը: Այդ իսկ պատճառով գործին մասնակցող անձանց կողմից վկայակոչված փաստերն ինքնին չեն կարող կազմել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը: Կոնկրետ իրավանորմը կիրառելու համար դատարանը պետք է պարզի տվյալ իրավանորմով արժևորվող բոլոր իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, ուստի եթե այդ փաստերից որևէ մեկը կողմերի պահանջների կամ առարկությունների հիմքում չի դրվել, դատարանն ինքն է պարտավոր այն մատնացույց անել, մտցնել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների կազմում և այդ փաստի ապացուցման պարտականությունը դնել գործին մասնակցող համապատասխան անձի վրա՝ իհարկե, պահպանելով հայցի փաստական հիմքը սեփական նախաձեռնությամբ փոխելու, հայցի և դրա դեմ ներկայացվող առարկությունների շրջանակներից դուրս գալու արգելքը:

Քանի որ արդարադատության իրականացումը ենթադրում է գործով պարզված որոշակի փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի կոնկրետ նորմերի կիրառում և բացառապես դրանց հիման վրա կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հրամայական (հաստատողական) եզրահանգումների կատարում, կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերի հիպոթեզով և դիսպոզիցիայով նախատեսված փաստերը դատարանի համար գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու

(կազմավորելու) հիմնական աղբյուր են: Դա, սակայն, ամենևին չի ստորադասում գործին մասնակցող անձանց կողմից վկայակոչված փաստերը, քանի որ վերջիններս ներկայացված պահանջի հետ համակցությամբ կանխորոշում են վիճելի հարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմերի շրջանակը, այն նորմերի, որոնց բովանդակությունից ելնելով՝ դատարանը պետք է որոշի կողմերի վկայակոչած փաստերի վերաբերելիությունը կամ մատնանշի այն փաստերը, որոնք ևս կարևոր են ներկայացված պահանջի կամ առարկության հիմնավորվածության վերաբերյալ եզրահանգումներ անելու համար:

Վերը շարադրվածը պարզաբանենք օրինակով: Ենթադրենք դատարան է ներկայացվել հայցադիմում՝ վարձակալության պայմանագիրը վարձատուհի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու վերաբերյալ պահանջով, որի հիմքում դրվել է այն փաստը, որ վարձակալը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրով նախատեսված ամսական վարձավճարը և գրավոր չի խնդրել վճարումը կատարելու ժամկետի երկարաձգում:

Նման գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու համար դատարանը, նախ, պետք է պարզի հայցի առարկան (ի՞նչ է պահանջում հայցվորը) և հիմքը (ինչպիսի՞ փաստերի վրա է հենվում այդ պահանջը), քանզի նշված հարցերի պատասխանն է կանխորոշում կիրառման ենթակա իրավական նորմերի շրջանակը:

Վարձակալության պայմանագիրը վարձատուհի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու պահանջ ներկայացնելու իրավունքը և հիմքերը թվարկված են Քաղ. օր. 622-րդ հոդվածում, ըստ որի՝

«Վարձատուհի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

- 1) գույքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
- 2) էականորեն վատթարացրել է գույքի վիճակը.
- 3) պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո պարբերաբար կամ անընդմեջ երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.
- 4) վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետ-

ներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգում այն դեպքերում, երբ, օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան, հիմնական վերանորոգում կատարելը վարձակալի պարտականությունն է:

Վարձակալության պայմանագրով կարող են սահմանվել վարձատուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր»:

Ակնհայտ է, որ ներկայացված հայցի նկատմամբ կիրառելի է Քաղ. օր. 622-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, քանի որ վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու՝ նշված հոդվածում թվարկված այլ հիմքերից (փաստերից) որևէ մեկը պահանջի հիմքում չի դրվել, հետևաբար չի էլ կարող դառնալ քննարկման առարկա:

Կիրառման ենթակա իրավական նորմը որոշելուց հետո դատարանը պետք է համադրի տվյալ նորմով արժևորվող հանգամանքները հայցի հիմքում դրվածների հետ՝ պարզելու համար վերջիններիս լրիվությունը և վերաբերելիությունը: Նման համադրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ կողմն իր պահանջի հիմքում դրել է ամսական վարձավճարը վճարված չլինելու փաստը, մինչդեռ Քաղ. օր. 622-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը վարձակալին իրավունք է վերապահում պահանջելու պայմանագրի վաղաժամկետ լուծում այն դեպքերում, երբ վարձակալը պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո պարբերաբար (պայմանագրի գործողության ընթացքում երկու կամ ավելի անգամ) կամ անընդմեջ երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը: Ընդ որում, քննարկվող նորմը կամ Քաղ. օր. որևէ այլ դրույթ վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջ ներկայացնելու իրավունքը չի կապում վճարումը կատարելու ժամկետը երկարաձգելու մասին խնդրանքով վարձատուին չդիմելու փաստի հետ:

Նման վերլուծության արդյունքում, ըստ ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի, դատարանը պարտավոր է մատնացույց անել և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների կազմում ներառել վարձավճարը պարբերաբար կամ անընդմեջ երկու անգամից ավելի վարձակալի կողմից վճարված չլինելու հանգամանքը և, միևնույն ժամանակ, վճարումը կատարելու ժամկետը երկարաձգելու մասին խնդրանքով վարձատուին չդիմելու փաստը համարել ոչ վերաբերելի՝ այն չմտցնելով գործի

լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում:

Քայլերի նման հաջորդականությունը պահպանելու դեպքում դատարանը, նախ, դուրս չի գա ներկայացված հայցի շրջանակից՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը որոշելիս հիմք ընդունելով տվյալ դեպքում հայցի հիմքում դրված վարձավճարը վճարված չլինելու փաստը, երկրորդ՝ կապահովի գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը որոշելիս վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմով ղեկավարվելու օրենսդրական պահանջը և երրորդ՝ անհարկի ժամանակ և ռեսուրսներ չի ծախսի գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերի ապացուցումը կազմակերպելու վրա:

Վերը շարադրվածից բխում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը (ապացուցման առարկան) որոշելու դատարանի իրավասությունը որոշակի **սահմաններ** ունի:

Անդրադառնալով ապացուցման առարկան դատարանի կողմից որոշելու սահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանը 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա» բառակապակցության առկայության պայմաններում դատարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում: Ապացուցման առարկան որոշելիս դատարանը որպես ուղենիշեր պիտի ընդունի, մի կողմից, հայցի տարրերը՝ առարկան և հիմքը, մյուս կողմից՝ հայցի դեմ ներկայացված առարկությունների հիմքերը: Ըստ Սահմանադրական դատարանի, բացառապես դրանց հիման վրա դատարանը պետք է ուրվագծի տվյալ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը (ապացուցման առարկան): Դրանք էապես ազդում են վարույթի ուղղվածության և բովանդակության վրա, և կաշկանդում են դատարանին գործին մասնակցող անձանց ներկայացրած պահանջների շրջանակով, ինչի արդյունքում բացառվում է այս տեսանկյունից դատարանի հնա-

րավոր կամայականությունը և չներկայացված պահանջների անդրադառնալու հնարավորությունը¹:

Գործն ըստ Էուբյան լուծելու համար նշանակություն ունեցող հանգամանքների կազմի և այն որոշելու դատարանի լիազորության մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ, որ դատական քննության առարկա հանդիսացող իրավահարաբերությունները կարգավորող նորմերը տվյալ տեսակի գործերի համար ամրագրում և արժևորում են իրավաբանական փաստերի որոշակի **տիպային շրջանակ**, որն էլ սովորաբար կազմում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստակազմի հիմքը և պետք է պարզվի տվյալ կատեգորիայի յուրաքանչյուր գործով:

Այսպես, Քաղ. օր. 877, 878, 880-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ փոխառության գումարը վերադարձնելու (պարտքը բռնագանձելու) մասին պահանջներով յուրաքանչյուր գործ ըստ Էուբյան լուծելու համար դատարանն առնվազն պետք է պարզի՝

- կողմերի միջև կնքվե՞լ է արդյոք փոխառության պայմանագիր (փոխառության պայմանագրի կնքման, այդ թվում՝ փոխառության գումարի հանձնումը հաստատող փաստաթղթի առկայության փաստը),
- ի՞նչ ժամկետով է կնքվել փոխառության պայմանագիրը (անորոշ կամ որոշակի ժամկետով ժամկետով պայմանագիրը կնքելու փաստը),
- լրացե՞լ է արդյոք փոխառության ժամկետը (փոխառության ժամկետը լրանալու փաստը):

Նշված հանգամանքների հետ են նյութական իրավունքի նորմերը կապում փոխառության գումարը ետ պահանջելու փոխատուի սուբյեկտիվ իրավունքի և փոխառուի՝

¹ Մանրամասն տե՛ս Սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՌ-845 որոշումը «Քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

փոխառության գումարը վերադարձնելու սուբյեկտիվ պարտականության առաջացումը, և դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում պահանջը բավարարման ենթակա չէ: Թվարկված նյութաիրավական բնույթի փաստերը քննարկվող կատեգորիայի բոլոր գործերի լուծման համար ունեն տիպային (ստանդարտ) նշանակություն և պետք է պարզվեն յուրաքանչյուր նման գործով:

Միևնույն ժամանակ հետազոտման ենթակա փաստական հանգամանքների շրջանակը կարող է էապես ընդլայնվել կողմերի գործողությունների արդյունքում: Մասնավորապես կախված նրանից, թե ինչպիսի փաստեր են դրել գործին մասնակցող անձինք իրենց պահանջների և առարկությունների հիմքում, դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով դրա լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում պետք է ընդգրկի նաև հետևյալ փաստերը՝

- փոխառության պայմանագրի հատուցելի լինելը և նախատեսված տոկոսների չափը, եթե հայցվորը փոխառության գումարից զատ պահանջում է բռնագանձել նաև փոխառության տոկոսները,
- փոխառության գումարը վերադարձնելու պարտականությունը կատարված լինելու փաստը, եթե պատասխանողը, առարկելով հայցի դեմ, վկայակոչում է պարտավորությունը լրիվ կամ մասամբ կատարված լինելու հանգամանքը,
- փոխառության անփողությունը, եթե այդ փաստը դրվում է պատասխանողի առարկության հիմքում,
- հայցը հայցային վաղեմության ժամկետի ընթացքում ներկայացնելու փաստը, եթե պատասխանողը միջնորդում է կիրառել հայցային վաղեմություն, և այլն:

Շարադրվածը հաշվի առնելով՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների տիպային (ստանդարտ) մասից զատ դատավարագիտության մեջ առանձնացվում է նաև լրացուցիչ մաս, որը ներառում է կոնկրետ իրավիճակի թելա դրանքով գործին մասնակցող

անձանց առարկությունների հիմքում դրված վերաբերելի իրավաբանական և ապացուցողական բնույթի փաստերը¹:

Հարկ է նաև նշել, որ դատարանի կողմից որոշված գործը լուծելու համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը **հարաբերականորեն կայուն** է, քանի որ, ըստ գործող օրենսդրության, գործի փաստական կողմի վրա ազդեցություն ունեցող տնօրինչական գործողությունների զգալի մասը (երրորդ անձի հայցի ընդունում, հակընդդեմ հայցի ներկայացում, հայցի փոփոխում, նոր փաստերի վկայակոչում և այլն), որպես կանոն, կարող է կատարվել միևնույն դատարանի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը դատական ակտով սահմանելը (ՔԴՕ 37 հոդ., մաս 1, 140 հոդ., մաս 1, 170 հոդ., 171 հոդ.), որոշ դատավարական գործողություններ էլ (օրինակ՝ ոչ պատշաճ պատասխանողի փոփոխություն, նոր պատասխանողի ներգրավում)՝ միևնույն նախնական դատական նիստի ավարտը (ՔԴՕ 172, 173 հոդ.), իսկ դատարանը, իր հերթին, նախնական դատական նիստն ավարտվելուց հետո զրկվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը սահմանող դատական ակտը փոփոխելու հնարավորությունից (ՔԴՕ 169 հոդ., մաս 4):

Այլ կերպ ասած՝ կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները դատաքննության ընթացքում ընդհանուր առմամբ անփոփոխ են: Դրանց կազմում փոփոխություն կարող է տեղի ունենալ բացառապես այն դեպքերում, երբ պահանջի կամ առարկության հիմքում նոր փաստ դնելու անհրաժեշտությունն առաջացել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո կատարված դատավարական գործողության արդյունքում (օրի-

¹ Տե՛ս **Баулин О.В.** Время доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 109:

նակ՝ երրորդ անձի ներգրավում, բացառիկ դեպքերում հակընդդեմ հայցի ընդունում և այլն) կամ այդպիսի փաստ վկայակոչող անձը հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 171 հոդ.):

ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի և քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու մասին իրավակարգավորումների համադրության հիման վրա կարելի է եզրահանգել, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու հարցին դատարանը պետք է անդրադառնա գործին մասնակցող անձանց դիրքորոշումները՝ նրանց պահանջները, առարկությունները, դրանց իրավական և փաստական հիմքերը, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերի շրջանակը պարզելուց հետո:

Ընդ որում, քանի որ վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական նորմերի շրջանակը հնարավոր է պարզել բացառապես գործով կողմերի դիրքորոշումը պարզելուց հետո, նախքան այդ հարցերին անդրադառնալը և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելը (ձևակերպելը) դատարանը պետք է ապահովի բոլոր այն դատավարական գործողությունների կատարումը, որոնք այս կամ այն կերպ կարող են ազդել քննարկվող փաստերի կազմի վրա (գործի քննությանը ներգրավի այլ անձանց, կատարի ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում, թույլատրի հայցի փոփոխություն, ապահովի հայցի դեմ պատասխան, հակընդդեմ հայց ներկայացնելու, երրորդ անձի կողմից վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնելու իրավունքների իրացումը, քննի կողմերի՝ վարույթի հետագա ընթացքի վրա ազդող միջնորդությունները):

§5. Ապացուցելուց ազատելու հիմքերը

Գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող որոշ փաստեր օրենքի ուղղակի ցուցումով ապացուցման ենթակա հանգամանքների (ապացուցման առարկայի) կազմում չեն ընդգրկվում, դատական քննության ընթացքում ապացուցման կարիք չեն զգում և չեն կարող հերքվել: Այդ փաստերն ընդունվում են որպես ճշմարտություն, որն ապացուցման կարիք չի զգում:

Փաստերն ապացուցելուց ազատելու հիմքերը նախատեսված են ՔԴՕ-ի՝ «Ապացուցելուց ազատվելու հիմքերը» վերտառությամբ 61-րդ հոդվածով, ըստ որի՝ ապացուցման կարիք չեն զգում.

1. հանրահայտ փաստերը,
2. նախադատելի փաստերը,
3. նոտարական կարգով հաստատված փաստերը,
4. անվիճելի փաստերը:

Նշվածից բացի, ապացուցման կարիք չեն զգում նաև ապացուցողական կանխավարկածների հիման վրա հաստատված համարվող փաստերը¹:

5.1. Հանրահայտ փաստեր

ՔԴՕ 61-րդ հոդվածի 1-իմ մասի համաձայն՝ հանրահայտ փաստերն ապացուցման կարիք չեն զգում: Թեև օրենքն այդ մասին ուղղակիորեն չի նշում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշում է դատարանը, կարելի է եզրակացնել, որ այս կամ այն հանգամանքը հանրահայտ ճանաչելու լիազորությունը վերապահված է դատարանին: Գործին մասնակցող անձը, իհարկե, իրավունք ունի առարկել փաստի և՛ առկայության, և՛ դրա հանրահայտության դեմ՝ այդ կապակցությամբ ներկայացնելով իր դիրքորոշումը, սակայն յուրաքանչյուր դեպքում փաստի հանրահայտության հարցը որոշում է դատարանը:

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատանքի 6.3-րդ ենթագլուխը:

Հանրահայտության չափանիշներ ԹԴՕ-ն չի սահմանում, ինչը գործնականում կարող է տարակարծությունների տեղիք տալ: Մեր կարծիքով, նպատակահարմար կլինեն օրենքով սահմանել, դատավարագիտության մեջ վաղուց հիմնավորված մոտեցումը, որ փաստը կարող է դատարանի կողմից ճանաչվել հանրահայտ և չմտցվել ապացուցման առարկայի մեջ երեք չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) այն հայտնի է գործը քննող դատարանին,

բ) դատարանի ներքին համոզմամբ այն հայտնի է կամ պետք է հայտնի լինի անձանց լայն շրջանակի (ՀՀ-ի կամ տվյալ դատական տարածքի բնակչության մեծամասնությանը), այդ թվում՝ գործին մասնակցող անձանց, և

գ) այդ փաստերի մասին արժանահավատ տեղեկություններ կարող են ստացվել հանրամատչելի աղբյուրներից (հանրագիտարաններից, պաշտոնական հրատարակություններից, պարբերական մամուլից և այլն):

Նշված չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում հանրահայտ կարող է ճանաչվել գործի լուծման համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք, ընդ որում՝ անկախ փաստի հանրահայտությունը գործին մասնակցող անձի կողմից վիճարկելու հանգամանքից:

Դատավարագիտության մեջ կարծիք է հայտնվել, որ այս կամ այն հանգամանքը կարող է հանրահայտ ճանաչվել, եթե այդպիսին է ճանաչվել գործին մասնակցող բոլոր անձանց կողմից¹: Նման դիրքորոշումն արդարացված չի թվում: Չէ՞ որ գործին մասնակցող անձը կարող է վիճարկել փաստի հանրահայտությունը գործը տանուլ չտալու, դատավարությունը ձգձգելու կամ այլ շարժառիթներով: Ուստի, մեր կարծիքով, վերը նշված չափանիշների կիրառումը պետք է բավարար համարել: Բացի դրանից, ինչպես կտեսնենք հետագա շարա դրանքում, փաստի ընդունումը ևս որոշ դեպքերում հիմք է այն ապացուցման առարկայի կազմից հանելու համար:

1 Ст'ю **Владимир Л.Е.** Учение о доказательствах. Тула, 2000, էջ 178:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստը հանրահայտ ճանաչելու վերաբերյալ առաջարկություն կարող են անել նաև գործին մասնակցող անձինք, սակայն այդ հարցի վերաբերյալ վերջնական եզրահանգումը կատարում է դատարանը: Ընդ որում, դատարանը պարտավոր է գործը դատաքննության նախապատրաստելու կամ դատաքննության ընթացքում ապացուցման պարտականությունը բաշխելիս պատճառաբանել այս կամ այն փաստը հանրահայտ ճանաչելը և կողմերին իրազեկել այդ մասին՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման մեջ կատարելով համապատասխան նշումներ (ՔԴՕ 169 հոդ., մաս 3):

Եթե դատարանը գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստը ճանաչում է հանրահայտ, այդ մասին նրա դիրքորոշումը պետք է արտացոլվի նաև վճռում (ՔԴՕ 192 հոդ., մաս 4, կետ 3): Ընդ որում, փաստը տվյալ դատական տարածքում հանրահայտ լինելու մասին դատարանի եզրակացությունը կարող է արվել առանց որևէ ապացույց վկայակոչելու:

5.2. Նախադատելի փաստեր

Դատավարագիտության մեջ նման փաստերը կոչվում են նաև «պրեյուդիցիաներ», «պրեյուդիցիալ փաստեր», «կանխորեն որոշված փաստեր» կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստեր:

ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գործին մասնակցող անձանց ազատում են կանխորեն որոշված փաստերը մեկ այլ գործով կրկին ապացուցելու պարտականությունից: Մասնավորապես ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշա-

նակութիւնն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցութեամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում, իսկ 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն: Դրանով իսկ օրենսդիրն ամրագրում է դատարանի եզրափակիչ դատական ակտերի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է նախադատելիութիւնը (պրեյուդիցիալ բնույթը): Վերջինս, ըստ էութեան, պայմանավորված է համապատասխան դատական ակտերի վերջնական բնույթով:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիութիւնը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականութիւնից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքների գոյութիւնը հետագա դատավարութիւններում ժխտելու արգելք, իսկ դատարանի համար ենթադրում է պարտականութիւն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում¹:

Փաստորեն օրենքն արգելում է գործին մասնակցող անձանց և նրանց իրավահաջորդներին մեկ այլ վարույթի շրջանակներում վիճարկել օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված փաստերը: Գործը քննող դատարանը, իր հերթին, նախադատելիութեան ուժով զրկվում է կանխորեն որոշված փաստերը կասկածի տակ դնելու, դրանք հաստատող կամ հերքող ապացույցները հետազոտելու հնարավորութիւնից: Այլ կերպ ասած՝ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից հաստատված և դատական ակտում ձևակերպված փաստերը չեն կարող կասկածի տակ դրվել կամ կրկին հետազոտվել նույն անձանց մասնակցութեամբ ուրիշ գործերի քննութեան ժամանակ:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008թ. որոշումը:

նակ:

Եզրափակիչ դատական ակտերի փոխադարձ պարտադիրությունը բացատրվում է նրանով, որ դատարանը նույն անձանց մասնակցությամբ քննելով քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործ, մանրագնին հետազոտում և գնահատում է բոլոր ապացույցները և կայացնում դատարանում պարզված իրականությանը համապատասխանող դատական ակտ, և երբ վերջինս մտնում է օրինական ուժի մեջ, ապա դրանով հաստատված փաստերը, գործողություններն ու իրավահարաբերությունները այլևս կասկած չեն հարուցում¹:

Դատական ակտերի փոխադարձ պարտադիրությունը հետևանք է նաև այն բանի, որ միևնույն իրավաբանական փաստը հաճախ կարող է միաժամանակ առաջացնել տարբեր նյութաիրավական հետևանքներ, տարբեր իրավահարաբերություններ, որոնք դատական քննության առարկա կարող են դառնալ տարբեր ժամանակներում, տարբեր գործերով, տարբեր դատական մարմիններում, և նույն փաստն անընդհատ չհաստատելու համար առաջին գործով կայացված վճռով հաստատված փաստը պարտադիր է համարվում նաև մյուս գործերի համար²:

Դատական ակտերի պրեյուդիցիալ կապերի ամրագրումն օրենքով իրականացվում է ապացուցման գործընթացը պարզեցնելու նպատակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական փաստերը և առանձին փաստակազմերն արդեն քննության առարկա են եղել նույն անձանց մասնակցությամբ գործով, որոնք ունեցել են հնարավորություն արտահայտելու իրենց կասկածները, փաստարկները և դիրքորոշումը³:

Նախադատելիությունը կարևոր նշանակություն ունի

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 355:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս Теория правосудия. В 3-х томах. **Фурсов Д.А., Харламова И.В.** Т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия. М.: «Статут», 2009, էջ 328:

դատավարական խնայողության, դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների և դատական ակտերի մրցակցության պրոբլեմի կանխարգելման տեսանկյունից: օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի տվյալ հատկանիշի շնորհիվ գործնականում բացառվում է միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է առաջացնել իրավական անորոշություն, հանդիսանալ դատական իշխանության հեղինակության անկման պատճառ և դիտարկվել որպես իրավունքի գերակայության սկզբունքի ոտնահարում:

Դատական ակտերի նախադատելիությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմաններ:

Նախադատելիության **օբյեկտիվ սահմաններն** են կազմում քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասում նշված բոլոր այն հանգամանքները, որոնք դատարանը հաստատված է համարել գործի քննության և ապացույցների գնահատման արդյունքում¹, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ որոշակի գործողություններ կատարելու և դրանք կոնկրետ անձի (անձանց) կողմից կատարելու հանգամանքները: Ընդ որում, պրեյուդիցիալ նշանակություն կարող են ունենալ ինչպես դրական (հաստատող), այնպես էլ բացասական (ժխտող) հանգամանքները²:

1 Ուշագրավ է, որ ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի՝ գործող կարգավորումների համաձայն՝ նախադատելի նշանակություն ունեն ոչ միայն առաջին ատյանի դատարանի վճռով, այլ նաև ցանկացած այլ եզրափակիչ դատական ակտով (այդ թվում՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացված) հաստատված փաստերը: Բացի դրանից, գործող օրենսգրքով նախադատելիության օբյեկտիվ սահմաններում են դիտարկվում ոչ միայն քաղաքացիական, այլ նաև վարչական և սնանկության գործերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված փաստերը:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 326: Բացասական հանգամանքի օրինակ կարող են հանդիսանալ արդարացնող դատավճռով հաստատված մեղքի կամ հանցագործության կատարման փաստի բացակայությունը:

Դատական ակտերի նախադատելիության (պրեյուդիցիալ կապի) օբյեկտիվ սահմանների հարցին անդրադառնալիս Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտերի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է երկու հանգամանք, որոնց անդրադառնալը խիստ կարևոր ենք համարում:

Առաջին` դատական ակտով հաստատված փաստերը նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող, եթե նախկինում քննված գործով այդ հանգամանքները հաստատվել են առանց ֆորմալ դատավարական կանոնների պահպանման` ապացույցների հավաքման, հետազոտման և գնահատման դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ:

Երկրորդ` նախկինում քննված գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող նաև այն դեպքերում, երբ վերաբերելի չեն եղել նախկինում քննված քաղաքացիական գործին, չպետք է դասվելին հաստատման ենթակա հանգամանքների շարքին և մտցվելին ապացուցման առարկայի մեջ: Վճռաբեկ դատարանը վճռով հաստատված հանգամանքների նախադատելիության որոշման համար, փաստորեն, կարևորել է նաև ապացուցման առարկան` գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ որոշելու հարցը: Ըստ Վճռաբեկ դատարանի, նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ուստի ապացուցման առարկայի սահմանների կամայական

ընդլայնումը բերում է գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման¹:

Նախադատելիության օբյեկտիվ սահմանների մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ, որ պրեյուդիցիալ նշանակություն կարող են ունենալ դատական ակտով հաստատված փաստական հանգամանքները, այլ ոչ թե դրանք հաստատող ապացույցները:

Նախադատելի նշանակություն չի կարող ունենալ նաև օրենքի մեկնաբանության մասին գործը քննած դատարանի իրավական դիրքորոշումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ դատարանի իրավական դիրքորոշումը նախադատելի հանգամանք համարվել չի կարող, թեև դատարանն իրավասու է իրավունքի սեփական ընկալման հիմքով կատարել որոշակի եզրահանգումներ: Ըստ Վճռաբեկ դատարանի, նախադատելի այս դեպքում կարող է լինել հաստատված հանգամանքը, սակայն ոչ դատարանի իրավական դիրքորոշումը²:

Դատական ակտով հաստատված նախադատելի փաստերը պետք է տարբերել նաև վարչական և այլ մարմինների (դատախազության, նախաքննության մարմինների, ոստիկանության, արբիտրաժի և այլն) ակտերով հաստատված փաստերից: Դատավարական օրենքը գործին մասնակցող անձանց չի ազատում նշված մարմինների ակտերով հաստատված փաստերն ապացուցելուց: Այդ փաստերն ապացուցման առարկայից չեն հանվում: Միաժամանակ, նման ակտերը հանդիսանալով գրավոր ապացույցներ, կարող են, իսկ երբեմն էլ պարտադիր պետք է կցվեն քաղաքացիական գործին:

Նախադատելիությունը դատական ակտերի փոխադարձ պարտադիրությունն է, որը դրսևորվում է նրանց

1 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը:

2 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-132 (ՎԴ) քաղաքացիական գործով 27.03.2008 թ. որոշումը:

արեյուդիցիալ կապում: Նախադատելիությունն օրենքի ուժով կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար: օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Նախադատելիության **սուբյեկտիվ սահմաններն** այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն: ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով հաստատված փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ միայն այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը:

Նախադատելիության ինստիտուտի կիրառումն անթույլատրելի է այն դեպքերում, երբ սկզբնական և հաջորդող դատավարությունների շրջանակներում գործին մասնակցող անձինք համընկնում են մասնակիորեն: Այդ մասին է վկայում ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «նույն անձանց միջև» արտահայտությունը:

Հատկանշական է, որ անդրադառնալով «նույն անձինք» արտահայտության բովանդակության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տարբեր գործերի մասնակցող անձանց կազմը համեմատելիս դատարանը պետք է նույնություն արձանագրի ոչ միայն այն դեպքերում, երբ այդ գործերով համընկնում են հայցվորը, պատասխանողը և նրանց կողմում հանդես եկող անձինք, այլ նաև այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք նախորդ գործի համեմատ ունեն գործին մասնակցող այլ անձի դատավարական կարգավիճակ (մի գործով՝ հայցվոր, մյուս գործով պատասխանող կամ երրորդ անձ և այլն): Նման համեմատություն կատարելիս դատարանի

խնդիրն է պարզել, թե արդյոք նույնն են նախկինում քննված և տվյալ պահին քննվող գործերով հակադիր շահերով օժտված անձինք¹:

Միևնույն ժամանակ ուշադրության են արժանի որոշ հանգամանքներ, որոնք յուրովի ազդում են դատական ակտով հաստատված հանգամանքների անհերքելիության և կայունության վրա:

1) Նախորդ գործի քննությանը մասնակցող անձանց կազմի նեղացման դեպքում հաջորդող դատավարության մասնակիցների կազմը ձևականորեն փոփոխվում է: Սակայն նախորդ գործով հաստատված հանգամանքների և հավաքված ապացույցների վերաբերյալ այլ տեսակետ ունեցող կամ դատավարությանը մասնակցելու և իրենց շահերը պաշտպանելու հնարավորություն չունեցած նոր սուբյեկտներ այստեղ ի հայտ չեն գալիս: Հետևաբար՝ նման դեպքերում պրեյուդիցիայի կիրառումը պետք է համարել թույլատրելի:

2) Նախորդ գործի քննությանը մասնակցող անձանց կազմի ընդլայնման դեպքում պրեյուդիցիայի կիրառումը թույլատրելի է բացառապես այն դեպքերում, երբ նախորդ գործի քննությանը չմասնակցած անձինք տվյալ գործով հաստատված հանգամանքների գոյության և արժանահավատության կապակցությամբ որևէ առարկություն չունեն:

Դատական ակտերի նախադատելիության (պրեյուդիցիալ կապի) սուբյեկտիվ սահմանների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել ևս մեկ կարևոր հանգամանք, որը հատուկ ընդգծվել է Վճռաբեկ դատարանի կողմից:

Որևէ հանգամանքի նախադատելիության որոշման համար չափազանց կարևոր է դատավարական կանոնը, ըստ որի, գործով հաստատված որևէ հանգամանքի նախադատելիությունը պետք է պայմանավորվի այդ հանգամանքի՝ մրցակցային դատավարության կանոններով

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/1107/02/16 քաղաքացիական գործով 08.01.2019 թ. որոշումը:

հաստատված լինելու փաստի հետ: Երբ հանգամանքը հաստատվել է կողմերից մեկի դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում (օրինակ, երբ կողմը գործի հարուցման կամ դատական նիստի ժամանակի և վայրի մասին փաստացի տեղեկացված չլինելու պատճառով չի մասնակցել դատաքննությանը) կայացված դատական ակտով հաստատված հանգամանքն այլ գործ քննող դատարանը պետք է չճանաչի որպես նախադատելի իր կողմից քննվող գործի համար¹:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ կոնկրետ գործով մանրակրկիտ դատական ստուգման է ենթակա նախադատելիության բացառման յուրաքանչյուր դեպք, և միայն նման ստուգման արդյունքներով գործը քննող դատարանը կարող է հանգել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքների նախադատելիության մասին եզրակացության²:

Նախադատելի փաստերի հաստատման համար գործը քննող դատարանին անհրաժեշտ է ներկայացնել միայն կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը: Փաստը նախադատելի ճանաչելիս դատարանը պետք է մատնանշի այն ապացույցը (վճիռը, որոշումը, դատավճիռը), որով հիմնավորվում է տվյալ փաստի նախադատելի բնույթը: Այլ հիմնավորումներ և պատճառաբանություններ չեն պահանջվում:

Ընդհանուր կանոնի ուժով դատարանը պարտավոր է եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասում ցույց տալ այն փաստերը, որոնք ունեն նախադատելի նշանակություն և ՔԴՕ 61-րդ հոդվածի այն դրույթը, որի հիման վրա կողմն ազատվել է դրանք ապացուցելու պարտականությունից: Ընդ որում, դատարանը չի կրում օրի-

1 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը:

2 Տե՛ս նույն տեղում:

նական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստի նախադատելիությունը բացառող վերը ներկայացված հանգամանքների բացակայությունը պատճառաբանելու պարտականություն, բացառությամբ այն դեպքերի, երբ գործին մասնակցող անձը գործի քննության ընթացքում վիճարկել է փաստի նախադատելիությունը:

5.3. Նոտարական կարգով հաստատված փաստեր

ՔԴՕ 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողություն կատարելու արդյունքում նոտարի կողմից հաստատված փաստն ապացուցման ենթակա չէ, եթե նոտարական կարգով վավերացված փաստաթղթի իսկությունը վիճարկված չէ ՔԴՕ-ով սահմանված կարգով կամ նոտարական գործողությունը չի ճանաչվել ոչ իրավաչափ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Նման կարգավորումը խարսխված է նոտարիատի լատինական մոդելին հատուկ առանցքային սկզբունքի վրա, ըստ որի նոտարական ակտերն ունեն հատուկ ապացուցողական ուժ՝ դրանք ենթադրվում են օրինական և արժանահավատ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ նոտարական ակտն ունի լիարժեք ապացուցողական ուժ:

Նշված կարգավորումները թույլ են տալիս նոտարական կարգով վավերացված փաստաթղթերով հաստատված փաստերը ևս դասել կանխորեն հաստատված փաստերի թվին: Հաստատված լինելով «լիարժեք ապացուցողական ուժ» ունեցող փաստաթղթերով՝ նոտարական գործողությունների կատարման արդյունքում հաս-

տատված փաստերը քաղաքացիական գործի քննության ընթացքում, ընդհանուր կանոնի ուժով, կրկնակի հաստատման, ապացուցման կարիք չեն զգում: Դրանք ընդունվում են որպես հիմք, և դրանց արժանահավատությունը դատարանի կողմից կասկածի տակ դրվել չի կարող:

Հարկ է նկատի ունենալ, որ լիարժեք ապացուցողական ուժ ունենալու համար նոտարական ակտը պետք է բավարարի «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մի շարք պահանջները: Ճանաչելով նոտարական ակտի լիարժեք ապացուցողական ուժը՝ օրենքը միևնույն ժամանակ սահմանում է պահանջներ, որոնց խախտմամբ հաստատված կամ վավերացված փաստաթղթերը կա՛մ առոչինչ են¹, կա՛մ չեն կարող ունենալ իրավաբանական և ապացուցողական ուժ²: Ըստ այդմ, ցանկացած նոտարական ակտ և դրանով հաստատված փաստ գնահատելիս դատական ստուգման առարկա պետք է դառնա համապատասխան նոտարական ակտի համապատասխանությունը նշված պահանջներին:

Կանխորեն որոշված և ապացուցման կարիք չունեցող կարող է ճանաչվել բացառապես այնպիսի փաստը, որը հաստատվել է քննարկվող պահանջների պահպանմամբ: Այսպես, չի կարող լիարժեք ապացուցողական ուժ ունենալ որոշակի պայմաններով պայմանագրի կնքման փաստը հաստատող այն փաստաթուղթը, որը կազմելիս խախտվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով սահմանված՝ նոտարական կարգով վավերացվող կամ հաստատվող փաստաթղթերի ստորագրման կարգը, կամ որի վավերացման մակագրությունը չի պարունակում հիշյալ օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները՝ նոտարի անունը, ազգանունը, նոտարական տարածքը, կատարվող նոտարական գործողության տե-

1 Տե՛ս, օրինակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 6-րդ մասը, 42-րդ հոդվածի 8-րդ մասը, 45-րդ հոդվածի 6-րդ մասը:

2 Տե՛ս, օրինակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 8-րդ մասը, 42-րդ հոդվածի 7-րդ մասը, 44-րդ հոդվածի 7-րդ մասը, 49-րդ հոդվածի 5-րդ մասը, 81.2-րդ հոդվածի 4-րդ մասը:

սակը, կատարման տարին, ամիսը, օրը, գրանցամատյանում համապատասխան գրանցման համարը կամ նոտարի հայտարարությունն այն մասին, որ նոտարական գործողության մասնակիցների ինքնությունը, իրավունակությունը կամ գործունակությունն ստուգված են: Նման արատներ պարունակող փաստաթղթերը կարող են վարույթի ընթացքում հետագոտվել որպես գրավոր ապացույցներ, քանի որ, ըստ օրենքի, այդ արատները փաստաթղթի առոչնչության չեն հազեցնում, սակայն նման նոտարական ակտերով հաստատված փաստերի ապացուցման ոչ ենթակա լինելու մասին խոսք լինել չի կարող:

Լիարժեք ապացուցողական ուժ չունեցող նոտարական ակտերից պետք է տարբերել այն ակտերը, որոնք օրենքի ուղղակի ցուցումով առոչինչ են, այլ կերպ ասած՝ որևէ իրավական հետևանք չեն առաջացնում:

Եթե նոտարական ակտում պարունակվող արատը հանգեցնում է դրա առոչնչության, ապա այն ապացուցողական արժեք ունենալ չի կարող: Այսպես, չի կարող գործի համար նշանակություն ունեցող փաստերի դատական հաստատման նպատակով օգտագործվել նոտարական կարգով հաստատված կամ վավերացված այն փաստաթուղթը, որը հաստատվել կամ վավերացվել է նոտարական գործողություններ կատարելու օրենքով նախատեսված սահմանափակումների խախտմամբ, ոչ իրավասու նոտարի կողմից, չի պարունակում կատարման և վավերացման կամ հաստատման ամսաթվերը կամ կողմի անունը և ազգանունը (անվանումը), ստորագրված չէ նոտարի կամ գործարքի մասնակցի կողմից, կամ գրված է մատիտով:

Այսպիսով, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին առերևույթ համապատասխանող նոտարական ակտով հաստատված փաստերը քաղաքացիական գործով ապացուցման ենթակա չեն: Նոտարական կարգով հաստատված կամ վավերացված փաստաթուղթ ներկայացնելը դրանով հաստատված փաստը վկայակոչող

անձին ազատում է այդ փաստի գոյությունն ու արժանահավատությունն ապացուցելու պարտականությունից: Օրենքի պահանջներին առերևույթ համապատասխանող նոտարական ակտի օրինականությունը և արժանահավատությունը ենթադրվում է և չի կարող կասկածի տակ դրվել դատարանի կողմից:

Ի տարբերություն նախադատելի փաստի, որը կանխորեն հաստատված է և՛ դատարանի, և՛ գործին մասնակցող անձանց համար, ու չի կարող վիճարկվել, նոտարական գործողության կատարման արդյունքում հաստատված փաստի գոյությունը գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դնել կասկածի տակ:

Ընդ որում, գործող դատավարական օրենսդրությունը նախատեսում է նոտարական ակտերը վիճարկելու երեք եղանակ՝

1. նոտարական կարգով հաստատված կամ վավերացված փաստաթղթի իսկության վիճարկում տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում (ՔԴՕ 76 հոդ.).

2. նոտարական գործողության իրավաչափության վիճարկում վարչական դատավարության կարգով (ՎԴՕ 220-222 հոդ.).

3. նոտարական կարգով հաստատված կամ վավերացված գործարքի վավերության վիճարկում քաղաքացիական դատավարության կարգով (այդ թվում հակընդդեմ հայցի ներկայացմամբ):

ՔԴՕ 61-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից բխում է, որ գործի քննության ընթացքում սահմանված կարգով նոտարական ակտի իսկությունը գործին մասնակցող անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու փաստն ինքնին բավարար հիմք է համապատասխան նոտարական գործողության կատարման արդյունքում հաստատված և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքն ապացուցման առարկայի մեջ մտցնելու համար:

Հատկանշական է, որ քաղաքացիական գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձը կարող է վիճարկել բացառապես նոտարական կարգով հաստատված կամ վավերացված փաստաթղթի իսկությունը, վավերությունը կամ դրա նոտարական ակտ լինելը, այլ ոչ նոտարական գործողության իրավաչափությունը, որը սահմանված կարգով ստուգելու իրավասությունը վերապահված է վարչական դատարանին: Ընդ որում, քաղաքացիական գործ քննող դատարանը պետք է նկատի ունենա, որ`

ա. գործին մասնակցող անձը կարող է հայտարարել գործին մասնակցող այլ անձի կողմից ներկայացված գրավոր ապացույցի ոչ իսկական (կեղծված) լինելու մասին կամ ներկայացնել վավերացված գործարքն անվավեր ճանաչելու պահանջով հակընդդեմ հայց մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, իսկ նման որոշում կայացնելուց հետո գրավոր ապացույցի իսկությունը վիճարկելու կամ հակընդդեմ հայց ներկայացնելու դեպքում պետք է հիմնավորի մինչ այդ դա անելու անհնարիությունը` իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 76 հոդ., մաս 1, 140 հոդ., մաս 1, 171 հոդ.)¹: Հետևում է, որ սահմանված ժամկետից ուշ և առանց համապատասխան բավարար հիմնավորման գրավոր ապացույցի իսկությունը վիճարկելու պարագայում նոտարական գործողության արդյունքում հաստատված փաստն ապացուցման առարկայի մեջ չպետք է մտցվի` դիտարկվելով որպես ապացուցման ոչ ենթակա: Նմանապես նոտարական կարգով վավերացված գործարքի կնքման փաստը չպետք է մտցվի ապացուցման առարկայի մեջ այն դեպքերում, երբ դատարանը չի ընդունում այդ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ հակընդդեմ հայցը.

բ. ի տարբերություն այլ գրավոր ապացույցների, նոտարական կարգով հաստատված կամ վավերացված

¹ Նշված սահմանափակումը չի վերաբերում բոլոր այն վարույթներին, որոնց շրջանակում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվում (պարզեցված վարույթ, հեռակա դատաքննություն, հատուկ վարույթներ և այլն):

փաստաթղթի ոչ իսկական (կեղծված) լինելն ապացուցելու պարտականությունը և ոչ իսկական (կեղծված) լինելու փաստը վիճելի մնալու անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է այդ փաստաթղթի իսկությունը վիճարկող, այլ ոչ այն ներկայացնող գործին մասնակցող անձը (ՔԴՕ 76 հոդ., մաս 3)։

գ. Նոտարական ակտի իրավաչափությունը քաղաքացիական դատավարության կարգով վիճարկվել չի կարող, քանի որ այդ գործերն ընդդատյա (ենթակա) են վարչական դատարանին։ Հետևաբար, եթե գործին մասնակցող անձը քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացված առարկության շրջանակներում վիճարկում է գործողության իրավաչափությունը, տվյալ հանգամանքը որևէ կերպ չի կարող ազդել այդ ակտի ապացուցողական ուժի և դրանով հաստատված փաստի ապացուցման ոչ ենթակա լինելու վրա։ Նման դեպքերում դատարանը պետք է գործին մասնակցող անձին պարզաբանի նոտարական գործողությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու իրավունքը՝ ըստ ելության, նրան հորդորելով հայցով դիմելու վարչական դատարան։ ՔԴՕ 61-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից բխում է, որ քաղաքացիական գործի լուծման համար նշանակություն ունեցող և նոտարական գործողության կատարման արդյունքում հաստատված փաստը մտցվում է ապացուցման առարկայի մեջ այն պարագայում, երբ առկա է վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ համապատասխան նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին։ Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նոտարական կարգով հաստատված կամ վավերացված գործարքը ճանաչվել է անվավեր, ապա նման գործարքի բացակայության փաստն ունի սախադատելի նշանակություն և նույն անձանց մասնակցությամբ մեկ այլ գործ քննելիս ապացուցման ենթակա չէ։

5.4. Անվիճելի փաստեր

Դատավարագիտության և դատավարական օրենսդրության մեջ որպես ապացուցելու պարտականությունից ազատելու հիմք է դիտարկվում նաև փաստի ընդունումը, որի արդյունքում փաստական հանգամանքը դիտարկվում է որպես ապացուցման կարիք այլևս չունեցող և հանվում է ապացուցման առարկայից: Ընդհանրացված ձևով նման փաստերը կոչվում են «անվիճելի»:

ՔԴՕ 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն ապացուցելու պարտականությունից, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են առաջին ատյանի դատարան ներկայացված դատավարական փաստաթղթով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում (անվիճելի փաստեր):

Գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստի (փաստերի) ընդունումը նեղացնում է ապացուցման առարկան, դատարանին հնարավորություն է տալիս որոշել վիճելի փաստերի շրջանակն ու իր ուշադրությունը կենտրոնացնել միայն դրանց ապացուցման վրա:

Փաստի ընդունումը դատավարական խնայողության միջոց է, որը հիմնվում է կողմի՝ իր նյութական և դատավարական իրավունքները տնօրինելու իրավունքի (տնօրինչականության սկզբունքի) վրա: Այս առումով փաստի (փաստերի) ընդունումը հարկավոր է տարբերել հայցի լրիվ կամ մասնակի ընդունումից: Վերջին դեպքում տեղի է ունենում ոչ թե պարզապես հայցի հիմքում դրված փաստի (կամ փաստերի) ընդունում, այլ հայցի առարկայի (հայցապահանջի) և միաժամանակ դրա հիմքում դրված բոլոր փաստերի անվերապահ ընդունում: Եթե հայցի լրիվ կամ մասնակի ընդունումը պատասխանողը պատճառաբանելու պարտականություն չունի, ապա կոնկրետ փաստի ընդունումը, առանց հայցապահանջը և դրա հիմքում

դրված մյուս պահանջները ընդունելու, քաղաքացիական դատավարությունում վարքագծի չպատճառաբանվող ակտ չէ: Դա է պատճառը, որ օրենսդիրը դատարանից չի պահանջում ընդունված փաստն անվերապահորեն ճանաչել հաստատված (անվիճելի): Ավելին, դատարանն իրավասու է ցանկացած դեպքում պարզել փաստն ընդունելու կողմի շարժառիթները:

Փաստի ընդունումը ապացուցման պարտականությունից ազատելու հարաբերական և ոչ բացարձակ հիմք է: ԶԴՕ 61-րդ հոդվածի 5-րդ մասից բխում է, որ գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, ոչ միշտ է պարտադիր դատարանի համար: Մասնավորապես ըստ ԶԴՕ 61-րդ հոդվածի 5-րդ մասի՝ դատարանն ընդունված փաստը պետք է համարի հաստատված այն դեպքում, երբ ողջամիտ կասկածներ չկան, որ փաստն ընդունվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով, ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով: Նման կասկածների առկայության դեպքում դատարանը տվյալ փաստը ներառում է ապացուցման առարկայի մեջ, գործին մասնակցող համապատասխան անձին պարզաբանում է այն ապացուցելու պարտականությունը և հետագոտում է տվյալ փաստը հաստատող կամ հերքող ապացույցները:

Բացի դրանից, դատարանը այս կամ այն ընդունված փաստը պետք է ներառի ապացուցման ենթակա փաստերի շրջանակում՝ ելնելով ապացուցման միջոցների թույլատրելիության կանոններից կամ արդարադատության շահերից: Մասնավորապես ԶԴՕ 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը չի կարող ընդունված փաստը համարել հաստատված, եթե այդ փաստը կարող է հաստատվել միայն օրենքով կամ այլ իրավական ակտով սահ-

մանված որոշակի ապացույցով կամ այդ փաստի հաստատումն անխուսափելիորեն ազդում է գործին չմասնակցող անձի՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի նկատմամբ ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա: Նման փաստերը դատարանը պետք է ներառի ապացուցման առարկայի մեջ և դրանց ապացուցման պարտականությունը դնի գործին մասնակցող համապատասխան անձանց վրա:

Փաստն անվիճելի ճանաչելու լիազորությունն իրականացնելիս դատարանը պետք է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման մեջ, իսկ ապանաև վճռի պատճառաբանական մասում առանձին-առանձին նշի՝ որ փաստերն են ճանաչվել անվիճելի և ինչ շարժառիթներով՝ ցույց տալով, թե գործին մասնակցող անձանցից որն է առաջադրել տվյալ փաստը, ով է այն ընդունել և ինչպես:

Բնականաբար, եթե այս կամ այն փաստը դատարանի կողմից ճանաչվում է անվիճելի, այն հանվում է ապացուցման առարկայից, վեճը լուծելիս համարվում է հաստատված՝ դրա կապակցությամբ վեճի բացակայության հիմքով:

Հատկանշական է, որ փաստն անվիճելի կարող է ճանաչվել առաջին ատյանի դատարանում գործի քննության ցանկացած պահի, այդ թվում՝ ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու մասին որոշումը կայացվելուց հետո: Ընդ որում, ապացուցման ենթակա փաստերի շրջանակի նման փոփոխությունը ձևականորեն չի առաջացնում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին կայացված դատական ակտը փոփոխելու անհրաժեշտություն: Նման փոփոխությունն արձանագրվում է փաստի ընդունման ուժով, եթե, իհարկե, դատարանը վերը հիշատակված հիմքերից որևէ մեկով չի պնդում փաստն ապացուցելու անհրաժեշտությունը:

Դատավարագիտության մեջ կարծիք է հայտնվել, որ անվիճելի պետք է համարել ցանկացած փաստ, որի դեմ

կողմերն առարկություն չեն ներկայացրել և ընդունել են լուրջամբ¹: ՀՀ քաղաքացիական դատավարության պայմաններում նման դիրքորոշումը քննարկման ենթակա չէ. գործող ՔԴՕ-ն պասիվ վարքագծի դրսևորումները (այդ թվում՝ լուրջությունը) որևէ պարագայում որպես փաստի ընդունում չի դիտարկում:

Միևնույն ժամանակ դատարանը պետք է արձագանքի գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքի կապակցությամբ կողմերի լուրջանը՝ պարզելով, թե արդյոք նրանք ընդունում են տվյալ փաստի առկայությունը: Եվ եթե ապացուցման պարտականություն կրող կողմն ընդունի տվյալ փաստի գոյությունը, դրա հետագա ապացուցման անհրաժեշտությունը կվերանա²:

Չի կարող փաստի ընդունում համարվել նաև գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի չներկայանալը դատական նիստին: Դեռևս հռոմեական իրավունքում նման վարքագիծը, ինչպես նաև լուրջությունը, դիտարկվում էին որպես պատասխանի բացակայություն, այլ ոչ համաձայնություն³:

Պետք է նկատի ունենալ, որ փաստերի արտադատական ընդունումը (այդ թվում՝ հաշտարարության ընթացքում) չի կարող հիմք հանդիսանալ դատավարության ընթացքում այդ փաստը հաստատված համարելու համար (ՔԴՕ 61 հոդ., մաս 6):

§6. Ապացուցման պարտականությունը

6.1. Ապացուցման պարտականության հասկացությունը, ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական նշանակությունը

1 Տե՛ս, օրինակ, **Зайцев И., Афанасьев С.** Беспорные обстоятельства в гражданских делах // Российская юстиция. М., 1998, № 3, էջ 27-28:

2 Տե՛ս **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 122:

3 Տե՛ս Суд и судьи в избранных фрагментах из Дигест Юстиниана. М., 2006, էջ 547:

Դատական ապացուցումը ճիշտ կազմակերպելու, ապացուցողական նյութի լրիվությունը, վարույթի ուղղվածությունն ու կանոնավոր ընթացքն ապահովելու համար կարևոր է ոչ միայն այն հարցը, թե ով պետք է վկայակոչի գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, այլ նաև այն, թե ով պետք է դատարանին ներկայացնի որոնվող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստական տվյալներ, այսինքն՝ այն հարցը, թե դատավարության մասնակիցներից ում վրա է ընկնում ապացուցման ծանրությունը (լատիներեն «onus probandi» եզրույթից, որը թարգմանաբար նշանակում է «ապացուցման բեռ»):

Քաղաքացիական դատավարության օրենսդրությունը պարտավորեցնում է դատարանին կողմերի հետ քննարկել և նրանց պահանջների ու առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, որից հետո օրենքով սահմանված կանոններով նրանց միջև բաշխել ապացուցման պարտականությունը և սահմանել ապացույցներ ու դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետները (ՔԴՕ 60 հոդ., մաս 1, 167 հոդ., մաս 1, կետ 7-9):

Միաժամանակ օրենքը սահմանում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը (ՔԴՕ 62 հոդ., մաս 1) և կրում է այդ փաստերը վիճելի մնալու բացասական հետևանքները (ՔԴՕ 62 հոդ., մաս 6):

Նման իրավակարգավորումից բխում է, որ դատական կարգով պահանջներ կամ առարկություններ ներկայացնող անձը կրում է ոչ միայն դրանց հիմքում որոշակի փաստեր դնելու (վկայակոչելու), այլ նաև այդ փաստերը հաստատող ապացույցներ ներկայացնելու պարտականություն, որը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը նրա համար առաջացնում է որոշակի անբարենպաստ

հետևանքներ:

Օրենքով նախատեսված ապացույցներով իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու բեռն օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի պարտականություն:

Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը հաստատող կամ հերքող ապացույցներ ներկայացնելը, դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելը, ներկայացված ապացույցների վերաբերյալ դիրքորոշում հայտնելը, այդ ապացույցների հետազոտմանը մասնակցելը գործող դատավարական օրենսդրությունը, ունենալով մրցակցային և տնօրինչական բնույթ՝ նախևառաջ դիտարկում է որպես գործին մասնակցող անձի կարևորագույն դատավարական իրավունք (ՔԴՕ 32 հոդ., մաս 1), որն իրականացվում է բացառապես նրա հայեցողությամբ (ՔԴՕ 12 հոդ., մաս 1): Ընդ որում, նման իրավունք օրենսդրությունը վերապահում է ինչպես ապացուցման պարտականություն կրող, այնպես էլ նման պարտականություն չկրող անձանց: Առաջինների համար ապացույց ներկայացնելու իրավունքի իրականացումը հանդես է գալիս որպես ապացուցման պարտականությունը կատարելու միջոց: Ապացուցման պարտականության՝ որպես անհրաժեշտ վարքագծի բովանդակությունը նրանում է, որ իր իրավունքը պաշտպանելու ցանկություն ունեցող կողմը պետք է ապացուցի իր պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած փաստերը (ՔԴՕ 62 հոդ., մաս 1): Սակայն այն, թե ինչպիսի միջոցներով և ինչ ապացույցներով նա պետք է ապացուցի, արդեն վերաբերվում է հնարավոր վարքագծի՝ սուբյեկտիվ իրավունքի ոլորտին: Այլ կերպ ասած՝ ապացուցման պարտականությունը կատարվում է ապացույցներ ներկայացնելու իրավունքի իրացմամբ:

Միևնույն ժամանակ, ապացույցներ ներկայացնելու

իրավունքը գործին մասնակցող անձը կարող է իրականացնել նաև այն ժամանակ, երբ տվյալ հանգամանքը (կամ հակառակ փաստը) ապացուցելու պարտականություն չի կրում: Նման դեպքերում ապացուցելը (ապացույցներ ներկայացնելը) պետք է դիտարկվի բացառապես որպես գործին մասնակցող անձի իրավունք:

Շարադրվածը հաշվի առնելով՝ օրենսդիրն ապացուցման պարտականությունը կատարելուն ուղղված հարկադրանքի միջոցների (սանկցիաների) կիրառում չի նախատեսում: Իրավունքների անարգել իրականացման և տնօրինչականության սկզբունքների ուժով անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության իր դատավարական իրավունքից չօգտվելու, այն չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու համար: Սակայն, ինչպես մի շարք այլ դատավարական իրավունքների դեպքում է, ապացույցներ ներկայացնելու իրավունքից չօգտվելը, այն անհրաժեշտաբար չիրականացնելը կամ ոչ պատշաճորեն իրականացնելը կարող են ոչ թե սանկցիաների (պետական հարկադրանքի) կիրառման հիմք հանդիսանալ, այլ առաջացնել իրավական բնույթի այլ անբարենպաստ հետևանքներ (օրինակ՝ կողմի վկայակոչած փաստերի ճանաչումը չապացուցված, հայցի (պահանջի) բավարարումը կամ մերժումը): Այդ հետևանքների վրա հասնելու վտանգն է ստիպում կողմերին ոչ միայն իրենց պահանջների և առարկությունների հիմքում դնել որոշակի հանգամանքներ, այլ նաև ներկայացնել դրանք հաստատող ապացույցներ:

Շարադրվածի հաշվառմամբ **ապացուցելու պարտականությունը դատավարագիտության մեջ դիտարկվում է որպես պահանջների և առարկությունների հիմքում ընկած և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների**

առաջացման սպառնալիքով:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները վկայակոչելու, դրանք հաստատող ապացույցները բացահայտելու, սահմանված ժամկետում դրանք ներկայացնելու և չներկայացնելու հետևանքների վերաբերյալ նորմերն առաջին հերթին ուղղված են գործին մասնակցող անձանց ակտիվությունը խրախուսելուն, նրանց կողմից դատավարական իրավունքների չարաշահումը բացառելուն, դատավարական պարտականությունների բարեխիղճ կատարումը, դատավարական կարգապահությունը, դատաքննության կանոնավոր ընթացքն ու ողջամիտ ժամկետներում դրա ավարտն ապահովելուն:

Կանոնավոր ընթացքով զարգացող մրցակցային դատավարության պայմաններում գործին մասնակցող անձինք, իրացնելով ապացույցներ ներկայացնելու իրավունքը և ձգտելով ապացուցողական գործողությունների կատարման արդյունքում հիմնավորել իրենց իրավական դիրքորոշումը և հասնել իրենց համար բարենպաստ դատական ակտի կայացման, որպես կանոն, սեփական նախաձեռնությամբ գործը համալրում են անհրաժեշտ և բավարար ապացուցողական նյութերով: Որպես արդյունք, վճիռ կայացնելիս դատարանը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը որոշելու, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմունք ձևավորելու հետ կապված դժվարություններ չի ունենում և, հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով իրավունքի նորմերը, առանց լուրջ խոչընդոտների լուծում է գործը:

Եթե գործին մասնակցող անձանց ներկայացրած կամ դատարանի աջակցությամբ հավաքված ապացույցները բավարար են գործի փաստական հանգամանքների մասին դատարանի եզրակացության հիմնավորման համար, ապա որևէ էական նշանակություն չունի, թե ով է ձեռք բերել և ներկայացրել ապացույցները, իրականացրել ապա-

ցուցման իր իրավունքը կամ կատարել ապացուցման պարտականությունը:

Սակայն հարց է առաջանում ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, եթե կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների իրագործման պայմաններում ներկայացված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար կամ այդպիսիք, բացառությամբ կողմերի ցուցմունքների, ընդհանրապես բացակայում են:

Անվիճելի է, որ քաղաքացիական դատավարությունում դատարանը չի կարող հրաժարվել գործը լուծող դատական ակտ կայացնելուց՝ ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ, քանի որ նման դեպքում, որպես կանոն, բարենպաստ վիճակում կհայտնվի պարտավոր կողմը, իսկ դատարանը չի կատարի իրավունքի գերակայությունը երաշխավորելու իր կարևորագույն գործառույթը: Ասվածը նշանակում է, որ ապացուցման ամենաբարդ իրավիճակում անգամ, դատարանը պետք է գործով վերջնական որոշում կայացնի: Այդ կապակցությամբ ԶԴՕ 62-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Փաստորեն գործով ապացուցման պարտականությունը բաշխելուն ուղղված դատավարական գործողությունները և դրանք կարգավորող դատավարական նորմերը նախևառաջ հանդես են գալիս այն մեխանիզմի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտներին, որոնք պետք է կրեն նման իրավիճակի անբարենպաստ հետևանքները:

Նշվածով, սակայն, ապացուցման պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու դատավարական գործողության նշանակությունը չի սպառվում: Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո դրանք ապացուցելու պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև նախապես բաշխելը և ապացույցներ ներկայացնելու (այդ պարտականությունը կատարելու) համար ժամկետներ սահմանելը գործով ապացուցման գործընթացը պատշաճորեն կազմակերպելու կարևորագույն գործիք է, որը թույլ է տալիս ապահովել գործի հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ ապացուցողական նյութի հոսքը դատարան:

Բացի դրանից, քննարկվող դատավարական գործողության կատարմամբ դատարանը գործին մասնակցող յուրաքանչյուր անձի համար, ըստ էության, որոշակիացնում է կատարման ենթակա ապացուցողական գործողությունների ծավալը, մատնանշում է գործին մասնակցող այն անձին, որը տվյալ փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար պետք է ներկայացնի ապացույցներ և դրանք ձեռքբերելու ուղղված միջնորդություններ (տեղագնություն կատարելու, ապացույցներ պահանջելու, փորձաքննություն նշանակելու, մասնագետ հրավիրելու, վկա հարցաքննելու և այլն): Դրանով իսկ դատարանը վարույթի մասնակիցների համար կանխատեսելի է դարձնում նշված գործողությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հնարավոր հետևանքները:

Քանի որ գործի հարուցման և նախապատրաստման ընթացքում ո՛չ գործին մասնակցող անձինք և ո՛չ էլ դատարանը չեն կարող իրական ու վերջնական պատկերացում ունենալ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցների բավարար լինելու մասին (տվյալ հարցը լուծում է դատարանը ապացույցները գնահատելիս և վճիռ կայացնելիս), գործը դատաքննութ-

յան նախապատրաստելիս օրենքով սահմանված որոշակի կանոնների պահպանմամբ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը պետք է դիտարկվի դատարանի կարևորագույն խնդիրներից մեկը:

Այն հարցը, թե ով պետք է դատարանին ներկայացնի ապացուցման ենթակա (որոնվող) փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցները, դատավարության մասնակիցներից ում վրա և ինչ չափով է ընկնում ապացույցներ ներկայացնելու պարտականությունը չափազանց կարևոր է գործը դատաքննության պատշաճորեն նախապատրաստելու, դատական ապացուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու, ապացուցողական նյութի լրիվությունն ապահովելու և հիմնավորված ու օրինական վճիռ կայացնելու համար: Նշվածը հաշվի առնելով՝ օրենսդիրը ոչ միայն սահմանել է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո դրանց ապացուցման պարտականությունը բաշխելու պահանջը, այլ նաև նախատեսել է դատավարական կանոններ, որոնց պահպանմամբ այդ պարտականությունը պետք է բաշխվի կողմերի միջև:

6.2. Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնները

Ապացուցման պարտականությունը բաշխելու նորմերը կազմված են ընդհանուր կանոնից և հատուկ կանոններից:

Ընդհանուր կանոնը ձևակերպվել է ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասում. «**Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը**, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

«Փաստ վկայակոչողը պետք է ապացուցի դրա գոյությունը» ընդհանուր սկզբունքը ելակետային է մասնա-

վոր-իրավական գրեթե բոլոր հարաբերությունների իրավական կարգավորման համար: Պատմականորեն այն սկիզբ է առնում հռոմեական մասնավոր իրավունքից և ներկայումս հատուկ է իրավունքների պաշտպանության մրցակցային բնույթ ունեցող բոլոր ընթացակարգերին (դատական, վարչական, արբիտրաժային, հաշտարարական և այլն): Դեռևս Հուստինիանոսի Դիգեստներում նշվում էր, որ «ապացուցման բեռը դրվում է նրա վրա, ով պնդում է, այլ ոչ թե ժխտում»¹:

Հռոմեական իրավունքից ռեցեպցիայի ենթարկված տվյալ կանոնը, նշանակում է, որ յուրաքանչյուր կողմ ապացուցում է այն, ինչ պնդում է, այսինքն՝ «իր» կողմից առաջադրված թեզը²:

Ակնհայտ է, որ ապացուցման հարցերում ավելի անբարենպաստ պայմաններում պետք է հայտնվի հայցվորը, քանի որ նա է ձգտում նյութական հարաբերություններում փոփոխություններ կատարել, իսկ պատասխանողը, ընդհակառակը, ցանկանում է որպեսզի դրանք մնան անփոփոխ: Այստեղից էլ բխում է ապացուցման բեռը բաշխելու վերաբերյալ հռոմեական իրավաբանների կողմից մշակված կանոնն այն մասին, որ ոչ թե պատասխանողը պետք է ապացուցի հայցվորի պահանջների անհիմն լինելը, այլ հայցվորը պետք է ապացուցի այն փաստերը, որոնցից բխում է նման պահանջներ ներկայացնելու իրավունքը:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը կարելի է դիտարկել որպես հայցի հիմքի և առարկությունների հիմքի փաստերի բացակայության մասին ենթադրություն, որի ուժով փաստը հավարվում է գոյություն չունեցող, քանի դեռ այն ապացուցված չէ օրենքով սահմանված միջոցներով և կանոններով³:

1 Տե՛ս **Перетерский И.С.** Дигесты Юстиниана: Избранные фрагменты. М., 1984, էջ 361:

2 Տե՛ս **Новицкий В.А.** Теория российского процессуального доказывания и правоприменения. Монография. Ставрополь, изд. СГУ, 2002, էջ 182:

3 Տե՛ս **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 200:

Հետևում է, որ քաղաքացիական գործերով դատարան դիմող, վարույթի հարուցում նախաձեռնող անձը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, քանի որ նա է պնդում այդ փաստերի գոյությունը, այդ փաստերի հետ են իրավունքի նորմերը կապում որոշակի իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Եթե պատասխանողը չի ընդունում հայցը և հենվում է որոշակի փաստերի վրա, ապա նա պարտավոր է ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը: Եթե հայցվորն է առարկում պատասխանողի բերած փաստերի դեմ, ապա դարձյալ նա է պարտավոր ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը և այլն⁴:

Հենց այդ տրամաբանությամբ էլ ձևակերպված է ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը մրցակցային դատավարությունն ունեցող երկրների, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիական դատավարական օրենսդրության մեջ:

ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասում ապացուցման բեռը բաշխելու ընդհանուր կանոնը ձևակերպելիս ելակետային են եղել հետևյալ գաղափարները:

Առաջին. թե՛ դատավարական և թե՛ նյութական օրենսդրությունը, ելնելով որոշակի իրավահարաբերությունների առանձնահատկություններից, կարող են նախատեսել ու նախատեսում են որոշակի փաստերի ապացուցման բեռը բաշխելու հատուկ կանոններ, որոնք բացառում են տվյալ փաստերի ապացուցման գործընթացում ընդհանուր կանոնի կիրառումը՝ փաստը վկայակոչողին ազատելով այն ապացուցելու բեռից և հակառակն ապացուցելու բեռը դնելով այլ անձի վրա: Ընդհանուր կանոնի հիմքում դրված բանաձևը հետևյալն է՝ եթե նյութական կամ դատավարական օրենքի կոնկրետ նորմով հատուկ կանոն սահմանված չէ, ապա ապացուցման ենթակա տվյալ

4 Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 358:

փաստն ապացուցելու բեռը կրում է այն վկայակոչողը:

Երկրորդ. հռոմեական իրավունքից մեզ հասած «փաստ վկայակոչողը պետք է ապացուցի դրա գոյությունը» բանաձևը ժամանակակից դատավարական ընթացակարգում բառացիորեն կիրառվել չի կարող: 1998 թ. ԲԴՕ-ի 48-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնը, ըստ որի՝ «Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը», այնքան էլ հաջող ձևակերպված չէր: Մասնավորապես նշված դրույթի լեզվաբանական մեկնաբանության արդյունքում տպավորություն էր ստեղծվում, թե գործին մասնակցող անձը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված ցանկացած հանգամանք: Մինչդեռ, գործին մասնակցող անձը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված ոչ թե ցանկացած հանգամանք, այլ այն հանգամանքները, որոնք՝

ա. գործի լուծման համար ունեն նշանակություն (վերաբերելի են),

բ. ընկած են իր պահանջի կամ առարկության հիմքում, այլ կերպ ասած՝ հիմնավորում են իր պահանջը կամ առարկությունը:

1998 թ. ԲԴՕ-ի 48-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնի կիրառության պրակտիկան ցույց տվեց, որ դատարանները հիմնականում հակված էին այն բառացի մեկնաբանելուն: Նման մեկնաբանությունը գործնականում բավականին լուրջ դժվարություններ էր ստեղծում հատկապես այն իրավիճակներում, երբ վարույթի մի կողմը վկայակոչում է որևէ փաստի առկայությունը, իսկ մյուսը դրա բացակայությունը: Նման դեպքերում խիստ բարդանում է ոչ միայն ապացուցման բեռը բաշխելու, այլ նաև այն ճիշտ բաշխելու չափազանց կարևոր նախապայման հանդիսացող՝ ապացուցման ենթակա փաստը ճիշտ որոշելու, այն ճշգրիտ ձևակերպելու խնդիրը: Որոնվող փաստի սխալ ձևակերպումն առավելապես հանգեցնում է ապացուցման բեռի սխալ բաշխման: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեպքերում,

երբ վարույթի մի կողմը վկայակոչում է որևէ փաստի առկայությունը, իսկ մյուսը դրա բացակայությունը, դատարանները թույլ են տալիս երկու հնարավոր սխալներից մեկը՝ կա՛մ մի կողմի վրա դնում են փաստի առկայությունը, իսկ մյուս կողմի վրա՝ դրա բացակայությունն ապացուցելու պարտականություն, կա՛մ, ոչ հազվադեպ, փաստի բացակայությունը վկայակոչողին առաջարկում են այն ապացուցել:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ 1998 թ. ՔԴՕ 48-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը սխալ տպավորություն էր ստեղծում, թե կողմը պարտավոր է ապացուցել բացառապես այն հանգամանքները, որոնք ինքն է վկայակոչել: Մինչդեռ, ինչպես հայտնի է, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելիս դատարանը ղեկավարվում է ոչ միայն կողմերի ներկայացրած պահանջներով և նրանց վկայակոչած հանգամանքներով, այլ նաև նյութական իրավունքի նորմի (նորմերի) բովանդակությամբ և անհրաժեշտության դեպքում կարող է ապացուցման առարկայի մեջ ներառել այնպիսի փաստեր, որոնք կողմերը չեն վկայակոչել, բայց գործի լուծման համար ունեն նշանակություն: Հարց է ծագում, թե ով պետք է ապացուցի նման փաստերը: Օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու դատարանի պարտականության բացակայության և դատավարության մրցակցային ձևի պայմաններում կարելի է միանշանակ պնդել, որ դատարանի նախաձեռնությամբ ապացուցման առարկայի մեջ ներառված փաստերը ևս պետք է ապացուցեն կողմերը, ավելի ճիշտ այն կողմը, որի պահանջը կամ առարկությունը հիմնավորում է իրավաբանական նշանակություն ունեցող տվյալ փաստը: Նշվածը հաշվի առնելով՝ գործող ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվել է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի ոչ թե իր վկայակոչած, այլ իր պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը: Ընդ որում, կողմը պետք է ապացուցի ոչ թե իր կողմից

վկայակոչված ցանկացած փաստ, այլ բացառապես այն փաստերը, որոնք կողմի իրավունքի պաշտպանության տեսանկյունից նրա համար ունեն իրավական նշանակություն, ապահովում են նրա պահանջի կամ առարկության հիմնավորվածությունը:

Իրավաբանական գրականության մեջ ուշագրավ կարծիք է արտահայտվել, որ ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը կիրառելիս նպատակահարմար է հաշվի առնել և օրենսդրորեն նախատեսել ապացուցման բեռը բաշխելու ոչ միայն սուբյեկտիվ, այլ նաև օբյեկտիվ չափանիշները: Նման մոտեցումը դատարանին կօգնի ոչ միայն ապացուցման ենթակա փաստը ճշգրիտ ձևակերպելու, այլ նաև այդ փաստի ապացուցման բեռը պատշաճ սուբյեկտի վրա դնելու հարցում¹:

Սուբյեկտիվ չափանիշն այն է, թե կողմերից որի իրավական դիրքորոշումն է ամրապնդում տվյալ փաստը, ում պահանջի կամ առարկության հիմքում է այն ընկած: Ակնհայտ է, որ բազմաթիվ դեպքերում նշված չափանիշն ինքնին կարող է բավարար լինել համապատասխան փաստի ապացուցման բեռը պատշաճ սուբյեկտի վրա դնելու համար: Սակայն այն դեպքերում, երբ վարույթի մի կողմը վկայակոչում է որևէ փաստի առկայությունը, իսկ մյուսը դրա բացակայությունը, այսինքն՝ մեկը վկայակոչում է դրական փաստ, իսկ մյուսը՝ բացասական, նշված չափանիշը թույլ չի տալիս որոշել ապացուցման բեռը կրող սուբյեկտին: Ակնհայտ է, որ դատական ապացուցման ընթացակարգը կլինի արդյունավետ միայն այն պարագայում, երբ կողմերից մեկի վրա դրվի փաստն ապացուցելու պարտականություն, իսկ մյուս կողմն ազատվի հակառակն ապացուցելու բեռից, քանի որ ապացուցման պարտականությունը ենթադրում է ոչ միայն փաստեր վկայակոչելու, դրանք հաստատող ապացույցներ ներկայացնելու, այլ նաև գործի լուծման համար էական նշանակութ-

¹ Տե՛ս **Баулин О. В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 211:

յուն ունեցող փաստը վիճելի մնալու դեպքում դրա անբարենպաստ հետևանքները կրելու անհրաժեշտություն: Հակառակ դեպքում, եթե, օրինակ, հայցվորը չկարողանա ապացուցել պարտքի առկայության, իսկ պատասխանողն էլ դրա բացակայության փաստը, վարույթը կարող է մտնել փակուղի, քանի որ անհնար կլինի որոշել այն սուբյեկտին, որը պետք է կրի տվյալ իրավիճակի անբարենպաստ հետևանքները:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը չի կարող հենվել միայն սուբյեկտիվ չափանիշի վրա, այն պետք է ունենա նաև օբյեկտիվ հիմք¹:

Հայտնի խորհրդային դատավարագետ Մ.Ա. Գուրվիչն իր հեղինակած «Դատական ակտեր» մենագրության մեջ բավականին համոզիչ հիմնավորում էր, որ ապացուցման բեռը բաշխելու նպատակներից ելնելով՝ կարևոր նշանակություն ունի փաստերի դասակարգումն իրավահիմնավորողների (правоосновывающие) և իրավախոչընդոտողների (препятствующие)²: Համապատասխանաբար հեղինակն առաջարկում էր իրավահիմնավորողներ փաստերի ապացուցման բեռը դնել պահանջ ներկայացնողի, իսկ իրավախոչընդոտող փաստերի ապացուցման բեռը՝ առարկողի վրա:

Հայտնի է, որ միևնույն փաստը վեճի կողմերի համար կարող է ունենալ տարբեր նշանակություն: Մ.Ա. Գուրվիչի առաջարկած դասակարգումը կիրառական տեսանկյունից բավականին արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, երբ ապացուցման բեռը բաշխելիս հաշվի առնվի նաև այն, թե ինչ բնույթի գործ է քննվում դատարանում և ինչպիսի նշանակություն ունի տվյալ փաստը պահանջ կամ առարկություն ներկայացնող կողմի համար, այսինքն՝ որոշակի **օբյեկտիվ չափանիշներ**, մասնավորապես՝ ապացուցման ենթակա փաստի բնույթը և ներկայացված հայցի դատավարական նպատակը (հայցի տե-

1 Տե՛ս **Баулин О. В.**, նշված աշխ., էջ 205:

2 Տե՛ս **Гурвич М. А.** Судебное решение. Теоретические проблемы. М., 1951, էջ 82-83:

սակը)³:

Վճռող և դրական ճանաչողական հայցերով հայցվորի համար իրավահիմնավորող նշանակություն ունեն այն փաստերը, որոնց հետ օրենքը կապում է նրա մոտ որոշակի սուբյեկտիվ իրավունքի ծագումը (օրինակ, գումարի բռնագանձման պահանջի դեպքում այդպիսի նշանակություն ունի փոխառության գումարի տրամադրումը, պարտապանի կետանցը, վնաս պատճառելը, անհիմն հարստացումը, պայմանագիրը փոփոխելու պահանջի դեպքում հանգամանքների էական փոփոխությունը, պայմանագիրը լուծելու պահանջի դեպքում պատասխանողի կողմից պայմանագրի էական խախտումը և այլն): Նշված հայցատեսակների պարագայում հայցվորի համար իրավախոչընդոտող նշանակություն ունեն այն հանգամանքները, որոնք բացառում են հայցվորի պահանջը բավարարելու հնարավորությունը, հանգեցնում են հայցվորի սուբյեկտիվ իրավունքի դադարման (օրինակ՝ փոխառության գումարի վերադարձը, վնասը հայցվորի մեղքով պատճառված լինելը, պայմանագրի էական խախտումն անհաղթահարելի ուժի ազդեցությամբ և այլն):

Այն դեպքերում, երբ հայցվորը պահանջում է ճանաչել իր մոտ որոշակի սուբյեկտիվ իրավունքի առկայությունը և պարտավորեցնել պատասխանողին իր օգտին կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց (վճռող հայց), նա պետք է կրի այդ իրավունքի առկայությունը և ծավալն ապացուցելու բեռը, այսինք՝ նա է պարտավոր վկայակոչել և ապացուցել իրավահիմնավորող փաստեր: Միևնույն ժամանակ նա պարտավոր չէ ապացուցել իրավախոչընդոտող փաստերի բացակայությունը: Վերջիններս վկայակոչելու և դրանց առկայությունն ապացուցելու բեռը պետք է կրի պատասխանողը, որը, իր հերթին, պարտավոր չէ ապացուցել հայցվորի համար իրավահիմնավորող նշանակություն ունեցող փաստերի բացակայությունը:

3 Ст'ю Баулин О. В., նշված աշխ., էջ 205:

Շարադրվածն ամբողջությամբ վերաբերելի է նաև այն դեպքերին, երբ հայցվորը պահանջում է ճանաչել իր և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը, վիճելի գույքի կամ պատասխանողի նկատմամբ իր որոշակի սուբյեկտիվ իրավունքը (դրական ճանաչողական հայց):

Բացասական ճանաչողական հայցերով իրավահիմնավորող պետք է համարել այն փաստերը, որոնց հետ օրենքը կապում է պատասխանողի իրավունքի ծագումը, իսկ իրավախոջընդոտող՝ այն փաստերը, որոնք հանգեցնում են այդ իրավունքի դադարման: Այս հայցատեսակի քննության ժամանակ իրավախոջընդոտող փաստերի ապացուցման բեռը պետք է կրի հայցվորը, որը պահանջում է ճանաչել իր և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության բացակայությունը: Ինչ վերաբերում է պատասխանողին, ապա վերջինս նման գործերով կրում է իրավահիմնավորող փաստեր վկայակոչելու և ապացուցելու պարտականություն՝ չկրելով հայցի հիմքում ընկած իրավախոջընդոտող փաստերի բացակայությունը ապացուցելու բեռ:

Շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը բանաձևելիս չափազանց կարևոր է հաշվի առնել այն, որ *կողմը չի կրում այն փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն, որը, նյութական օրենսդրության համաձայն, իր համար ունի իրավախոջընդոտող (իրավադադարեցնող) նշանակություն:*

Վեճերի լուծման մրցակցային ընթացակարգի էությունից ու ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ հայցվորի պահանջը բացառող հանգամանքներ պետք է վկայակոչի այն անձը, որն առարկում է ներկայացված հայցի դեմ՝ կրելով դրանք ապացուցելու պարտականությունը: Նույն կերպ պատասխանողը պարտավոր չէ ապացուցել հայցվորի համար իրավաստեղծ նշանակություն ունեցող փաստերի բացակայությունը. հայցվորն է կրում

նման փաստերի ապացուցման բեռը:

Շարադրվածից բխում է, որ ապացուցման պարտականություն կրող սուբյեկտներին որոշելիս հարկ է ուշադրություն դարձնել գործին մասնակցող անձի կողմից վկայակոչվող փաստերի բնույթին և իրավական նշանակությանը:

Եթե դրանք ունեն իրավաստեղծ, իրավափոփոխիչ կամ իրավադադարեցնող իրավաբանական փաստի բնույթ և վկայակոչվում են իրավունք կամ պարտականություն առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու նպատակով (օրինակ, պարտքի առկայությունը՝ գումարի բռնագանձման պահանջի իրավունքի ծագումը հիմնավորելու համար, կամ հանգամանքների էական փոփոխությունը՝ կնքված պայմանագիրը փոփոխելու համար, կամ գործարքը կնքելիս կիրառված բռնությունը՝ դրա անվավերությունը հիմնավորելու համար), ապա դրանք ապացուցելու պարտականությունը պետք է դրվի փաստը վկայակոչողի վրա: Իսկ եթե վկայակոչվող հանգամանքը չունի տվյալ կողմի համար իրավաստեղծ, իրավափոփոխիչ կամ իրավադադարեցնող իրավաբանական փաստի նշանակություն (օրինակ՝ «պայմանագիրը փոփոխելու համար հիմք հանդիսացող հանգամանքների էական փոփոխություն չկա», «ոչ պատշաճ կատարում չի եղել», «կետանց չի եղել»), այն վկայակոչող կողմը տվյալ փաստը հաստատելու պարտականություն չունի:

Այլ մոտեցման պարագայում ստիպված պետք է լինենք ընդունել այն անընդունելի միտքը, որ, օրինակ, կապալի պայմանագրով նախատեսված վճարումը բռնագանձելու վերաբերյալ պահանջի քննության ժամանակ կապալառուն պետք է ապացուցի, որ՝ 1) առկա չէ կապալի պայմանագրի այնպիսի խախտում, որը վատթարացրել է դրա արդյունքը, կամ առկա չէ այլ թերություն, որն այն դարձրել է պայմանագրով նախատեսված օգտագործման կամ սովորական օգտագործման համար ոչ պիտանի, 2) առկա թերությունները էական և չվերացվող չեն: Ան-

կասկած, նման մոտեցումն ընդունելի չէ, քանի որ ոչնչով չհիմնավորված և անհամաչափ բեռ է դնում կապալառուի վրա, նրան դնում է իր հակառակորդի (կոնտրադենտի) նկատմամբ էականորեն նվազ բարենպաստ վիճակում: Կատարված աշխատանքի դիմաց պայմանագրով նախատեսված վճարումը բռնագանձելու վերաբերյալ պահանջ քննելիս կապալառուի (հայցվորի) վրա չի կարող դրվել այնպիսի փաստերի բացակայությունն ապացուցելու պարտականություն, որոնք, նյութական օրենսդրության համաձայն, իր համար ունեն իրավախոչընդոտող (իրավադադարեցնող) նշանակություն (որոնք իր հայցի հիմքում ընկած չեն), որոնց հաստատման պարագայում ներկայացված պահանջը կարող է մերժվել կամ բավարարվել մասամբ:

Մինևույն ժամանակ հարկ է արձանագրել, որ քննարկված սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշներն ապացուցման բեռը բաշխելու ընդհանուր կանոնի օրենսդրական ձևակերպման մեջ արտացոլելն իրավական տեխնիկայի տեսանկյունից որոշակի դժվարությունների հետ է կապված, քանի որ անխուսափելիորեն առաջացնում է դատավարագիտության մեջ բանավեճային բովանդակություն ունեցող եզրույթներ (իրավահիմնավորող, իրավախոչընդոտող փաստ, վճռող, ճանաչողական հայց, դրական, բացասական հայց և այլն) ներմուծելու անհրաժեշտություն, ինչը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և էլ ավելի կարող է բարդացնել նորմի կիրառությունը: Այդ իսկ պատճառով օրենսդիրն առավել նպատակահարմար է համարել ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը կոնկրետացնել մի շարք նորմերում: Մասնավորապես ՔԴՕ 64-րդ հոդվածում նախատեսվել են հետևյալ դրույթները՝

1) Գործին մասնակցող անձի պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստը ժխտող անձի վրա չի կարող դրվել այդ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն (մաս 2)։

2) Պարտավորության բովանդակությունը կազմող գործողությունը կատարված լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտապանը: Պարտավորությունը ոչ պատշաճ կատարված լինելու փաստը պետք է ապացուցի այդ փաստը վկայակոչող գործին մասնակցող անձը (մաս 3):

«Չի ապացուցում նա, ով ժխտում է» կանոնն ապացուցման բեռը բաշխելու ընդհանուր կանոնի անկյունաքարերից մեկն է: Կանոնի կարգավորիչ նշանակությունը նրանում է, որ այն բացառում է հակառակ կողմի վկայակոչած (նրա պահանջի կամ առարկության հիմքում դրված) փաստի բացակայությունն ապացուցելու պարտականությունը:

Անձը կարող է առարկել պահանջի կամ մյուս կողմի ներկայացրած առարկության դեմ ինչպես դրա հիմքում դրված հանգամանքները պարզապես ժխտելով (պարզ, իրավաբանական կամ ապացուցողական փաստերով չհիմնավորված առարկություն), այնպես էլ որոշակի հանգամանքներ վկայակոչելով (որակյալ կամ իրավաբանական կամ ապացուցողական փաստերով հիմնավորված առարկություն): Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնից բխում է, որ անձը պետք է ապացուցի այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են նրա առարկությունները: Հետևաբար, այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձն առարկում է պահանջի կամ մյուս կողմի ներկայացրած առարկության հիմքում դրված փաստերի դեմ պարզապես դրանք ժխտելով, առանց այլ իրավաբանական կամ ապացուցողական փաստեր վկայակոչելու, նրա վրա չի կարող դրվել տվյալ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն:

Ապացուցման են ենթակա նյութաիրավական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք ընկած են կողմերի պահանջների և առարկությունների հիմքում, նրանց համար ունեն իրավահիմնավորող կամ իրավախո-

չընդոտող նշանակություն (կախված հայցատեսակից): Մինչդեռ հասարակ ժխտումը չի պարունակում նյութաիրավական նշանակություն ունեցող փաստ: Եթե կողմը հենվում է մյուս կողմի վկայակոչած ու չապացուցված փաստի բացակայության վրա, դա ևս փաստի վկայակոչում է (օրինակ՝ «Երաշխավորության պայմանագիր չի կնքվել», «պայմանագիրը փոփոխելու համար հիմք հանդիսացող հանգամանքների էական փոփոխություն չկա», «ոչ պատշաճ կատարում չի եղել», «կետանց չի եղել»), սակայն հարկ է նկատել, որ այն իրավաբանական փաստ համարվել չի կարող, իրավաբանական փաստի բացակայության փաստի հետ օրենքը որևէ իրավական հետևանք չի կապում, այն չի դիտարկում որպես քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագման հիմք (տես՝ Քաղ. օր. 10 հոդ.): Համապատասխանաբար, վկայակոչված փաստի բացակայության վրա հենվող կողմը տվյալ փաստը հաստատելու պարտականություն ունենալ չի կարող: Ոչ թե «պաշտպանվողը» (օրինակ՝ ենթադրյալ երաշխավորը) պետք է ապացուցի հայցի հիմքում դրված փաստի (երաշխավորության պայմանագիրը կնքելու) բացակայությունը, այլ «հարձակվողը» (հայցվոր պարտատերը) պետք է ապացուցի համապատասխան իրավահարաբերության ծագման հիմք հանդիսացող փաստը¹:

ՔԴՕ 64-րդ հոդվածի 3-րդ մասում ձևակերպված կանոնները ևս ուղղված են ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի կոնկրետացմանը: Նշված դրույթը ձևակերպելիս օրենսդիրը հիմք է ընդունել այն հայեցակարգը, որ պարտավորությունը, դրա բաղադրատարրերից յուրաքանչյուրը կատարելու փաստն ապա-

¹ Հարկ է սակայն ընդգծել, որ «չի ապացուցում նա, ով ժխտում է» կանոնից օրենքով նախատեսված են որոշ բացառություններ: Այսպես, փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկող փոխառուի վրա է դրվում պարտականություն՝ ապացուցելու, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում (ստացականում) նշվածից պակաս քանակով (Քաղ. օր. 882 հոդ., մաս 1):

ցուցելու բեռը պետք է կրի այն կատարելու պարտականություն ստանձնած անձը (վաճառողը, մատակարարը, կապալառուն, ծառայություն մատուցողը), քանի որ կատարվածի դիմաց կատարում պահանջելիս նա է վկայակոչում պայմանագրի առարկա հանդիսացող գործողություններն իր կողմից կատարված լինելու փաստը և դրա համար հատուցում ստանալու իր իրավունքի ծագումը:

Ինչ վերաբերում է պայմանագրով ստանձնած պարտավորությունը պարտապանի կողմից ոչ պատշաճ կատարելուն (կետանցով, թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ), ապա ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի ուժով պարտավորության բաղադրատարրերից յուրաքանչյուրը ոչ պատշաճ կատարելու (օրինակ՝ որակին ներկայացվող պահանջները ենթադրաբար խախտելու, կատարման կետանց թույլ տալու) փաստը պետք է ապացուցի գործին մասնակցող այն անձը, որն այդ փաստերը դնում է (պետք է դնի) իր պահանջի հիմքում կամ չընդունելով պահանջը՝ վկայակոչում է (պետք է վկայակոչի) փաստ, որը բացառում է այն լրիվ կամ մասնակիորեն բավարարելու հնարավորությունը:

Ըստ էության, ՔԴՕ 64-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է կարգավորում, ըստ որի, եթե կողմն իր պահանջի կամ առարկության հիմքում դնում է պարտապանի կողմից իր պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու փաստը (անորակ, ժամկետանց, էական կամ ոչ էական թերություններ պարունակող և այլն), ինքն էլ պարտավոր է ապացուցել տվյալ հանգամանքի առկայությունը և կրում է չապացուցելու անբարենպաստ հետևանքների ռիսկը:

Շարադրվածի հիման վրա ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը կարելի է բանաձևել հետևյալ կերպով.

- ապացուցման պարտականություն կրող սուբյեկտ-

ներին որոշելիս հարկ է ուշադրություն դարձնել պահանջի/առարկության հիմքում դրված փաստերի բնույթին և իրավական նշանակությանը.

- դատարան դիմող անձը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում դրված և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, քանի որ նա է պնդում այդ փաստերի գոյությունը, և այդ փաստերի հետ են նյութական իրավունքի նորմերը կապում որոշակի պահանջներ ներկայացնելու և դատարանի կողմից դրանք բավարարելու հնարավորությունը,

- եթե պատասխանողը չի ընդունում պահանջը և հենվում է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի վրա, ապա նա պարտավոր է ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը՝ այն փաստերը, որոնք բացառում են ներկայացված պահանջը բավարարելու հնարավորությունը,

- գործին մասնակցող անձի պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստը ժխտող անձի վրա չի կարող դրվել այդ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն:

6.3. Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնները (ապացուցողական կանխավարկածներ)

Քննարկված ընդհանուր կանոնից բացի կան նաև հատուկ կանոններ, որոնք որոշակիորեն ազդում են ապացուցման առարկայի մեջ մտնող փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու վրա:

Մասնավորապես նյութական և դատավարական օրենսդրության նորմերով սահմանվում են ապացուցողական կանխավարկածներ՝ ապացուցման առարկայի մեջ մտնող որոշակի փաստերի գոյության կամ բացակայության վերաբերյալ իրավական ենթադրություններ, որոնք հերքելու պարտականությունն օրենքով դրված է դատա-

վարության կոնկրետ մասնակցի վրա:

Դատավարագիտության մեջ ապացուցողական կանխավարկածներն ավանդաբար դիտարկվում են որպես ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ, որոնց ուժով որոշակի փաստ վկայակոչող գործին մասնակցող անձն ազատվում է այն ապացուցելու պարտականությունից, եթե ապացուցում է դրա հետ կապված մեկ կամ մի քանի այլ փաստ, իսկ հակառակն ապացուցելու պարտականությունը դրվում է օրենքով նախատեսված սուբյեկտի վրա¹:

Ապացուցողական կանխավարկածներ ամրագրված են առավելապես նյութական օրենսդրության նորմերում, և եթե դատարանը պարզում է, որ տվյալ նորմերը կիրառելի են վիճելի իրավահարաբերության նկատմամբ, ապա պետք է հաշվի առնի, որ՝

1) գործին մասնակցող անձը, ում օգտին օրենքով սահմանվում է ապացուցողական կանխավարկածը, որոշակի փաստի կամ փաստերի ապացուցման դեպքում ազատվում է ենթադրվող փաստն ապացուցելու պարտականությունից.

2) հակառակն ապացուցելու պարտականությունը կրում է օրենքում նախանշված կողմը.

3) ենթադրվող փաստը համարվում է հաստատված և դրվում է վճռի հիմքում, եթե հակառակն ապացուցելու ծանրությունը կրող կողմը չի կատարում ապացուցման պարտականությունը և գործով չի հաստատվում ենթադրությունը հերքող որևէ այլ փաստ:

Այսպես, Քաղ. օր. 1058-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է **վնաս պատճառողի մեղավորության կանխավարկած**: Նշված նորմի համաձայն՝ վնաս պատճառած

¹ Ապացուցողական կանխավարկածների մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, **Нахова Е.А.** Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию. Автореф. дисс... к.ю.н. Саратов, СГУ, 2006, **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. М., 2005, էջ 294-325, **Сериков Ю.А.** Презумпции в гражданском судопроизводстве. М.: «Волтерс Клувер», 2006:

անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Ինչպես հայտնի է, պատճառված վնասի համար պատասխանատվությունը, որպես կանոն, վրա է հասնում հետևյալ չորս իրավաբանական փաստերի առկայության դեպքում.

ա) վնասի առաջացում,

բ) վնաս պատճառելու գործողությունների հակաիրավականություն,

գ) վնաս պատճառողի գործողությունների և վրա հասած վնասի միջև պատճառական կապ,

դ) վնաս պատճառողի մեղավորություն:

Նշված բոլոր հանգամանքները վնասի հատուցման պահանջով դատարան դիմող տուժողի համար ունեն իրավահիմնավորող նշանակություն:

Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնի բացակայության դեպքում բոլոր նշված փաստերն ապացուցելու պարտականությունը, ընդհանուր կանոնի համաձայն, կկրեր հայցվորը: Սակայն ակնհայտ է, որ Քաղ. օր. 1058-րդ հոդվածում ամրագրված հատուկ կանոնը փոփոխում է ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնն այնքանով, որ ազատում է հայցվորին իրավահիմնավորող փաստերից մեկը՝ պատասխանողի մեղքը, ապացուցելու պարտականությունից:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնին համապատասխան հայցվորը պարտավոր է ապացուցելու, որ պատասխանողի կողմից կատարված հակաիրավական գործողության հետևանքով իրեն պատճառվել է վնաս, սակայն Քաղ. օր. 1058-րդ հոդվածում ամրագրված կանխավարկածի ուժով պարտավոր չէ ապացուցելու պատասխանողի մեղքը:

Հիշատակված դրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ վնասի հատուցման պահանջով քաղաքացիական գործի շրջանակներում պատասխանողի գործո-

դուրսը (անգործությամբ) վնաս պատճառելու փաստը հաստատվելու դեպքում պատասխանողի մեղքը ենթադրվում է, հայցվորը (տուժողը) ազատվում է այն ապացուցելու պարտականությունից, իսկ հակառակն ապացուցելու պարտականությունն օրենքով դրվում է պատասխանող կողմի (վնաս պատճառողի) վրա:

Հետևաբար, եթե պատասխանողը չի կատարում հակառակը (իր անմեղությունը) ապացուցելու պարտականությունը, իսկ գործի այլ նյութերով (այդ թվում հայցվորի կողմից ներկայացված ապացույցներով) չի հաստատվում ենթադրությունը հերքող որևէ փաստ, ենթադրվող փաստը պետք է համարվի հաստատված (չհերքված) և դրվի վճռի հիմքում:

Նույն կերպ Քաղ. օր. 417-րդ հոդվածը սահմանում է **պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանի մեղավորության կանխավարկածը**: Նշված հոդվածի 1-2 մասերի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի ամկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը: Նա ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Տվյալ իրավանորմերի բովանդակությունից բխում է, որ այն դեպքերում, երբ հաստատվում է պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը, Քաղ. օր. 417-րդ հոդվածում ամրագրված ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնի ուժով հայցվորն ազատվում է իրավահիմնավորող փաստերից մեկը՝ պարտապանի մեղավորությունն ապացուցելու պարտականությունից: Պատասխանողի մեղքը ենթադրվում է, քանի դեռ չի հերքվել գործում ամկա ապացույցներով: Պատասխանողը պետք է ապացուցի, որ ինքը պարտավոր

րութիւնը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: Հակառակ դեպքում վճիռ կայացնելիս դատարանն օրենքի ուժով պետք է ենթադրվող փաստը համարի հաստատված (չհերքված) և դնի վճռի հիմքում:

Ապացուցման պարտականութիւնը բաշխելու հատուկ կանոն է նախատեսված անձի պատիվը, արժանապատվութիւնը կամ գործարար համբավն արատավորելու հետևանքով պատճառված վնասի հատուցման հետ կապված պահանջների համար: Քաղ. օր. 1087.1-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանել է **անձի վերաբերյալ տարածված (հրապարակված) փաստական տվյալների անարժանահավատության (նրա բարեվարքության) կանխավարկածը**՝ սահմանելով, որ զրպարտության վերաբերյալ գործերով անձի պատիվը, արժանապատվութիւնը կամ գործարար համբավն արատավորող փաստական տվյալների համապատասխանութիւնն իրականութիւնը պետք է ապացուցի պատասխանողը (այդ տվյալները տարածողը, հրապարակային ներկայացնողը): Հետևում է, որ հրապարակային ներկայացված տվյալների հերքում, ինչպես նաև ոչ նյութական և գույքային վնասի հատուցում պահանջող հայցվորը, որը հենվում է այն փաստի վրա, որ տարածված տեղեկութիւններն իրականութիւնը չեն համապատասխանում, չի կրում այդ փաստն ապացուցելու պարտականութիւն: Տվյալ դեպքում ևս նյութական օրենսդրութիւնը պատասխանողի վրա է դնում հակառակն ապացուցելու բեռը. նա պետք է ապացուցի հրապարակային ներկայացված տեղեկութիւնների համապատասխանութիւնն իրականութիւնը: Նշված պարտականութիւնը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, տարածված (հրապարակված) փաստական տվյալների անարժանահավատության կանխավարկածի ուժով, հրապարակային ներկայացված տեղեկութիւնները պետք է ճանաչվեն իրականութիւնը չհամապատասխանող:

Հարկ է նկատի ունենալ, որ նյութական օրենսդրութիւնը

նը, կարգավորելով տարաբնույթ հասարակական հարաբերություններ, հաճախ սահմանում է դրանց շրջանակներում ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի մասնավորեցումներ, որոնք հաճախ սխալմամբ դիտարկվում են որպես ապացուցման բեռը բաշխելու հատուկ կանոններ:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի նման մասնավորեցումներ են սահմանված, օրինակ, Քաղ. օր. 239-րդ հոդվածի 2-րդ, 422-րդ հոդվածի 2-րդ, 476-րդ հոդվածի 1-ին, 477-րդ հոդվածի 1-ին, 492-րդ հոդվածի 2-րդ, 695-րդ հոդվածի 1-ին, 708-րդ հոդվածի 1-ին, 796-րդ հոդվածի 3-րդ մասերում և այլն: Նշված և նմանատիպ բոլոր այլ կանոնները, որոնք կառուցված են «պարտավոր է..., եթե չի ապացուցում...», «իրավունք ունի..., եթե չի ապացուցվում...» բանաձևերով, որպես ապացուցման բեռը բաշխելու հատուկ կանոններ դիտարկվել չեն կարող: Դրանք լիովին տեղավորվում են ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնի շրջանակներում, այդ կանոնի մասնավորեցումներ են, քանի որ չեն նախատեսում բացառություն այդ կանոնից, թույլ չեն տալիս ենթադրելու պահանջը կամ առարկությունը հիմնավորող փաստի գոյությունը՝ հակառակն ապացուցելու բեռը դնելով հակառակ կողմի վրա:

Ավաճը պարզաբանենք օրինակով:

Քաղ. օր. 796-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կոմիսիոները, որը գույքը վաճառել է կոմիտենտի հետ համաձայնեցված գնից ցածր գնով, պարտավոր է վերջինիս հատուցել գների տարբերությունը, եթե չի ապացուցում, որ՝

ա. ինքը հնարավորություն չի ունեցել գույքը վաճառել համաձայնեցված գնով և

բ. այն ավելի ցածր գնով վաճառելը կանխել է կոմիտենտին պատճառվելիք ավելի մեծ վնասները:

ՔԴՕ 62-րդ հոդվածի 1-ին մասի և Քաղ. օր. 796-րդ հոդվածի 3-րդ մասի համադրված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գների տարբերությունը հատուցելու պահանջ ներկայացնելու պարագայում ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի ուժով կոմիտենտը պետք է ապա-

ցուցի իր համար իրավահիմնավորող նշանակություն ունեցող փաստը՝ այն որ կոմիսիոները շեղվել է իր ցուցումներից՝ գույքը վաճառելով երրորդ անձի իր հետ համաձայնեցված գնից ցածր գնով: Քաղ. օր. 796-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ այլ իրավահիմնավորող փաստի հաստատում չի նախատեսում: Միևնույն ժամանակ քննարկվող նորմը նախատեսում է իրավադադարեցնող նշանակություն ունեցող որոշակի փաստակազմ, որը պետք է վկայակոչի և ապացուցի ներկայացված պահանջի դեմ առարկող կոմիսիոները, մասնավորապես այն, որ ինքը հնարավորություն չի ունեցել գույքը վաճառել համաձայնեցված գնով և, որ այն ավելի ցածր գնով վաճառելը կանխել է կոմիտենտին պատճառվելիք ավելի մեծ վնասները: Ինչպես նշել ենք վերը, հայցվորի համար իրավադադարեցնող նշանակություն ունեցող փաստերը վկայակոչելու և դրանք ապացուցելու բեռը կրում է պատասխանողը, հայցվորը չի կրում դրանց բացակայությունը (հակառակը) ապացուցելու բեռ: Հետևաբար, կոմիսիոների (պատասխանողի) կողմից նման փաստեր չվկայակոչելու դեպքում դրանք պարզապես դատական քննության առարկա չեն դառնում, ապացուցման առարկայի մեջ չեն ներառվում, հետևաբար նաև չեն ապացուցվում:

Այսպիսով, ապացուցողական կանխավարկածներն ապացուցման այնպիսի հատուկ կանոններ են, որոնք ոչ թե կոնկրետացնում են ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը, այլ նախատեսում են այդ կանոնից որոշակի բացառություններ, որոնց ուժով պահանջի կամ առարկության հիմքում ընկած փաստի գոյությունն օրենքի ուժով ենթադրվում է, քանի դեռ վարույթի մյուս կողմը հակառակը չի ապացուցել:

Ինչպես նշվել է, ՔԴՕ-ն ևս պարունակում է ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ:

Մասնավորապես ՔԴՕ 62-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե գործին մասնակցող անձի վկայակոչած փաստը հաստատող ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով պետք է գտնվի գործին մասնակցող այլ անձի մոտ, ապա վկայակոչված փաստը համարվում է հաստատված, քանի դեռ գործին մասնակցող համապատասխան անձը հակառակը չի ապացուցել:

Քննարկվող կանոնի ուժով ապացուցման որոշակի առանձնահատկություն է սահմանվում, օրինակ, աշխատանքային վեճերով: Այսպես, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը վիճարկելու դեպքում պայմանագիրը լուծելու կարգը պահպանված լինելու և պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու օրինական հիմքի առկայության փաստերն ապացուցելու պարտականությունը պետք է դրվի պատասխանողի (գործատուի) վրա: Վերջինս է պարտավոր ապացուցել աշխատողի անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին, աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք չլինելու, աշխատողի կողմից աշխատանքային նորմաները չկատարելու փաստերը և այլն: Եթե գործատուն չապացուցի նշված հանգամանքները, նա էլ պետք է կրի դրա բացասական հետևանքները:

Նման մոտեցումը պատճառաբանվում է այն իրողությամբ, որ աշխատանքային իրավահարաբերությունները միջնորդավորող փաստաթղթերի ճնշող մեծամասնությունն աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխան կազմվում, պահվում և տրամադրվում են գործատուների կողմից: Քանի որ գրավոր ապացույցները գտնվում են կամ պետք է գտնվեն գործատուի մոտ, նրա վրա էլ գործնականում դրվում է դրանք ներկայացնելու պարտականությունը:

Քննարկվող ապացուցողական կանոնը, որը բխում է աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկություններից, ժամանակին իր արտացոլումն է գտել նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում: Մասնավորապես գործերից մեկով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված`

աշխատողների թվաքանակի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն է կրում իր մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը: Նման եզրակացություն կատարելիս Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում, նման ապացույց կարող է ձեռք բերվել միայն պատասխանողից (գործատուից), միայն նրա ներքին փաստաթղթերում պետք է առկա լինեն համապատասխան այլ աշխատանքի առկայության կամ բացակայության փաստը հավաստող ապացույցներ¹:

Հարկ է նկատի ունենալ, որ ԶԴՕ 62-րդ հոդվածի 4-րդ մասում ձևակերպված կանոնը կիրառելի է ոչ միայն նկարագրված աշխատանքային հարաբերությունների նկատմամբ: Այն ընդհանուր նշանակություն ունի բոլոր իրավիճակների համար, երբ գործին մասնակցող անձի վկայակոչած փաստը հաստատող ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով պետք է գտնվի գործին մասնակցող այլ անձի մոտ: Եթե ապացուցման պարտականության կատարումը նշված պատճառներով կողմից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, այն չի կարող դրվել տվյալ կողմի վրա, ապացուցման ենթակա փաստը պետք է ենթադրվի, իսկ հակառակն ապացուցելու բեռը դրվի հակառակ կողմի վրա:

Դատավարական օրենսդրությունը սահմանում է նաև այլ ապացուցողական կանխավարկածներ: Այսպես ըստ ԶԴՕ-ի՝

1) Գործին մասնակցող անձն իրավունք չունի ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա ձեռքբերմանը և հետագոտմանը՝ գործին մասնակցող մյուս անձանց համար անհնարին կամ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-34(ՎԴ) քաղաքացիական գործով 26.01.2007 թ. որոշումը:

դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Նման փաստերի առկայության դեպքում ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու հետևանքները կրում է խոչընդոտող անձը (62 հոդ., մաս 5).

2) Եթե որպես վկա հանդես եկող գործին մասնակցող անձը հրաժարվում (խուսափում) է ցուցմունք տալուց կամ գործին մասնակցող անձի հարցին պատասխանելուց, ապա առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող այլ անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել գործին մասնակցող անձի հրաժարվելը կամ խուսափելը ցուցմունք տալուց կամ պատասխանելուց, իսկ գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա այն փաստերը, որոնց վերաբերյալ գործին մասնակցող անձը հրաժարվում (խուսափում) է ցուցմունք կամ պատասխան տալուց, համարել ապացուցված (72 հոդ., մաս 3).

3) Փորձաքննության անցկացման համար նմուշ ստանալու մասին դատարանի որոշման պահանջը գործին մասնակցող անձի կողմից առանց հարգելի պատճառի չկատարելու կամ դրա կատարումից խուսափելու դեպքում փորձաքննությամբ պարզման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները կրում է այդ անձը, եթե առանց նմուշի տրամադրման հնարավոր չէ ավարտել փորձաքննությունը (87 հոդ., մաս 10):

Ակնհայտ է, որ նշված դատավարական կանոնները դատարանին իրավունք են վերապահում որոշակի փաստական հանգամանքների հաստատման դեպքում ենթադրելու որոշակի փաստի գոյությունը՝ որոնվող փաստի ապացուցման պարտականություն կրող անձին ազատելով այն ապացուցելու պարտականությունից և հակառակն ապացուցելու պարտականությունը դնելով մյուս կողմի վրա:

Ապացուցման պարտականությունը վերաբաշխելու հիմք հանդիսացող հանգամանքների և վերը նշված իրավադրույթների ուժով ձևավորված իրավական ենթադ-

րութիւնը որոշակի փաստի գոյութեան վերաբերյալ, իհարկեւ, անհերքելի չէ: Այն կարող է հերքվել գործում առկա կամ լրացուցիչ ներկայացված այլ ապացույցներով: Ուստի դատարանը ենթադրվող փաստը կարող է համարել հաստատված և դնել վճռի հիմքում միայն այն դեպքերում, երբ հակառակն ապացուցելու ծանրութիւնը կրող կողմը չի կատարում դատարանի կողմից իր վրա դրված ապացուցման պարտականութիւնը:

§7. Ապացուցման պարտականութիւնը բաշխելու մասին որոշումը

Գործի լուծման համար նշանակութիւն ունեցող փաստերի, ապացուցման ենթակա փաստերի (ապացուցման առարկայի) և ապացուցման ոչ ենթակա փաստերի շրջանակը որոշելը, ինչպէս նաև ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականութիւնը գործին մասնակցող անձանց միջև բաշխելն իրականացվում է որոշակի դատավարական կարգով, որը պայմանավորված է վարույթի տեսակով և գործի քննութեան եղանակով:

Հայցային վարույթի գործերով քննարկվող դատավարական գործողութիւնների պատշաճ կատարումն օրենսդիրը դիտարկել է որպէս նախնական դատական նիստի կենտրոնական խնդիրներից մեկը, որի լուծումը ձևակերպվում է **ապացուցման պարտականութիւնը բաշխելու մասին որոշմամբ**: Հայցային վարույթի գործերով նման որոշման կայացումն այլընտրանք չունի¹:

Ընդ որում, հայցային վարույթի ցանկացած գործով ապացուցման պարտականութիւնը բաշխելու մասին որոշումը կայացնելուց առաջ դատարանը պարտավոր է

¹ Բացառութիւն են ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերը (դրանք քննվում և լուծվում են տասնօրյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու), ինչպէս նաև այն հայցային գործերը, որոնք դատարանի որոշմամբ քննվում են պարզեցված ընթացակարգով:

Նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ քննարկել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու հարցը և նրանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 7-9, 169 հոդ., մաս 1):

ՔԴՕ 169-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացվելու դեպքում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվում է այդ բողոքի վերաբերյալ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Նման նորմի գոյությունը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ բողոքը բավարարելու և հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու փաստի ուժով հակընդդեմ հայցի և դրա դեմ ներկայացվող առարկությունների հիմքերի հաշվին էականորեն ընդլայնվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, ինչն անխուսափելիորեն առաջացնում է հակընդդեմ հայցը ևս դատաքննության նախապատրաստելու, այդ թվում՝ հակընդդեմ հայցի և դրա դեմ ներկայացվող առարկությունների հիմքում ընկած փաստերի վերաբերելիությունը պարզելու և ապացուցման բեռը բաշխելու անհրաժեշտություն: Ուստի հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացվելու դեպքում գործը քննող առաջին ատյանի դատարանը պետք է սպասի այդ հարցով վերաքննիչ դատարանի որոշման կայացմանը: Բողոքը մերժվելու պարագայում, ըստ էության, հաստատվում է հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու հիմքերի բացակայությունը, ինչը թույլ է

տալիս դատարանին ձեռնամուխ լինելու հաջորդ դատավարական գործողության կատարմանը՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացմանը: Սակայն եթե նշված բողոքը բավարարվում է, և ծագում է ներկայացված հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու անհրաժեշտություն, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կարող է կայացվել հակընդդեմ հայցի հիմքերը և դրանք ապացուցելու բեռը կրող սուբյեկտների շրջանակը նախնական դատական նիստում քննարկելուց հետո¹:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացմամբ դատարանը լուծում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի մի շարք **խնդիրներ**.

ա. եզրափակում է հայցի առարկան, դրա փաստական և իրավական հիմքերը, ինչպես նաև հայցի դեմ ներկայացված առարկությունների փաստական և իրավական հիմքերը պարզելուն ուղղված դատավարական գործողությունները՝ համապատասխանաբար սահմանափակելով գործին մասնակցող անձանց կողմից գործի շրջանակներում նոր պահանջներ և փաստական նյութ ներկայացնելու և ներկայացված պահանջներն ու փաստական նյութը փոփոխելու հնարավորությունը և կանխատեսելի դարձնելով հետագա դատավարական գործողությունների ուղղվածությունը, ծավալը և բովանդակությունը,

բ. որոշակիացնում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը՝ ուրվագծելով տվյալ քաղաքացիական գործով դատական ճանաչողության առարկան,

1 Հարկ է նշել, որ ՔԴՕ 169-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը եղել է Սահմանադրական դատարանի քննարկման առարկա: Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի և 140-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի 18.06.2019 թ. թիվ ՍԴՈ-1464 որոշումը:

գ. գործին մասնակցող անձանց ցույց է տալիս գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերի շրջանակը, որոնք ապացուցման ենթակա չեն, և այն փաստերի շրջանակը, որոնք ենթակա են ապացուցման (կազմում են գործով ապացուցման առարկան),

դ. ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր և հատուկ կանոնների կիրառմամբ գործին մասնակցող անձանց միջև բաշխում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը՝ հստակորեն ցույց տալով այն փաստերի շրջանակը, որոնք ապացուցելու նպատակով նրանցից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ, և որոնք վիճելի մնալու բացասական հետևանքները կրելու է տվյալ անձը.

ե. սահմանում է ի կատարումն ապացուցման պարտականության ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետ՝ ապահովելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կողմերի տիրապետության տակ գտնվող ամբողջ ապացուցողական նյութի ներկայացումը և միմյանց առջև բացահայտումը, ինչպես նաև ներկայացված (հավաքված) ապացուցողական նյութի նախապատրաստումը դատաքննության ընթացքում հետազոտման համար:

Ըստ այդմ, օրենքը կանոնակարգում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման **բովանդակությունը**: ԶԴՕ 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննարկվող որոշմամբ պետք է սահմանվեն՝

- 1) գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը,
- 2) ապացուցման կարիք չունեցող փաստերը,
- 3) ապացուցման ենթակա փաստերը,
- 4) գործին մասնակցող յուրաքանչյուր անձի վրա դրված ապացուցման պարտականությունը,

5) գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը:

Կանոնավոր ընթացքով զարգացող գործի շրջանակներում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը, որպես կանոն, չի փոփոխվում: Այդուհանդերձ, օրենքը նախատեսում է այն **փոփոխելու հնարավորություն**:

ՔԴՕ 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է մինչև նախնական դատական նիստի ավարտը, ըստ անհրաժեշտության, փոփոխել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը: Քննարկվող որոշումը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում փոփոխելու հնարավորությունը գործնականում դատարանին թույլ է տալիս ոչ միայն ուղղել սեփական սխալներն ու բացթողումները, այլ նաև ապացուցման գործընթացը կազմակերպելիս հաշվի առնել դատավարական իրավիճակի փոփոխությունը, որը կարող է պայմանավորված լինել դատավարության տվյալ փուլում թույլատրելի կամ անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարմամբ (օրինակ՝ երրորդ անձի հայցի հարուցում, կողմի փոխարինում, այլ անձի ներգրավում, բացառիկ դեպքերում նոր փաստերի ընդունում, ներկայացված գրավոր ապացույցների իսկության վիճարկում և այլն):

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը բացառիկ դեպքերում կարող է փոփոխվել նաև նախնական դատական նիստի ավարտից հետո, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է դատաքննության փուլում կատարված թույլատրելի դատավարական գործողությունների կամ միջնորդությունների քննության արդյունքում (ՔԴՕ 169 հոդ., մաս 5):

Օրենքն ուղղակիորեն չի սահմանում ապացուցման պարտականությունը բաշխելու կամ այն փոփոխելու մասին **որոշման ձևը**: ՔԴՕ 169-րդ հոդվածի 6-րդ մասի բո-

վանդակությունից բխում է, որ նշված որոշումները կարող են կայացվել դատական նիստի ընթացքում արձանագրային որոշման ձևով: Միևնույն ժամանակ օրենքը նախատեսում է հետևյալ պայմանները, որոնց առկայության դեպքում քննարկվող որոշումը պետք է կայացվի առանձին ակտի ձևով և եռօրյա ժամկետում ուղարկվի գործին մասնակցող բոլոր անձանց:

1) գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել այն դատական նիստին, որի ընթացքում դատարանը կայացրել է ապացուցման պարտականությունը բաշխելու կամ այն փոփոխելու մասին որոշումը (ՔԴՕ 169 հոդ., մաս 6),

2) դատարանի որոշումն ընդունվել է դատական նիստից դուրս (ՔԴՕ 199 հոդ., մաս 1, կետ 2):

Հատուկ վարույթներում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը (ապացուցման առարկան) որոշելու և ապացուցման բեռը բաշխելու դատավարական կարգը կախված է գործը նախնական դատական նիստով կամ առանց նման նիստ հրավիրելու քննելու հանգամանքից:

Հատուկ վարույթների գործերով, ընդհանուր կանոնի ուժով, դատարանն իրավունք ունի գործը քննել առանց նախնական դատական նիստ հրավիրելու՝ ՔԴՕ 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները, ըստ անհրաժեշտության, կատարելով գործի դատաքննության ընթացքում:

Հաշվի առնելով այն, որ հատուկ վարույթները դատարանը պետք է իրականացնի գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են համապատասխան վարույթի վերաբերյալ դրույթներով (ՔԴՕ 235 հոդ.)՝ կարելի է եզրակացնել, որ քննարկվող վարույթների շրջանակներում ևս դատարանը կրում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու պարտականություն, եթե գործը նախապատրաստում է դա-

տաքննության նախնական դատական նիստ հրավիրելու միջոցով:

Այն դեպքերում, երբ դատարանը, հատուկ վարույթի գործը նշանակում է դատաքննության առանց նախնական դատական նիստ հրավիրելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու հարցը լիովին գտնվում է նրա հայեցողության շրջանակներում: Հետևում է, որ նման դեպքերում դատարանը կարող է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չկայացնել, եթե ակնհայտ է, որ գործին մասնակցող անձինք հստակ պատկերացում ունեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակի, ապացուցման ենթակա փաստերի, այդ փաստերի ապացուցման պարտականությունը կրելու հանգամանքի մասին կամ այդ պատկերացումը կարող է ձևավորվել գործին մասնակցող անձանց հետ նշված հարցերը դատաքննության ընթացքում քննարկելու և այդ կապակցությամբ իրենց դատավարական իրավունքները և պարտականությունները պարզաբանելու միջոցով: Հակառակ պարագայում քննարկվող որոշումը կայացվում է դատաքննության ընթացքում:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվում **ոչ հայցային այն վարույթներով**, որոնք, դատավարական օրենսդրության համաձայն, սովորաբար քննվում և լուծվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու: Ու թեև քննարկվող գործերով դատարանը մի շարք դեպքերում իրավասու է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով հրավիրելու դատական նիստ, որի ընթացքում կարող են քննարկվել նաև ապացուցման առարկան, այս կամ այն փաստի ապացուցման պարտականության, ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցերը, ֆորմալ առումով դրանց ձևակերպու-

մը կատարվում է գործով կայացված եզրափակիչ դատական ակտի շրջանակներում: Դա պայմանավորված է նախ քննարկվող կատեգորիաների գործերի լուծման համար օրենքով կրճատ ժամկետներ սահմանված լինելու հանգամանքով (որոնք փաստացի բացառում են այդ ընթացքում ընդհանուր հայցային վարույթի կանոններով ապացուցման գործընթացի կազմակերպումը) և ապա՝ այն հանգամանքով, որ առանց դատական նիստ հրավիրելու քննվող բոլոր վարույթներում փաստական և ապացուցողական նյութը գործին մասնակցող անձինք պարտավոր են ներկայացնել վարույթի հարուցման հիմք հանդիսացող դիմումին և դրա դեմ ներկայացվող պատասխանին կից: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ նշված կատեգորիայի գործերով այլ է հրավիրվող դատական նիստի նպատակը. ԶԴՕ-ի՝ համապատասխան վարույթները կարգավորող դրույթներից ուղղակիորեն բխում է, որ դատարանը կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ *պարզաբանումներ* ստանալու, այլ ոչ ապացուցման բեռը բաշխելու և ապացուցողական նյութի ներկայացումը կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվում նաև այն դեպքերում, երբ դատարանը կիրառում է քաղաքացիական գործերի քննության **պարզեցված ընթացակարգ** (հեռակա դատաքննություն, պարզեցված վարույթ կամ արագացված դատաքննություն): Դա բխում է այդ վարույթների պարզեցված բնույթից: Նման որոշում կայացնելու անհրաժեշտություն կարող է ծագել բացառապես այն դեպքերում, երբ դատարանն օրենքով նախատեսված հիմքերով դադարեցնում է պարզեցված համապատասխան ընթացակարգի կիրառումը և որոշում է կայացնում գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին:

§8. Ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու դատավարական կարգը

8.1. Ընդհանուր դրույթներ

Ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելը գործին մասնակցող անձանց գործառույթն է: ՔԴՕ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնում են բացառապես գործին մասնակցող անձինք:

Քանի որ ապացուցման ողջ պարտականությունը գործող օրենսդրությունը դնում է գործին մասնակցող անձանց վրա, իսկ դատարանն օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտականություն չի կրում, կարելի է եզրակացնել, որ վերջինս, որպես ընդհանուր կանոն, իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավասություն չունի: Բացառություն են այն վարույթները, որոնց առանձնահատկությունների հաշվառմամբ, օրենսդիրը սահմանել է, որ դրանց շրջանակներում դատարանը պարտավոր է, չկաշկանդվելով գործին մասնակցող անձանց միջնորդությունների բացակայությամբ, օրենքով կանխորոշված շրջանակներում ցուցաբերել անհրաժեշտ նախաձեռնություն և կատարել ապացույցների ձեռքբերմանն ուղղված որոշակի դատավարական գործողություններ, մասնավորապես՝ գործին մասնակցող և այդպիսին չհանդիսացող այլ անձանցից պահանջելու ապացույցներ, ստանալու այլ տեղեկություններ և նյութեր, նշանակելու փորձաքննություն, հարցաքննություն վկաների, փորձագետների և այլն¹:

¹ Նման նախաձեռնություն ցուցաբերելու անհրաժեշտություն է նախատեսված, օրինակ, ՔԴՕ 203-րդ հոդվածի 3-րդ, 208-րդ հոդվածի 2-րդ, 211-րդ հոդվածի 4-րդ, 244-րդ հոդվածի 1-ին, 252-րդ հոդվածի 1-ին, 258-րդ հոդվածի 1-ին, 263-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 280-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 318-րդ հոդվածի 4-րդ, 323-րդ հոդվածի 4-րդ, 339-րդ հոդվածի

Մրցակցային դատավարությանը հատուկ ընդհանուր կանոնից դատավարական օրենսդրությամբ կատարված բացառությունների կազմում պետք է դիտարկել նաև դատարանի նախաձեռնությամբ վկաների առերես հարցաքննություն կատարելու (ՔԴՕ 73 հոդ., մաս 1), փորձագետին հարցաքննելու (ՔԴՕ 85 հոդ., մաս 1) և լրացուցիչ ու կրկնակի փորձաքննություն նշանակելու (ՔԴՕ 90 հոդ., մաս 1-2) հնարավորությունը, որն էլ, իր հերթին, պայմանավորված է գործում առկա վկաների ցուցմունքների, փորձագիտական եզրակացությունների և մասնագետի բացատրությունների բազմակողմանի հետազոտումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով մրցակցային դատավարության պայմաններում, ընդհանուր կանոնի համաձայն, դատարանը սեփական նախաձեռնությամբ չի կատարում ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ: Վերջիններս կարող են իրականացվել բացառապես գործին մասնակցող անձանց միջնորդությամբ՝ այն էլ օրենքով նախատեսված որոշակի հիմքերի առկայության պայմաններում: Այլ կերպ ասած, գործը քննող դատավորը կարող է իրականացնել բացառապես մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող գործառույթներ՝ զերծ մնալով կողմերի նախաձեռնությունը սեփականով փոխարինելուց:

Գործին մասնակցող անձանց միջնորդությամբ ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ դատարանը կարող է իրականացնել, Մասնավորապես ապացույցներ պահանջելու (ՔԴՕ 64 հոդ.) և ապացույցներ ապահովելու (ՔԴՕ 65 հոդ.) կարգով: Բացի դրանից, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, դատարանը կողմերի միջնորդությամբ է լուծում փորձաքննություն նշանակելու, դատական նիստին վկա, փորձագետ, մասնագետ կանչելու, գործին մասնակցող անձանց հարցաքննելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցները հետազոտելու վերաբերյալ հարցերը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 11):

4-րդ, 343-րդ հոդվածի 4-րդ, 353-րդ հոդվածի 3-րդ մասերով:

Ռ.Գ. Պետրոսյանի կարծիքով, որի հետ համամիտ ենք նաև մենք, օրինականության ապահովման շահերից ելնելով և, հաշվի առնելով դատավարության կողմերի իրավագիտակցության (նաև՝ օրենքներին իրազեկ լինելու), ներկայացուցիչ ունենալու նրանց նյութական հնարավորությունների, փաստաբանության ներկայիս խնդիրները, մրցակցության սկզբունքն իրացնելու հարցում դատարանին նման օժանդակող դեր վերապահելն օբյեկտիվորեն հիմնավորված է¹:

Գործնական կարևոր նշանակություն ունի **ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնելու պարտականության իրականացման պահը**, այսինքն այն հարցը, թե դատավարության որ փուլում կարող են և պետք է ներկայացվեն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող ապացույցները և համապատասխան միջնորդությունները: Ոչ պակաս կարևոր է այն հարցը, թե ում և ինչ ձևով պետք է ներկայացվեն ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները:

Նոր ԶԴՕ-ով ոչ միայն սահմանվել է կողմերի պահանջների և առարկությունների «հաստատման ծանրությունը» կատարելու ժամկետ (այն է՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը), այլ նաև էապես կատարելագործվել են ապացուցման պարտականությունը կատարելու նպատակով իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները դատարան ներկայացնելու կանոնները:

Նախկին դատավարական օրենսդրության շրջանակներում ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու համար հստակ ժամկետային սահմանափակումների բա-

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 181:

ցակայությունը կողմերին տալիս էր ապացույցները և դրանք ձեռքբերելու միջնորդությունները ուշ կամ մասմաս ներկայացնելու, վարույթը, այդ թվում՝ գործի նախապատրաստումը դիտավորյալ ձգձգելու հնարավորություն: Որոշակի ժամկետային սահմանափակումների բացակայությունը պարարտ հող էր ստեղծում դատարանի կողմից գործն անփույթ նախապատրաստելու համար և բացասաբար էր անդրադառնում կողմերի դատավարական գոնուության և կարգապահության վրա¹:

Վարույթը ճիշտ կազմակերպելու, ապացուցողական նյութը ժամանակին՝ մինչև նախնական դատական նիստի ավարտը ներկայացնելուն դրդելու և կողմերի դատավարական կարգապահության մակարդակը բարձրացնելու համար օրենսդիրը նոր օրենսգրքի շրջանակներում նախատեսել է ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնելու ժամկետային սահմանափակումների հավասարակշռված, որոշակի և կանխատեսելի կառուցակարգ, այդ թվում՝ սահմանված ժամկետների խախտմամբ ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու դատավարական հետևանքներ:

Առաջին հերթին, ԶԴՕ-ը հրաժարվել է հայցադիմումին և հայցադիմումի պատասխանին կից կողմի տիրապետության ներքո գտնվող բոլոր վկայակոչված ապացույցները ներկայացնելու՝ նախկին օրենսգրքի պահանջից: Նման մոտեցման հիմքում դրվել է այն տրամաբանությունը, որ քանի դեռ դատարանն իր որոշմամբ չի սահմանել ապացուցման առարկան, չի բաշխել ապացուցման բեռը՝ կողմերի համար որոշակիացնելով թե ով և որ փաստն ապացուցելու համար պետք է ներկայացնի ապացույցներ, վարույթի տվյալ փուլում ապացույցներ ներկայացնելու պահանջը ոչնչով հիմնավորված չէ:

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս.Գ.**, Ընդհանուր հայցային վարույթի կարգով քննվող գործերով դատավարական նյութը հավաքելու (ներկայացնելու) կառուցակարգը քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, Դատական իշխանություն, Եր., 2017, թիվ 1-2, էջ 68-77:

Այնուհետև, ՔԴՕ 63-րդ հոդվածը որպես ապացույցներ, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը: Ըստ հիշյալ հոդվածի 2-րդ մասի՝ **գործին մասնակցող անձը պարտավոր է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտն առաջին ատյանի դատարանի և գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել ու հնարավորության դեպքում նրանց տրամադրել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք:**

Ընդ որում, ապացույցները դատարանի կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականությունն օրենսդիրն ամրապնդել է դատավարական սանկցիայով, այն է՝ որպես ընդհանուր կանոն, ժամկետի խախտմամբ ներկայացված ապացույցները, անկախ գործի համար դրանց նշանակությունից, չեն ընդունվում: ՔԴՕ 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Առաջին ատյանի դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցն ընդունում է, իսկ ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդությունը բավարարում է, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է դատարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ ապացույցը կամ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով»:

Նշված իրավադրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, արգելում է գործին մասնակցող անձանց գործի դատաքննության ընթացքում հղում կատարելու այն ապացույցներին, որոնք նախօրոք չեն բացահայտվել: Ընդ

որում, այդ արգելքը վերաբերում է և՛ այն դեպքերին, երբ գործին մասնակցող անձը կրում է ապացուցման պարտականություն, և՛ այն դեպքերին, երբ ապացույցը ներկայացնելիս նման պարտականություն չկրող անձն իրականացնում է ապացույց ներկայացնելու իր իրավունքը: Նախօրոք (դատարանի կողմից սահմանված ժամկետում) չբացահայտված ապացույցները, ընդհանուր կանոնի համաձայն, դատարանն իրավունք չունի ընդունել, հետագոտել և դնել վճռի հիմքում: Նման ապացույցները Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով պետք է դիտարկվեն որպես արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցներ, որոնց օգտագործումն արգելվում է:

Հատկանշական է, որ, ի տարբերություն Նախկին ՔԴՕ-ի, նոր դատավարական օրենքն ապացույցներ ներկայացնելու կարգը (ներառյալ ժամկետային սահմանափակումները) ուղղակիորեն տարածում է նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների վրա (ապացույցներ պահանջելու, վկա կանչելու, կողմին որպես վկա հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու (ներառյալ լրացուցիչ կամ կրկնակի), մասնագետ ներգրավելու, տեղազննություն կատարելու մասին և այլն): Ապացուցողական նյութի ձեռքբերմանն ուղղված նման միջնորդությունները ևս պետք է ներկայացվեն մինչև ապացուցման պարտականություն բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը, հակառակ պարագայում նման միջնորդություն ներկայացնող անձը պետք է հիմնավորի դատարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Ուշագրավ է, որ օրենքը պարտավորեցնում է բացահայտել այն ապացույցները, որոնց մասին գործին մասնակցող անձին հայտնի է եղել մինչև ապացույցներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը: Բնականաբար, եթե ապացուցման պարտականություն

կրող անձը չի իմացել ապացույցի գոյության մասին կամ ապացույցը ձևավորվել է նշված ժամկետն անցնելուց հետո (օրինակ՝ պարտքի ընդունման փաստը հաստատող փաստաթուղթը), ապա ապացույցը բացահայտելու պարտականության և այն չկատարելու հետևանքների վերաբերյալ կանոնները, կարծում ենք, կիրառվել չեն կարող. նման ապացույցները պետք է ընդունվեն դատարանի կողմից, քանի որ դրանք ներկայացնողն օբյեկտիվորեն գրկված է եղել սահմանված ժամկետում տվյալ ապացույցը ներկայացնելու հնարավորությունից՝ իրենից անկախ պատճառներով:

Հարկ է նկատի ունենալ, որ նախօրոք չբացահայտված ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է ծագել նաև սահմանված ժամկետը լրանալուց հետո դատավարական բնույթի առանձին հանգամանքների («դատավարական իրավիճակի») փոփոխության արդյունքում, օրինակ՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը դատարանի կողմից փոփոխելու, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի վարույթ մտնելու, նոր պատասխանող ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, ապացուցման բեռը բաշխելուց հետո վկայակոչված նոր փաստերն ընդունելու, կողմի ներկայացրած լրացուցիչ ապացույցներն ընդունելու հետևանքով: Նման ապացույցները, անկասկած, պետք է ընդունվեն դատարանի կողմից, չնայած այն հանգամանքին, որ դրանք չեն բացահայտվել վաղօրոք: Ակնհայտ է, որ եթե դատավարական օրենսդրությունը թույլատրելի է համարում «դատավարական իրավիճակի» փոփոխության հանգեցնող նման գործողությունների կատարումը, որոնք գրեթե միշտ ազդում են ապացուցման ենթակա փաստակազմի վրա, ապա դատարանը պետք է գործին մասնակցող անձանց համարժեք հնարավորություն ընձեռի ներկայացնելու համապատասխան ապացուցողական նյութ: Հակառակ պարագայում վերջինիս չընդունումը կարող է դիտարկվել որպես դատական պաշտ-

պանության իրավունքի կոպիտ ոտնահարում: Ի վերջո, հարկ է հաշվի առնել, որ քննարկվող իրավիճակներում խոսքն այնպիսի ապացույցների և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների մասին է, որոնք ներկայացնելու անհրաժեշտությունն չի եղել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը:

ՔԴՕ 63-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե գործին մասնակցող մյուս անձինք հնարավորություն չեն ունեցել նախապես ծանոթանալ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ընդունված ապացույցին, ապա դատարանը գործին մասնակցող անձանց տրամադրում է ողջամիտ ժամկետ՝ այդ ապացույցին ծանոթանալու, դրա վերաբերյալ դիրքորոշում՝ ներառյալ այն հիմնավորող ապացույցներ ներկայացնելու համար: Բնականաբար նման ժամկետը պետք է տրամադրվի գործին մասնակցող անձանց հետ այն քննարկելուց հետո: Գործնականում դա կատարվում է կա՛մ դատական նիստն ընդմիջելու, կա՛մ, անհրաժեշտության դեպքում, այն հետաձգելու միջոցով: Վերջին դեպքում, որպես կանոն, գործին մասնակցող անձին առաջարկվում է մինչև գործով հաջորդ դատական նիստը գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել և դատարան ներկայացնել լրացուցիչ ապացույցների վերաբերյալ դիրքորոշումը և այն հիմնավորող ապացույցները:

Օրենքը հստակորեն չի սահմանազատում «ապացույցի բացահայտում» և «ապացույցի ներկայացում» հասկացությունները: Հարցեր են առաջանում՝ արդյո՞ք «ապացույցի բացահայտում»-ը ենթադրում է նաև դրա ներկայացում գործին մասնակցող մյուս անձանց և դատարանին, կարելի՞ է արդյոք խոսել ապացույցը բացահայտված լինելու մասին, եթե դրա գոյության մասին կողմը հիշատակել է մինչև սահմանված ժամկետի ավարտը, սակայն դրան ծանոթանալու հնարավորություն դատարանը

և գործին մասնակցող մյուս անձինք չեն ունեցել:

Կարծում ենք, որ առաջադրված հարցին պետք է պատասխանել ապացույցի հասկացությունը սահմանող դրույթի լույսի ներքո: ԹԴՕ 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այդպիսի տվյալների բացահայտումը ենթադրում է դրանց բովանդակությունը դատարանին և գործին մասնակցող անձանց մատչելի դարձնելուն ուղղված գործողությունների կատարում: Հետևաբար, ապացույցի բացահայտման մասին կարելի է խոսել բացառապես այն դեպքերում, երբ այն ներկայացվել է դատավարության սուբյեկտներին:

Ապացույցի բացահայտումն ապացույցի ներկայացում չի կարող դիտարկվել միայն այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է գործին մասնակցող անձանց, վկաների, փորձագետի և մասնագետի կողմից համապատասխանաբար իրենց ցուցմունքների կամ բացատրությունների շրջանակներում դատարանին հաղորդվող տեղեկությունների (բանավոր ապացույցների) մասին: Այնքանով, որքանով հարցը վերաբերում է ապացույցների նշված տեսակներին, կարելի է ասել, որ սահմանված ժամկետում «ապացույցի բացահայտում»-ը դրա ներկայացում չի ենթադրում: Բանը նրանում է, որ նշված ապացույցները, դրանց բնույթից ելնելով, դատարան կարող են ներկայացվել բացառապես դատական նիստում, ընդ որում՝ օրենքով սահմանված որոշակի ընթացակարգով: Մասնավորապես մինչև դատաքննությունը գործին մասնակցող անձինք դատավարական փաստաթղթերում կամ նախնական դատական նիստում գործի փաստական հանգամանքների մասին տալիս են բացատրություններ, որոնք ապացույցներ չեն: Գործով ապացույց են նրանց կողմից ԹԴՕ 72-րդ

հողվածով սահմանված կարգով դատական նիստում տրված ցուցմունքները: Նույն կերպ, վկայի ցուցմունքը չի կարող նախապես ներկայացվել դատարան, քանի որ վկան, ըստ գործող օրենսդրության, կարող է հարցաքննվել բացառապես դատական նիստում: Ուստի, ՔԴՕ 63-րդ հոդվածում ամրագրելով գործին մասնակցող անձանց ապացույցները բացահայտելու պարտականությունը և ներկայացվող ապացույցներին նախօրոք ծանոթանալու կողմերի իրավունքը՝ օրենսդիրը նկատի ունի, որ գործին մասնակցող անձը պարտավոր է մինչև ապացույցներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը գործին մասնակցող մյուս անձանց սպառիչ կերպով տեղեկություններ հաղորդել գործի՝ տվյալ պահին իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնց վերաբերյալ ինքը կամ հակառակ կողմը հետագայում կարող է հարցաքննվել, ինչպես նաև այն վկաների մասին, որոնք կարող են հաստատել գործի համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ: Տվյալ ապացույցները գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում չբացահայտելը գործնականում գործին մասնակցող անձին զրկում է գործի դատաքննության ընթացքում դրանք վկայակոչելու հնարավորությունից:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն, ապացույցները վկայակոչելը բավարար չէ դրանք բացահայտված համարելու համար: Դրանք պետք է ներկայացվեն դատարանին և գործին մասնակցող անձանց:

Դատավարական օրենսդրությունը պարունակում է ապացույցների բացահայտման ապահովմանն ուղղված մի շարք նորմեր: Դրանցից առաջնային նշանակություն ունի ՔԴՕ 169-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, համաձայն որի՝ դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ պետք է սահմանի ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնելու ժամկետը: Այս կանոնն ակնհայտորեն ուղղված է նաև այն դեպքերին, երբ սկզբնական

դատավարական փաստաթղթերում (հայցադիմումում, պատասխանում) ապացույցները վկայակոչված են, սակայն դեռևս ներկայացված չեն ո՛չ դատարանին և ո՛չ էլ գործին մասնակցող անձանց կամ նրանցից մեկին:

Բացի դրանից, օրենքը սահմանում է, որ՝

- հայցվորը պարտավոր է հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի, ինչպես նաև հայցադիմումի լրացման պատճեններն ուղարկել պատասխանողին (ՔԴՕ 122 հոդ., մաս 1, կետ 6, 139 հոդ., մաս 8).

- պատասխանողը պարտավոր է հայցադիմումի, փոփոխված հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերն ուղարկել հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց՝ այդ մասին ապացույցները կցելով դատարան ներկայացվող պատասխանին (ՔԴՕ 139 հոդ., մաս 5).

- եթե հայցադիմումին կամ հայցադիմումի պատասխանին կից ներկայացված ապացույցները ծավալուն են և այդ իսկ պատճառով չեն ուղարկվել գործին մասնակցող մյուս անձանց, դատարանը վերջիններիս պետք է ուղարկի ծանուցում, որ նշված փաստաթղթերը ծանոթանալու նպատակով դեպոնացված են առաջին ատյանի դատարանում՝ ապահովելով դրանց ծանոթանալու, դրանցից քաղվածքներ, պատճեններ անելու և ստանալու հնարավորությունը (ՔԴՕ 122 հոդ., մաս 3, 139 հոդ., մաս 5):

Ապացույցների բացահայտմանն ուղղված նորմերի թվին պետք է դասել ՔԴՕ 152-րդ հոդվածով սահմանված կանոններն առ այն, որ դատական նիստից դուրս միջնորդություն (այդ թվում՝ ապացույցի ձեռքբերմանն ուղղված) ներկայացրած անձը պարտավոր է միջնորդությանը կցել տվյալ միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ կամ միջնորդության մեջ ներկայացնել այդ փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումներ, իսկ դատական նիստում գրավոր միջնորդություն ներկայացնելու

դեպքում՝ դատական նիստին ներկա գործին մասնակցող մյուս անձանց տրամադրել միջնորդության և դրան կից փաստաթղթերի պատճենները: Այս ընդհանուր կանոնի մասնավորեցումներ են նախատեսված՝

- ԲԴՕ 75-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդություն անելիս գործին մասնակցող անձը պարտավոր է համապատասխան գրավոր ապացույցը կամ գրավոր ապացույցի պատճենը, իսկ այն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը գրավոր ներկայացնելու դեպքում՝ նաև միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց.

- ԲԴՕ 79-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ իրեղեն ապացույց թույլատրելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելիս գործին մասնակցող անձը պարտավոր է միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց՝ դրան կցելով իրեղեն ապացույցի պատճենը, լուսանկարը կամ տեսագրությունը.

- ԲԴՕ 83-րդ հոդվածի 4-րդ մասում, որը պարտավորեցնում է գործին մասնակցող անձանց լուսանկարներ (լուսաժապավեններ), ձայնագրություններ, տեսագրություններ և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելիս միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց՝ դրան կցելով համապատասխան ապացույցի կրկնօրինակը՝ էլեկտրոնային կրիչի վրա:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ներկայումս գործող քաղաքացիական դատավարական օրենսդրությունը, որպես ընդհանուր կանոն, պահանջում է ապացույցները վկայակոչել և գործին մասնակցող անձանց ու դատարանին ներկայացնել (բացահայտել) մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը: Այն բացառիկ դեպքերում, երբ դատարանն ընդունում է սահմանված ժամկետն անցնելուց հետո ներկայացրած ապացույցը, դրան նախօրոք ծանոթանալու և դրա դեմ առարկություն

նախապատրաստելու գործին մասնակցող անձանց իրավունքներն ապահովելու նկատառումներից ելնելով՝ դատարանը պարտավոր է ապացույցին ծանոթանալու համար գործին մասնակցող անձանց տրամադրել ողջամիտ ժամկետ, եթե նրանք այդ ապացույցը նախապես ստացած չեն լինում:

Գործը դատաքննության պատշաճորեն նախապատրաստված լինելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները հաստատող ապացույցները ոչ միայն վկայակոչված են, այլ նաև ծանոթ են դատարանին և գործին մասնակցող բոլոր անձանց, այլ կերպ ասած՝ բացահայտված են:

Դատավարական օրենսդրության վերը հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ, որպես ընդհանուր կանոն, **ապացույցը ներկայացվում է դատարան այն թույլատրելու միջնորդությամբ**, որի շրջանակներում պետք է մատնանշվի փաստը, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել: Նման միջնորդություն չի ներկայացվում միայն այն դեպքերում, երբ հայցադիմումում կամ հայցի դեմ ներկայացված առարկություններում (հայցադիմումի պատասխանում) վկայակոչված ապացույցները դատարան են ներկայացվում նշված դատավարական փաստաթղթերին կից¹ կամ ներկայացվում է ոչ թե ապացույցը, այլ այն ձեռքբերելու միջնորդություն²:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում բա-

1 Հարկ է նշել, որ այս դեպքում ևս դատարանն անդադառնում է ներկայացված ապացուցողական նյութը թույլատրելու հարցին՝ նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ քննարկելով և լուծելով ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 10):

2 Նման դեպքերում էլ դատարանի որոշման հիման վրա ձեռքբերվելիք ապացույցի թույլատրելիության հարցը քննարկվում է տվյալ միջնորդության քննարկման ընթացքում, ինչի համար էլ օրենքը պահանջում է ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդության շրջանակներում ևս նշել այն փաստը, որը կարող է հաստատվել տվյալ ապացույցի միջոցով:

ցառել գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստերին չվերաբերող, իսկ առանձին դեպքերում՝ անթույլատրելի ապացուցողական նյութի անվերահսկելի հոսքը և նշված տվյալների հետազոտման կապակցությամբ դատարանի ու գործին մասնակցող անձանց ռեսուրսների անհարկի վատնումը: Օրենքը, ըստ էության, դատարանին իրավունք է վերապահել նախնական դատական նիստում վեր հանելու ներկայացված ապացուցողական նյութի վերաբերելիությունն ու թույլատրելիությունը՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում մերժելով գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցը և չներառելով այն դատաքննության ընթացքում հետազոտման ենթակա ապացույցների կազմում:

8.2. Ապացույցներ պահանջելը

Ինչպես նշվել է վերը, ընդհանուր կանոնի համաձայն, դատարանը սեփական նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու նպատակով որևէ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունի: Սույն կանոնից բացառությունները նախատեսված են ՔԴՕ-ով: Այսպես, ընտանեկան վեճեր քննելիս, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը պարտավոր է, չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես՝ պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր (ՔԴՕ 203 հոդ., մաս 2): ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վե-

րաբերյալ հայցադիմումը քննելիս դատարանը կաշկանդված չէ վարույթի նյութերով, դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով, և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար (ՔԴՕ 208 հոդ., մաս 2): Աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային քննելիս դատարանը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ սեփական նախաձեռնությամբ գործատուից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված գրավոր ապացույցների որոշակի շրջանակ (ՔԴՕ 210 հոդ., մաս 1):

Ընդհանուր կանոնի համաձայն, մրցակցային դատավարության պայմաններում դատարանը կատարում է զուտ կողմերին օժանդակող գործառույթներ: Ուստի, եթե գործին մասնակցող անձինք հնարավորություն չունեն համապատասխան գրավոր ապացույցն անձամբ ձեռք բերել և ներկայացնել դատարան, նրանք միջնորդությամբ դատարանն իրականացնում է նման օժանդակությունը՝ գործին մասնակցող, ինչպես նաև չմասնակցող անձանցից պահանջելով գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցմանն ենթակա փաստերը հաստատող ապացույցներ:

Ապացույցներ պահանջելու կարգը սահմանված է ՔԴՕ 64-րդ հոդվածում, որն ընդհանուր է գրավոր և իրենդեն ապացույցների, ինչպես նաև լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների համար:

Նշված հոդվածի կարգավորումների համաձայն՝ գործին մասնակցող անձը կարող է **գործին մասնակցող այլ անձից** ապացույց պահանջելու միջնորդությամբ դիմել

գործը քննող առաջին աստիճանի դատարան՝ միջնորդության մեջ նշելով պահանջվող ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն փաստերը, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է: Բացի դրանից, գործին մասնակցող անձը կարող է **գործին մասնակից չհանդիսացող անձից** ապացույց պահանջելու միջնորդությամբ ևս դիմել դատարան, եթե՝

ա. գործին մասնակցող այդ անձին օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրվել համապատասխան ապացույցը կամ

բ. այդ ապացույցի տրամադրումն առանց դատարանի որոշման արգելված է օրենքով (օրինակ՝ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները):

Գործին մասնակից չհանդիսացող անձից ապացույց պահանջելու միջնորդության մեջ պետք է նշվեն՝ պահանջվող ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն փաստերը, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ապացույցի գտնվելու վայրը (եթե այն հայտնի է), պահանջվող ապացույցն ինքնուրույն ձեռք բերելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումը:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին աստիճանի դատարանը կայացնում է ապացույցը պահանջելու մասին որոշում, որում նշվում են՝

1) քաղաքացիական գործի համարը և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները),

2) այն ապացույցները, որոնք պետք է ներկայացվեն դատարան,

3) պահանջվող ապացույցները ներկայացնելու ժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ներկայացման կարգը,

4) դատարանի որոշումը չկատարելու համար օրենքով նախատեսված հետևանքների մասին պարզաբանում:

Դատարանի սահմանած ժամկետում ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է դատարան՝ հայցելով կատարման նոր ժամկետ՝ նշելով դատարանի սահմանած ժամկետում որոշման կատարման անհնարինության պատճառները: Դատարանը, հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը, կարող է սահմանել որոշման կատարման նոր ժամկետ:

Եթե ապացույց պահանջելու մասին դատարանի որոշումը ինչ-ինչ պատճառներով ընդհանրապես անհնար է կատարել պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմում ներկայացնել դատարան՝ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին և նշելով անհնարինության պատճառները: Ընդ որում, դատարանը, հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը, կարող է հարգելի ճանաչել ապացույցը չներկայացնելու պատճառները:

Ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դատարանը ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման, իսկ պահանջվող ապացույցը չտրամադրած անձի նկատմամբ նշանակում է տուգանք:

ՔԴՕ 64-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ապացույց պահանջելու մասին որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8.3. Ապացույցների ապահովումը

Ապացույցների ապահովումն ապացույցների ամրագրման հատուկ ձև է, որը կարող է կիրառվել բոլոր այն դեպքերում,

քերում, երբ գործին մասնակցող անձը հիմքեր ունի երկյուղելու, որ մինչև գործի դատաքննությունն անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելն օբյեկտիվ պատճառներով կարող է անհնարին դառնալ կամ դժվարանալ: Նման իրավիճակ կարող է ստեղծվել, օրինակ, այն դեպքերում, երբ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկան տառապում է մահվան վտանգ կամ իր գործողությունների նշանակությունը հասկանալու անընդունակության առաջացնող հիվանդությամբ կամ պետք է մեկնի տևական հեռավոր գործուղման, իրեղեն ապացույց իր բնույթով շուտ փչացող է, և մինչև դատաքննությունը դրա որակական հատկանիշները էապես կարող են փոփոխվել կամ անխուսափելիորեն կփոփոխվեն, պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով պետք է հետազոտվեն և ամրագրվեն ինտերնետային կայքերում տեղադրված նյութերը, որոնք մինչև դատաքննությունը կարող են այնտեղից հեռացվել և այլն: Այդ իսկ պատճառով շահագրգիռ անձանց շահերի պաշտպանության և ապացույցների ձեռքբերման ու ներկայացման հարցում նրանց օժանդակություն ցուցաբերելու նպատակով օրենսդրությունը նախատեսել է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական տվյալների ապահովման (ամրագրման) դատական և մինչդատական ընթացակարգեր, որոնց շրջանակներում դատարանը կամ նոտարը նախքան վեճի ըստ էության քննությունն իրականացնում է վկաների և վիճելի իրավահարաբերությունների մասնակիցների, մասնագետին հարցաքննություն, գրավոր կամ իրեղեն ապացույցներ զննություն, նշանակում է փորձաքննություն և հարցաքննում է փորձագետին:

Ապացույցների ապահովման դատական կարգը սահմանվում է ՔԴՕ-ով, իսկ մինչդատական ապահովման առանձնահատկությունները՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, գործող օրենսդրության համաձայն՝

մինչդատական կարգով ապացույցների ապահովումը կարող է կատարվել նախքան դատարանում գործ հարուցելը: Դատարանի որոշմամբ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո ապացույցները կարող են ապահովվել բացառապես դատական կարգով:

Ապացույցների դատական ապահովումը: ՔԴՕ 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը գտնում է, որ անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը կարող է դժվար կամ անհնարին դառնալ, դատավարության ընթացքում իրավունք ունի այդ ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդություն ներկայացնել առաջին ատյանի դատարան:

Ապացույցներ ապահովելու միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք: Դատարանի նախաձեռնությամբ ապացույցների ապահովումը կարող է իրականացվել բացառապես օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում: Ընդ որում, ապացույցների ապահովումը կարող է կատարվել առաջին ատյանի դատարանում վարույթի ցանկացած տեսակի շրջանակներում:

Ապացույցներն ապահովելու միջնորդությունը ներկայացվում է դատարան՝ միջնորդություններ ներկայացնելու ընդհանուր պահանջների պահպանմամբ (ՔԴՕ 152 հոդ.): ՔԴՕ-ի 65-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ ապացույցների ապահովման միջնորդությունը կարող է ներկայացվել բացառապես այն դատարանին, որին ներկայացվել է հայցադիմումը (դիմումը)¹:

Ապացույցների ապահովման մասին միջնորդությունը կարող է ներկայացվել հայցադիմումին կից կամ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում: Ընդ որում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախնա-

¹ Համեմատության համար նշենք, որ ՌԴ ՔԴՕ 65-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցներն ապահովելու միջնորդությունը կարող է ներկայացվել ոչ միայն գործը ջնկող դատարանին, այլ նաև այն դատարանին, որի գործունեության տարածքում պետք է կատարվեն ապացույցների ապահովմանն ուղղված դատավարական գործողությունները:

կան դատական նիստն արձանագրվում է, դրա ընթացքում ապացույցների ապահովման միջնորդությունը կարող է արվել բանավոր: Մյուս դեպքերում միջնորդությունը ներկայացվում է գրավոր ձևով:

Բոլոր դեպքերում ապացույցների ապահովման մասին միջնորդության մեջ պետք է նշվեն ապահովման կարիք ունեցող ապացույցները, այն փաստերը, որոնց հաստատման համար դրանք անհրաժեշտ են, և պատճառները, որոնք հիմք են ծառայել դրանք ապահովելու միջնորդությամբ դիմելու համար (ՔԴՕ 65 հոդ., մաս 2):

Դատական նիստից դուրս ներկայացված ապացույցների ապահովման մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ նշանակելու (ՔԴՕ 65 հոդ., մաս 3): Ավելին, հաշվի առնելով ապացույցների ապահովման ինստիտուտի դատավարական նշանակությունն ու հետապնդվող նպատակը՝ քննարկվող միջնորդությունը դատարանը քննում է առանց տվյալ միջնորդության մասին գործին մասնակցող մյուս անձանց ծանուցելու և դրա վերաբերյալ նրանց դիրքորոշումները լսելու՝ պահպանելով «գաղտնիության ռեժիմ»¹:

Ըստ գործող օրենսդրության, այն դեպքերում, երբ ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումին կից, այն բավարարելու կամ մերժելու հարցը դատարանը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու հետ մեկտեղ, ոչ ուշ, քան հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու համար սահմանված ժամկետում: Բնականա-

¹ Նման ռեժիմ պահպանելու նկատառումներից ելնելով՝ ՔԴՕ 122-րդ - հոդվածի 2-րդ մասը ապացույցի ապահովման միջնորդություն ներկայացրած հայցվորին ազատել է հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությունից: ՔԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկվում են պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց ապացույցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո:

բար, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացվելու դեպքում ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը քննության չի առնվում և հայցադիմումի, դրան կից այլ փաստաթղթերի հետ մեկտեղ ուղարկվում (վերադարձվում) է հայցվորին (ՔԴՕ 126 հոդ., մաս 2, 127 հոդ., մաս 2): Այլ կերպ ասած, ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը քննարկվում է այն պարագայում, երբ դատարանը ներկայացված հայցադիմումն ընդունում է վարույթ:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ՔԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ Նախնական դատական նիստում դատարանը, ի թիվս այլ խնդիրների, լուծում է նաև ապացույցների ապահովման հարցը: Ըստ այդմ, օրենսդիրը սահմանել է, որ Նախնական դատական նիստում ներկայացված միջնորդությունը քննվում է տվյալ նիստի ընթացքում (ՔԴՕ 65 հոդ., մաս 3): Այլ կերպ ասած, եթե գործին մասնակցող անձը ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է դատական նիստի ընթացքում՝ հրապարակայնության պայմաններում, այն անհապաղ «գաղտնիության ռեժիմով»՝ առանց դատական նիստ հրավիրելու քննելու պահանջը կիրառելի չէ:

Հետևում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ապացույցի ապահովման Նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտը, ելնելով տնօրինչականության սկզբունքից, իր հայեցողությամբ է որոշում՝ ապացույցի ապահովման միջնորդությունը ներկայացնել հայցադիմումի կից, դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, թե Նախնական դատական նիստի ընթացքում: Կախված ընտրված մարտավարությունից, ըստ էության, կիրառվում են ներկայացված միջնորդության քննության տարբեր ընթացակարգեր: Առաջին և երկրորդ դեպքերում միջնորդությունը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու ու այդ մասին գործին մասնակցող մյուս անձանց

ծանուցելու, իսկ երկրորդ դեպքում՝ վերջիններիս դիրքորոշումը դատական նիստում լսելուց հետո:

Բոլոր դեպքերում գործը քննող դատարանը ներկայացված միջնորդությունը քննարկելիս պետք է պարզի տվյալ ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը, ինչպես նաև ապահովման հիմք հանդիսացող հանգամանքների առկայությունը:

Ներկայացված միջնորդության քննարկման արդյունքները ձևակերպվում են դատարանի որոշմամբ: Միջնորդությունը բավարարելու դեպքում կայացվում է ապացույցն ապահովելու մասին որոշում: Եթե դատարանի համոզմամբ տվյալ ապացույցը որևէ նշանակություն չունի գործի լուծման համար (վերաբերելի չէ) կամ որոնվող փաստն ըստ օրենքի չի կարող հաստատվել տվյալ ապացույցով (թույլատրելի չէ), կամ ապացույցն ապահովելու հիմքերը բացակայում են, միջնորդությունը կարող է մերժվել: Բոլոր դեպքերում, ապացույցներն ապահովելու մասին միջնորդության կապակցությամբ դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ¹:

ՔԴՕ 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացույցների ապահովման մասին միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում՝ նշելով, թե ինչ ձևով պետք է իրականացվի ապացույցի ապահովումը: Ապացույցի ապահովման ձևի (եղանակի) ընտրությունը կախված է ապահովման ենթակա ապացույցի տեսակից: Ըստ ՔԴՕ 65-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ապացույցների ապահովումը կարող է իրականացվել

1 Մեր կարծիքով, նման իրավակարգավորումը չի բխում արդարադատության շահերից և կողմերի իրավունքների պաշտպանությունն արդյունավետ միջոցներով ապահովելու անհրաժեշտությունից: Բանը նրանում է, որ, մեր կարծիքով, կողմը պետք է ունենա հնարավորություն բողոքարկելու ապացույցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի միջանկյալ դատական ակտը, քանի որ ապացույցի անհիմն չապահովումը կարող է հանգեցնել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցը հետագայում հետազոտելու անհնարինության, իսկ տվյալ հարցում դատարանի թույլ տված դատական սխալը գործնականում հետագայում վերացվել չի կարող:

վկաներին և գործին մասնակցող անձանց, մասնագետին հարցաքննելով, գրավոր կամ իրեղեն ապացույցներ զննելով, փորձաքննություն նշանակելով, փորձագետին հարցաքննելով: Հետևում է, որ ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշման շրջանակներում «ապացույցի ապահովման ձևը» սահմանելիս դատարանը պետք է հստակորեն նշի, թե ապացույցների ինչպիսի աղբյուրների հետազոտություն պետք է կատարվի, երբ և որտեղ է իրականացվելու այդպիսի հետազոտությունը, ապացույցի ապահովումն իրականացվելու է դատական նիստում, թե առանց այդպիսի նիստ հրավիրելու:

Գործնականում ապացույցների ապահովման միջնորդության քննարկումը և ապացույցների բուն ապահովումը հաճախ սխալմամբ նույնացվում է, մինչդեռ դրանք տարբեր դատավարական գործողություններ են: Ապացույցների ապահովման միջնորդության քննարկման արդյունքում դատարանը, բավարարելով միջնորդությունը, ըստ էության, արձանագրում է այս կամ այն ապացույցի ապահովմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունը, սահմանում է այդ գործողությունների իրականացման եղանակներն ու կարգն: Ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ենթակա է կատարման ԶԴՕ 65-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված կարգով¹:

Որպես ընդհանուր կանոն, օրենքը սահմանում է, որ ապացույցների ապահովումն իրականացվում է **դատական նիստում**, որի ժամանակի և վայրի մասին տեղեկաց-

1 Ի դեպ, եթե նախկին օրենսդրությամբ սահմանվում էր, որ ապացույցի ապահովումն իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով, ապա ներկայումս գործող ԶԴՕ-ն ապացույցի ապահովումն իրականացնելու գործառույթը դիտարկում է բացառապես դատարանի իրավասության շրջանակներում: Ներկայումս ապացույցի ապահովման որոշումը, ի տարբերություն ապացույց պահանջելու մասին որոշման, հարկադիր կատարման ենթակա դատական ակտերի թվին չի դասվում:

վում են գործին մասնակցող անձինք: Գործին մասնակցող անձի չներկայանալը դատական նիստին արգելք չէ ապացույցների ապահովումն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանին իրավասություն է վերապահված նախնական դատական նիստում հետազոտելու ապացույցները այնքանով, որքանով դա անհրաժեշտ է գործի դատաքննության արդյունավետ նախապատրաստությունն իրականացնելու համար (ՔԴՕ 167 հոդ., մաս 2)՝ ապացույցի ապահովման բուն գործընթացը (վկայի հարցաքննությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցի զննությունը և այլն), որպես կանոն, կարող է կատարվել հենց առաջիկա նախնական դատական նիստի ընթացքում: Ընդ որում, ապացույցի ապահովումը կարող է կատարվել այն նիստում, որի ընթացքում բավարարվել է համապատասխան միջնորդությունը, եթե գործին մասնակցող բոլոր անձինք ներկա են տվյալ նիստին, բացակայում է ապացույցի ապահովման ժամանակի և վայրի մասին նրանց լրացուցիչ տեղեկացնելու անհրաժեշտությունը, ապահովումը չպետք է կատարվի դատարանից դուրս գտնվող վայրում և առկա չէ ապացույցը դատարան բերելու (վկա կանչելու) անհրաժեշտություն:

Միևնույն ժամանակ, ըստ ՔԴՕ 65-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ապացույցների ապահովումն իրականացվում է **առանց դատական նիստ հրավիրելու** և գործին մասնակցող անձանց ծանուցելու՝

1. օրենքով նախատեսված դեպքերում (օրենսդիրը նկատի ունի այն դեպքերը, երբ ապացույցի ապահովման միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումին կից),

2. այն դեպքերում, երբ ապացույցների ապահովման միջնորդությունն ներկայացնող անձը հիմնավորում է, որ ապացույցների ապահովման մասին գործին մասնակցող անձանց ծանուցելու հետևանքով համապատասխան ապացույցն ապահովվելը կարող է անհնարին դառնալ:

Բնականաբար, ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշման

մեջ դատարանը պետք է նշի, թե ինչ կարգով է իրականացվելու ապացույցի ապահովումը, իսկ քննարկվող դատավարական գործողությունն առանց դատական նիստ հրավիրելու իրականացնելու դեպքում պարտավոր է նաև ցույց տալ ապահովման նման կարգ կիրառելու հիմքերը:

Ապացույցի հետազոտումը դրա ապահովման կարգով իրականացվում է ընդհանուր հիմունքներով (որի մասին մանրամասն կխոսվի հետագա շարա դրանքում), իսկ հետազոտման ընթացքն ու արդյունքները փաստաթղթավորվում են՝ համապատասխան արձանագրության ձևով:

Ինչպես իրավացիորեն նշվում է դատավարագիտության մեջ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ապացույցների ապահովումը սոսկ դրանց ամրապնդման եղանակ է, և եթե ապահովված ապացույցները գործը դատարանում ըստ էության քննելիս դեռևս առկա են, ապա դատարանը դրանք հետազոտում է ընդհանուր կարգով, եթե ոչ՝ դատարանը հրապարակում և հետազոտում է ապացույցների ապահովման արձանագրությունը¹:

Գործը քննող դատարանն ապահովված ապացույցները գնահատում է ընդհանուր հիմունքներով՝ գործի մնացած կյուբերի համակցությամբ:

Ապացույցների մինչդատական ապահովումը: Նախքան դատարանում գործ հարուցվելն ապացույցների ապահովումը կարող է կատարվել նոտարական կարգով՝ ԶԴՕ-ով և «Նոտարիատի մասին» օրենքով նախատեսված կարգով:

«Նոտարիատի մասին» օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով նոտարը կատարում է ապացույցների ապահովում, որոնք կարող են անհրաժեշտ լինել դատարանում գործ հարուցելու համար, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ապացույցներ ներկայացնելը հետագայում կարող է դժվարանալ կամ անհնարին դառնալ:

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 392:

Ապացույցների ապահովման նպատակով շահագրգիռ անձի դիմումի հիման վրա նոտարը կարող է կատարել հետևյալ գործողությունները՝ հարցաքննել վկաների, կատարել գրավոր կամ իրեղեն ապացույցների զննում, նշանակել փորձաքննություն, ինչպես նաև կատարել ՔԴՕ-ով նախատեսված ապացույցների ապահովմանն ուղղված այլ գործողություններ:

Ապացույցների ապահովմանն ուղղված գործողություններ կատարելիս նոտարը ղեկավարվում է ՔԴՕ համապատասխան նորմերով և օժտված է օրենսգրքով նախատեսված համապատասխան լիազորություններով (Օրենքի 80 հոդ., մաս 2): Դրանով իսկ ապահովվում է նոտարական կարգով ապահովված ապացույցների արժանահավատությունը¹:

Ապացույցների ապահովման ժամանակի և տեղի մասին նոտարը նախապես պետք է ծանուցի կողմերին և շահագրգիռ անձանց, որոնց չներկայանալը, սակայն, արգելք չէ ապացույցների ապահովման գործողություններ կատարելու համար: օրենքը միաժամանակ սահմանում է, որ առանց կողմերի և շահագրգիռ անձանց հրավիրման ապացույցների ապահովումը նոտարի կողմից կարող է կատարվել միայն անհետաձգելի դեպքում կամ այնպիսի դեպքում, երբ հնարավոր չէ որոշել, թե հետագայում ով պետք է մասնակցի գործին:

Ապացույցների ապահովման նպատակով հրավիրված վկային կամ փորձագետին նոտարը սահմանված կարգով նախազգուշացնում է ակնհայտ սուտ ցուցմունք կամ եզրակացություն տալու և դրանք տալուց հրաժարվելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին:

¹ Ст'я **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе. М.: «Юрайт», 2010, էջ 170:

§9. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը

Գործը դատաքննության նախապատրաստելու կամ դատաքննության փուլում ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելուց և ապացուցման պարտականությունը բաշխելուց հետո դատարանի խնդիրն է պարզել, թե որքանով է պիտանի գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացուցողական նյութը, այսինքն՝ այն թե գործին մասնակցող անձանց ներկայացրած ապացույցներից որոնք կարող են դատարանի կողմից ընդունվել, հետազոտվել և գնահատվել գործը դատավարության տնտեսման սկզբունքի պահպանմամբ ըստ երկայնի ճիշտ լուծելու համար: Դատարանը պետք է նաև պարզի, թե որքանով են անհրաժեշտ այն ապացույցները, որոնք ձեռք բերելու միջնորդություն են ներկայացրել գործին մասնակցող անձինք:

Այդ խնդիրները լուծելիս դատարանը ղեկավարվում է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության կանոններով, որոնք սերտորեն կապված են ապացույցի հասկացության հետ: Ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության ինստիտուտները հիմնարար նշանակություն ունեն փաստական տվյալների՝ յուրաքանչյուր գործով որպես ապացույց օգտագործելու համար պիտանի լինելու կամ չլինելու հարցը լուծելիս:

9.1. Ապացույցների վերաբերելիությունը

Գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակը դատարանը որոշում է՝ ելնելով կողմերի ներկայացրած պահանջներից ու առարկություններից և ղեկավարվելով նյութական իրավունքի այն նորմերով, որոնք տվյալ դեպքում պետք է կիրառվեն:

Գործին մասնակցող անձանց կողմից ներկայացվող ապացույցներից դատարանը հետագա հետազոտման և դատական որոշումը հիմնավորելու համար պետք է ընտ-

րի բացառապես նրանք, որոնք ուղղակիորեն կապված են գործով ապացուցման ենթակա փաստերի հետ:

Դատական ճանաչողության լրիվությունը մի կողմից ենթադրում է, որ դրա ընթացքում պետք է հետազոտվեն բոլոր անհրաժեշտ ապացույցները, իսկ մյուս կողմից ապացուցման գործընթացից պետք է դուրս մղվի այն արհեստականորեն ծանրաբեռնող տեղեկատվությունը:

Գործին մասնակցող անձանց կողմից դատարան ներկայացված ամբողջ ապացուցողական նյութից դատարանը պարտավոր է ընտրել միայն այն ապացույցները, որոնք վերաբերում են գործին, «ունակ» են հաստատել գործի համար նշանակություն ունեցող փաստերը, անհրաժեշտ են ու բավարար հիմնավորված դատական ակտ կայացնելու համար: Հետևաբար, ապացույցների վերաբերելիության կանոնի հիմքում ընկած է ապացույցների բովանդակության և ապացուցման ենթակա փաստերի միջև գոյություն ունեցող օբյեկտիվ կապը:

Եթե դատարան ներկայացվող ապացույցները որոնվող փաստերի մասին տեղեկություններ չեն պարունակում, նշանակում է դրանք ոչ մի նշանակություն չեն կարող ունենալ գործի համար, իսկ այդ պատճառով էլ նման ապացույցները մերժելու հանգամանքը թույլ կտա ազատվել դատավարությունն անտեղի հարցերով ծանրաբեռնելուց, կկրճատի գործերի քննության տևողությունը և հնարավորություն կտա դատարանին կայացնելու հիմնավորված վճիռ կամ որոշում¹:

Դատավարագետներն ապացույցների վերաբերելիությունը բնորոշում են որպես ապացույցների և գործով ապացուցման ենթակա փաստերի միջև գոյություն ունեցող կապ², ապացույցի բովանդակությանն ուղղված իրավական պահանջ, ապացույցի հատկանիշ, որի ուժով դա-

1 Տե՛ս **Գևորգյան Ս.Վ.**, Սովետական քաղաքացիական դատավարություն, Եր., 1972, էջ 221:

2 Տե՛ս **Новицкий В.А.** Теория российского процессуального доказывания и правоприменения. Монография. Ставрополь, изд. СГУ, 2002, էջ 206:

տարանին հաղորդվող տեղեկությունը ծառայում է որպես ճշմարտության բացահայտման միջոց¹:

Ապացույցների վերաբերելիության կանոնը հանգում է նրան, որ դատարանը պետք է թույլատրի և հետազոտի միայն գործի լուծման համար նշանակություն ունեցող, որոնվող փաստերին վերաբերող ապացույցները: **Վերաբերելի է այն փաստական տվյալը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում գործը լուծելու համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի** (ՔԴՕ 58 հոդ., մաս 1): Որոշել ապացույցի վերաբերելիությունը, նշանակում է պարզել՝ այն վերաբերում է գործի էությանը, հաստատում է ապացուցման առարկայի մեջ մտնող փաստի գոյությունը, թե ոչ²:

Ապացույցների վերաբերելիության ընդհանուր կանոնը սահմանված է ՔԴՕ 58-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ **դատարանը հետազոտում և գնահատում է միայն այն ապացույցները, որոնք կարող են հաստատել կամ ժխտել գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը**: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է դրանք ապացույցների կազմից:

Օրենքի նշված ձևակերպումից հետևում է, որ ապացույցների վերաբերելիության կանոնը հասցեագրված է դատարանին, քանի որ դատավարության կողմերը և այլ շահագրգիռ անձինք, ապացույցներ ներկայացնելով, կարող են սխալվել ապացույցների վերաբերելիությունը գնահատելիս կամ գիտակցաբար դատարանի ուշադրություն-

1 Տե՛ս **Доля Е.А.** Использование в доказывании результатов оперативно-розыскной деятельности. М.: «Спарк», 1996, էջ 27:

2 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 363:

նը շեղել ճանաչողության իրական օբյեկտից: Այդ իսկ պատճառով մի շարք հեղինակներ ապացույցների վերաբերելիությունը դիտարկում են որպես դատարանի վարքագիծը կարգավորող կանոն¹:

Հեղինակների մեկ այլ խումբ որպես ապացույցների վերաբերելիության կանոնի հասցեատերեր դիտարկում է ոչ միայն դատարանին, այլ նաև գործին մասնակցող անձանց: Ի.Վ. Ռեշետնիկովայի կարծիքով, թեև օրենքում խոսքը գնում է ապացույցների կազմից ոչ վերաբերելի ապացույցները հանելու դատարանի պարտականության մասին, ապացույցների վերաբերելիության հարցը նախապես իրենց համար լուծում են գործին մասնակցող անձինք, որոնք հավաքում և դատարանին են ներկայացնում իրենց պահանջները և առարկությունները հիմնավորող հանգամանքները հաստատող ապացույցները՝ միաժամանակ պարտավոր լինելով ցույց տալ այն փաստական հանգամանքները, որոնք հաստատվում են տվյալ ապացույցներով²:

Դատարանն ապացույցների ներկայացման և հետազոտման գործընթացում կատարում է կարգավորիչ գործառնություններ՝ վերջնականորեն լուծելով ներկայացված ապացույցների վերաբերելիության հարցը: Դատական ակտը հիմնավորելու համար անհրաժեշտ ու միաժամանակ բավարար ապացուցողական նյութ ապահովելու նպատակով դատարանը պարտավոր է ապացույցների վերաբերելիության կանոնին համապատասխան կարգավորել ապացույցներ ներկայացնելու, պահանջելու, հետազոտելու գործընթացը՝ բացառելով գործի ծանրաբեռնումը ոչ պետքական և նշանակություն չունեցող ապացույցներով:

1 Տե՛ս, օրինակ, **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 362, Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. М.: «Городец», 2003, էջ 258 և այլն:

2 Տե՛ս **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе. М.: «Юрайт», 2010, էջ 74-75:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը պարունակում է մի շարք նորմեր, որոնք ապահովում են դատավարական խնայողության կանոնի հետ զուգորդվող ապացույցների վերաբերելիության կանոնի կոնկրետացումը և ճիշտ կիրառումը՝

- հայցադիմումում պետք է նշվեն այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները և կարող են նշվել այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված (ՔԴՕ 121 հոդ., մաս 2, կետ 5, մաս 3, կետ 2).

- պատասխանողը պարտավոր է հայցադիմումի պատասխանում նշել իր առարկությունների հիմքում դրված փաստերը և կարող է ցույց տալ և կցել այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված (ՔԴՕ 139 հոդ., մաս 2, կետ 7, մաս 3, կետ 2).

- գործին մասնակցող անձը գործին մասնակցող կամ չմասնակցող անձերից ապացույցներ պահանջելու համար դատարանին տրվող միջնորդություններում պետք է նշի պահանջվող ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն փաստերը, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով (ՔԴՕ 64 հոդ., մաս 3).

- ապացույցների ապահովման մասին միջնորդության մեջ պետք է նշվեն ապահովման կարիք ունեցող ապացույցները և այն փաստերը, որոնց հաստատման համար դրանք անհրաժեշտ են (ՔԴՕ 65 հոդ., մաս 3).

- վկա կանչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս պետք է նշվի այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի (ՔԴՕ 68 հոդ., մաս 2).

- վկային կարող են տրվել միայն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են վկա կանչելու վերաբերյալ միջնորդության մեջ նշված փաստին կամ նրա ցուցմունքների արժանահավատության հետ կապված հանգամանքներ-

րին, այդ թվում՝ մյուս կողմի հետ նրա հարաբերություններին. այս շրջանակից դուրս տրված հարցերն դատարանը հանում է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ (ՔԴՕ 71 հոդ., մաս 11).

- գրավոր ապացույց թույլատրելու վերաբերյալ միջնորդությունն արվում է այն փաստի մատնանշմամբ, որը կողմը ցանկանում է ապացուցել (ՔԴՕ 75 հոդ., մաս 1).

- եթե քննվող գործին վերաբերում է փաստաթղթի միայն մեկ մասը, դատարանին ներկայացվում միայն դրա պատշաճ վավերացված քաղվածքը (ՔԴՕ 74 հոդ., մաս 6).

- իրեղեն ապացույց թույլատրելու մասին միջնորդությունն արվում է այն փաստի մատնանշմամբ, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել (ՔԴՕ 79 հոդ., մաս 1).

- գործին մասնակցող անձը փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացնելիս պարտավոր է դրանում նշել ապացուցման ենթակա այն փաստը, որը պետք է հաստատվի փորձագետի եզրակացությամբ (ՔԴՕ 86 հոդ., մաս 2).

- գործին մասնակցող անձի միջնորդությամբ փորձաքննություն նշանակելիս դատարանը փորձագետին կարող է առաջադրել միայն այն հարցերը, որոնք ներկայացվել են գործին մասնակցող անձանց կողմից, այդուհանդերձ, դատարանը, ելնելով ապացուցման ենթակա փաստի էությունից և բովանդակությունից, իրավունք ունի շտկելու առաջադրված հարցը կամ մերժելու գործին մասնակցող անձի կողմից ներկայացված հարցի առաջադրումը փորձագետին (ՔԴՕ 86 հոդ., մաս 4).

- դատական նիստը նախագահողը ղեկավարում է դատական նիստը՝ մերժելով այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ (ՔԴՕ 142 հոդ., մաս 3) և այլն:

Ամփոփելով շարադրվածը՝ հարկ է արձանագրել, որ ապացույցների վերաբերելիության կանոնի օգնությամբ դատարանը մի կողմից ապահովում է գործի փաստական հանգամանքների դատական ճանաչողության լրիվությունը, անհրաժեշտ բոլոր ապացույցների ներգրավումը,

մյուս կողմից վերացնում է դատարանի քննությունից այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ, ավելորդ ծանրաբեռնում է վարույթը, վատնում է ժամանակ ու միջոցներ¹:

Այսպիսով, ապացույցների վերաբերելիությունը բնութագրում է նրանց եռությունը: Գործին չվերաբերող ապացույցը միաժամանակ անթույլատրելի է²:

9.2. Ապացույցների թույլատրելիությունը

Գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացուցողական նյութի պիտանիությունը որոշելիս դատարանը ղեկավարվում է նաև ապացույցների թույլատրելիության կանոնով:

Թույլատրելիությունն ապացույցի պիտանի լինելն է աղբյուրների, տեղեկությունների ստացման մեթոդների և հևարքների օրինականության տեսակետից³:

Եթե դատական ապացույցների վերաբերելիությունը որոշվում է նրանց բովանդակությամբ (ապացույցները պետք է համապատասխան տեղեկատվություն պարունակեն, որը կարող է հաստատել կամ հերքել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը), ապա ապացույցների թույլատրելիությունը կապված է ապացույցների ձեռքբերման դատավարական (պրոցեսուալ) ձևի հետ⁴:

Ապացույցները հավաքելու (ձեռք բերելու) դատավարական կանոնները խախտելու դեպքում վտանգի տակ է

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 364:

2 Ի տարբերություն ՔՂՕ-ի՝ ՎՂՕ 26-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն սահմանում է, որ «ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է»: Գտնում ենք, որ նման ձևակերպում պետք է տեղ գտնի նաև ՔՂՕ 58-րդ - հոդվածում:

3 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, նշված աշխ., էջ 281:

4 Տե՛ս **Трейшников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 122:

դրվում ապացուցողական նյութի լրիվությունը, հավաստիությունը, ինչպես նաև դատական խնայողության սկզբունքը: Այդ իսկ պատճառով ապացույցների թույլատրելիությունը որոշելն անհրաժեշտ պայման է գործում դրանց օգտագործման և դատական ակտի հիմքում դնելու համար:

Մրցակցային դատավարության պայմաններում ապացույցների թույլատրելիության ինստիտուտի նշանակությունը պետք է ընկալվի պատշաճ կերպով, քանի որ այն մրցակցող կողմերի վկայակոչած փաստերի հերքման գործուն միջոցներից մեկն է:

Ա. Ղամբարյանը նշում է, որ ապացույցների թույլատրելիության կանոնների եռությունը նրանում է, որ որպես ապացույց կարող են օգտագործվել այն տվյալները, որոնք համապատասխանում են օրենքի պահանջներին¹:

Ապացույցների թույլատրելիության դատավարական կանոնների պահպանումը դատավարությունում անձի հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման, գործի օրինական և արդարացի լուծման կարևորագույն երաշխիք է²:

Դատավարագիտության մեջ առանձնացվում են ապացույցների թույլատրելիության ընդհանուր և հատուկ կանոններ (պայմաններ):

Ապացույցների թույլատրելիության **ընդհանուր կանոնները** հանգում են հետևյալին:

1. Ապացուցման ենթակա փաստերի առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով (ապացուցման միջոցներով)՝ գործին մասնակցող անձանց և վկաների ցուցմունքներով, գրավոր և իրեղեն ապացույցներով, լուսանկարներով (լուսաժապավեններով), ձայնագ-

1 Տե՛ս **Ղամբարյան Ա.Ս.**, Ապացույցների թույլատրելիությունը քրեական գործի հարուցման փուլում, Եր., 2003, էջ 19:

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր.: «Իրավունք» հրատ., 2010, էջ 262:

րություններով ու տեսագրութիւններով, փորձագետների եզրակացութեամբ, մասնագետների բացատրութիւններով: Օրենքով չնախատեսված այլ միջոցներով ապացուցման ենթակա փաստերը հաստատվել չեն կարող¹:

Նման եզրահանգումը բխում է ՔԴՕ 67-րդ հոդվածի վերլուծութիւնից, որը սպառնիչ կերպով սահմանում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկութիւնները հիմնավորող, ինչպէս նաև վեճի լուծման համար նշանակութիւն ունեցող այլ հանգամանքների առկայութիւնը կամ բացակայութիւնը հաստատող միջոցների ցանկը (ապացույցների տեսակները): Հետևաբար, որպէսզի ապացույցը ճանաչվի թույլատրելի, դրա բովանդակութիւնը կազմող տեղեկութիւնը պէտք է ստացվի օրենքով սահմանված աղբյուրներից և օրենքով նախատեսված ապացուցման միջոցներով: Քննարկվող կանոնի պահպանումն ապացույցների թույլատրելիութեան ընդհանուր պայմաններից մեկն է:

2. Ապացույցների թույլատրելիութեան հաջորդ ընդհանուր կանոնը (պայմանը) ունի սահմանադրական հիմք: Սահմանադրութեան 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. **«Արգելվում է հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննութեան իրավունքը խաթարող ապացույցների օգտագործումը»**: Տվյալ դրոյթը նույնութեամբ վերարտադրվում է ՔԴՕ 59-րդ հոդվածի 2-րդ մասում: Հետևում է, որ նման արատներ պարունակող ապացուցողական նյութն իրավաբանական ուժ չունի և չի կարող դրվել դատական ակտի հիմքում:

Հատկանշական է, որ ի տարբերութիւն նախկին խմբագրութեամբ Սահմանադրութեան 22-րդ հոդվածի և նախկին ՔԴՕ-ի 47-րդ հոդվածի 2-րդ մասի, որոնք անթույլատրելի էին համարում օրենքի ցանկացած խախտմամբ

¹ Այսպէս, գործերից մեկով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կողմի ներկայացուցչի ցուցմունքի թույլատրելիութեան հարցին և միանշանակ արձանագրել է, որ այն թույլատրելի ապացույց դիտվել չի կարող, քանի որ օրենքով ապացույցի նման տեսակ նախատեսված չէ: Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով 13.02.2009 թ. որոշումը:

ձեռք բերված ապացույցները, գործող խմբագրությամբ սահմանադրական նորմն անթույլատրելի ապացույցների թվին է դասել ոչ թե օրենքի ցանկացած խախտմամբ ստացված փաստական տվյալները, այլ այնպիսիք, որոնք ձեռք են բերվել անձի հիմնական իրավունքների խախտմամբ կամ խաթարում են արդար դատաքննության իրավունքը: Ապացույցներ ձեռք բերելու (հավաքելու) այլ ընթացակարգային պահանջների խախտումն ապացույցն ինքնաբերաբար անթույլատրելի չի դարձնում: Նման խախտումները կարող են ազդել ապացույցի արժանահավատության վրա, որը պետք է գնահատվի բացառապես գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելիս՝ դատարանի ներքին համոզմամբ և գործով հետազոտված այլ ապացույցների համակցությամբ:

Կարևոր է նկատի ունենալ, որ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է ապացույցի անթույլատրելիության երկու ինքնուրույն պայման, որոնք հանգում են հետևյալին:

ա. Անթույլատրելի է այն ապացույցը, որը ձեռք է բերվել հիմնական իրավունքների խախտմամբ: Ակնհայտ է, որ քննարկվող արգելքը պայմանավորված է ապացույցների հավաքման (ձեռքբերման) ընթացքում մարդու՝ Սահմանադրությամբ և միջազգային-իրավական ակտերով երաշխավորված հիմնական իրավունքների անխախտելիությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Ներկայացված ապացույցները դրանց թույլատրելիության տեսանկյունից գնահատելիս դատարանները գործնականում շատ հաճախ որոշակի դժվարությունների առաջ են կանգնում, քանի որ անհրաժեշտություն է առաջանում ստուգելու ապացույցը տվյալ եղանակով ստանալու իրավաչափությունը, մասնավորապես այն, թե ապացույցի ձևավորման, այն փաստաթղթավորելու կամ այլ եղանակով ֆիքսելու, դատարանին կամ այլ սուբյեկտի հաղորդելու կամ տրամադրելու ընթացքում որքանով են պահպանվել Սահմանադրությամբ և միջազգային-իրա-

վական ակտերով երաշխավորված հիմնական իրավունքները: Այսպես, եթե որպես ապացույց ներկայացվում է գաղտնի կատարված ձայնագրությունը կամ տեսագրությունը, դատարանի խնդիրն է պարզել՝ ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարելիս անձի հիմնական իրավունքների ոտնահարում կատարվել է, թե ոչ: Եթե ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարվել է, օրինակ, բնակարանի, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքների խախտմամբ կամ խոշտանգումների, բռնության, սպառնալիքի գործադրմամբ, դատարանն այն պետք է անթույլատրելի ճանաչի՝ որպես «հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույց»: Մինչդեռ եթե ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարելիս որևէ հիմնական իրավունք չի խախտվել, ապա ստացված ապացույցները պետք է դիտարկել որպես թույլատրելի ապացույց:

Ապացուցողական ուժ ունենալու համար ապացույցի ձեռքբերման թե՛ արտադատական և թե՛ դատական գործընթացը անձի հիմնական իրավունքների անխախտելիության տեսանկյունից պետք է անթերի լինի: Հիմնական իրավունքի՝ ցանկացած դրսևորում ունեցող խախտմամբ ձեռք բերված ապացույցները, անկախ դրանց բովանդակությունից և այլ հանգամանքներից, անթույլատրելի են:

բ. Անթույլատրելի է նաև այն ապացույցը, որը խաթառում է արդար դատաքննության իրավունքը: Սահմանադրական քննարկվող արգելքն առավելապես նախատեսված է այն իրավիճակների համար, երբ ապացույցը ձեռք բերելիս (ներկայացնելիս) անձի հիմնարար իրավունքների խախտում թույլ չի տրվել (կամ խախտման փաստը հնարավոր չէ պարզել), սակայն դատարանի կողմից դրա հետազոտումը և/կամ հետագա օգտագործումը (վճռի հիմքում դնելը) կարող է հանգեցնել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումների, որոնց արդյունքում անխուսափելիորեն կխա-

թարվի գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերից որևէ մեկը (իրավահավասարություն, մրցակցություն, «զենքերի հավասարություն», արդարացիություն և այլն):

Չնայած վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով արդար դատաքննության իրավունքի խաթարումը կարող է ունենալ բազմաթիվ դրսևորումներ, Սահմանադրական քննարկվող արգելքը կոնկրետացվել է ՔԴՕ-ի մի շարք նորմերում (իհարկե, ոչ սպառիչ): Այսպես, օրինակ, ՔԴՕ 71-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ վկայի հաղորդած տեղեկություններն *ապացույց չեն, եթե նա չի կարողանում հստակորեն նշել իր իրազեկության աղբյուրը*: Ըստ ՔԴՕ 74-րդ հոդվածի 3-րդ մասի, գրավոր ապացույցը ներկայացվում է բնօրինակով կամ պատճենի ձևով: Բնօրինակը պարտադիր ներկայացվում է դատարանի պահանջով կամ այն դեպքում, երբ համապատասխան փաստերն օրենքի, այլ իրավական ակտերի կամ պայմանագրի համապատասխան կարող են հաստատվել միայն բնօրինակով: *Բնօրինակը, իսկ այն ներկայացնելու անհնարինության դեպքում դրա պատշաճ վավերացված պատճենը չներկայացնելու դեպքում դատարանը պատճենը հանում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից*: ՔԴՕ 83-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուսանկարներ, ձայնագրություններ, տեսագրություններ և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք ներկայացնող անձը պարտավոր է նշել՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել այդ լուսանկարները, ձայնագրությունները ու տեսագրությունները: *Այդ փաստերը չբացահայտելու կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու դեպքում լուսանկարները, ձայնագրություններն ու տեսագրությունները չեն հետազոտվում և հանվում են ապացույցների կազմից*:

Նշված բոլոր և նմանատիպ դեպքերում փաստական

տվյալների ներկայացման (ստացման) ընթացքում անձի հիմնարար իրավունքների խախտման փաստ չի արձանագրվում, սակայն դրանց օգտագործումը (վճռի հիմքում դնելը) խաթարում է արդար դատաքննության իրավունքն այնքանով, որքանով մյուս կողմն օբյեկտիվորեն զրկվում է վկայի ցուցմունքի արժանահավատությունն առերես հարցաքննությամբ կամ իրազեկվածության աղբյուրի ստուգմամբ պարզելու, պատճենի կեղծված լինելը փորձաքննությամբ ապացուցելու, լուսանկարները, ձայնագրություններն ու տեսագրությունները կատարելիս իր հիմնական իրավունքների խախտման փաստը հիմնավորելու, հետևաբար նաև արդար դատաքննության իր իրավունքը պատշաճ իրականացնելու հնարավորությունից:

3. Ըստ ԶԴՕ 59-րդ հոդվածի 1-ին մասի՝ փաստերը, որոնք օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Տվյալ կանոնի բովանդակությունից նախևառաջ բխում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ նորմատիվ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ցանկացած ապացույցով: Այսպես, ապրանքային նշանն ապօրինի օգտագործելու, անձի մասին արատավորող տեղեկություններ տարածելու, վնաս պատճառելու պահին պատասխանողի՝ այլ վայրում գտնվելու, պարտավորությունը խախտած անձի անմեղության փաստերը կարող են հաստատվել գործին մասնակցող անձանց և վկաների ցուցմունքներով, գրավոր և իրեղեն ապացույցներով, լուսանկարներով, ձայնագրություններով և տեսագրություններով, փորձագետների եզրակացություններով և մասնագետների բացատրություններով: Հիշյալ դեպքերում օրենսդիրը նշված ապացուցման միջոցների կիրառման հնարավորությունը որևէ եղանակով չի սահմանափակել: Նման կարգավորման հիմքում դրված է Սահմանադրության 39-րդ հոդվա-

ծում տեղ գտած դրույթը, որի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

Միևնույն ժամանակ, քաղաքացիական դատավարությունում ապացույցները շատ հաճախ թույլատրվում կամ դուրս են մղվում դատական ճանաչողության գործընթացից իրավունքի նորմերում պարունակվող թույլտվությունների կամ արգելքների ուժով: Նման դեպքերում խոսում են թույլատրելիության հատուկ կանոնների մասին:

Թույլատրելիության հատուկ կանոնները սահմանափակում են ապացույցների օգտագործման դաշտը և որոշ դեպքերում կողմերին զրկում են գործի իրական հանգամանքները պարզելու հնարավորությունից, ուստի դրանք կարող են կիրառվել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում¹:

Դատավարագիտության մեջ թույլատրելիության **հատուկ կանոններն** ընդունված է դասակարգել «դրակառնի» և «բացասականի»²:

Թույլատրելիությունը **դրական է**, եթե գործի որոշակի փաստական հանգամանքներ կարող են հաստատվել իրավունքի նորմերով նախատեսված որոշակի ապացույցներով: Ընդ որում, օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրական թույլատրելիության կանոնները մի դեպքում ընդհանրապես բացառում են իրավական ակտերով նախատեսված ապացույցներից բացի այլ ապացույցների օգտագործումը (ունեն բացարձակ բնույթ), իսկ մյուս դեպքերում, ունենալով հարաբերական բնույթ, դատարաններին պարտավորեցնում են այլ ապացույցների հետ մեկտեղ հետազոտել և գնահատել օրենքով ուղղակիորեն նախատեսված ապացույցներ:

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Ապացուցում և ապացույցներ, Եր., ԵՊՀ իրատ., 1999, էջ 37-38:

2 Տե՛ս, օրինակ, **Сахнова Т.В.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008, էջ 370-371, Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. М.: «Городец», 2003, էջ 259-260 և այլն:

րը: Վերջիններս դատավարագիտության մեջ հաճախ անվանվում են «անհրաժեշտ ապացույցներ»¹:

Բացարձակ դրական թույլատրելիության հատուկ կանոնի համաձայն՝ այն դեպքերում, երբ ըստ օրենսդրության գործի հանգամանքները պարզելու համար պետք է օգտագործվեն միայն որոշակի ապացույցներ, այլ ապացույցների օգտագործումն անթույլատրելի է: Թույլատրելի ապացույցի բացակայության դեպքում գործին մասնակցող անձինք զրկվում են փաստը հաստատելու համար այլ ապացույցների վրա հենվելու իրավունքից, իսկ դրա բացասական հետևանքները, բնականաբար, կրում է տվյալ փաստի ապացուցման պարտականություն կրող կողմը:

Այսպես, Քաղ. օր. 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից, իսկ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի² 35-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի պետական գրանցումը հավաստվում է միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքով, հետևաբար՝ իրավաբանական անձի ստեղծման, պետական գրանցման փաստը կարող է հաստատվել բացառապես միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքով: Ի հավաստումն իրավաբանական անձի պետական գրանցման փաստի՝ դատարանն իրավունք չունի ընդունել այլ ապացույցներ, հետազոտել դրանք և դնել վճռի հիմքում:

Մեկ այլ օրինակ: Քաղ. օր. 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրա-

1 Ավելի մանրամասն տե՛ս **Зайцев И.М.** Понятие необходимых доказательств в гражданском судопроизводстве. В кн.: Актуальные проблемы в теории юридических доказательств. Иркутск, 1984, էջ 83-90, **Козлов А.С.** Актуальные проблемы теории доказательств в науке гражданского процесса. Иркутск, 1980, էջ 51-52:

2 Ընդունվել է նոր խմբագրությամբ 19.03.2012 թ., ուժի մեջ է մտել 25.07.2012 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 21(895), 25.04.2012:

վունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է պետական գրանցման պահից: Գործարքից ծագող իրավունքի պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է (Քաղ. օր. 302 հոդ., մաս 1): Քանի որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման (Քաղ. օր. 301 հոդ., մաս 1), իսկ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի¹ 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունքի պետական գրանցումից հետո գրանցված իրավունքի սուբյեկտներին տրամադրվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական, որը հաստատում է գրանցման ներկայացված իրավունքի պետական գրանցման իրականացման փաստը, որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքի ձեռք բերման փաստը հաստատող ապացույց դատարան կարող է ներկայացվել բացառապես նշված վկայականը: Այլ ապացույցներով, օրինակ, գործին մասնակցող անձանց կամ վկաների ցուցմունքներով, այլ փաստաթղթերով նշված փաստը հաստատվել չի կարող:

Ըստ Քաղ. օր. 298-րդ հոդվածի 3-րդ մասի արտաքին տնտեսական գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության, ուստի արտաքին տնտեսական գործարքի կնքման փաստը կարող է ապացուցվել բացառապես Քաղ. օր. 296-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ հասարակ գրավոր ձև ստացած պայմանագրով: Գրավոր պայմանագրով կարող են հաստատվել նաև փոխառության պայմանագրի (Քաղ. օր. 878 հոդ.), վարկի (Քաղ. օր. 888 հոդ.), բանկային ավանդի (Քաղ. օր. 904 հոդ.), բանկային հաշվի (Քաղ. օր. 913 հոդ.), ֆրանչայզինգի (Քաղ. օր. 970 հոդ.), ապահովագրության (Քաղ. օր. 996 հոդ.) և այլ պայմանագրերի կնքման փաստը:

¹ Ընդունվել է 14.04.1999 թ., ուժի մեջ է մտել 06.05.1999 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 11(77), 06.05.1999:

Հարաբերական դրական թույլատրելիության հատուկ կանոնի համաձայն՝ փաստը հաստատված կամ ժխտված համարելու համար դատարանը պետք է այլ ապացույցների հետ մեկտեղ հետազոտի և գնահատի օրենքով ուղղակիորեն նախատեսված «անհրաժեշտ ապացույցները»: Այսպես, անգործունակ ճանաչելու կամ ապաքինվելու հիմքով գործունակությունը վերականգնելու գործերով քաղաքացու հոգեկան վիճակը, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու ունակությունը, ապաքինվելու փաստը պարզելու համար դատարանը պետք է նշանակի դատահոգեբուժական փորձաքննություն (ՔԴՕ 252 և 255 հոդ.): Փորձագետի եզրակացությունն օրենքի ուղղակի ցուցումով նշված գործերով ճանաչվում է «անհրաժեշտ ապացույց», և եթե դատարանը քաղաքացուն անգործունակ է ճանաչում կամ անգործունակ ճանաչվածին կրկին գործունակ է ճանաչում առանց դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու և փորձագետի եզրակացությունը հետազոտելու, կայացված դատական ակտը ենթակա է բեկանման, քանի որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Միևնույն ժամանակ դատարանն իրավասու և պարտավոր է անհրաժեշտ ապացույցների (տվյալ դեպքում՝ փորձագետի եզրակացության) արժանահավատությունը ստուգելու նկատառումներով հետազոտել նաև գործում առկա այլ ապացույցները (գործին մասնակցող անձանց և վկաների ցուցմունքները, հիվանդության պատմությունից կատարված քաղվածքները և այլն):

Թույլատրելիության կանոնի մասնավոր դրսևորումներից են նաև այն դեպքերը, երբ որոշակի իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերն արգելում են որոշակի ապացույցների օգտագործումը: Վերջիններս որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների հաստատման միջոց ծառայել չեն կարող: Դրանք անթույլատրելի են:

Թույլատրելիությունը **բացասական է**, եթե իրավական նորմերը պարունակում են այս կամ այն ապացույցի օգտագործման արգելք: Բացասական թույլատրելիությունը ՔԴՕ 59-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնի մասնավոր դրսևորումներից է. որոշակի ապացույցներն օգտագործվել չեն կարող, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրանց օգտագործումը:

Քաղաքացիական դատավարությունում դա հիմնականում վերաբերում է գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքների վերաբերյալ պահանջների պահպանմանը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը գործարքի անվավերության չի հանգեցնում, սակայն վեճի դեպքում կողմերը զրկվում են ի հաստատումն գործարքի կնքման ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից (Քաղ. օր. 298 հոդ.): Կողմերը, սակայն, չեն զրկվում գրավոր և այլ ապացույցներ վկայակոչելու հնարավորությունից: Տվյալ դեպքում օրենքն ըստ էության սահմանում է որոշ տեսակի ապացույցների (վկաների ցուցմունքների) օգտագործման արգելք:

Եվս մեկ օրինակ: Քաղ. օր. 882-րդ հոդվածը փոխառուին իրավունք է վերապահում վիճարկել փոխառության պայմանագիրը նրա «անփողության» պատճառով, եթե նա ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: Փոխառուին նման իրավունք վերապահելով՝ օրենքը (Քաղ. օր. 882 հոդ., կետ 2) միաժամանակ սահմանում է, որ չի թույլատրվում «անփողության» պատճառով վիճարկել փոխառության պայմանագիրը՝ հենվելով վկաների ցուցմունքների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի, փոխառուի ներկայացուցչի և փոխատուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով:

Այլ կերպ ասած՝ ի հավաստում այն փաստի, որ փոխառուն ստացականը տվել է նախքան նրանում նշված դրամական գումարը կամ իրերը ստանալը, սակայն վերջիններս այդպես էլ չի ստացել կամ ստացել է պայմանագրում (ստացականում) նշվածից ավելի պակաս քանակով, փոխառուն իրավունք չունի վկայակոչել վկաների ցուցմունքներ: Այդպիսի ապացույցներն անթույլատրելի են: Քաղ. օր. 882-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելիս վկաների ցուցմունքները դառնում են թույլատրելի միայն այն դեպքում, երբ ապացուցվում է պայմանագիրը խաբեության, բռնության, սպառնալիքի, փոխառուի ներկայացուցչի և փոխատուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով կնքված լինելու փաստը:

Թույլատրելիության հատուկ կանոնները հետապնդում են քաղաքացիական շրջանառության և նյութաիրավական հարաբերությունների կայունությունն անբարեխիղճ կողմի չարաշահումներից պաշտպանելու երաշխիքներ, իսկ դատավարական առումով՝ ապացույցների արժանահավատությունն ապահովելու նպատակ: օրենսդիրը սահմանում է այս կամ այն գործարքի կնքման ձևը և նախատեսում այդ ձևը չպահպանելու հետևանքները՝ դրանով իսկ ցանկանալով ստիպել կողմերին ժամանակին և պատշաճ կերպով ձևակերպել իրավահարաբերությունները հետագայում գործի փաստական հանգամանքները հեշտությամբ ապացուցելու և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար:

Եթե դատարանը վեճը լուծելիս խախտում է ապացույցների թույլատրելիության կանոնը և գործի հանգամանքները հաստատում ոչ պատշաճ ապացուցման միջոցներով, ապա կայացված դատական ակտը ենթակա է բեկանման, եթե թույլ տրված խախտումը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Այս առումով ուշագրավ է ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը: Թեև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ապացույցների թույլատրելիության վերաբերյալ որևէ դրույթ չի նախատեսում, ՄԻԵԴ-ը իր մի շարք որոշումներում անդրադարձել է նաև ապացույցների թույլատրելիության խնդրին: ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համարվում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը համարվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, եթե դատարանի եզրահանգումները հիմնվում են բացառապես այդպիսի ապացույցների վրա¹: Հետևաբար, դատական ակտը բեկանելու հիմք հանդիսացող դատական սխալի մասին խոսք գնալ չի կարող այն դեպքերում, երբ որոշակի փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումները հիմնվում են նաև տվյալ դեպքում թույլատրելի և բավարար այլ ապացույցների վրա (չնայած այն հանգամանքին, որ դատարանը դրանց հետ մեկտեղ հիմնվել է նաև ոչ թույլատրելի ապացույցների վրա): Նման եզրակացությունը բխում է ԲԴՕ 365-րդ հոդվածի 1-ին մասի կանոնից, ըստ որի՝ դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

9.3. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը որոշելու դատավարական կարգը

Ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության կանոնների հասցեատերը նախևառաջ գործը քննող դատարանն է, որի վրա դրված է ոչ միայն գործին մասնակցող անձանց արդար դատաքննության իրավունքն

¹ Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով ՄԻԵԴ 12.07.1988 թ. վճիռը, Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԴ 23.04.1997 թ. վճիռը, Ֆոլնկեն ընդդեմ Ֆրանսիայի ՄԻԵԴ 25.02.1993 թ. վճիռը:

ապահովելու, այլ նաև իր վարույթում գտնվող գործը դատական խնայողության սկզբունքի պահպանմամբ քննելու և լուծելու պարտականությունը:

Ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ գործի քննությունն ու լուծումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ բանավոր դատաքննության ընթացքում հետազոտման ենթակա ապացուցողական նյութի շրջանակը որոշելու հարցը գործող դատավարական օրենսդրությունը դիտարկում է որպես գործը դատաքննության նախապատրաստելու կարևորագույն խնդիրներից մեկը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 10)՝ դրանով իսկ պարտավորեցնելով դատարանին, երբ դա հնարավոր է և չի վնասում արդարադատության շահերին, ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցերը լուծել նախքան որոշակի դատավարական գործողություններ կատարելը (վկային հրավիրելը, փորձաքննություն նշանակելը, մասնագետ հրավիրելը և այլն), գործի դատաքննության կամ վճռահատության անցնելը:

Ինչպես ապացույցի վերաբերելիության, այնպես էլ դրա թույլատրելիության մասին հարցի լուծումը կազմում է ապացույցների գնահատման բաղկացուցիչ մասը և դրա սկզբնական փուլը:

ՔԴՕ-ի մի շարք հոդվածների և դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ դատարանը պարտավոր է ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության հարցերին անդրադառնալ և դրանք լուծել ինչպես ապացույցը ներկայացնելու կամ ձեռք բերելու վերաբերյալ միջևորդությունը քննարկելու պահին, այնպես էլ վարույթի հետագա ընթացքում՝ ընդհուպ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Այլ կերպ ասած՝ ներկայացվող ապացուցողական նյութի գտումը վերաբերելիության և թույլատրելիության հատկանիշով իրականացվում է երկու փուլով՝

- **Նախնական գտում**՝ գործում արդեն առկա կամ միջ-

նորոգությամբ ներկայացված ապացույցը թույլատրելու հարցը լուծելիս, իսկ եթե ներկայացվել է ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդություն՝ այն քննարկելիս.

- **վերջնական գտում**⁴ գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելիս՝ բոլոր ապացույցների հետազոտման ու դրանք համակցության մեջ գնահատելու արդյունքում:

Հարկ է նկատի ունենալ, որ ընդհանուր հայցային վարույթի մասին կանոններին համապատասխան դատարանը պարտավոր է ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցերը գործին մասնակցող անձանց հետ քննարկել և լուծել նախնական դատական նիստում: Ինչպես նշվել է նախորդ շարադրանքում, նախնական դատական նիստում պետք է լուծվեն նաև կողմերի միջնորդությամբ ապացույց պահանջելու, ապացույց ապահովելու, փորձաքննություն նշանակելու, դատական նիստին վկա, փորձագետ կանչելու, գործին մասնակցող անձին հարցաքննելու, դատական հանձնարարություն տալու, ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելու վերաբերյալ հարցերը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 11): Վերջիններս քննարկելիս ևս դատարանի առաջնային խնդիրն է պարզել, թե ձեռքբերվելիք ապացույցները որքանով կարող են օգտակար (թույլատրելի) լինել գործը լուծելու համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը պարզելու տեսակետից: Բնականաբար, եթե համապատասխան միջնորդության բավարարման արդյունքում ձեռքբերվելիք ապացույցն ակնհայտորեն որևէ նշանակություն չի կարող ունենալ ապացուցման ենթակա փաստի հաստատման կամ ժխտման համար կամ չի համապատասխանում թույլատրելիության պայմաններին, ապա դատարանը, ղեկավարվելով վերը քննարկված կանոններով, պետք է մերժի ապացույց ձեռք բերելուն ուղղված համապատասխան միջնորդությունը՝ կայացնելով

պատճառաբանված դատական ակտ:

Միևնույն ժամանակ չափազանց կարևոր է հաշվի առնել այն, որ ապացույցներ պահանջելու, ապահովելու, ապացույցներ ձեռք բերելուն ուղղված այլ միջնորդություններ քննարկելու ժամանակ, ինչպես նաև գործում առկա (ներկայացված) ապացույցների վերաբերելիության հարցը դատական նիստում լուծելու ժամանակ դատարանը պետք է նկատի ունենա, որ օրենքի իմաստով վերաբերելի պետք է համարվի ցանկացած փաստական տվյալ, որը հավանական է դարձնում գործը լուծելու համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Հետևաբար, ներկայացված կամ պահանջվող տվյալների ոչ վերաբերելի լինելու մասին վկայող ակնհայտ փաստերի բացակայության պայմաններում ապացույցի և ապացուցվող փաստի միջև գոյություն ունեցող օբյեկտիվ կապը պետք է ենթադրվի, և, որպես հետևանք, ներկայացված ապացույցն ընդունվի (թույլատրվի), իսկ այն ձեռք բերելուն ուղղված միջնորդությունը՝ բավարարվի, քանի որ այդ ենթադրությունը կարող է հերքվել բացառապես հավաքված ապացույցների հետազոտման, իսկ առանձին դեպքերում դրանք նաև այլ ապացույցների հետ համակցության մեջ գնահատելու արդյունքում: Նույնը կարելի է ասել նաև ապացույցի թույլատրելիության մասին: Ներկայացված ապացույցի (միջնորդության) նախնական հետազոտության ժամանակ դրա թույլատրելիությունը պետք է ենթադրվի, և եթե այդպիսի ենթադրությունը չի հերքվում ապացույցի թույլատրելիության հարցը քննարկելիս ի հայտ եկած փաստերով, նույնիսկ լրջագույն կասկածների դեպքում ներկայացված ապացույցը պետք է ընդունվի (թույլատրվի) և հետազոտվի դատաքննության ընթացքում:

Նախնական գտման կարգով ապացույցը ոչ վերաբերելի կամ ոչ թույլատրելի ճանաչելու դեպքում դատարանը կայացնում է պատճառաբանված միջանկյալ դատական

ակտ՝ գործում առկա ապացույցը ոչ վերաբերելի կամ ոչ թույլատրելի ճանաչելու և հետազոտման ենթակա ապացույցների կազմից հանելու մասին, իսկ եթե ներկայացվել է ապացույցը թույլատրելու վերաբերյալ կամ ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդություն՝ վերջինս մերժելու մասին: Դատարանի որոշմամբ են ձևակերպվում նաև հարցաքննվող վկային, փորձագետին և մասնագետին հարցաքննության ընթացքում առաջադրվող ոչ վերաբերելի և անթույլատրելի հարցերը հանելը, փորձաքննության կատարման համար փորձագետին գործին մասնակցող անձանց կողմից առաջադրվող հարցերի ճշգրտումը (շտկումը) և մերժումը:

Եթե դատարանն ապացույցի ոչ վերաբերելի կամ ոչ թույլատրելի լինելու մասին հետևության է գալիս այն հետազոտելուց հետո կամ վարույթի այնպիսի տեսակների շրջանակներում, որոնք իրականացվում են առանց դատական նիստ հրավիրելու (պարզեցված վարույթ, արագացված դատաքննություն և այլն), ապա համապատասխան եզրահանգումը ձևակերպվում է եզրափակիչ դատական ակտում:

Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե դատավարության որ փուլում է ներկայացված ապացույցը ճանաչվել ոչ վերաբերելի կամ ոչ թույլատրելի, դատարանը պարտավոր է վճռի պատճառաբանական մասում նշել այս կամ այն ապացույցը մերժելու փաստարկները, այլ կերպ ասած՝ պատճառաբանելու ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության վերաբերյալ իր ներքին համոզմունքը՝ համապատասխան իրավական նորմերի և փաստերի վկայակոչմամբ վերջնականորեն ձևակերպելով իր գնահատականը կայացվող եզրափակիչ դատական ակտում¹:

¹ Վճռի պատճառաբանական մասին ներկայացվող պահանջների (ՔԴՕ 192 հոդ., մաս 4) վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ նշվածը չի վերաբերում միայն դատաքննության ընթացքում հարցաքննվող վկային, փորձագետին և մասնագետին հարցաքննության ընթացքում առաջադրվող ոչ վերաբերելի և անթույլատրելի հարցերը հանելու, փորձաքննության կատարման համար փորձագետին գործին մասնակցող անձանց

§10. Ապացույցների հետազոտումը և գնահատումը

Ցանկացած քաղաքացիական գործով դատական ապացուցման կարևորագույն տարրերից են ապացույցների հետազոտումը և գնահատումը, որոնք ուղեկցում են հավաստի գիտելիքների ստացմանն ուղղված ճանաչողության ողջ գործընթացը:

10.1. Ապացույցների հետազոտումը

Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը և բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով: Հետազոտման նշված նպատակն իրացվում է գործով ներկայացված ապացույցներն անմիջականորեն ընկալելու, դրանց բովանդակությունը վեր հանելու, մեկ ապացույցը մյուսի հետ համեմատելու, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելու, այլ կերպ ասած՝ ապացույցներն առանձին-առանձին ու իրենց համակցությամբ ստուգելու և ապացույցների ամբողջական համակարգ կառուցելու միջոցով:

Ապացույցների հետազոտումը դատական ապացուցման կենտրոնական փուլն է, որի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարանը վճիռը կարող է հիմնավորել միայն սահմանված դատավարական կարգով հետազոտված ապացույցներով:

Օրենքը սահմանում է ապացույցների հետազոտմանը ներկայացվող ընդհանուր և հատուկ պահանջներ:

Կողմից առաջադրվող հարցերը ճշգրտելու (շտկելու) և մերժելու, ինչպես նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները մերժելու դեպքերին:

Ընդհանուր պահանջները հանգում են հետևյալին:

1. Քաղաքացիական դատավարության բանավորության սկզբունքից ելնելով՝ որպես ընդհանուր կանոն, դատարանում գործերի ըստ էության քննությունը, այդ թվում՝ ապացույցների հետազոտումն իրականացվում է բանավոր, իսկ քանի որ բանավոր քննության միակ դատավարական ձևը դատական նիստն է (ՔԴՕ 141 հոդ., մաս 1), **ապացույցները կարող են հետազոտվել միայն դատական նիստում:** Դատավարական օրենսդրությամբ բացառություն է նախատեսված միայն այն դեպքերի համար, երբ, ելնելով վարույթի տեսակից կամ դրա որոշակի առանձնահատկություններից, դատարանին թույլատրվում է կիրառել գրավոր ընթացակարգ՝ գործի քննությունն իրականացնելով առանց դատական նիստ հրավիրելու:

Ընդհանուր կանոնի ուժով, դատարանն իրավունք չունի եզրափակիչ դատական ակտի հիմքում դնել այնպիսի ապացույցներ, որոնք չեն հետազոտվել դատական նիստում՝ հրապարակայնության, մրցակցության, կողմերի իրավահավասարության և դատավարության այլ հիմնարար սկզբունքների պահպանման պայմաններում: Ասվածը վերաբերում է նաև ապացույցների ապահովմանը, դատական հանձնարարությունների կարգով ստացված ցուցմունքներին, շուտ փչացող իրեղեն ապացույցների զննությանը և ապացույցներն իրենց գտնվելու վայրում զննելուն: Ըստ ՔԴՕ 141-րդ հոդվածի 2-րդ մասի՝ եթե գործով ապացույցների հետազոտումը պահանջում է դատավարական գործողությունների կատարում այլ վայրում, ապա դատական նիստն անցկացվում է դատական նիստերի դահլիճից դուրս՝ արտազևա դատական նիստում, որը կարող է անցկացվել ցանկացած վայրում: Հետևում է, որ բոլոր նշված դատավարական գործողությունները ևս պետք է կատարվեն դրանց կատարման նպատակով նշանակված դատական նիստերում, որոնց ժամանակի և վայրի մասին դատարանը պարտավոր է պատշաճ կերպով տեղեկացնել գործին մասնակցող անձանց:

ՔԴՕ 177-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ապացույցների հետազոտումն իրականացվում է **դատաքննության փուլում**: Այդուհանդերձ, ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի, գործող դատավարական օրենսդրությունը դատարանին իրավունք է վերապահել ներկայացված ապացույցները հետազոտել նաև նախնական դատական նիստում, սակայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է գործի դատաքննության արդյունավետ նախապատրաստություն իրականացնելու համար (ՔԴՕ 167 հոդ., մաս 2): Այլ կերպ ասած՝ ներկայացված (հավաքված) ապացույցները կարող են հետազոտվել նախնական դատական նիստում, եթե դա թելադրված է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական նորմերի շրջանակը որոշելու, վիճելի իրավահարաբերության մասնակիցների կազմը պարզելու, ներկայացված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը պարզելու, փորձաքննությունը նշանակելու, վկա և մասնագետ հրավիրելու, այլ նախապատրաստական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ:

Հարկ է նկատի ունենալ, որ նման հետազոտումն ունի բացառապես նախապատրաստական նշանակություն, ուստի չի բացառում գործի դատաքննության ընթացքում ապացույցները հետազոտելու անհրաժեշտությունը: Բացառություն են, թերևս, այն ապացույցները, որոնք գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում դատարանի կողմից ճանաչվել են ոչ վերաբերելի կամ անթույլատրելի և հանվել են գործով հետազոտման ենթակա ապացույցների կազմից, ինչպես նաև այն ապացույցները, որոնց հետազոտման անհրաժեշտությունը վերացել է համապատասխան ապացուցման ենթակա փաստերը գործին մասնակցող անձանց կողմից ընդունելու հետևանքով:

Միևնույն ժամանակ նախնական դատական նիստում չեն կարող հետազոտվել այն ապացույցները, որոնք գործող կարգավորումների համաձայն կարող են ստացվել և

հետազոտվել բացառապես գործի դատաքննության ընթացքում: Խոսքը, Մասնավորապես վկայի, փորձագետի և մասնագետի հարցաքննության, վկաների առերեսման, իրեղեն և գրավոր ապացույցները վկաներին և մասնագետներին ներկայացնելու և նմանատիպ այլ դատավարական գործողությունների մասին է (եթե, իհարկե, դրանք չեն կատարվում ապահովման կարգով):

2. ՔԴՕ 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **դատարանը գործն ըստ էության քննելիս պարտավոր է գործում առկա ապացույցները հետազոտել անմիջականորեն**, ինչը գործնականում նշանակում է, որ գործը քննելիս դատարանը պարտավոր է գործով ստացված ապացուցողական նյութն ընկալել դրա հետ «անմիջական կոնտակտի» միջոցով, անմիջապես այն կրող սուբյեկտներին լսելու (հարցաքննելու), փաստաթղթավորված կամ իրեղեն տեսք ունեցող նյութերին (առարկաներին) ծանոթանալու (ընթերցելու, զննելու) եղանակով: Անմիջականությունը նշանակում է նաև, որ դատարանն առաջին հերթին հետազոտվող փաստերի վերաբերյալ տեղեկություններ պետք է ստանա սկզբնաղբյուրից (եթե, իհարկե, օրենքը թույլատրելի չի համարում վավերացված վերարտադրությունների հետազոտումը)՝ կողմերի և ականատես վկաների ցուցմունքներից, իրեղեն ապացույցների զննությունից, փաստաթղթերի իսկական օրինակներից և այլն, և դա անելու անհնարինության դեպքում միայն հետազոտի դրանց վերարտադրությունները (ոչ ականատես վկաների ցուցմունքները, փաստաթղթերի պատճենները և այլն)՝ միաժանական հաշվի առնելով, որ մի շարք դեպքերում դատավարական օրենսդրությունը բացառում է ապացույցի վերարտադրությունների օգտագործումը:

Գործը կարող է լուծվել միայն այն ապացույցների հիման վրա, որոնք անմիջականորեն հետազոտվել են դատարանի կողմից: Դատական ակտը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքով ամրագր-

ված կանխավարկածներով (ՔԴՕ 9-րդ հոդ., մաս 3):

Ապացույցներն անմիջականորեն գործը քննող դատարանի կողմից հետազոտելու պահանջը քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքներից է: Այս սկզբունքից նախատեսում են որոշ բացառություններ, որոնց ուժով դատարանին թույլատրում է օգտագործել դատական հանձնարարության կամ միջազգային-իրավական օգնության կարգով ստացված ապացույցները, որոնք հավաքվում, ամրագրվում (փաստաթղթավորվում) և գործը քննող դատարանին են փոխանցվում համապատասխան հանձնարարությունը ստացած այլ դատարանի կողմից: Այդուհանդերձ, սահմանված սկզբունքի ուժով և այդ սկզբունքից արված բացառությունը որոշակիորեն «մեղմելու» նկատառումներից ելնելով՝ դատարանը պարտավոր է նշված եղանակով ստացված գրավոր նյութերը ևս անմիջականորեն հետազոտել գործն ըստ էության քննելիս:

Վարույթի օպերատիվությունն ապահովելու և ծախսատարությունը նվազեցնելու համար օրենքը բացառության կարգով հնարավոր է համարել նաև վկայի, փորձագետի և մասնագետի հարցաքննությունը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ (ՔԴՕ 177 հոդ., մաս 2)՝ մանրակրկիտ կարգավորելով նման հարցաքննության դատավարական կարգը և պայմանները (ՔԴՕ 145 հոդ.):

3. Ապացույցները հետազոտվում են ոչ միայն դատարանի, այլ նաև գործին մասնակցող անձանց կողմից: **Առաջին ատյանի դատարանն ապացույցների հետազոտումը պարտավոր է կազմակերպել այնպես, որ գործին մասնակցող անձինք հնարավորություն ունենան մասնակցել դրանց հետազոտմանը** և առաջին ատյանի դատարանի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ մատնանշել այն փաստը կամ փաստերը, որոնք ապացուցելու համար անհրաժեշտ է այդ ապացույցը: Առաջին ատյանի **դատարանը պարտավոր է հնարավորություն**

ընձեռել գործին մասնակցող անձանց դիրքորոշում հայտնելու այդ ապացույցի և ապացուցման ենթակա փաստի վերաբերյալ (ՔԴՕ 177 հոդ., մաս 3):

Օրենսդիրը կարևորում է ապացույցների հետազոտմանը գործին մասնակցող անձանց մասնակից դարձնելու հանգամանքը, ընդ որում անկախ նրանից գործը քննվում է դատական նիստում, թե առանց դատական նիստ հրավիրելու: Գործին մասնակցող անձանց՝ ապացույցներին ծանոթանալու, դրանց պատճենները ստանալու, հետազոտմանը մասնակցելու, այդ թվում՝ դատարանին հաղորդված տեղեկությունների կապակցությամբ բացատրություններ, առարկություններ և փաստարկներ ներկայացնելու իրավունքը (ՔԴՕ 32 հոդ.) մրցակցության և իրավահավասարության սկզբունքներից բխող և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը կազմող հիմնարար իրավունքներից է, որի ոտնահարումը կայացված դատական ակտի բեկանման հիմք է: Այդ իսկ պատճառով օրենքը պարտավորեցնում է դատարանին գործին մասնակցող անձանց տեղեկացնել վարույթի հարուցման, դիրքորոշում և ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտության մասին, կազմակերպել ներկայացված պահանջների, դրանց հիմքերի և դրանք հաստատող ապացույցների բացահայտումը, սահմանված կարգով ծանուցել դատավարության կողմերին դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ եթե գործը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու, նախքան եզրափակիչ դատական ակտ կայացնելն ապահովել գործին մասնակցող անձանց լսված լինելու իրավունքի իրացումը (թեկուզ և գրավոր ընթացակարգով): Ցանկացած ապացույց կարող է դրվել վճռի հիմքում, եթե դատարանը տվյալ տեսակի վարույթի համար սահմանված կանոնների պահպանմամբ գործին մասնակցող բոլոր անձանց հա-

վասար ընձեռել է ապացույցների հետազոտմանը մասնակցելու, ներկայացված ապացույցների և ապացուցման ենթակա փաստի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հնարավորություն:

Նշված պարտականությունը դատարանի կողմից ոչ պատշաճորեն կատարելը, որպես կանոն, դիտարկվում է որպես դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտում, քանի որ ունակ է հանգեցնելու գործն ըստ եռթյան սխալ լուծող դատական ակտի կայացման:

4. Դատաքննության ընթացքում ապացույցները հետազոտվում են որոշակի հաջորդականությամբ: Ապացույցների հետազոտման հաջորդականությունը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքները: Ապացույցների հետազոտման հաջորդականությունը դատարանը կարող է սահմանել ինչպես գործը դատաքննության նախապատրաստելու նպատակով նշանակված նախնական դատական նիստի ընթացքում (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 12), այնպես էլ գործի ըստ եռթյան քննության համար նշանակված դատական նիստի (դատաքննության) նախապատրաստական մասում (176 հոդ., մաս 1): Ընդ որում, ըստ ՔԴՕ 176-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գործի ըստ եռթյան քննության նպատակով նշանակված դատական նիստում դատարանը, լսելով գործին մասնակցող անձանց կարծիքը, կարող է սահմանել ապացույցների հետազոտման այլ հաջորդականություն՝ փոփոխելով նախապես որոշված հաջորդականությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքն ապացույցների հետազոտման հաջորդականությունը սահմանելու իրավասությունը վերապահել է դատարանին, վերջինս այն կարող է սահմանել իր հայեցողությամբ ու ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի ապացուցման գործընթացը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտության վրա: Գործնականում դատարանը, որպես կանոն, նախ հարցաքննում է գործին մասնակցող

անձանց (եթե, իհարկե, նրանք ցանկություն են հայտնել ցուցմունք տալ, կամ դատարանը բավարարել է հակառակ կողմի միջնորդությունը նրանց հարցաքննելու վերաբերյալ), այնուհետև՝ վկաներին, ապա հրապարակում է գրավոր ապացույցները, զննում է իրեղեն ապացույցները, զննում է լուսանկարները և լուսաժապավենները, վերարտադրում է ձայնագրությունները և տեսագրությունները, լսում (հրապարակում) է փորձագետների եզրակացությունները և դրանց կապակցությամբ նրանց բացատրությունները, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների եզրակացությունները և նրանց ներկայացուցիչների բացատրությունները: Հենց այդ տրամաբանությամբ էլ, որպես կանոն, սահմանվում է ապացույցների հետազոտման հաջորդականությունը:

Ապացույցների հետազոտման հաջորդականությունը որոշելու կապակցությամբ դատարանը կայացնում է արձանագրային բնույթի միջանկյալ դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման:

5. ԶԴՕ 66-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ **դատարանը պարտավոր է գործում եղած բոլոր ապացույցները հետազոտել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն:** Գործով ապացուցման ենթակա փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի եզրահանգումները՝ կարող են հիմնվել բացառապես ապացույցների նման հետազոտության վրա:

Ապացույցների հետազոտման **բազմակողմանիությունը** ենթադրում է, որ գործում առկա ապացույցների ուսումնասիրության (ընկալման) ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցներ (փորձագետների, մասնագետների, իրավասու անձանց և մարմինների) դատողությունը և բացատրությունները՝ միաժամանակ իր իրավասության սահմաններում ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ստացված փաստական տվյալների ար-

ժանահավատությունը ստուգելու համար:

Ապացույցների հետազոտման **լրիվությունը** ենթադրում է գործով ներկայացված (ձեռք բերված) բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ընկալում և ստուգում, փաստերի գոյության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ և բավարար ամբողջ ապացուցողական նյութի վերլուծություն և ստուգում:

Ապացույցների հետազոտման **օբյեկտիվությունը** ենթադրում է, որ դատարանն ապացույցները հետազոտելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերի ապացույցների հետազոտման ընթացքում՝ ապահովելով կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը և զերծ մնալով գործի ելքի կամ այս կամ այն ապացույցի արժանահավատության վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց:

Դատարանի կողմից ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունն առաջնահերթ նշանակություն ունի դրանք առանձին-առանձին և իրենց համակցության մեջ ճիշտ գնահատելու՝ դրանց արժանահավատությունն ու բավարարությունը ճիշտ որոշելու և գործի քննության արդյունքում օրինական ու հիմնավորված դատական ակտ կայացնելու համար: Ուստի դատարանի կողմից քննարկվող պահանջների խախտումը, որպես կանոն, դիտարկվում է որպես դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտում, քանի որ ազդում է կամ կարող է ազդել գործի ելքի վրա:

Ապացույցների հետազոտմանը ներկայացվող **հատուկ պահանջները** սահմանվում են առանձին տեսակի ապացույցների ձեռքբերմանը և հետազոտմանը նվիրված իրավանորմերով, որոնց վերլուծությանը կանոնադրական սույն աշխատանքի հաջորդ մասում: Այստեղ նպատակահարմար ենք համարում նշել, որ ապացույցների ամփոփական ընկալումը, որպես ապացույցների հետա-

գոտման բաղկացուցիչ տարր, իրականացվում է յուրահատուկ ձևերով (եղանակներով), որոնք ուղղակիորեն նախատեսված են ՔԴՕ առանձին նորմերում: Այս կամ այն ապացույցի հետազոտման դատավարական կարգը (հետազոտման եղանակը) կախված է դրա բնույթից և տեսակից: Մասնավորապես՝ գործը քննող դատարանն անմիջականորեն հարցաքննում է գործին մասնակցող անձանց և վկաներին, հրապարակում է (ընթերցում է) գրավոր ապացույցները, անձամբ կամ փորձագետի կամ մասնագետի միջոցով գննում է իրեղեն ապացույցները, դիտում է լուսանկարները, տեսագրությունները, լսում է ձայնագրությունները, հրապարակում է փորձագետների եզրակացությունները, հարցաքննում է փորձագետների և մասնագետներին:

10.2. Ապացույցների գնահատումը

Ապացույցների գնահատումն ապացուցողական գործունեության եզրափակիչ տարրն է, որի միջոցով որոշվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստի հաստատված կամ հերքված լինելու, ինչպես նաև վիճելի մնալու լինելու հարցը:

Ըստ ՔԴՕ 66-րդ հոդվածի 2-րդ մասի՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից: Հետևում է, որ **ապացույցների գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:**

Առանց ապացույցների գնահատման հնարավոր չէ պատկերացնել դրանց ձեռք բերման, հավաքման, հետազոտման և դատական ակտի կայացման ողջ գործընթացը:

Ապացույցների գնահատումը որպես տրամաբանական գործընթաց իր դրսևորումն է գտնում դատավարական գործողություններում և ենթարկվում է իրավական կարգավորման, իրավական նորմերի ներգործության: Սակայն հարկ է նկատել, որ իրավունքի նորմերը սահմանում են ոչ թե դատավորի մտածողության կարգն ու դատողությունների ընթացքը, որոնք կարգավորվում են մտածողության կանոններով, այլ դատական ապացույցների գնահատման նպատակը, սկզբունքներն ու պայմանները:

Ասվածը վկայում է այն մասին, որ ապացույցների գնահատումն ունի ներքին (տրամաբանական) և արտաքին (իրավական) կողմեր:

Ապացույցների գնահատման տրամաբանական կողմն այն է, որ դատական ապացուցման ողջ ընթացքում դատարանը, գործին մասնակցող անձինք և ապացուցման մյուս սուբյեկտները տրամաբանության (մտածողության) ֆորմալ կանոններով վերլուծում են ապացույցների վերաբերելիությունը, դրանց թույլատրելիությունը և արժանահավատությունը, փաստերի վերաբերյալ տեղեկությունները միավորում են ձեռք բերված ապացույցների ընդհանուր համակարգի մեջ, որը հաստատում կամ հերքում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Ապացույցների գնահատման իրավական կողմը դրսևորվում է հետազոտված ապացույցների իրավաբանական որակման և դատավարական պատշաճ ձևակերպման մեջ:

Ապացույցների գնահատման նպատակը կամայական չէ: Ապացույցները գնահատվում են դրանց վերաբերելիությունը, թույլատրելիությունը, արժանահավատությունը, բավարարությունը և փոխադարձ կապի առկայությունը որոշելու նպատակով:

Ապացույցների վերաբերելիությանն ու թույլատրելիությանն անդրադարձել ենք սույն աշխատանքի նախորդ շարա դրանքում:

Ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: ԶԴՕ 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավատ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյունքում հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Հետևում է, որ արժանահավատ է այն ապացույցը, որն իրական փաստերի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն է պարունակում: Եթե ապացույցն արժանահավատ չէ, այն հնարավորություն չի տալիս հաստատել կամ հերքել գործի հանգամանքները: Այդ իսկ պատճառով գործի քննության ընթացքում ապացույցների արժանահավատությունը պարտադիր կերպով պետք է ստուգվի: Այն կախված է տեղեկատվության աղբյուրի որակից, գործով ձեռք բերված տարբեր ապացույցների միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից:

Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել, առաջին հերթին՝ ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից): Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դեպքում գործով վկայի ցուցմունքները գնահատելիս դատարանը հաշվի է առնում տվյալ անձի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, փաստերի մասին նրա իրազեկության աղբյուրը, այն պայմանները, որոնց առկայությամբ անձն ընկալել է որոշակի փաստեր (այսինքն՝ տեղը, ժամանակը, անձի ֆիզիկական և հոգեկան վիճակը, հասակը), նրա սուբյեկտիվ հատկանիշներն այն առումով, թե նա իր ունակություններով ի վիճակի է ճիշտ ընկալել իրադարձություններն ու գործողությունները, ընկալածը պահել հիշողության մեջ, ճիշտ վերարտադրել ու հաղորդել դատարանին: Դա հնարավորություն է տալիս գնահատել

վկայի կողմից հայտնած տեղեկությունների հավաստիության աստիճանը: Նույն նպատակներով էլ դատարանն ապացույցները գնահատելիս պետք է նկատի ունենա իրեղեն և գրավոր ապացույցների, լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների լավորակության աստիճանը, գրավոր ապացույցների համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող բոլոր պահանջներին, իրեղեն ապացույցների պահպանման պայմանները՝ դրանք ձեռք բերելու պահից մինչև դատարան ներկայացնելը, ապացույցները ձեռք բերելիս օրենքի պահանջները պահպանված լինելու հանգամանքը, թույլ տրված խախտումների բնույթը և հնարավոր ազդեցությունը ստացված տվյալների բովանդակության վրա, այլ գործոններ, որոնք կարող են այս կամ այն կերպով ազդել ստացված տեղեկությունների հավաստիության վրա:

Հակասական, միմյանց բացառող տեղեկությունների ստացումը վկայում է ձեռք բերված որոշ ապացույցների ոչ հավաստի լինելու մասին:

Միայն ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը կարող է վեր հանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում թույլ տալ որոշելու ապացույցների հավաստիությունը:

Եթե դատարանի կամ գործին մասնակցող անձանց մոտ կասկածներ են ծագում կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության հետ, այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել՝ տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու, փաստաթուղթը կազմելու և դրա բովանդակությանը ներկայացվող պահանջները պահպանելու հանգամանքը պարզելու, անհրաժեշտության դեպքում փորձաքննություններ նշանակելու և մասնագետներ հրավիրելու միջոցով:

Ապացույցների գնահատումը՝ դրանց հավաստիության և փոխադարձ կապի տեսանկյունից, նպատակ է հետապնդում վերացնելու ձեռք բերված և հետազոտվող

ապացույցների միջև առկա հակասությունները, փարատելու ստացված ապացուցողական տեղեկատվության ողջ համակցության հետազոտման արդյունքում կատարված եզրահանգման հավաստիության վերաբերյալ բոլոր կասկածները:

Պարզելով ապացույցների արժանահավատությունը՝ դատարանը որոշում է դրանց բավարար լինելը, ձեռք բերված և հետազոտված ապացույցների հիման վրա որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն անելու հնարավորությունը, ինչը հնարավորություն է տալիս ստուգել նաև գործով հավաքված ապացույցների լրիվությունը:

Ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված այնպիսի ապացույցների համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարել որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների բավարարությունը գործով ներկայացված (ձեռք բերված) ապացույցների համակցության գնահատման արդյունք է: Ընդ որում, այն ոչ թե քանակական, այլ որակական ցուցանիշ է: Վերջինս որոշելու հետ կապված դատարանները գործնականում շատ հաճախ դժվարությունների առաջ են կանգնում այն դեպքերում, երբ ներկայացված և հետազոտված ապացույցները հնարավորություն չեն տալիս ապացուցման ենթակա փաստերի առկայության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգում կատարելու համար: Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ եթե դատարանը գալիս է այն եզրակացության, որ հետազոտված ապացույցներով հնարավոր չէ պարզել որոնվող փաստի գոյությունը կամ բացակայությունը, ապա նա պարտավոր է փաստը ճանաչել չապացուցված (վիճելի): Այդ մասին մանրամասն խոսել ենք ապացուցման պարտականությանը վերաբերող շարա դրանքի շրջանակներում:

Ապացույցների գնահատումը կարող է կրել խորհրդատվական կամ իշխանական բնույթ՝ կախված այն

հանգամանքից, թե ապացուցման սուբյեկտներից ով է գնահատում ապացույցները¹:

Խորհրդատվական բնույթ է կրում այն գնահատումը, որն արվում է գործին մասնակցող անձանց կամ նրանց ներկայացուցիչների կողմից, երբ վերջիններս հանդես են գալիս նոր ապացույցներ ներկայացնելու և դրանք գործին կցելու միջնորդությամբ կամ հետազոտվող ապացույցների վերաբերյալ հանդես են գալիս բացատրություններով, որոնց ընթացքում գնահատական են տալիս դատարանում հետազոտվող այս կամ այն ապացույցին: Խորհրդատվական է նաև փորձագետի, մասնագետի, վարույթին մասնակցող իրավասու անձի կամ մարմնի գնահատականը՝ ապացույցի ապացուցողական ուժի վերաբերյալ:

Ապացույցների այս տեսակ գնահատման կարևորությունը նրանում է, որ այն հնարավորություն է տալիս ապահովել դատարանի կողմից ապացույցների հետազոտման և գնահատման բազմակողմանիությունը՝ հաշվի առնելով դատավարության բոլոր մասնակիցների կարծիքը:

Իշխանական բնույթ կրում է դատարանի կողմից իրականացվող ապացույցների գնահատումը: Ապացույցների վերջնական գնահատման բացառիկ լիազորությունը տրված է հենց դատարանին:

Դատարանն ապացույցները վերջնականորեն գնահատում է եզրափակիչ դատական ակտ կայացնելիս: Նման գնահատումն օրենսդրի կողմից դիտարկվել է որպես վճիռ կայացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա հարցերից (խնդիրներից) մեկը (ՔԴՕ 191 հոդ., մաս 1): Ասվածը, սակայն, չի նշանակում, որ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը դատարանը զերծ պետք է մնա ապացույցները գնահատելու գործընթացից: Ինչպես նշել ենք նախորդ շարա դրանքում, դեռևս գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դատարանն իրավասու է գնահատել ներկայացված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը, ապացուցման ենթա-

1 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 143:

կա ապացույցների կազմից հանել ոչ վերաբերելի և ոչ թույլատրելի ապացույցները: Այլ կերպ ասած, մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելիս ապացույցներին վերջնական գնահատական տալը, դատարանը դրանք նախնական գնահատման է ենթարկում:

Ապացույցների գնահատումը կատարվում է ոչ միայն ապացույցների ստացման և ձեռք բերման, այլ նաև հետազոտման ընթացքում գործը դատաքննության նախապատրաստելու պահից մինչև գործով որոշում կայացնելու համար դատարանի հեռանալը, այլ կերպ ասած՝ ապացույցները ենթարկվում են նաև միջանկյալ գնահատման: Այս փուլում ապացույցների գնահատումը հիմնականում արտացոլվում է ապացույցներն ընդունելու կամ մերժելու, լրացուցիչ փորձաքննությունն նշանակելու, հայցը (դիմումը) առանց քննության թողնելու, վարույթը կասեցնելու կամ գործի քննությունը հետաձգելու, այլ դատավարական հարցերի կապակցությամբ դատարանի կողմից կայացվող միջանկյալ դատական ակտերում:

Ապացույցները վերջնական գնահատման են ենթարկվում դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտ կայացնելիս, ինչն էլ հիմք է վերջինս կայացնելու համար:

Ապացույցների վերջնական գնահատումն իրականացվում է օրենքով նախատեսված որոշակի պարտադիր պահանջների պահպանմամբ: Դրանք հանգում են հետևյալին՝

1. դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ,

2. դատարանի ներքին համոզումը պետք է հիմնված լինի գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա,

3. դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի, բացառությամբ ՔԴՕ 61-րդ հոդվածի 1-4-րդ մասերով նախատեսված դեպքերի:

Ապացույցների գնահատումն իրականացվում է ըստ ներքին համոզման, սակայն այն չի կարող լինել կամայա-

կան:

Ապացույցների գնահատումը պայմանավորելով դատարանի ներքին համոզմամբ՝ օրենքը դրա հետ միասին որոշում է այդ գնահատականի ձևավորման պայմանները և արտահայտման դատավարական ձևը՝ դրանով իսկ ապահովելով սուբյեկտիվ գործոնի՝ ներքին համոզման և օբյեկտիվ գործոնի՝ գործով հետազոտված ապացույցների գույակցումը:

Ապացույցների գնահատման կանոնները նպատակ են հետապնդում բացառելու գնահատողական դատողություններում դատարանի հնարավոր սուբյեկտիվիզմը և ապահովելու գործով հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտի կայացումը:

Ներքին համոզումը՝ որպես սուբյեկտիվ, հոգեբանական կատեգորիա, չի կարող կարգավորվել իրավական նորմերով: Սակայն, քանի որ օրենքը ներքին համոզումը դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, ՔԴՕ 66-րդ հոդվածում միաժամանակ տեղ են գտել դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի սկզբունքներ, որոնք, դատավորների անկախության և միայն օրենքին ենթարկվելու սկզբունքի հետ մեկտեղ, կոչված են ապահովելու այդ սուբյեկտիվ գործոնի գործունեության օբյեկտիվ երաշխիքները:

Այդ սկզբունքներն են՝

ա. որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը.

բ. դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում: ՔԴՕ 66-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (խոսքը հանրահայտ, նախադատելի, նոտարական կարգով հաստատված և անվիճելի փաստե-

րի մասին է): Բացի դրանից, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը (ՔԴՕ 192 հոդ., մաս 4): Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզման ձևավորման հիմքերը, ապացույցների գնահատման կապակցությամբ իր դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները, զերծ է մնացել ենթադրությունների վրա հենվելուց կամ վերացական դատողություններից (ՔԴՕ 9 հոդ.):

ԳԼՈՒԽ II.

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§1. Վկաների ցուցմունքները

Վկաների ցուցմունքներն անձնական և բանավոր ապացույցների տեսակներ են:

Իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերը հաճախ տեղի են ունենում ոչ միայն այդ իրավահարաբերությունների անմիջական մասնակիցների, այլ նաև կողմնակի անձանց ներկայությամբ: Վերջիններս, որպես կանոն, ունակ են լինում ընկալված հանգամանքները վերարտադրել դատարանում՝ հանդես գալով վկայի կարգավիճակով:

Վկան ապացույցի աղբյուր է, նրա ցուցմունքը՝ բավականին տարածված ապացուցման միջոցներից մեկը: Վկաների ցուցմունքների կիրառումն արգելվում է միայն այն դեպքում, երբ օրենքի համաձայն, գործի կոնկրետ հանգամանքները կարող են հաստատվել միայն որոշակի ապացույցներով, և վկաների ցուցմունքներն անթույլատրելի են:

ՔԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «**Վկա կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ, որին կարող է հայտնի լինել տվյալ գործի լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություն**»: Վկայի լեզալ բնորոշման և ՔԴՕ մի շարք այլ դրույթների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու վկայի հետևյալ հատկանիշները:

1) *Վկա կարող է լինել բացառապես ֆիզիկական անձը*: իրավաբանական անձինք, նման կարգավիճակ չունեցող այլ կազմակերպությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքացիական գործով որպես վկա հանդես գալ չեն կարող (վկայի կար-

գավիճակ կարող է ունենալ նշված սուբյեկտների պաշտոնատար անձը կամ այլ աշխատակիցը):

2) *Որպես վկա կարող է հանդես գալ ցանկացած տարիքի ֆիզիկական անձը*: Ուշագրավ է, որ օրենքը վկայի համար որևէ տարիքային սահմանափակում չի նախատեսում, դեռ ավելին, մի շարք ընտանեկան գործերով ուղղակիորեն նախատեսում է նրանց լսելու դատարանի պարտականությունը: Նման իրավակարգավորումը, իհարկե, որոշակի օբյեկտիվ պատճառներ ունի: Իրադարձությունները կամ գործողությունները կարող է ընկալել և հետագայում դատարանին հաղորդել նաև անչափահասը, իսկ այն դեպքերում, երբ գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատող կամ հերքող այլ ապացույցներ չկան կամ անհրաժեշտ է ստուգել գործով ձեռք բերված այլ ապացույցների (այդ թվում՝ մյուս վկաների ցուցմունքների) արժանահավատությունը, անչափահաս վկաների ցուցմունքներն ապացուցման գործընթացում կարող են ունենալ էական նշանակություն: Դրա հետ մեկտեղ, նկատի ունենալով, որ անչափահասի հարցաքննությունը որոշ դեպքերում կարող է անբարենպաստ հետևանքներ ունենալ նրա հոգեկան վիճակի վրա, օրենսդիրը սահմանել է տասնվեց տարեկան չդարձած և անչափահաս անձանց հարցաքննության որոշակի առանձնահատկություններ (ՔԴՕ 71 հոդ., մաս 4-6): Նշվածի հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ, որ փոքրահասակներին որպես վկա կանչելու հարցը լուծելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ոչ միայն գործի հանգամանքները, այլ նաև երեխայի տարիքը և զարգացման աստիճանը, փաստերն ընկալելու և դրանք ճիշտ վերարտադրելու ունակությունը¹:

3) Գործով անձին որպես վկա հարցաքննելու և նրա հաղորդած տեղեկություններով դատական ակտը հիմնավորելու հնարավորությունը պայմանավորված է տվյալ

¹ Стѣи Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М.С. Шакарян. М.: «Кодекс», 2003, էջ 166:

անձի կողմից փաստերը ճիշտ ընկալելու և ճիշտ ցուցմունքներ տալու ունակությամբ: Որպես ապացույց կարող է դիտարկվել միայն այն տեղեկությունը, որը ստացվել է այնպիսի անձից, ով, ելնելով իր ֆիզիկական և հոգեկան վիճակից, *ունակ է զգայարաններով ընկալել և բանավոր կամ գրավոր ձևով վերարտադրել փաստերի վերաբերյալ տեղեկությունները*: ՀՀ 1964 թ. ԶԴՕ-ի 61-րդ հոդվածը սահմանում էր, որ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել այն անձինք, որոնք իրենց ֆիզիկական և հոգեկան արատների պատճառով ի վիճակի չեն ճիշտ ընկալել փաստերը և դրանց մասին տալ ճիշտ ցուցմունքներ: Գործող ԶԴՕ-ը նման նորմ չի նախատեսում: Դա նշանակում է, որ նման անձանց դատարան կանչելու և հարցաքննելու իրավական արգելք այլևս գոյություն չունի, և դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի փաստերն ընկալելու և դրանց մասին ցուցմունք տալու անձի ունակությունը: Նման իրավակարգավորումը պայմանավորված է այն իրողությամբ, որ անձի մոտ հոգեկան բնույթի առանձին շեղումները, ինչպես նաև առանձին ֆիզիկական արատների (լսողության, տեսողության) առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձը ընդհանրապես չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Այսպես, հոգեկան որոշ հիվանդություններ անձին չեն զրկում գործողությունների և իրադարձությունների նշանակությունը հասկանալու և դրանց մասին պատմելու ունակությունից, հոգեկան այլ հիվանդություններով տառապող անձինք էլ լուսավորման պահին ընդունակ են ճիշտ ընկալելու, հիշողության մեջ պահելու և դատարանին հաղորդելու փաստերը, լսողության թերություններ ունեցող անձը կարող է ցուցմունքներ տալ այնպիսի հանգամանքների կապակցությամբ, որոնք իրեն հայտնի են դարձել որոշակի փաստերին ականատես լինելու արդյունքում, տեսողության թերություններով տառապող անձը կարող է փաստերն ընկալել լսողությամբ և այլն:

Եթե դատարանի մոտ կասկած է առաջանում տես-

ղության, լսողության կամ հոգեկան որոշակի շեղումներ ունեցող անձի հաղորդած տեղեկությունների արժանահավատության հարցում, փաստերն ընկալելու և դրանց մասին ցուցմունք տալու անձի ունակությունը պարզելու նպատակով կարող է նշանակվել դատաբժշկական կամ հոգեբուժական փորձաքննություն:

4) *Որպես վկա դատարան կարող է կանչվել և հարցաքննվել այն անձը, ով ենթադրաբար տիրապետում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ որևէ տեղեկության:* Դատարանի գնահատմամբ ոչ վերաբերելի հանգամանքների հաստատման կամ ոչ վերաբերելի տեղեկությունների հաղորդման նպատակով անձը դատարան կանչվել և որպես վկա հարցաքննվել չի կարող: Պատահական չէ, որ ըստ ԶԴՕ 68-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վկա հրավիրելու մասին միջնորդություն ներկայացնելիս պետք է նշվեն ոչ միայն վկայի անունը և հասցեն, այլ նաև այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, (սույն պահանջը չկատարելը, ըստ նույն հոդվածի 3-րդ մասի, վկա կանչելու միջնորդությունը մերժելու հիմք է): Եթե դատարանը գտնի, որ տվյալ փաստը կամ դրա մասին ցուցմունքը գործի լուծման համար նշանակություն չունի, այսինքն՝ վերաբերելի չէ, ապա պետք է ներկայացված միջնորդությունը մերժի: Տվյալ կանոնը մասնավորեցնում է ԶԴՕ 58-րդ հոդվածի 2-րդ մասում ձևակերպված ապացույցների վերաբերելիության ընդհանուր կանոնը՝ ըստ որի դատարանը հետազոտում և գնահատում է միայն այն ապացույցները, որոնք կարող են հաստատել կամ ժխտել գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը:

Ընդ որում, ընդունված է սահմանազատել վկայի ցուցմունքների շրջանակներում ստացվող ընդհանուր և հատուկ բնույթի տեղեկությունները: Ընդհանուր են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են վկայի անձին, գործին մասնակցող անձանց հետ նրա փոխհարաբերություն-

ներին, ինչպես նաև իրազեկության աղբյուրին: Հատուկ են այն տեղեկությունները, որոնք ունեն ապացուցողական նշանակություն՝ վերաբերում են ապացուցման ենթակա փաստերին:

5) *Վկայի կարգավիճակում կարող է հանդես գալ բացառապես այն անձը, որն իր հինգ զգայարաններից մեկով կամ մի քանիսով անմիջականորեն ընկալել է որոնվող փաստերի մասին տեղեկությունները (ականատես վկա) կամ դրանք ստացել է այլ անձից (ոչ ականատես վկա):* Վկայի ցուցմունքն ունի ապացուցողական նշանակություն միայն այն դեպքում, երբ նա հստակորեն նշում է որոնվող փաստերի մասին իր իրազեկության աղբյուրը: Այդ կապակցությամբ ՔԴՕ 71-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանվում է, որ վկայի հաղորդած տեղեկություններն ապացույց չեն, եթե նա չի կարողանում հստակորեն նշել իր իրազեկության աղբյուրը: Տվյալ նորմը պարտավորեցնում է դատարանին յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզելու վկայի իրազեկության աղբյուրը, ինչը տալիս է հաղորդված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու, սկզբնական ապացույցները բացահայտելու հնարավորություն:

Վերը շարադրվածը թույլ է տալիս ձևակերպելու վկայի հետևյալ հասկացությունը. **«Վկան այն ֆիզիկական անձ է, որը կանչվում է դատարան գործի համար նշանակություն ունեցող փաստերի մասին իր կողմից անմիջականորեն ընկալված կամ այլ անձանց կողմից իրեն հաղորդված տեղեկությունները դատարանին հայտնելու համար»:**

Դատարանի կողմից որպես վկա կանչված յուրաքանչյուր անձ պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և հայտնել գործով իրեն հայտնի տեղեկությունները (ՔԴՕ 69 հոդ., մաս 4): Նա պարտավոր է ճիշտ ցուցմունքներ տալ, պատասխանել դատավորի, կողմերի և դատավարության մյուս մասնակիցների հարցերին: Ընդ որում, օրենքը սահմանում է, որ քաղաքացիական գործով վկայի

կողմից սուտ ցուցմունք տալը կամ ցուցմունք տալուց հրաժարվելը առաջացնում է ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն (ՔԴՕ 43 հոդ., մաս 6): Հետևում է, որ դատարանի կանչով դատարան ներկայանալը և ճիշտ ցուցմունքներ տալը վկայի պարտականությունն է: Նաև տվյալ հանգամանքով է վկան տարբերվում գործին մասնակցող անձանցից, որոնք ցուցմունք տալու պարտականություն չեն կրում: Ցուցմունք տալու պարտականությունը կրում է հանրային-իրավական բնույթ, քանի որ վկաների պետական և հասարակական պարտականություն է նպաստել արդարադատության իրականացմանը¹:

Դատական ծանուցագիր ստացած և դատական նիստին ներկայանալու հնարավորություն չունեցող վկան պարտավոր է մինչև դատական նիստն այդ մասին հայտնել առաջին ատյանի դատարանին՝ նշելով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառները: Եթե դատական ծանուցագիր ստացած վկան չի ներկայանում դատական նիստին և չի ներկայացնում իր չներկայանալու պատճառները կամ ներկայացնում է անհարգելի պատճառներ, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում վկային բերման ենթարկելու մասին՝ նրա վրա դնելով չներկայանալու հետևանքով առաջացած ծախսերը և նշանակելով դատական տուգանք: Բերման ենթարկելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն առաջին ատյանի դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման: Ընդ որում, դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (ՔԴՕ 69 հոդ., մաս 2-4):

Գործող քաղաքացիական դատավարական օրենսդրությունը որոշ դեպքերում անձանց ազատում է որպես վկա ցուցմունք տալու պարտականությունից՝ սահմանե-

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 377:

լով **վկայի իմունիտետ**: Վերջինս հիմնվում է Սահմանադրության 65-րդ հոդվածում ամրագրված այն դրույթի վրա, համաձայն որի ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Բացի դրանից, նույն դրույթը սահմանում է, որ օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատելու այլ հիմքեր:

Որպես վկա ցուցմունքներ տալուց ազատելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում ապահովել որոշակի հասարակական հարաբերությունների գաղտնիությունը, Սահմանադրությամբ ամրագրված և պաշտպանվող որոշակի իրավունքների (բացարձակ արժեքների) պահպանումը և անխոչընդոտ իրացումը:

Վկայի իմունիտետը գործող օրենսդրությամբ ամրագրվում է երկու ձևերով՝ բացարձակ և հարաբերական:

Այն ունի *բացարձակ* բնույթ, երբ օրենսդրությունը լրիվ և առանց որևիցե պայմանի բացառում է տվյալ անձի կողմից որպես վկա ցուցմունք տալու հնարավորությունը: Այսպես, ԹԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես վկա չեն կարող հարցաքննվել՝

1) ներկայացուցիչը՝ գործի այն փաստերի առնչությամբ, որոնք նրան հայտնի են դարձել վստահորդին իրավաբանական ծառայություններ մատուցելիս, եթե այլ բան նախատեսված չէ ներկայացուցչի և ներկայացվող անձի փոխադարձ համաձայնությամբ.

2) փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ, եթե այլ բան նախատեսված չէ փաստաբանի և վստահորդի փոխադարձ համաձայնությամբ.

3) Մարդու իրավունքների պաշտպանը՝ գործի այն փաստերի առնչությամբ, որոնք նրան հայտնի են դարձել իր պարտականությունները կատարելիս.

4) դատավորը, արբիտրը կամ հաշտարարը՝ իր կողմից կամ իր մասնակցությամբ քննված որևէ գործի վերաբերող քննարկումների առնչությամբ.

5) ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ գործի այն փաստերի մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ:

Թվարկված դեպքերում նշված անձանց ցուցմունքները, ըստ էության, չեն թույլատրվում: Դրանք վճռի հիմքում դրվել չեն կարող:

Վկայի իմունիտետը *հարաբերական* է, եթե, ըստ գործող օրենսդրության, իմունիտետով օժտված անձն ինքն է որոշում՝ օգտվել ցուցմունք տալուց կամ ցուցմունք տալու ընթացքում որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվելու իր իրավունքից, թե ոչ: ուշագրավ է, որ օրենքը, որպես կանոն, ոչ թե բացառում է նրանց որպես վկա հարցաքննելու հնարավորությունը, այլ սահմանում է ցուցմունք տալիս որոշակի հարցերին չպատասխանելու նրանց իրավունքը:

ՔԴՕ 43-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրը կոնկրետացրել է այն անձանց շրջանակը, որոնք օժտված են որպես վկա հարցաքննվելու հարաբերական իմունիտետով:

Ըստ մատնանշված նորմի՝ հարաբերական իմունիտետի ուժով դատարանում որպես վկա ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունք ունեն անձինք՝ իրենց, իրենց ամուսնու կամ մերձավոր ազգականներ՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ամուսնու ծնողի կամ զավակի ամուսնու վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ (կետ 1):

Վկայի հարաբերական իմունիտետով են օժտված նաև լրագրողները՝ գործի փաստերին վերաբերող այն տեղեկությունների առնչությամբ, որոնցով կարող է բացահայտվել այդ տեղեկությունների աղբյուրը (կետ 2): Չանգ-

վածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար նախատեսված տվյալ արտոնությունն ուղղակիորեն փոխկապակցված է «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի¹ 5-րդ հոդվածում ամրագրված այն դրույթի հետ, ըստ որի լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի²:

Վկայի իմունիտետ է սահմանված նաև մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար: Նրանց հարցաքննությունը մարդու իրավունքների պաշտպանի մոտ գտնվող բողոքի կապակցությամբ մարդու իրավունքների պաշտպանի որոշման, ինչպես նաև իրենց մոտ գտնվող բողոքի կամ բողոքին առնչվող փաստաթղթի էության վերաբերյալ հնարավոր է միայն մարդու իրավունքների պաշտպանի գրավոր համաձայնությամբ (ՔԴՕ 43 հոդ., մաս 4)³:

Թեև այդ մասին ուղղակիորեն նշված չէ ՔԴՕ 43-րդ հոդվածում, վկայի իմունիտետով օժտված են նաև ՀՀ-ում այլ երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները և դիվանագիտական անձնակազմի ան-

1 Ընդունվել է 13.12.2003 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004/006(305), 29.01.2004:

2 Հարկ է նկատել, որ ըստ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Հետևում է, որ տվյալ բացառությունը քաղաքացիական գործերով ՉԼՄ-ի ներկայացուցիչների վրա տարածվել չի կարող:

3 Նման կարգավորման հիմքում դրված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձի կամ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի համար սահմանված երաշխիքը, որն անմիջականորեն փոխկապակցված է պաշտպանի՝ նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների հետ:

դամները: Ցուցմունք տալու պարտականությունից նրանք ազատված են Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թ. կոնվենցիայի 31-րդ հոդվածով:

Ուշագրավ է, որ թե՛ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների, թե՛ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և դիվանագիտական անձնակազմի անդամների իմունիտետը բացարձակ չէ: Նշված անձանց ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելը չի նշանակում, որ նշված անձանց ցուցմունքները բոլոր դեպքերում թույլատրելի չեն և վճռի հիմքում դրվել չեն կարող: Ցուցմունք տալու ցանկության (համաձայնության) դեպքում որևէ հանգամանք չի խոչընդոտում նրանց հարցաքննելու համար:

Դատավարական օրենսդրությունը սահմանում է **անձին որպես վկա կանչելու դատավարական կարգը**:

Նախ՝ ԶԴՕ 167-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ դատական նիստին վկաներ կանչելու հարցը դատարանը, որպես կանոն, լուծում է գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում հրավիրված նախնական դատական նիստում (մաս 1, կետ 11):

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանը վկա կանչում է գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Ըստ գործող օրենսդրության դատարանը կարող է իր նախաձեռնությամբ վկա կանչել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս պետք է նշվի այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, ինչպես նաև վկայի անունը և հասցեն (ԶԴՕ 44 հոդ., մաս 2):

Անձին որպես վկա կանչելու վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում: Ընդ որում, մինչև վկային դատարան կանչելու հարցը լուծելը դատարանը հնարավորության դեպքում պետք է պարզի այդ անձին տվյալ գործի որևէ փաստի վերաբերյալ որպես վկա հարցաքննելու՝ ԶԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

արգելքների բացակայությունը:

Դատավարական օրենսդրությունը կարգավորում է նաև **վկաների հարցաքննության (նրանց ցուցմունքների հետազոտման) դատավարական առանձնահատկությունները**:

ՔԴՕ 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր վկա հարցաքննվում է առանձին՝ իրենից հետո հարցաքննության ենթակա մյուս վկաների բացակայությամբ:

Վկաների հարցաքննության հերթականությունը սահմանում է նախագահողը: Ընդ որում, դատական նիստի նախապատրաստական մասում դատարան կանչված վկաների ներկայությունը պարզելուց հետո դատական նիստը նախագահող դատավորը վկաներին, մինչև նրանց հարցաքննությունը, հեռացնում է նիստերի դահլիճից՝ նրանց բացատրելով, որ պետք է սպասեն վկաներին հատկացված սենյակում, մինչև որ կիրավիրվեն հարցաքննության: Ըստ այդմ էլ, վկաները դահլիճ են հրավիրվում և հարցաքննվում են առանձին-առանձին: Ամբողջ նիստի ընթացքում ևս նախագահողը կարող է միջոցներ ձեռնարկել, որպեսզի չհարցաքննված վկաները շփում չունենան հարցաքննված վկաների հետ, որովհետև այդպիսի շփումը կարող է կողմնակի ազդեցությունների պատճառով դատարանին ոչ ճիշտ տեղեկություններ հաղորդելու հիմք դառնալ: Այդ իսկ պատճառով, գործնականում, նախագահող դատավորի կարգադրությամբ հարցաքննված վկան մնում է նիստերի դահլիճում մինչև տվյալ նիստի ավարտը: Դա արվում է ոչ միայն մյուս վկաների հետ հարցաքննվածի շփումը բացառելու, այլ նաև անհրաժեշտության դեպքում վկային նորից հարցաքննելու, այլ անձանց հետ առերեսում կատարելու և նրա ցուցմունքներում եղած հակասությունները պարզելու նպատակով: Այդուհանդերձ օրենքը սահմանում է, որ հարցաքննված վկան իրավունք ունի հեռանալ դատարանից, եթե առաջին ատյանի դատարանը նրան չի պարտավորեցրել չիե-

ռանալ (ՔԴՕ 71 հոդ., մաս 15):

Ապացույցների հետազոտման անմիջականության և գործերի քննության բանավորության սկզբունքներից ելնելով՝ վկան դատարանին ցուցմունքներ է տալիս գործն ըստ էության քննելու նպատակով հրավիրված դատական նիստում, անձամբ և բանավոր ձևով: ՔԴՕ 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վկայի հարցաքննությունն օրենքով սահմանված կարգով կարող է իրականացվել նաև տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

Անմիջականության սկզբունքից շեղումներ կարող են թույլ տրվել միայն այն դեպքերում, երբ վկայի ցուցմունքները ստացվել են դատական հանձնարարության կամ ապացույցների ապահովման կարգով, որի պայմաններում, դատարանը գործն ըստ էության քննելու նպատակով հրավիրված դատական նիստում ոչ թե անմիջականորեն լսում է վկայի ցուցմունքները, այլ հետազոտում է ցուցմունքների արձանագրությունները: Դատարանը պարտավոր է հրապարակային դատաքննության պայմաններում հրապարակել այդ արձանագրությունները:

Վկայի ցուցմունքների հետազոտման անմիջականությունը բացառում է ներկայացուցչի միջոցով ցուցմունք տալու հնարավորությունը. դատարանի կողմից որպես վկա կանչված յուրաքանչյուր անձ պարտավոր է անձամբ ներկայանալ դատարանի կանչով և հայտնել գործով իրեն հայտնի տեղեկությունները:

Ձանի որ վկայի ցուցմունքը բանավոր ապացույցի տեսակ է, վկաների ցուցմունքները դատարանում տրվում են բանավոր: Բանավոր ձևն ապահովում է վկաների հաղորդած տեղեկությունների անմիջական ընկալումը դատարանի կողմից: Այն հնարավորություն է տալիս հարցեր տալու միջոցով վկաներից ստանալ ավելի լրիվ և բազմակողմանի տեղեկություններ¹:

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 378:

Նախկին ՔԴՕ-ը սահմանում էր, որ վկան դատարանի առաջարկությամբ կարող է ցուցմունքները շարադրել գրավոր (63 հոդ., մաս 2): Գործնականում վկայից ցուցմունքը վերցվում էր նման ձևով այն դեպքերում, երբ վերջինս իր ֆիզիկական արատների պատճառով ի վիճակի չէ բանավոր ցուցմունք տալու կամ ուներ բանավոր խոսքի շարադրման հետ կապված որոշակի դժվարություններ: Ներկայումս գործող օրենսդրությունը նման կարգավորում չի նախատեսում, ինչը, կարծում ենք, լուրջ բացթողում պետք է համարել:

Նիստերի դահլիճ հրավիրված վկայի հարցաքննությունը սկսելուց առաջ նախագահողը հարցերի միջոցով պարզում է վկայի ինքնությունը, տարիքը, բնակության վայրը, զբաղմունքը և գործին մասնակցող անձանց հետ ունեցած հարաբերությունների բնույթը (ՔԴՕ 71 հոդ., մաս 7): Տվյալ տեղեկատվությունը դատարանին հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն հետազոտել վկայի ցուցմունքները և դրանց արժանահավատությունը ստուգելիս ու գնահատելիս նկատի ունենալ գործի ելքում տվյալ վկայի հնարավոր շահագրգռվածության, ինչպես նաև փաստերն ընկալելու և հաղորդելու ունակության աստիճանը:

Այնուհետև նախագահողը պարզում է այդ անձին տվյալ գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստի վերաբերյալ որպես վկա հարցաքննելու՝ օրենքով սահմանված արգելքների բացակայությունը: Բացի դրանից, դատարանը պետք է վկային պարզաբանի առանձին հարցերի չպատասխանելու՝ ՔԴՕ 43-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իր իրավունքը (ՔԴՕ 71 հոդ., մաս 1):

Հաջորդիվ դատարանը նախագզուշացնում է վկային՝ սուտ ցուցմունք տալու համար Քր. օր. 338-րդ և ցուցմունք տալուց հրաժարվելու համար Քր. օր. 339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչի կապակցությամբ վկայից ստորագրություն է

վերցվում դատարանին ճշմարտությունը հաղորդելու և նշված պատասխանատվության մասին իրեն բացատրված լինելու առթիվ, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը: Տասնվեց տարեկան չդարձած վկային դատարանը միայն բացատրում է ցուցմունք տալու և միայն ճշմարտությունը հայտնելու կարևորությունը՝ առանց նախազգուշացնելու սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին (ՔԴՕ 71 հոդ., մաս 3-4):

Մինչև հարցաքննությունն սկսելն դատարանը պարզում է վկայի իրազեկվածությունն այն փաստերի վերաբերյալ, որոնց շուրջ նա պետք է հարցաքննվի (ՔԴՕ 71 հոդ., մաս 8):

ՔԴՕ-ը չի սահմանում վկայի հարցաքննության եղանակը, ինչը էական բացթողում պետք է համարել: Դատավարագիտության մեջ քննարկվում են վկայի հարցաքննության երկու եղանակներ: Առաջինի եությունը հանգում է նրան, որ նախազահողն առաջարկում է վկային ազատ շարա դրանքի ձևով դատարանին հաղորդել այն ամենը, ինչ հայտնի է իրեն գործի վերաբերյալ, որից հետո դատարանի և գործին մասնակցող անձանց կողմից նրան առաջադրվում են հարցեր: Վկայի հարցաքննության մյուս եղանակի եությունը նրանում է, որ վկան ցուցմունք է տալիս բացառապես գործին մասնակցող անձանց և դատարանի հարցերին պատասխանելու միջոցով: Տվյալ եղանակը ներկայումս ուղղակիորեն նախատեսված է ՎԴՕ 35-րդ հոդվածի 8-րդ մասով:

ՔԴՕ-ում վկայի հարցաքննության եղանակների իրավակարգավորման բացակայության պայմաններում վկայի հարցաքննության եղանակի ընտրության հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ արդարացված չէ և չի բխում իրավական որոշակիության, կանխատեսելիության սկզբունքներից: Դատավարությանը նախապատրաստվող կողմը, մեր կարծի-

քով, պետք է հստակ պատկերացում ունենա այն մասին, թե ինչ կարգով է հարցաքննվելու վկան, որպեսզի կարողանա պատշաճորեն նախապատրաստվել տվյալ հարցաքննությանը: Դրա հետ մեկտեղ, հոգեբանների կողմից կատարված բազմաթիվ հետազոտություններով հաստատվել է, որ չնայած ազատ խոսքը շարա դրանքի լրիվության և հստակության տեսանկյունից գիջում է հարց ու պատասխանի ձևով ցուցմունքին, այդուհանդերձ հնարավորություն է տալիս ստանալ ավելի ճշգրիտ տեղեկություններ, զերծ մնալ հարցաքննողի առաջադրած հարցերի ներշնչող ազդեցության հետևանքով թույլ տրվող սխալներից և իրականության աղավաղումներից¹: Հարցերով չընդհատվող վկան, ըստ հոգեբանների, ընդունակ է իր համար առավել հարմար հաջորդականությամբ ավելի լրիվ և օբյեկտիվորեն հաղորդել այն ամենը, ինչն իրեն հայտնի է որոնվող փաստերի մասին: Դրանից հետո և՛ դատարանը, և՛ գործին մասնակցող անձինք կարող են վկայի ցուցմունքները ճշգրտելու, մանրամասնելու, հաստատելու կամ դրանց արժանահավատությունը կասկածի տակ դնելու նպատակով տալ հարցեր: Ասվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ դատարանը պետք է հնարավորություն ունենա համատեղել վկայի հարցաքննության երկու եղանակները՝ վերջիններիս հատուկ թերություններից խուսափելու համար միաժամանակ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ և թույլատրելի միջոցները: Ուստի նպատակահարմար ենք համարում ԶԴՕ-ի՝ վկայի ցուցմունքների հետազոտմանը նվիրված դրույթներում ուղղակիորեն նախատեսել վկայի հարցաքննության այն եղանակը, որի պայմաններում նախագահողն առաջարկում է վկային ազատ շարա դրանքի ձևով դատարանին հաղորդել այն ամենը, ինչ հայտնի է իրեն գործի փաստերի վերաբերյալ, որից հետո դատարանի և գործին մասնակցող անձանց կողմից նրան առաջադրվում են հարցեր:

¹ См. Теория доказательств в советском уголовном процессе. Отв. ред. Н.В. Жогин. 2-е изд., испр. и доп. М.: «Юридическая литература», 1973, т. 2 578:

Դատավարական օրենսդրությունը սահմանում է գործին մասնակցող անձանց և դատարանի կողմից հարցաքննվող վկային հարցեր տալու հաջորդականությունը և նրան տրվող հարցերի բնույթը:

Դատարանը վկայի հարցաքննության ժամանակ հարցեր է տալիս գործին մասնակցող անձանց կողմից հարցեր տալուց հետո, իսկ վկայի ցուցմունքի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար կարող է նրան հարցեր տալ ցանկացած պահի (ՔԴՕ 71 հոդ., մաս 9): Ընդ որում, ըստ նույն հոդվածի 10-րդ մասի՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ առաջին ատյանի դատարան կանչված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձը, այնուհետև նրա կողմում հանդես եկող այլ անձինք, իսկ հետո՝ հակառակ կողմը:

Վկային առաջադրվող հարցերի բնույթին ներկայացվող առաջին պահանջը բխում է ապացույցների վերաբերելիության կանոններից, որոնցից բխում է, որ վկային կարող են տրվել միայն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են վկա կանչելու վերաբերյալ միջնորդության մեջ նշված փաստին կամ նրա ցուցմունքների արժանահավատության հետ կապված հանգամանքներին, այդ թվում՝ մյուս կողմի հետ նրա հարաբերություններին, իսկ նիստը նախագահող դատավորն իրավունք ունի իր նախաձեռնությամբ կամ կողմի առարկությամբ հանել այս շրջանակից դուրս տրված հարցերը (ՔԴՕ 71 հոդ., մաս 11):

Վկային առաջադրվող հարցերի բնույթին ներկայացվող հաջորդ պահանջը միտված է հաղորդվող տեղեկությունների արժանահավատությունն ապահովելուն: Մասնավորապես ՔԴՕ 71-րդ հոդվածի 12-րդ մասն արգելում է վկայի հարցաքննության ընթացքում նրան տալ հուշող կամ պատասխանն այլ կերպ ուղղորդող հարցեր: Ընդ որում, նշված պահանջի հասցեատերն են ոչ միայն գործին մասնակցող անձինք, այլ նաև նիստը նախագահողը, որն իրավասու է ցանկացած պահի վկային հարցեր տալ

բացառապես նրա հաղորդած տեղեկության վերաբերյալ պարզաբանում ստանալու, այն հստակեցնելու համար:

Ձևնարկվող կանոնը պայմանավորված է նրանով, որ վկային առաջադրված հարցերը չպետք է հուշեն որոշակի պատասխան՝ դրանով իսկ հանդիսանալով ներշնչանքի և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հաստատման պատճառ: Ուղղորդող հարցին պատասխանելիս վկան կարող է ակամա համաձայնվել հարցաքննողի հետ՝ ենթադրելով, որ նա ավելի լավ է տիրապետում որոնվող փաստերի մասին տեղեկություններին: Արդյունքում վկան փաստը կհաստատի ոչ թե նախկինում դրա ականատեսը լինելու, այլ հարցի ոչ պատշաճ ձևակերպման արդյունքում¹: Բացի դրանից, պետք չէ մոռանալ, որ կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված վկան կարող է փորձել ցուցմունքներ տալ այն կողմի օգտին, որի միջնորդությամբ հրավիրվել է, իսկ վերջինս էլ, անկասկած, կփորձի հարցերը ձևակերպել այնպես, որպեսզի դրանք հուշեն ակնկալվող պատասխանը: Այդ իսկ պատճառով ՔԴՕ 71-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանվում է, որ դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ հանել հուշող կամ ուղղորդող հարցը:

Վկան ցուցմունք տալու ընթացքում դատարանի թույլտվությամբ կարող է օգտվել գրավոր նշումներից, եթե նրա ցուցմունքները կապված են որևէ թվային կամ այլ տվյալների հետ, որոնք դժվար է մտապահել: Գրավոր նշումներն անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել դատարանին ու դատավարության մասնակիցներին և կցվել գործին (ՔԴՕ 71 հոդ., մաս 13):

Փաստերը և դրանց մանրամասները վերհիշելու, ցուցմունքները ճշգրտելու, իրեղեն և գրավոր ապացույցների իսկությունը ստուգելու և այլ նպատակներով վկայի հարցաքննության ընթացքում նրան կարող են ներկայացվել

¹ Стéу Теория доказательств в советском уголовном процессе. Отв. ред. Н.В. Жогин. 2-е изд., испр. и доп. М.: «Юрид. лит.», 1973, էջ 586:

գործով ձեռք բերված գրավոր և իրեղեն ապացույցները՝ դրանց կապակցությամբ ևս առաջադրելով որոշակի հարցեր (ՔԴՕ 77 հոդ., մաս 3, 80 հոդ., մաս 1):

ՔԴՕ-ը կարգավորում է նաև անչափահաս վկաների հարցաքննության առանձնահատկությունները:

Նախ ՔԴՕ 71-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ տասնվեց տարեկան չդարձած վկայի հարցաքննության ընթացքում դատարանը հետևում է, որ հարցաքննության մեթոդը կամ հարցերը չչփոթեցնեն վկային կամ չենթարկեն նրան անհարկի հոգեբանական ճնշման, և այդ նպատակով կարող է հանել ցանկացած հարց, ընդմիջել կամ դադարեցնել վկայի հարցաքննությունը:

Երկրորդ՝ ՔԴՕ 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անչափահաս վկայի հարցաքննությանը դատարանը ներգրավում է անչափահասի օրինական ներկայացուցչին, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների հարցաքննությանը՝ նաև մանկական հոգեբանի կամ մանկավարժի: Ընդ որում, տասնչորս տարեկան չդարձած վկայի հարցաքննության ժամանակ գործին մասնակցող անձինք հեռացվում են դատական նիստերի դահլիճից, եթե ունեն ներկայացուցիչ և եթե նրանց մասնակցությունը կարող է ազդել վկայի ցուցմունքների վրա (նիստին մասնակցում է հեռացված գործին մասնակցող անձի ներկայացուցիչը):

Անհրաժեշտության դեպքում հարցաքննված վկան կարող է կրկին հրավիրվել դատարան՝ լրացուցիչ ցուցմունքներ տալու, այդ թվում՝ արդեն իսկ հարցաքննված վկաների ցուցմունքներում առկա հակասությունները պարզելու նպատակով: Այդ կապակցությամբ ՔԴՕ 71-րդ հոդվածի 14-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերսկսելու վկայի հարցաքննությունը:

Վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանն անմիջականորեն է իրականացնում ապացույցների

հետազոտման գործընթացը (դրանց ընկալումը), եթե անգամ ապացույցների ուսումնասիրությունն իրականացվում է դրանց գտնվելու վայրում: Դատարանի սպասարկման տարածքից դուրս գտնվող այլ մարզի տարածքում գտնվող գրավոր և իրեղեն ապացույցների հետազոտությունն իրականացնելու համար գործնականում լայնորեն կիրառվում է տեղագնություն (ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելու) ինստիտուտը, որին կանդրադառնանք հետագա շարա դրանքում: Միևնույն ժամանակ, այն դեպքերի համար, երբ անհրաժեշտություն է առաջանում հարցաքննել Հայաստանի Հանրապետության մեկ այլ մարզի տարածքում գտնվող վկային, ՔԴՕ-ով նախատեսված է դատական հանձնարարության ինստիտուտի կիրառման հնարավորությունը:

Դատական հանձնարարությունը դատարանի կողմից ապացույցների անմիջական հետազոտման ընդհանուր կանոնից արված բացառություն է, ուստի օրենսդիրը խիստ որոշակի հիմքերով հստակորեն սահմանափակել է դրա կիրառելիությունը: Մասնավորապես ՔԴՕ 70-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության մեկ այլ մարզի տարածքում բնակվող վկային հարցաքննելու անհրաժեշտության դեպքում, գործը քննող դատարանն իրավունք ունի հանձնարարել համապատասխան մարզի տարածքը սպասարկող դատարանին՝ կատարելու տվյալ անձի հարցաքննություն: Ընդ որում, ըստ նշված հոդվածի 1-ին մասի՝ վկան կարող է իր բնակության վայրի առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննվել դատական հանձնարարության կարգով բացառապես հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1. վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով.

2. վկան հիվանդության կամ այլ պատճառով ի վիճակի չէ լքել իր գտնվելու վայրը:

Նշված հիմքերից որևէ մեկի բացակայության պարա-

գայում, ինչպես նաև այն դեպքերում, երբ նշված հիմքերի առկայության պարագայում վկան կարող է հարցաքննվել տեսաձայնային հաղորդակցման միջոցների կիրառմամբ, վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով թույլատրելի չէ:

Որպես վկա ներգրավված անձին դատական հանձնարարության կարգով հարցաքննելու հանձնարարությունը կարող է տրվել թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու և թե՛ դատաքննության ընթացքում¹: Ընդ որում, որպես վկա ներգրավված անձի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով կարող է իրականացվել և՛ դատարանի, և՛ գործին մասնակցող անձի, և՛ վկայի նախաձեռնությամբ:

Դատական հանձնարարությունը ձևակերպվում է համապատասխան որոշմամբ, որում համառոտ շարադրվում են քննվող գործի էությունը, պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը, հարցաքննության ենթակա վկայի տվյալները (ՔԴՕ 70 հոդ., մաս 2):

Վկայից ցուցմունք վերցնելու վերաբերյալ դատական հանձնարարության մասին որոշումը պարտադիր է հանձնարարությունը ստացած առաջին ատյանի դատարանի համար և պետք է կատարվի այն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում(ՔԴՕ 70 հոդ., մաս 3):

Դատական հանձնարարությունը կատարվում է **դատական նիստում** վկայի հարցաքննության կանոնների և դատավարության բոլոր սկզբունքների պահպանմամբ: Նշված կանոնից որևէ բացառություն օրենքը չի սահմանում:

Դատական հանձնարարության կատարման ընթացքում կազմված դատական նիստի արձանագրությունը

¹ Այդուհանդերձ, հաշվի առնելով ՔԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում ձևակերպված ընդհանուր պահանջը՝ դատարանը պետք է ձգտի դատական հանձնարարություններ տալու հարցը լուծել գործը դատաքննության նախապատրաստելիս՝ նախնական դատական նիստում, եթե, իհարկե, գործը դատաքննության է նախապատրաստում նախնական դատական նիստով:

պետք է արտացոլի բոլոր այն էական հանգամանքները, որոնք հանձնարարվել է պարզել դատարանին, և վկայի հարցաքննության ամբողջ ընթացքը:

Դատական հանձնարարությունը կատարող դատարանը դատական հանձնարարության կատարման կամ դրա անհնարինության մասին կայացնում է որոշում, որը դատական նիստի արձանագրության հետ միասին անհապաղ ուղարկվում է գործը քննող (հանձնարարությունն տված) առաջին ատյանի դատարանին (ՔԴՕ 70 հոդ., մաս 5):

Առերես հարցաքննություն: ՔԴՕ 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նախօրոք հարցաքննված երկու անձանց ցուցմունքները հակասում են միմյանց, ապա գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ նրանք կարող են հարցաքննվել առերես: Ընդ որում, խոսքը ոչ միայն նախօրոք հարցաքննված վկաների ցուցմունքներում հակասությունների առկայության մասին է, այլ նաև այն դեպքերի, երբ վկայի ցուցմունքը հակասում է գործին մասնակցող անձի տված ցուցմունքին:

Առերես հարցաքննությունը ենթադրում է նախօրոք հարցաքննված երկու կամ ավելի անձանց միաժամանակյա հարցաքննություն:

Առերես հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար սահմանված կանոններով՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

- առերես հարցաքննության սկզբում դատարանը ճշտում է, թե արդյոք անձինք, որոնց միջև կատարվում է առերեսում, ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ,

- առերես հարցաքննության կանչված անձանց առաջարկվում է հերթով ցուցմունքներ տալ այն փաստերի վերաբերյալ, որոնք պարզելու համար կատարվում է առերեսումը,

- սկզբում հարցեր է տալիս առերես հարցաքննութ-

յուն անցկացնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձը, որից հետո առերես հարցաքննվող անձանց հարցեր են տալիս գործին մասնակցող այլ անձինք և դատարանը.

- առերես հարցաքննությունից հետո դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ հրապարակում է առերես հարցաքննության կանչված անձանց կողմից նախորդ հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքները (ՔԴՕ 73 հոդ.).

- առերես հարցաքննություն չի կարող իրականացվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ (ՔԴՕ 145 հոդ., մաս 1):

Վկայի ցուցմունքների **գնահատումը** դրանց տրամաբանական վերլուծությունն է, որի նպատակն է գործի իրական փաստական հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկությունների վերհանումը: Գնահատելով վկայի ցուցմունքները՝ դատարանը վերլուծում է վկայի անձնական հատկանիշները, նրա փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, վկայի կողմից տեղեկությունների ընկալման, պահպանման և փոխանցման ողջ գործընթացը:

Վկայի ցուցմունքների գնահատումն իրականացվում է առաջին հերթին դրանց բովանդակության լրիվության, չհակասելիության վերլուծության ճանապարհով: Այնուհետև վկայի ցուցմունքները համադրվում են գործով հավաքված այլ ապացույցների հետ, այդ թվում՝ այլ անձանց ցուցմունքների հետ:

Գնահատման ենթարկելով գործի միևնույն հանգամանքների վերաբերյալ վկաների հակասական ցուցմունքները՝ դատարանը պետք է վերացնի առկա հակասությունները՝ այլ ապացույցների, ինչպես նաև հակասությունների տրամաբանական վերլուծության հիման վրա՝ դատական ակտում պարտադիր պատճառաբանելով, թե ինչու են այս կամ այն ցուցմունքները դիտվել որպես ոչ արժանահավատ և իրականությանը չհամապատասխանող:

§2. Գործին մասնակցող անձանց ցուցմունքները

Գործին մասնակցող անձանց ցուցմունքները ևս անձնական և բանավոր ապացույցների տեսակներ են:

Մինչև 2007 թվականին նախկին ՔԴՕ-ում փոփոխություններ կատարելն ապացուցման միջոցների մեջ առաջնահերթ նշանակություն ունեին կողմերի և երրորդ անձանց բացատրությունները:

Լինելով վիճելի իրավահարաբերության սուբյեկտներ և մոտ գտնվելով գործի հանգամանքներին՝ կողմերը կարող են դրանց մասին հաղորդել առավել լրիվ տվյալներ, դատարանին ցույց տալ իրենց բացատրությունները հաստատող կամ ժխտող մյուս ապացույցները: Միևնույն ժամանակ, կողմերի բացատրությունների և դատողությունների մեջ ապացուցողական նշանակություն ունեին միայն փաստերի առկայության կամ բացակայության մասին նրանց հայտնած տեղեկությունները և այս կամ այն հանգամանքի կամ իրավահարաբերության գոյությունն ընդունելու մասին հայտարարությունները:

Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով¹ կատարված բազմաթիվ փոփոխություններից մեկն այն էր, որ կողմերի բացատրությունները, որոնք շարադրվում էին հայցադիմումներում, հայցադիմումների պատասխաններում, դատաքննության ընթացքում բանավոր և գրավոր ձևերով, գրկվեցին ապացուցողական նշանակությունից: օրենսդիրը, ըստ էության, սահմանեց, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին կողմի հաղորդած տե-

¹ ՏԵՍ ՀՀՊՏ 66(590), 26.12.2007:

դեկլոթյուններն ունեն ապացուցողական նշանակություն, եթե տրվել են ցուցմունքի ձևով՝ ԶԴՕ-ով սահմանված կարգով:

Հայեցակարգային բնույթի տվյալ փոփոխության հիմքում, որը պահպանված է նաև գործող ԶԴՕ-ում, առաջին հերթին դրվել է այն գաղափարը, որ վիճելի իրավահարաբերության փաստական հիմքի կապակցությամբ կողմերի հաղորդած (վկայակոչած) տեղեկությունները, որոնք դրվում են նրանց պահանջների և առարկությունների հիմքում և մտնում են ապացուցման առարկայի մեջ, ոչ թե ապացուցողական բնույթ ունեն, այլ ընդհակառակը՝ ենթակա են ապացուցման: Եթե հայցվորը, օրինակ, պնդում է, որ իր և պատասխանողի միջև կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, որը պատասխանողը (վաճառողը) կատարել է ոչ պատշաճորեն, նման պնդումը (բացատրությունը) ոչ թե ապացույց է, այլ ապացուցում պահանջող ակտ, քանի որ դատավարական կանոնների համաձայն գործին մասնակցող անձը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, այն հանգամանքները, որոնք ընկած են նրա պահանջների և առարկությունների հիմքում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճելի նյութական իրավահարաբերության անմիջական մասնակիցները տիրապետում են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին առավել լիարժեք տեղեկությունների և կարող են դրանց արժանահավատությունն ապահովող դատավարական պահանջների պահպանմամբ դրանք հաղորդել գործը քննող դատարանին՝ օրենսդիրը սահմանել է, որ գործին մասնակցող անձն իրավունք ունի ցուցմունքներ տալու գործով ապացուցման ենթակա փաստերի մասին (ԶԴՕ 72 հոդ., մաս 1):

Օրենսդրական տվյալ դրույթի բովանդակությունից բխում է, որ ցուցմունք տալը գործին մասնակցող անձի իրավունքն է, և, եթե նա ցանկանում է օգտվել տվյալ

իրավունքից, պետք է այդ մասին միջնորդությամբ դիմի գործը քննող դատարանին, ընդ որում՝ այն փաստերի մատնանշմամբ, որոնց կապակցությամբ ցուցմունքը պետք է տրվի: Այլ կերպ ասած՝ գործին մասնակցող անձը, որպես կանոն, ցուցմունք է տալիս իր նախաձեռնությամբ:

ՔԴՕ 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրավունք ունի միջնորդելու, որ գործին մասնակցող մյուս անձը ցուցմունք տա գործով ապացուցման ենթակա փաստերի մասին: Դատարանը, բավարարելով միջնորդությունը, կարող է առաջարկել, որ գործին մասնակցող այլ անձը ցուցմունք տա գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստերի վերաբերյալ՝ վկայի ցուցմունքի համար սույն օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, որպես դատարանի նման առաջարկությունը չկատարելու դատավարական հետևանք, ՔԴՕ 72-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ եթե գործին մասնակցող անձը հրաժարվում (խուսափում) է ցուցմունք տալուց կամ գործին մասնակցող անձի հարցին պատասխանելուց, ապա դատարանը գործին մասնակցող այլ անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել գործին մասնակցող անձի հրաժարվելը կամ խուսափելը ցուցմունք տալուց կամ պատասխանելուց, իսկ գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա այն փաստերը, որոնց վերաբերյալ գործին մասնակցող անձը հրաժարվում (խուսափում) է ցուցմունք կամ պատասխան տալուց, համարել ապացուցված:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա դատարանի առաջարկությամբ ցուցմունք տալուց կամ որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվելու կամ խուսափելու բացասական հետևանքները կարող են կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ դատարանն

անհիմն է որակում հրաժարվելը կամ խուսափելը:

Ցուցմունք տալուց կամ ցուցմունք տալու ընթացքում որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվող կամ խուսափող գործին մասնակցող անձի վարքագիծը գնահատելու համար վճռորոշ նշանակություն ունի Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված դրույթն առ այն, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետազայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Նշված նորմի իմաստով ապացուցման պարտականություն կրող հակառակ կողմի միջնորդությամբ ցուցմունք տալու առաջարկություն ստացած կողմը պարտավոր չէ դատարանին հաղորդելու այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են հաստատել հակառակ կողմի պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը՝ այդպիսով օգտագործվելով իր դեմ: Նման դեպքերում ցուցմունք տալուց հրաժարվելը (խուսափելը) անհիմն ճանաչվել չի կարող:

ԶԴՕ 72-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բացասական հետևանքները կարող են կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ հիմնավորվի, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, որոնց վերաբերյալ գործին մասնակցող անձը պետք է հարցաքննվեր կամ որոնց վերաբերյալ հարցերին նա հրաժարվել է պատասխանել, ողջամտորեն չէին կարող օգտագործվել նրա դեմ (օրինակ՝ աշխատողի կողմից այլ անձի պատճառված վնասը հատուցելու մասին պահանջով ընդդեմ գործատուի ներկայացված հայցի քննության ընթացքում որպես երրորդ անձ ներգրավված աշխատողը հրաժարվում է ցուցմունք տալ գործատուի կողմից աշխատանքի անվտանգության վերաբերյալ պահանջներն ապահովելու վերաբերյալ):

Հարկ է նկատի ունենալ, որ թեև գործին մասնակցող

անձանց համար, ցուցմունք տալն իրավունք է, որից նրանք կարող են օգտվել կամ չօգտվել, ցուցմունք տալու իրենց իրավունքից օգտվելու պարագայում, գործին մասնակցող անձինք պարտավոր են տալ ճիշտ ցուցմունք, քանի որ սուտ ցուցմունք տալու համար նրանք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (Քր. օր. 338 հոդ.):

Ցուցմունք տալու ցանկություն (համաձայնություն) հայտնած գործին մասնակցող անձի հարցաքննությունը սկսելուց առաջ դատարանը նրան նախազգուշացնում է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին, ինչի վերաբերյալ վերցվում է ստորագրություն, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը (ՔԴՕ 72 հոդ., մաս 4):

Տեղին է նկատել, որ գործին մասնակցող անձանց ցուցմունքներն օրենսդիրը չի թվարկել ՔԴՕ 67-րդ հոդվածում դրանք դիտարկելով որպես վկայի ցուցմունքի տարատեսակ: Այդ իսկ պատճառով սահմանվում է, որ գործին մասնակցող անձը ցուցմունք է տալիս վկայի ցուցմունքի համար սահմանված կանոններով՝ հաշվի առնելով նրանց հարցաքննության համար սահմանված առանձնահատկությունները (ՔԴՕ 72 հոդ., մաս 1-2): Բացի վերը շարադրվածից, այդ առանձնահատկությունները հանգում են նաև հետևյալին:

ա. Ցուցմունք տալու համար դատարան ներկայանալուց խուսափող գործին մասնակցող անձը չի կարող բերման և դատական սանկցիայի ենթարկվել: Սույն բացառությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ցուցմունքներ տալը, ինչպես վերև արդեն նշվել է, գործին մասնակցող անձի իրավունքն է և ոչ թե պարտականությունը: Դրա համար դատարանը չի կարող ստիպել կողմերին ներկայանալու դատարան և տալու ցուցմունքներ՝ անհրաժեշտության դեպքում նրանց ենթարկելով բերման և պատասխանատվության: Ասվածը հավասարա-

պես վերաբերում է այն դեպքերին, երբ գործին մասնակցող անձը պետք է ցուցմունք տա դատարանի առաջարկով: Եթե գործին մասնակցող անձը հրաժարվում կամ խուսափում է ցուցմունք տալուց որևէ հարկա դրանքի միջոց նրա նկատմամբ կիրառվել չի կարող. նա կարող է կրել միայն որոշակի դատավարական բնույթի անբարենպաստ հետևանքներ, որոնք նախատեսված են ՔԴՕ 72-րդ հոդվածի 3-րդ մասով:

բ. Գործին մասնակցող անձը չի կարող հեռացվել դատական նիստերի դահլիճից մինչև չհարցաքննված մյուս վկաների հարցաքննությունը: Դա պայմանավորված է գործին մասնակցող անձանց՝ ապացույցների հետազոտմանը մասնակցելու և դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ վկաներին հարցեր տալու իրավունքով, որը մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների կենսագործման կարևորագույն երաշխիքներից է:

Գործին մասնակցող անձանց ցուցմունքները, որպես կանոն, տրվում են գործը քննող դատարանին՝ անմիջականորեն գործն ըստ էության քննելու նպատակով հրավիրված դատական նիստում: Բայց դրանք կարող են ստացվել նաև դատարանի կողմից ապացույցների ապահովման կամ դատական հանձնարարության կարգով (ՔԴՕ 65, 70 հոդ.): Նշված կարգով ստացված ցուցմունքները պարտադիր պետք է հրապարակվեն և հետազոտվեն դատարանում, եթե ցուցմունք տված անձը դատաքննությանը չի մասնակցում:

Գործին մասնակցող անձանց ցուցմունքների հետազոտման անմիջականությունը բացառում է ներկայացուցչի միջոցով ցուցմունք տալու հնարավորությունը: Գործին մասնակցող անձը պարտավոր է ցուցմունք տալ անձամբ:

Գործին մասնակցող անձանց ցուցմունքները անձնական ապացույցների տարատեսակ են: Դրանց հետազոտման և գնահատման առանձնահատկությունները բխում են այն հանգամանքից, որ գործի լուծման համար նշանա-

կություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները դատարանին հաղորդում են գործի ելքով անմիջականորեն շահագրգռված անձինք՝ վիճելի իրավահարաբերությունների անմիջական մասնակիցները: Այդ կապակցությամբ աչքի է ընկնում քննարկվող ապացուցման միջոցի իրավական կարգավորման էական թերություններից մեկը, որը, մեր կարծիքով, շուտափույթ վերացման կարիք է զգում: Մասնավորապես՝ օրենքը չի կոնկրետացնում գործին մասնակցող այն անձանց շրջանակը, որոնց հարցաքննության միջոցով կարող են ստացվել ցուցմուկներ:

Նախ՝ ակնհայտ է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի կամ նման կարգավիճակ չունեցող այլ կազմակերպության անունից, որպես գործին մասնակցող անձ, ցուցմուկ կարող է տալ բացառապես նրա ղեկավարը: Այս առումով անթույլատրելի պետք է համարել պրակտիկայում հանդիպող դեպքերը, երբ որպես գործին մասնակցող անձ հարցաքննվում է նշված սուբյեկտների անունից դատարանում հանդես եկող դատական ներկայացուցիչը կամ համապատասխան մարմնի (կազմակերպության) աշխատակիցը: Ներկայացուցիչները ո՛չ ապացույցի աղբյուր են և ո՛չ էլ գործին մասնակցող անձ¹: Ինչ վերաբերում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի կամ նման կարգավիճակ չունեցող այլ կազմակերպության աշխատակիցներին, ապա վերջիններիս գործին մասնակցող անձի հետ նույնացնելը և տվյալ կարգավիճակում հարցաքննելը ևս հիմնավորված չէ: Եթե տվյալ սուբյեկտները որոնվող փաստերի մասին տեղեկություններ կրողներ են, նրանք կարող են հարցաքննվել որպես վկա, այլ ոչ թե որպես գործին մասնակ-

¹ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կողմի ներկայացուցչի ցուցմուկի թույլատրելիության հարցին և միանշանակ արձանագրել է, որ ՔԴՕ 47-րդ հոդվածի ուժով այն «թույլատրելի ապացույց դիտվել չի կարող»: Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0479/ 02/08 քաղաքացիական գործով 13.02.2009 թ. որոշումը:

ցող անձ-վկա:

Երկրորդ. ներկայումս որևէ կասկած չի առաջացնում պետության գույքային շահերի պաշտպանությամբ հայց հարուցող դատախազի, ինչպես նաև այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ դատարան դիմող սուբյեկտների դատավարական կարգավիճակը: Ե՛վ դատավարագիտության մեջ, և՛ դատական պրակտիկայում նրանք իրավացիորեն դիտարկվում են որպես գործին մասնակցող անձինք, որոնք կարող են վարույթին մասնակցել բացառապես հայցվորի կարգավիճակով: Տվյալ սուբյեկտների կարգավիճակի առանձնահատկությունը նրանում է, որ նրանք վիճելի նյութական իրավահարաբերության մասնակից չեն, և, ի տարբերություն վարույթին քաղաքացու կամ կազմակերպության կարգավիճակով հանդես եկող գործին մասնակցող այլ անձանց, ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները ստանում են այլ աղբյուրներից (դատախազը՝ պետական մարմիններից և նրանց կամ այլ սուբյեկտների տրամադրած նյութերից, այլ անձի իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտները՝ այն սուբյեկտներից, որոնց իրավունքների պաշտպանությամբ հարուցում են հայցը, ինչպես նաև նրանցից ստացված և սեփական նախաձեռնությամբ հավաքված նյութերից): Հետևաբար, չհանդիսանալով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ կրողներ՝ նշված սուբյեկտների չեն կարող հարցաքննվել այդ փաստերի կապակցությամբ (այն նույն տրամաբանությամբ, որով չեն հարցաքննվում գործին մասնակցող անձանց ներկայացուցիչները): Ուստի, մեր կարծիքով, ճիշտ կլիներ, ՔԴՕ 72-րդ հոդվածում սահմանել, որ դատախազը և այլ անձի իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցող սուբյեկտները չեն կարող հարցաքննվել որպես գործին մասնակցող անձ:

Գործին մասնակցող անձանց ցուցմունքների հավաստիությունը գնահատելիս, դատարանը պարտադիր

պետք է հաշվի առնի նրանց շահագրգռվածության աստիճանը գործի ելքով, նկատի ունենալով, որ թեև գործին մասնակցող անձինք առավել քան մյուսներն իրազեկ են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներին, սակայն գործով հետապնդում են որոշակի նյութական և դատավարական շահ, ուստի միշտ չէ, որ դատարանին հայտնում են հավաստի ու իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Բացի դրանից, գործին մասնակցող անձինք կարող են ընկնել մոլորության մեջ, յուրովի մեկնաբանել և բացատրել գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստը:

Միաժամանակ դատարանը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ոչ մի ապացույց, այդ թվում գործին մասնակցող անձանց ցուցմունքը, առավելություն չունի մյուս ապացույցների նկատմամբ, և ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Հետևաբար, դատարանն ապացույցի այս տեսակը գնահատելիս չպետք է ղեկավարվի այն կանխավարկածով, որ գործի ելքով դատավարական շահագրգռվածություն ունեցող գործին մասնակցող անձը խեղաթյուրում ու աղավաղում է գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող իրական փաստերը՝ դրանք ներկայացնելով իր համար շահավետ լույսի ներքո: Համոզմունք ձևավորելու համար դատարանը գործին մասնակցող անձանց ցուցմունքները, ինչպես և ցանկացած այլ ապացույց, գնահատելիս պետք է դրանք համադրի գործում առկա մյուս ապացույցների հետ:

§3. Գրավոր ապացույցները

ՔԴՕ 67-րդ հոդվածով ապացուցման միջոցների (ապացույցների) թվին են դասվում նաև գրավոր ապացույցները:

Գրավոր ապացույցները տարածված ապացուցման

միջոցներ են: Նրանց ապացուցողական նշանակությունը չափազանց մեծ է, որովհետև նրանցում պարունակող տեղեկություններն ամրապնդված են առարկայական (օբյեկտիվ) ձևով: Ձևակերպված լինելով թղթի կամ այլ առարկայի վրա՝ գրավոր ապացույցներն ավելի կայուն են և որոշակի, ավելի ճշգրիտ են, լրիվ և երկարատև, քան, օրինակ, վկաների ցուցմունքները: Դրանք կեղծելը դժվար է, իսկ կեղծելու դեպքում հեշտ է այն հայտնաբերելը: Գրավոր ապացույցները կողմերի հարաբերություններին տալիս են հստակ բնույթ, դրանով իսկ նպաստում են քաղաքացիական շրջանառության ամրապնդմանը և վեճի ժամանակ հեշտացնում են փաստերի ապացուցումը: Դրա համար էլ քաղաքացիական իրավունքի նորմերը որոշակի դեպքերում պահանջում են գործարքները ձևակերպել գրավոր ձևով: Քաղաքացիները և կազմակերպությունները շատ հաճախ իրենց հարաբերությունները ձևակերպում են գրավոր ձևով, երբ օրենքը դա չի էլ պահանջում: Դա բարձրացնում է գործարքում արտացոլված կամահայտնության ապացուցողական նշանակությունը¹:

Գրավոր ապացույցներին նվիրված են ՔԴՕ 74-77-րդ հոդվածները, որոնք սահմանում են գրավոր ապացույցների հասկացությունը, դրանք ներկայացնելու և դատարանի կողմից թույլատրելու, դրանցից օգտվելու, իսկությունը վիճարկելու, պահպանելու, հետազոտելու և բնօրինակները վերադարձնելու դատավարական կարգը:

ՔԴՕ 74-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ **գրավոր ապացույցներ են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող անհատական կամ ներքին իրավական ակտերը, գործարքները, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը և այլ գրավոր նյութերը (փաստաթղթերը), ինչպես նաև էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ**

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 378:

միջոցով ստացված տեղեկությունները:

Տվյալ նորմից երևում է, որ գրավոր ապացույցների տեսակներն օրենսդիրը թվարկել է ոչ սպառիչ կերպով, ինչից կարելի է եզրակացնել, որ որպես գրավոր ապացույց կարող է հանդես գալ ցանկացած նյութական կրիչ (թուղթ, ստվարաթուղթ, պլաստիկ զանգված, լազերային սկավառակ կամ այլ տեղեկատվական կրիչ և այլն), որում քիմիական, տեխնիկական կամ այլ միջոցներով դատարանի կողմից քննվող գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին որոշակի տեղեկություններ են արտացոլված՝ տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների կիրառմամբ: Այդ տեսանկյունից որպես գրավոր ապացույցներ կարող են հանդես գալ նաև տարբեր մարմինների եզրակացությունները (բացառությամբ փորձագետի եզրակացության, որն ապացույցի ինքնուրույն տեսակ է), մասնագետների և մասնագիտական կազմակերպությունների կարծիքները, դատավարության մասնակից չհանդիսացող անձանց գրավոր բացատրությունները և հայտարարությունները, հետաքննության, նախաքննության մարմինների ակտերը, դատական նիստերի արձանագրությունները, էլեկտրոնային պաշարներից, տվյալների բազաներից, համացանցից ստացված նյութերը, այդ թվում՝ արտացոլված էլեկտրոնային կրիչների վրա և այլն:

Ի տարբերություն իրեղեն ապացույցների, որոնք ևս առարկայական տեսք ունեն, գրավոր ապացույցները դատարանի համար նշանակություն ունեն իրենց մտքի, բովանդակության տեսակետից: Գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի որոշակի նյութական կրիչներում տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով արտացոլված միտքը (տեղեկությունը), որն ընկալվում է ընթերցման միջոցով: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ որոշակի տեղեկություններ պարունակող նյութական կրիչները կարող են հանդիսանալ ինչպես գրավոր, այնպես էլ իրեղեն ապացույցներ:

Եթե գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունները ստացվում է փաստաթղթի բովանդակությունը (տեքստը) ընթերցելու միջոցով, ապա նման փաստաթուղթը գրավոր ապացույց է: Իսկ եթե տեղեկությունը ստացվում է դիտողական ճանապարհով կամ փորձագետի (մասնագետի) օգնությամբ փաստաթուղթը (այլ նյութական կրիչը) զննելու միջոցով, ապա նման ապացույցը իրեն դն է: Այսպես, եթե փոխառության պայմանագրի կնքման փաստը և դրա պայմանները հաստատելու նպատակով դատարան է ներկայացվում փոխառության վերաբերյալ ստացականը, վերջինս պետք է դիտարկվի որպես գրավոր ապացույց, քանի որ միայն դրա ընթերցման և վավերապայմանների ստուգման հիման վրա դատարանը կարող է պարզել, թե ով, ում, երբ և ինչ չափով ու պայմաններով է տրամադրել փոխառությունը: Նույն ստացականը կդիտարկվի որպես իրենդեն ապացույց, եթե վիճակվում է պայմանագրի կնքման փաստը այն հիմքով, որ ստացականում դրված ստորագրությունը կեղծված է, քանի որ տվյալ դեպքում դատարանին հետաքրքրում են ոչ թե ստացականում շարադրված մտքերը, այլ ստորագրության իսկությունը, որը կարող է պարզվել ոչ թե ընթերցման միջոցով, այլ դիտողական ճանապարհով (նաև փորձագետի օգնությամբ):

Նյութական կրիչները (դրանցում արտացոլված տեղեկությունները) գրավոր ապացույցներ դիտարկվելու համար պետք է համապատասխանեն որոշակի պահանջների՝

1) դրանցում արտացոլված տեղեկությունները պետք է վերաբերելի լինեն, այսինքն՝ հաստատեն կամ հերքեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը: Հարկ է նկատել, որ ԶԴՕ-ը տարանջատում է «ապացույցներ» և «այլ փաստաթղթեր» հասկացությունները: Նման տարանջատում առկա է, օրինակ 121-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ բոլոր այն գրավոր փաստաթղթերը, որոնք ուղղված չեն

գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատմանը (օրինակ՝ հայցադիմումին կից ներկայացվող հայցվորի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ներկայացուցչի լիազորագիրը, պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և այլն), չեն համարվում գրավոր ապացույցներ.

2) գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունները պետք է ստացվեն փաստաթղթի բովանդակությունից, այլ ոչ թե դրա արտաքին հատկանիշներից: Ինչպես վերը նշվել է, տվյալ հատկանիշը հնարավորություն է տալիս գրավոր ապացույցները տարբերել իրեղեն ապացույցներից.

3) գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունները պետք է արտահայտվեն մարդու (այդ թվում՝ հատուկ գիտելիքներով օժտված անձի) ընկալման համար մատչելի որոշակի նշանների միջոցով.

4) գործի համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթը չպետք է կազմված լինի դատավարության մասնակցի դատավարական կարգավիճակի կապակցությամբ: Գրավոր ապացույցի այս հատկանիշը հնարավորություն է տալիս գրավոր ապացույցները տարբերել վկաների և գործին մասնակցող անձանց գրավոր ցուցմունքներից և փորձագետի եզրակացությունից.

5) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում փաստաթուղթը պետք է կազմված լինի սահմանված ձևով և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ:

Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում ներկայացված նյութական կրիչը (դրանում արտացոլված տեղեկությունը) որպես գրավոր ապացույց դիտարկվել չի կարող:

Գրավոր ապացույցները բազմատեսակ են և տարբերվում են միմյանցից իրենց ծագմամբ, ձևավորման գործընթացով, արտաքին տեսքով, ներքին բովանդակությամբ:

Բազմաբնույթ և տարատեսակ գրավոր ապացույցներ-

րի հետազոտումը հեշտացնելու և դրանց թույլատրելիությունն ու արժանահավատությունը ճիշտ որոշելու նպատակով դրանք դատավարագիտության մեջ տարբեր չափանիշներով ենթարկվում են որոշակի դասակարգման: Առավել տարածված է գրավոր ապացույցների դասակարգումն ըստ կազմավորման եղանակի, ըստ բովանդակության, ըստ սուբյեկտի, որից ելնում են, և ըստ ձևի:

Ըստ կազմավորման եղանակի գրավոր ապացույցները բաժանվում են բնօրինակների և դրանց վերարտադրությունների:

Բնօրինակը փաստաթղթի սկզբնական, իսկական, օրինակն է (բնագիր), որը ձևակերպվել է այն ստեղծելիս, իսկ **վերարտադրությունը**՝ փաստաթղթի պատճենը, փաստաթղթից հանված քաղվածքը կամ փաստաթղթի թարգմանությունը:

ՔԴՕ 74-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է ընդհանուր կանոն այն մասին, որ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել բնօրինակով կամ պատճենի ձևով: Բնօրինակը պարտադիր ներկայացվում է դատարանի պահանջով կամ այն դեպքում, երբ համապատասխան փաստերն օրենքի, այլ իրավական ակտերի կամ պայմանագրի համապատասխան կարող են հաստատվել միայն բնօրինակով:

Հատկանշական է, որ ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի, գործող դատավարական օրենսդրությունը, որպես ընդհանուր կանոն, գործին մասնակցող անձանց թույլատրում է գրավոր ապացույցները ներկայացնել հասարակ (չվավերացված) պատճենի ձևով, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փաստերն օրենքի, այլ իրավական ակտերի կամ պայմանագրի համապատասխան կարող են հաստատվել միայն բնօրինակով¹:

¹ Ինչպես բխում է Քաղ. օր. 146-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված փաստաթղթային արժեթղթերի հասկացությունից, նման արժեթուղթը (մուրհակը, չեկը, պարտատոմսը, պահեստային վկայագիրը, կոնսամենտը) տալու փաստը, դրանով հավաստվող իրավունքի բովանդակությունը, ծավալը և իրականացման առանձին պայմանները կարող են հաստատվել բացառապես արժեթղթի բնօրինակով:

Պատճենը գրավոր ապացույցի բնօրինակի՝ էլեկտրագրաֆիկական (քսերոքս, ֆաքս, սկաներ և այլն) կամ լուսանկարչական սարքավորումներով կատարված այնպիսի վերարտադրությունն է, որի արդյունքում ստացված փաստաթղթում ճշգրիտ նույնությամբ արտացոլվում են ոչ միայն բնօրինակի բովանդակությունը, այլ նաև կիրառված գրանշանների ձևը, չափը, դասավորությունը, հաջորդականությունը, ինչպես նաև բնօրինակի այլ տարրերը:

Քանի որ փաստաթղթի պատճենն ածանցական ապացույց է և, կախված դրա պատրաստման եղանակից, բնօրինակի համեմատ կարող է պարունակել որոշակի աղավաղումներ, օրենքը գործը քննող դատարանին իրավունք է վերապահում գործին մասնակցող անձից պահանջելու ներկայացնել գրավոր ապացույցին բնօրինակը, իսկ այն ներկայացնելու անհնարինության դեպքում՝ դրա պատշաճորեն վավերացված պատճենը, որը զուտ դատավարական իմաստով հավասարազոր է բնօրինակին:

Օրենքը չի սահմանում, թե ինչպիսի վավերացումը պետք է համարել պատշաճ: Ենթադրվում է, որ պատճենի պատշաճ վավերացման մասին կարելի է խոսել բոլոր այն դեպքերում, երբ պատճենի և բնօրինակի նույնությունը (համապատասխանությունը) հաստատվել է այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս չկասկածել պատճենի իսկության մեջ¹: Գրավոր ապացույցի պատճենի իսկության պատշաճ հաստատում է համարվում է, առաջին հերթին, դրա նոտարական վավերացումը: Բացի դրանից, պատշաճ պետք է համարել իր իրավասության շրջանակներում տվյալ տեսակի փաստաթուղթ տրամադրող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների իրավասու մարմինների կողմից վավերացված պատճենները:

Եթե դատարանը պահանջել է ներկայացնել գրավոր

¹ St' u Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М.С. Шакарян. М.: «Кодекс», 2003, էջ 174:

ապացույցի բնօրինակը, և գործին մասնակցող անձը չի ներկայացրել ապացույցի բնօրինակը կամ դրա պատշաճ վավերացված պատճենը, ապա գործը քննող դատարանը գրավոր ապացույցի հասարակ պատճենը հանում է¹ հետազոտման ենթակա ապացույցների շարքից (ԶԴՕ 74 հոդ., մաս 3):

Հարկ է նկատի ունենալ, որ թեև փաստաթղթի բնօրինակը կամ դրա պատշաճորեն վավերացված պատճենը պահանջելու դատարանի լիազորությունը հայեցողական

1 Կարծում ենք, որ նման իմպերատիվ ձևակերպման փոխարեն շատ ավելի նպատակահարմար կլիներ նախատեսել «կարող է հանել» արտահայտությունը, ինչը հնարավորություն կտար դատարանին ապացույցի բնօրինակը կամ վավերացված պատճենը ներկայացնելու օբյեկտիվ անհնարիտության դեպքում գրավոր ապացույցների չվավերացված պատճենները չհանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից, հետազոտել դրանք ընդհանուր հիմունքներով և գնահատել մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Բանը նրանում է, որ գործնականում հանդիպում են բազմաթիվ իրավիճակներ, երբ գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրանց պատշաճորեն վավերացված պատճենները ներկայացնելը հնարավոր չէ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (օրինակ, իրդեհի, տարերային աղետների, անփութության, մյուս կողմի կամ նրա հետ փոխկապակցված անձանց դիտավորյալ գործողությունների հետևանքով դրանց ոչնչացման, փչացման կամ կորստյան պատճառով): Ընդ որում, եթե կորցված պաշտոնական փաստաթղթերը, որպես կանոն, կարող են վերականգնվել, ապա ոչ պաշտոնական փաստաթղթերը (նամակագրությունը, նոտարական վավերացման չնփարկված պայմանագրերը, ստացականները և այլն) վերականգնվել չեն կարող: Բացի դրանից, առևտրային հարաբերություններում պայմանագրերը շատ հաճախ կնքվում են էլեկտրոնային կապի (Ֆաքսիմիլային, էլեկտրոնային փոստի) միջոցներով փաստաթղթերի փոխանակման եղանակով: Նույն կերպով կողմերը միմյանց են ուղարկում նաև պայմանագրի կատարման կապակցությամբ ամբողջ թղթակցությունը (կատարողական ակտերը, պահանջագրերը, հաշիվ ապրանքագրերը և այլն): Փաստաթղթաշրջանառության նման ձևերի պայմաններում փաստաթղթերի բնօրինակները, որպես կանոն, մտում են կոնտրագենտի (հակադիր կողմի) տիրապետության ներքո, ինչը գործնականում բացառում է դրանց ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային օրինակների հետագա նոտարական կամ այլ վավերացումը: Նշվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ բնօրինակը կամ վավերացված պատճեն չներկայացնելու «կոշտ» հետևանքները, մի կողմից, կարող են խախտել գործին մասնակցող անձին՝ ապացույցներ ներկայացնելու իրավունքը և դրանով իսկ հակասել մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքին, իսկ մյուս կողմից՝ չեն համապատասխանում քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրներին և նպատակին, այն է՝ կողմերի մրցակցության և իրավահավասարության պայմաններում քաղաքացիական գործերի իրական հանգամանքները պարզելու և իրավունքի նորմերը ճիշտ կիրառելու միջոցով քաղաքացիների և իրավաբանական անձանց խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությանը:

Է, այն չի կարող իրականացվել կամայական կերպով: Եթե օրենքը, այլ իրավական ակտը կամ պայմանագիրը չեն սահմանում փաստը բացառապես բնօրինակով ապացուցելու պահանջ, ներկայացված պատճենը կատարված է պատշաճ որակով (ընթեռնելի է), գործին մասնակցող մյուս անձինք, ծանոթ լինելով գրավոր ապացույցի ներկայացված պատճենին, չեն վիճարկում դրա իսկությունը կամ չկան պատճենի հետազոտումը դժարացնող, անհնարին դարձնող կամ դրա արժանահավատությունը կասկածի տակ դնող այլ հիմնավոր պատճառներ, դատարանը չպետք է պահանջի ներկայացնել փաստաթղթի բնօրինակը կամ դրա պատշաճորեն վավերացված պատճենը, այն չներկայացնելու դեպքում չի կարող պատճենը հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Գրավոր ապացույցների պատճենները հետազոտելիս և գնահատելիս դատարանը պետք է պարզի, թե տեխնիկական ինչպիսի միջոցներով է կատարվել պատճենահանումը, այն ապահովում է արդյոք բնօրինակի և պատճենի նույնությունը, նա պետք է համոզվի, որ պատճենահանման ընթացքում բնօրինակի բովանդակության փոփոխություն տեղի չի ունեցել (կողմերի ներկայացնելու, անիրաժեշտության դեպքում բնօրինակի հետ համեմատելու կամ կողմի միջնորդությամբ փորձաքննություն նշանակելու միջոցով):

Փաստաթղթերի պատճենները գնահատելու կանոնների տեսանկյունից ուշագրավ է ՌԴ ՔԴՕ 67-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված կանոնը, ըստ որի դատարանը չի կարող ապացուցված համարել այն հանգամանքները, որոնք հաստատվում են բացառապես գրավոր ապացույցի պատճենով, և վիճող կողմերի ներկայացրած պատճենները նույնական չեն և հնարավոր չէ այլ ապացուցների օգնությամբ պարզել բնօրինակի իսկական բովանդակությունը: Կարծում ենք, որ նման իմպերատիվ պահանջ պետք է ամրագրվի նաև ՀՀ ՔԴՕ-ում:

ՔԴՕ 74-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե

քննվող գործին վերաբերում է փաստաթղթի միայն մի մասը, ապա գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել դրա քաղվածքը:

Քաղվածքը գրավոր ապացույցի բնօրինակի մի մասի վերարտադրությունն է: Այն ևս դասվում է ածանցական ապացույցների թվին, քանի որ կազմվում է սկզբնաղբյուրի՝ գրավոր ապացույցի բնօրինակի հիման վրա: Քաղվածքն ընդունելու և հետազոտման ենթակա փաստաթղթերի կազմում ներառելու որևէ սահմանափակում (այդ թվում վավերացման պահանջ) օրենքը չի նախատեսում:

Այդուհանդերձ, քաղվածք ներկայացվելու դեպքում ևս դատարանն օժտված է ամբողջական փաստաթուղթը պահանջելու լիազորությամբ, եթե քաղվածքը վավերացված չէ օրենքով սահմանված կարգով կամ իր մեջ պարունակում է փաստաթղթի մյուս մասերի վերաբերյալ տեղեկատվություն, և դրա բովանդակությունը կարող է պարզվել փաստաթղթի մյուս մասի կամ ամբողջ փաստաթղթի բովանդակությամբ: Ամբողջական փաստաթուղթը չներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը մի մասով կամ ամբողջությամբ հանվում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից (ՔԴՕ 74 հոդ., մաս 6):

Քաղվածքի վավերացումը համարվում է պատշաճ, եթե քաղվածքի և փաստաթղթի բնօրինակի համապատասխան մասի համապատասխանությունը հաստատված է տվյալ փաստաթուղթը կազմած պաշտոնատար անձի կամ այլ իրավասու անձի մակագրությամբ (օրինակ՝ «իսկականի հետ ճիշտ է և վավերացված է իրավասու անձի ստորագրությամբ»):

Հարկ է նկատել, որ ՔԴՕ 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնն այն մասին, որ եթե գործով ապացույցների հետազոտումը պահանջում է դատավարական գործողությունների կատարում այլ վայրում (օրինակ՝ ապացույցները դատարան բերելու անհնարինության կամ դժվարության դեպքում), ապա դատական նիստը պետք է անցկացվի արտագնա կարգով, կիրառելի են

նաև գրավոր ապացույցների նկատմամբ: Ուստի, եթե դատարանի պահանջով ամբողջական փաստաթուղթը չի ներկայացվում այն դատարան բերելու անհնարինություն կամ դժվարության պատճառով, դատարանը ոչ թե պետք է տվյալ ապացույցը հանի հետազոտման ենթակա ապացույցների շարքից, այլ պարտավոր է այն իր գտնվելու վայրում հետազոտելու նպատակով նշանակել և անցկացնել արտագնա դատական նիստ՝ դրա ժամանակի և վայրի մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց (ՔԴՕ 93 հոդ., մաս 1):

Գրավոր ապացույցների վերարտադրությունների թվին են դասվում նաև օտարալեզու նյութերի հայերեն թարգմանությունները: Դրանք ևս ածանցական ապացույցներ են, քանի որ հայերենով վերարտադրում են սկզբնական գրավոր ապացույցների (բնօրինակների) կամ դրանց մի մասի բովանդակությունը:

ՔԴՕ 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ գրավոր ապացույցները) ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանի կողմից չեն քննարկվում կամ չեն թույլատրվում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց:

Դատավարության լեզվի սկզբունքից բխող նշված պահանջը մասնավորեցվում է ՔԴՕ 74-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն դատարանն օտարալեզու գրավոր ապացույցը հանում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից, եթե գործին մասնակցող անձը չի ներկայացնում գրավոր ապացույցի հայերեն պատշաճ թարգմանությունը: Նշված կանոնը գործնականում ենթադրում է, որ եթե օտարալեզու գրավոր ապացույցը ներկայացվել է առանց հայերեն պատշաճ թարգմանության գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կամ ապա-

ցույցը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս, դատարանը պետք է առաջարկի գործին մասնակցող անձին ներկայացնելու գրավոր ապացույցի հայերեն պատշաճ թարգմանությունը, նրան տա ողջամիտ ժամկետ այդ պարտականությունը կատարելու համար, պարզաբանի այդ պարտականությունը չկատարելու հետևանքները և վերջինս չկատարելու պարագայում միայն կարող է օտարալեզու գրավոր ապացույցը հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գրավոր ապացույցը համարվում է պատշաճորեն թարգմանված, եթե թարգմանության իսկությունը վավերացված է նոտարական կարգով կամ փաստաթուղթը տված (ստորագրած) անձի (անձանց) կողմից: Կարծում ենք, որ փաստաթղթի թարգմանությունը պետք է համարվի պատշաճ նաև այն դեպքերում, երբ այն կատարվել է անհրաժեշտ լեզվին տիրապետող գործունակ ֆիզիկական անձի (այդ թվում՝ գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի), թարգմանչական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից:

Ըստ բովանդակության գրավոր ապացույցները լի-նում են տնօրինչական և տեղեկատվական:

Տնօրինչական են համարվում իշխանական-կամային բնույթի ոչ նորմատիվային ակտերը, որոնց կատարմամբ (ձևակերպմամբ) դրանք կատարող սուբյեկտն արտահայտում է իր կամքը՝ ուղղված իրավունքների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Տնօրինչական բնույթի փաստաթղթերում, ըստ էության, իրագործվում է նյութաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքը:

Տնօրինչական ապացույցներ են՝

1. պետական և տեղական ինքնակառավարման, դրանց պաշտոնատար անձանց ոչ նորմատիվային (անհատական) բնույթի իրավական ակտերը (որոշումներ, հրամաններ, հրահանգներ և այլն),

2. իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, հիմնարկների, դրանց մարմինների ներքին և անհատական բնույթի ակտերը (որոշումներ, հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ և այլն),

3. իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից գրավոր ձևով կնքվող գործարքները (պայմանագրեր, լիազորագրեր, կտակներ և այլն):

Տեղեկատվական բնույթի գրավոր ապացույցները պարունակում են ոչ թե կամահայտնություն, այլ գործի համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ: Այդպիսի ապացույցների թվին են դասվում, օրինակ, տարբեր տեսակի վկայականները (ամուսնության, ամուսնալուծության, ծննդյան, մահվան, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի), հավաստագրերը, դիպլոմները, տեղեկանքները, կատարողական ակտերը, հաշվետվությունները, արձանագրությունները, նամակները և այլն: Նշված փաստաթղթերը, ի տարբերություն տնօրինչական փաստաթղթերի, ոչ թե արտացոլում են դրանք տվողի (կազմողի) կամահայտնությունը, այլ նրա տիրապետության ներքո գտնվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկությունները:

Հարկ է նկատի ունենալ, որ նույն փաստաթուղթը կարող է հանդիսանալ միաժամանակ և տնօրինչական, և տեղեկատվական գրավոր ապացույց, քանի որ այն կարող է միաժամանակ պարունակել ինչպես որոշակի սուբյեկտի կամահայտնություն, այնպես էլ՝ որևէ սուբյեկտի կամահայտնություն չպարունակող տեղեկություններ:

Ըստ սուբյեկտների, որոնցից ելնում են, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատող կամ հերքող գրավոր նյութերը բաժանվում են պաշտոնական և ոչ պաշտոնական (մասնավոր) գրավոր ապացույցների:

Պաշտոնական են համարվում այն փաստաթղթերը

և այլ գրավոր նյութերը, որոնք ելնում են դրանք կազմելու, ստորագրելու և տալու իրավասությամբ օժտված սուբյեկտներից:

Առաջին հերթին դրանք այն գրավոր ապացույցներն են, որոնք բխում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կառավարչական հիմնարկներից, դրանց պաշտոնատար անձանցից, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից (օրինակ, վճիռները, դատավճիռները, որոշումները, ԶԿԱԳ մարմինների կողմից տրված վկայականները, դիպլոմները, աշխատանքի նշանակման հրամանները, իրավաբանական անձի կողմից կնքված պայմանագրերը և այլն):

Պաշտոնական գրավոր ապացույցների թվին են դասվում նաև իրավասու մարմինների կողմից հաստատված, ինչպես նաև նոտարական կամ դրան հավասարեցված կարգով վավերացված փաստաթղթերը (օրինակ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային ստորաբաժանման կողմից հաստատված կանոնադրությունը, նոտարական կարգով վավերացված պայմանագիրը, հայտարարությունը, լիազորագիրը, կտակը և այլն):

Պաշտոնական գրավոր ապացույցները կարող են ունենալ ինչպես տնօրինչական, այնպես էլ տեղեկատվական բնույթ:

Պաշտոնական գրավոր ապացույցները հետազոտելիս և գնահատելիս դատարանը, հաշվի առնելով գործում առկա այլ ապացույցները, պետք է համոզվի, որ տվյալ ապացույցը ելնում է այն մարմնից կամ անձից, որը, ըստ օրենքի, իրավասու է կազմել, ստորագրել և/կամ տրամադրել նման տեսակի փաստաթուղթ: Պետք է ստուգվի ոչ միայն տվյալ մարմնի կամ անձի իրավասությունը՝ կատարելու այս կամ այն իրավաբանական գործողությունը, այլ նաև ներկայացված փաստաթղթի համապատասխանությունը օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին (որոշակի ձևաթղթի վրա կազմված լինելը,

տալու (հաստատելու կամ վավերացնելու) ամսաթվի, հաստատող կամ վավերացնող մակագրության, ստորագրության, կնիքի առկայությունը, ստորագրողի (վավերացնողի կամ հաստատողի) անունը, պաշտոնական դիրքի մասին նշումը, վավերականության ժամկետը և այլն):

Ոչ պաշտոնական են համարվում այն փաստաթղթերը, որոնք բխում են բացառապես քաղաքացիներից և կապված չեն նրանց կողմից որոշակի լիազորությունների կատարման հետ (նամակներ, չվավերացված պայմանագրեր, լիազորագրեր և այլն):

Ըստ ձևի գրավոր ապացույցները բաժանվում են հասարակ գրավոր ձևով կազմվող, նոտարական վավերացման, օրինականացման (լեգալիզացիայի) ենթակա և օրինականացման (լեգալիզացիայի) ոչ ենթակա փաստաթղթերի:

Հասարակ գրավոր ձևով կազմված փաստաթուղթը, որպես գրավոր ապացույց, կարող է դատարան ներկայացվել և դրվել դատական ակտի հիմքում, եթե գործող օրենսդրությամբ սահմանված չէ դրա նոտարական վավերացման կամ օրինականացման (լեգալիզացիայի) պահանջ:

Նոտարական վավերացում պահանջող փաստաթղթերի շրջանակն ուղղակիորեն կանխորոշվում է գործող օրենսդրությամբ: Այսպես, գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է Քաղ. օր-ում նշված դեպքերում, ինչպես նաև կողմերից որևէ մեկի պահանջով, թեկուզ օրենքով տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևը չի պահանջվում (Քաղ. օր. 229 հոդ., մաս 3), նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը (Քաղ. օր. 321 հոդ., մաս 2), անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (Քաղ. օր. 299 հոդ., մաս 4), ենթակա է նոտարական վավերացման (Քաղ. օր. 562 հոդ., մաս 2), կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանա-

կը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից (Քաղ. օր. 1203 հոդ., մաս 1) և այլն:

Փաստաթղթերի նոտարական վավերացումը կատարվում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Նոտարական վավերացում պահանջող փաստաթղթերը թույլատրելիս, հետազոտելիս և գնահատելիս դատարանը պետք է ստուգի նման փաստաթուղթ վավերացնելու (տալու) նոտարի իրավասությունը, վավերացման ենթարկված փաստաթղթի համապատասխանությունն օրենսդրության իմպերատիվ պահանջներին, դրա վրա համապատասխան վավերացման մակագրության առկայությունը և դրա համապատասխանությունը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին¹:

Նոտարական վավերացում պահանջող փաստաթղթերից պետք է տարբերել **օրինականացում (լեգալիզացիա) պահանջող** գրավոր ապացույցները: Ընդհանուր կանոնի համաձայն՝ օտարերկրյա պետությունում կազմված պաշտոնական փաստաթուղթը դատարանում կարող է ճանաչվել գրավոր ապացույց, եթե այն օրինականացված (լեգալիզացված) է սահմանված կարգով: Այդ մասին է վկայում, օրինակ, Քաղ. օր. 1271-րդ հոդվածի դրույթն այն մասին, որ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից համապատասխան պետությունների օրենքներով ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ ՀՀ տարածքից դուրս կատարված քաղաքացիական կացության ակտերի հավաստման նպատակով տրված փաստաթղթերը ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպ-

¹ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարի՝ «Նոտարիատի 49-րդ հոդվածի մասին» 04.03.2002 թ. թիվ 113 հրամանով հաստատվել են վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը:

քում, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Հյուպատոսական օրինականացումը հատուկ ընթացակարգ է, որի միջոցով այն երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը, որի տարածքում փաստաթուղթը ենթակա է ներկայացման, հավաստում է փաստաթղթերում առկա ստորագրությունների իսկությունը, այն պաշտոնական դիրքի իսկությունը, որով հանդես է եկել փաստաթուղթը ստորագրած անձը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմի իսկությունը¹: Այն նախատեսված է «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի 1963 թ. կոնվենցիայի 5-րդ հոդվածով և մանրամասնվում է պետությունների միջև կնքվող միջազգային երկկողմ պայմանագրերով, իսկ օրինականացման ներքին կանոնները սահմանվում են ներպետական օրենսդրական ակտերով:

Օտարերկրյա պետությունում կազմված պաշտոնական փաստաթուղթը չի կարող դատարանի կողմից դրվել վճռի հիմքում, եթե այն սահմանված կարգով օրինականացված (լեգալիզացված) չէ: Հետևաբար, օտարերկրյա պետությունում կազմված և դատարան ներկայացված պաշտոնական փաստաթուղթն ընդունելիս, այն հետազոտելիս և գնահատելիս դատարանի խնդիրն է պարզել տվյալ գրավոր ապացույցը սահմանված կարգով օրինականացնելու անհրաժեշտությունը և օրինականացման կարգը պահպանված լինելու հանգամանքը:

ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով տվյալ ընդհանուր կանոնից կարող են արվել բացառություններ: Նման բացառություններ սահմանված լինելու դեպքում գրավոր ապացույցներն *օրինականացման (լեգալիզացիայի) ենթակա չեն*: Այսպես, Հաագայի 1961 թ. հոկտեմբերի 5-ին ընդունված «Օտարերկրյա պաշտոնա-

¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Հայկյանց Ա.Մ.**, Միջազգային մասնավոր իրավունք, Երևանի պետ. համալս. Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 492:

կան փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» կոնվենցիան, որին 1994 թվականից մասնակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը, նախատեսում է անդամ պետությունների միջև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջի վերացում¹:

Կոնվենցիայով նախատեսվում է, որ միակ ընթացակարգը, որը կարող է պահանջվել՝ ստորագրության, այն պաշտոնեական դիրքի, որով հանդես է եկել փաստաթուղթն ստորագրած անձը, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմի իսկության հավաստման համար, ապոստիլ (Apostille) դնելն է, ինչը կատարում է այն պետության իրավասու մարմինը, որտեղ այդ փաստաթուղթն ընդունվել է: Ապոստիլը դրվում է անմիջապես փաստաթղթի կամ փաստաթղթին ամրացված առանձին թղթի վրա և պետք է ունենա Կոնվենցիայով սահմանված նմուշի ձևը:

Օրինականացման պահանջը վերացվել է նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին» ԱՊՀ երկրների 1993 թ. կոնվենցիայով, որը, ի դեպ, բացառել է Կոնվենցիայի մասնակից երկրներում տրված պաշտոնական փաստաթղթերը որևէ եղանակով հաստատելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես ըստ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, փաստաթղթերը, որոնք պայմանավորվող կողմերից մեկի

1 Հաագայի կոնվենցիայով պաշտոնական օրինականացումից ազատված փաստաթղթերի թվին են դասվել պետության դատարանների կամ տրիբունալների կամ դրանց հետ կապված պաշտոնատար անձանց, ներառյալ դատախազի, դատարանի քարտուղարի կամ դատական կատարածուի կողմից ընդունված փաստաթղթերը, վարչական փաստաթղթերը, նոտարական փաստաթղթերը, մասնավոր կարգավիճակով գործող անձանց կողմից ստորագրված փաստաթղթերի վրա կատարված պաշտոնական հավաստագրերը, ինչպիսին են փաստաթղթի գրանցումը կամ որոշակի ամսաթվին դրա գոյության փաստն արձանագրող պաշտոնական հավաստագրերը, ինչպես նաև ստորագրությունների պաշտոնական և նոտարական հաստատումները: Կոնվենցիայի դրույթները չեն տարածվում դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարված փաստաթղթերի նկատմամբ, առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերի նկատմամբ (հոդ. 1):

տարածքում պատրաստվել կամ վավերացվել են մարմնի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից իրենց իրավասությունների շրջանակներում ու սահմանված ձևով, և ամրագրված են գինանշանային կնիքով, մյուս պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որևէ հատուկ հավաստագրի: Նման փաստաթղթերը պայմանավորվող մյուս կողմերի տարածքներում օգտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժից:

Որպես գրավոր ապացույցների հատուկ տեսակ կարելի է առանձնացնել **Էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ միջոցով ստացված տեղեկությունները** (այդ թվում՝ Էլեկտրոնային փաստաթղթերը): Վերջիններիս օգտագործման կարգը ՔԴՕ-ը չի մանրամասնում: Մինչդեռ տվյալների էլեկտրոնային և ինտերնետային պաշարներից ստացված նյութերի, էլեկտրոնային փոստի, բջջային հաղորդագրությունների, համակարգչային հավելվածների միջոցով ստեղծված և ուղարկված հաղորդագրությունների օգտագործումը գործնականում լուրջ դժվարությունների հետ է կապված՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք, որպես կանոն, համապատասխան պաշարների ստեղծման, սպասարկման, տնօրինման համար պատասխանատու անձանց կողմից ստորագրված, որևէ կերպով վավերացված չեն լինում: Տվյալ հանգամանքը պահանջում է դատավարական օրենսդրության շրջանակներում կարգավորել նման փաստաթղթերի հետազոտման և գնահատման առանձնահատկությունները¹:

Գրավոր ապացույցները ներկայացնելու և հետազոտելու դատավարական կարգը: Գրավոր ապացույցները

1 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Иванова Е.С., Тимошенко А.В.** Проблемы и перспективы использования электронных документов, аудио и видео записей в качестве средств доказывания в гражданском судопроизводстве. Челябинск, 2007, **Кузьмин С.С.** Правовые проблемы использования электронного документа как доказательства // В кн.: Тенденции развития гражданского процессуального права России. Сборник научных статей. Гл. ред.: Дамения И.Х. СПб.: «Юрид. центр Пресс», 2008, 647-657 էջը:

հետազոտության օբյեկտ են դառնում այն բանից հետո, երբ դրանք դատարան են ներկայացվում գործին մասնակցող անձանց կողմից կամ վերջիններիս միջնորդությամբ դատարանի կողմից պահանջելուց հետո:

Որպես ընդհանուր կանոն, գրավոր ապացույցները դատարան են ներկայացվում բացառապես գործին մասնակցող անձանց նախաձեռնությամբ՝ գործի հարուցման կամ գործը դատաքննության նախապատրաստելու փուլերում, իսկ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում նաև դատաքննության ընթացքում:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները գործին մասնակցող անձանց կողմից կարող են ներկայացվել հայցադիմումին (դիմումին) կամ հայցադիմումի պատասխանին կից: Եթե դրանք չեն ներկայացվել վերը նշված փաստաթղթերին կից, ապա գրավոր ապացույցները ներկայացվում են գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդությամբ: Գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդությունն արվում է գրավոր ապացույցի ներկայացմամբ և այն փաստի վկայակոչմամբ, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել համապատասխան գրավոր ապացույցի միջոցով: Գրավոր ապացույց թույլատրելու մասին միջնորդությունն անելիս գործին մասնակցող անձը պարտավոր է համապատասխան գրավոր ապացույցը կամ գրավոր ապացույցի պատճենը, իսկ այն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը գրավոր ներկայացնելու դեպքում նաև միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց (ՔԴՕ 75 հոդ.): Նշված պահանջները խախտելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում (ՔԴՕ 152 հոդ., մաս 5):

Էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված գրավոր ապացույցը ներկայացվում է թղթի վրա տպված վիճակում: Դատարանը կարող է սահմանել Էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված գրավոր ապացույցը ներկայացնելու այլ կարգ (ՔԴՕ 74 հոդ., մաս 5):

Ներկայացված գրավոր ապացույցը թույլատրելու վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում: Նման որոշում չի կայացվում այն դեպքերում, երբ ապացույցը ներկայացվում է հայցադիմումին (այդ թվում՝ հակընդդեմ) կամ հայցադիմումի պատասխանին կից: Ապացույցը թույլատրելու կապակցությամբ գործին մասնակցող անձը միջնորդություն չի ներկայացնում, իսկ դատարանը չի կայացնում որոշում նաև այն դեպքերում, երբ դատարանի պահանջով կամ կողմի նախաձեռնությամբ ներկայացվում են արդեն իսկ դատարանի կողմից թույլատրված (ընդունված) փաստաթղթերի պատշաճորեն վավերացված պատճենները, քաղվածքները, թարգմանությունները կամ քաղվածքների հիմք հանդիսացող ամբողջական փաստաթղթերը:

Գրավոր ապացույցների **հետազոտումը** կատարվում է դրանք կամ դրանց վերաբերելի մասերը դատական նիստում հրապարակելու (բարձրաձայն ընթերցելու) և գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչներին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև փորձագետին, մասնագետին և վկաներին ներկայացնելու միջոցով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ դատարանը ՔԴՕ-ին համապատասխան գործը քննում է առանց դատական նիստ հրավիրելու:

Անհրաժեշտության դեպքում գրավոր ապացույցը կարող է հետազոտվել տեխնիկական միջոցների կիրառմամբ (ՔԴՕ 77 հոդ., մաս 1): Նման անհրաժեշտություն կարող է ծագել հատկապես էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ միջոցով ստացված տեղեկությունները հետազոտելիս, ինչը թույլ է տալիս թղթի վրա տպված վիճակում ներկայացված նյութը համեմատել ինտերնետային կայքերում, տվյալների բազաներում, տեսագրություններում առկա սկզբնաղբյուրի հետ:

Գործին մասնակցող անձանց ակտիվ մասնակցությամբ գրավոր ապացույցները հրապարակայնության, բանավորության, մրցակցության և կողմերի իրավահա-

վասարության պայմաններում հետազոտելու ու նախնական գնահատման ենթարկելու արդյունքում է դատարանի մոտ ներքին համոզմունք ձևավորվում գրավոր ապացույցների վերաբերելիության, գրավոր ապացույցներում արտացոլված տեղեկությունների հավաստիության, որոնվող փաստերի գոյության մասին հետևություններ կատարելու համար տեղեկատվության բավարարության վերաբերյալ: Ուստի անթույլատրելի պետք է համարել դատական պրակտիկայում հաճախակի հանդիպող այն դեպքերը, երբ դատարանները, հավաստիանալով, որ գործին մասնակցող անձինք նախօրոք ստացել են գործում ամկա գրավոր ապացույցները և ծանոթ են դրանց բովանդակությանը, գրավոր ապացույցի բովանդակությունն ամբողջությամբ հրապարակելու փոխարեն, ուղղակի թվարկում են գրավոր ապացույցները:

Գրավոր ապացույցների հավաստիության ստուգումը ենթադրում է ոչ միայն փաստաթղթի ձևի, այլ նաև բովանդակության համապատասխանության ստուգում:

Ապացույցների հետազոտման ընթացքում գործին մասնակցող անձինք կարող են **վիճարկել** գրավոր ապացույցը հետևյալ եղանակներով.

1. *փաստաթուղթն առոչինչ հայտարարելով* (փաստաթուղթը ձևակերպված չէ սահմանված ձևով, տրված է ոչ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, փաստաթղթի վրա բացակայում է ստորագրությունը, կնիքը, նոտարի վավերացնող մակագրությունը, ապոստիլը և այլն),

2. *փաստաթղթի բովանդակությունն ըստ էության վիճակելով*, երբ հերքվում են կամ այլ կերպ են մեկնաբանվում փաստաթղթում պարունակվող տեղեկությունները,

3. *փաստաթղթի իսկությունը վիճարկելով*՝ այն կեղծ հայտարարելով (օրինակ, հայտնելով, որ փաստաթուղթը կազմված չէ այն անձի կողմից, ում կողմից այն ստորագրված է, ներկայացվել է պատասխանողի կողմից կազմված ստացական, այն դեպքում, երբ նման ստացական իրա-

կանում չի կազմվել, փաստաթղթում առկա են ուղղումներ, քերվածքներ և այլ փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվել է փաստաթղթի նախնական բովանդակությունը):

ՔԴՕ 76-րդ հոդվածը նվիրված է գրավոր ապացույցին իսկությունը վիճարկելուն: Նշված նորմը սահմանում է գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված գրավոր ապացույցների իսկությունը վիճարկելու վերջնաժամկետը, ինչպես նաև գրավոր ապացույցի իսկության վերաբերյալ վեճ լինելու դեպքում ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ:

Մասնավորապես նախատեսվում է, որ գործին մասնակցող անձը կարող է հայտարարել գործին մասնակցող այլ անձի կողմից ներկայացված գրավոր ապացույցի ոչ իսկական լինելու մասին մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը¹՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է մինչ այդ դրա անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Գրավոր փաստաթղթի իսկությունը վիճարկելու դեպքում ապացույց ներկայացնողը պետք է ապացուցի դրա իսկական լինելը՝ կրելով փաստաթղթի կեղծված լինելու փաստը վիճելի մնալու անբարենպաստ հետևանքների ռիսկը: Մինևույն ժամանակ օրենքը փաստաթղթի իսկու-

1 Հաշվի առնելով գործը դատաքննության նախապատրաստելու խնդիրները և այն, որ ապացուցողական նյութը, որպես կանոն, պետք է ներկայացվի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ օրենքով նախատեսել, որ ներկայացված գրավոր ապացույցների իսկությունը կարող է վիճարկել մինչև նախնական դատական նիստի ավարտը: Գործող օրենսդրությամբ սահմանված կարգը ենթադրում է, որ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո ներկայացված գրավոր ապացույցը կարող է վիճարկվել առաջին ատյանի դատարանում վարույթի ցանկացած փուլում, մինչդեռ նման վիճարկումը կարող է առաջացնել փորձաքննություն նշանակելու, նոր ապացույցներ հավաքելու անհրաժեշտություն, ինչը, սակայն, համահունչ չէ հետազոտման ենթակա ապացուցողական նյութը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հավաքելու հայեցակարգին:

յունը վիճարկող գործին մասնակցող անձի վրա է դրել փաստաթղթի ոչ իսկական լինելն ապացուցելու պարտականությունն այն դեպքերում, երբ ներկայացված փաստաթուղթը տրված կամ վավերացված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ նոտարի կողմից:

Գրավոր ապացույցները դատական նիստում ստուգվում և գնահատվում են իրենց իսկության, բովանդակության, վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, դրանց համար օրենքով սահմանված ձևի, դրանք տվող անձի իրավասության, գրավոր ապացույցում նշված և այն տվող անձի կամքի համապատասխանության տեսակետից¹:

Հետազոտման ընթացքում գրավոր ապացույցները ստուգվում են ապացուցման այլ միջոցների օգնությամբ՝ գործին մասնակցող անձանց, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, մասնագետի բացատրություններով: Դատարանը կարող է որպես վկա հարցաքննել գրավոր ապացույցը ներկայացրած անձին: Փաստաթղթի կեղծված լինելու վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից հայտարարություն անելու դեպքում դատարանը կարող է գործին մասնակցող անձի միջնորդությամբ նշանակել փաստաթղթաբանական, հետքաբանական կամ ձեռագրաբանական փորձաքննություն: Դատարանը պետք է քննարկի և վերլուծի յուրաքանչյուր գրավոր ապացույցի ձևավորման, պահպանման, ներկայացման և հետազոտման ողջ գործընթացը, որպեսզի լիարժեք համոզմունք ձևավորի գործի համար նշանակություն ունեցող փաստերի մասին գրավոր ապացույցի մեջ պարունակվող տեղեկությունների վերաբերյալ:

Գրավոր ապացույցները պահպանվում են քաղաքացիական գործի նյութերում: ՔԴՕ 74-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը սահմանում են ներկայացված փաստաթղթե-

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 384:

րի օրինակները դրանք ներկայացրած անձանց վերադարձելու կարգը: Գործի քննության ընթացքում գրավոր ապացույցների բնօրինակները հետազոտելուց հետո դատարանը դրանք կարող է վերադարձնել ներկայացրած անձին, եթե նա միջնորդում է այդ մասին, և նման միջնորդության բավարարումը չի խոչընդոտում ապացույցների հետագա հետազոտմանը: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո փաստաթղթերի բնօրինակները դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ դատարանը վերադարձնում է, եթե այդ փաստաթղթերը վերադարձնելը չի հակասի վճռի բովանդակությանը և եռայանը (օրինակ՝ ամուսնության վկայականը չի վերադարձվում ամուսնալուծության մասին վճիռ կայացվելու դեպքում): Փաստաթղթերի բնօրինակները վերադարձնելու դեպքում գործում թողնվում է փաստաթղթի բնօրինակի՝ դատարանի կնիքով հաստատված պատճենը կամ քաղվածքը:

§4. Իրեղեն ապացույցները

Իրեղեն ապացույցների կիրառումը քաղաքացիական դատավարությունում լայն տարածում ունի: Դրանք առավելապես օգտագործվում են սեփականության իրավունքի, գույքային պատճառված վնասը վերականգնելու, գույքն արգելանքից ազատելու, վաճառված իրերի որակի և կոմպլեկտայնության, աշխատանքների ոչ պատշաճ կատարման, հեղինակային իրավունքների օբյեկտների, գյուտի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի ապօրինի օգտագործման շուրջ ծագած վեճերով:

ԸԴՕ 78-րդ հոդվածի համաձայն՝ ***իրեղեն ապացույցներ են նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի***

հաստատման կամ ժխտման միջոց դառնալ:

Իրեղեն ապացույցների լեգալ բնորոշման մեջ արտացոլվել են ապացույցների տվյալ տեսակի երեք հիմնական **հատկանիշները:**

Առաջին, իրեղեն ապացույցների բովանդակությունը կազմող տեղեկությունների աղբյուրներ են նյութական աշխարհի օբյեկտները՝ առարկաները, հետևաբար դրանք անձնական ապացույցների թվին չեն դասվում:

Երկրորդ, այդ առարկաներում ապացուցողական նշանակություն կարող է ունենալ դրանց արտաքին տեսքը (օրինակ՝ արտաքին ազդեցության հետևանքով առաջացած որոշակի հետքերը, քերվածքները, ջնջումները և այլն), ներքին հատկությունները (որակը, ներքին փոփոխությունները, կառուցվածքը, կոմպլեկտայնությունը), գտնվելու վայրը կամ այլ հատկանիշները: Այս առումով իրեղեն ապացույցները տարբերվում են գրավոր ապացույցներից, որոնք ևս ունեն առարկայական տեսք: Ի տարբերություն գրավոր ապացույցների, որոնցում ապացուցողական նշանակություն ունի որոշակի նյութական կրիչներում տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով արտացոլված և ընթերցման միջոցով ընկալվող միտքը (տեղեկությունը), իրեղեն ապացույցները որոնվող փաստերի ներգործության (ազդեցության) հետևանքով առաջացած նյութական հետքեր են, որոնք դատարանն անմիջականորեն ընկալում է ոչ թե ընթերցման, այլ դիտողական ճանապարհով՝ անմիջական կամ փորձագետի (մասնագետի) միջոցով կատարվող գննությամբ: Միևնույն ժամանակ, ինչպես վերև արդեն նշել ենք, որպես իրեղեն ապացույցներ կարող են հանդես գալ բոլոր տեսակի գրավոր նյութերը (փաստաթղթերը), եթե դատական ճանաչողության առարկան ոչ թե փաստաթղթի բովանդակությունն է (դրանում արտացոլված միտքը), այլ որոնվող փաստերի ներգործության (ազդեցության) հետևանքով դրա վրա առաջացած հետքերը:

Երրորդ հատկանիշը, որն արտացոլվել է իրեղեն ապա-

ցույցների լեզալ բնորոշման մեջ, հատուկ է ամեն տեսակի ապացույցի. իրեղեն ապացույց կարող է հանդիսանալ այնպիսի առարկան կամ առարկայի այնպիսի հատկանիշը, որը կարող է հաստատել կամ հերքել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Այլ կերպ ասած՝ իրեղեն ապացույցը գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոց է: ուշագրավ է, որ առարկաները կարող են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատել ոչ միայն իրենց արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով, այլ նաև իրենց իսկ գոյությամբ (առկայությամբ): Այսպես, առանց իրավատիրոջ համաձայնության որոշակի ապրանքային նշանով պիտակավորված արտա դրանքի նմուշներն իրենց իսկ գոյությամբ հաստատում են ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների խախտման փաստը:

Քաղաքացիական դատավարությունում իրեղեն ապացույցների կարևոր առանձնահատկություններից է այն, որ դրանք գործով կարող են միաժամանակ հանդես գալ և՛ որպես իրեղեն ապացույցներ, և՛ որպես վեճի առարկա¹: Այսպես, ընդհանուր սեփականության իրավունքով կողմերին պատկանող բնակարանը բաժանելու վերաբերյալ գործով բնակարանը միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես վեճի առարկա, և՛ որպես իրեղեն ապացույց:

Առանձին կատեգորիայի գործերով որպես իրեղեն ապացույցներ կարող են հանդես գալ նաև *ֆիզիկական անձանց արտաքին գծերը*: Օրինակ, դիմագծերի համապատասխանությունը երեխայի և հավանական ծնողների միջև հայրության հաստատման գործով կարող է հանդիսանալ իրեղեն ապացույց²:

ՔԴՕ 79-82-րդ հոդվածներով սահմանվում են իրեղեն ապացույցները **Ներկայացնելու, հետազոտելու, պահ-**

1 Տե՛ս **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе. М.: «Юрайт», 2010, էջ 212:

2 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 248:

պանելու և տնօրինելու առանձնահատկությունները:

Իրեղեն ապացույցները հետազոտության օբյեկտ են դառնում այն բանից հետո, երբ դրանք դատարան են ներկայացվում գործին մասնակցող անձանց կողմից կամ վերջիններիս միջնորդությամբ դատարանի կողմից պահանջելուց հետո:

Իրեղեն ապացույցները դատարան են ներկայացվում բացառապես գործին մասնակցող անձանց կողմից:

Իրեղեն ապացույցները ևս կարող են ներկայացվել գործի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, իսկ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում նաև դատաքննության փուլերում:

Իրեղեն ապացույցները գործին մասնակցող անձանց կողմից կարող են ներկայացվել հայցադիմումին (դիմումին) կամ հայցադիմումի պատասխանին կից: Եթե դրանք չեն ներկայացվել վերը նշված փաստաթղթերին կից, ապա իրեղեն ապացույցները ներկայացվում են իրեղեն ապացույց թույլատրելու վերաբերյալ միջնորդությամբ: Ընդ որում, իրեղեն ապացույց թույլատրելու մասին միջնորդությունը ևս արվում է այն փաստի մատնանշմամբ, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել, և իրեղեն ապացույցի ներկայացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ իրեղեն ապացույցի նույնականացման տվյալների նշմամբ: Միջնորդությանն իրեղեն ապացույցը կցելու անհնարինության դեպքում դրան պարտադիր կցվում են իրեղեն ապացույցի պատճենը, լուսանկարը կամ տեսագրությունը: Դրանք իրեղեն ապացույցների վերարտադրություններ են, ուստի դասվում են ածանցական ապացույցների թվին, որոնց արժանահավատությունը կարող է ստուգվել դրանց սկզբնական իրեղեն ապացույցներն իրենց գտնվելու վայրում գնելու միջոցով:

Իրեղեն ապացույց թույլատրելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելիս գործին մասնակցող անձը պարտավոր է միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց՝ դրան ևս կցելով իրեղեն

ապացույցի պատճենը, լուսանկարը կամ տեսագրությունը:

Նշված պահանջները խախտելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում (ՔԴՕ 152 հոդ., մաս 5):

ՔԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցը հետազոտվում է զննման միջոցով՝ իրեղեն ապացույցի՝ տվյալ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող հատկանիշները բացահայտելու նպատակով՝ զննման օբյեկտը դատարանի կողմից նկարագրելու եղանակով: Անհրաժեշտության դեպքում զննմանը կարող է ներգրավվել փորձագետ, մասնագետ կամ վկա:

Չնկունը կատարվում է դատական նիստում: Եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ, ապա դատարանը զննումը կատարում է տեղում՝ պահպանելով դատական նիստի համար օրենքով սահմանված կարգը (ՔԴՕ 80 հոդ., մաս 2-3):

Ըստ ՔԴՕ 80-րդ հոդվածի 4-րդ մասի՝ զննման ընթացքին խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում (օրինակ, եթե իրեղեն ապացույց անշարժ գույքը տիրապետողը խոչընդոտում է դատարանի մուտքն անշարժ գույքի տարածք) դատարանը որոշում է կայացնում զննում կատարելու ընթացքն ապահովելու մասին և դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման: Որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Իրեղեն ապացույցների զննման արդյունքներն առաջին աստիճանի դատարանի խոսքից բառացի արձանագրվում են: Արձանագրությանը կարող են կցվել զննման ժամանակ օգտագործված կամ ստուգված պլանները, գծագրերը, լուսանկարները, փաստաթղթերի պատճենները,

զննման ժամանակ կատարված լուսանկարները կամ տեսագրությունները, ինչպես նաև այլ փաստաթղթերը (ՔԴՕ 80 հոդ., մաս 5):

Շուտ փչացող իրեղեն ապացույցները (օրինակ՝ սննդամթերքը) գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա դատարանի կողմից հետազոտվում են ապացույցների ապահովման կարգով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նման իրերը կամ դրանց առանձին հատկանիշները չեն կարող պահպանվել մինչև գործի դատաքննությունը:

Եթե իրեղեն ապացույցի զննումն ապացույցների ապահովման կարգով կատարել է նոտարը, ապա վերջինս կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է հարցաքննվել որպես վկա:

ՔԴՕ 81-րդ հոդվածը կարգավորում է իրեղեն ապացույցների **պահպանման կարգը**, քանի որ դրանք անվնաս և անփոփոխ վիճակում պահելը գործով ճշմարտությունը բացահայտելու տեսանկյունից չափազանց կարևոր է:

Իրեղեն ապացույցները, ընդհանուր կանոնի համաձայն, պահվում են դատարանում: Դրանք կցվում են գործին կամ հատուկ ցուցակով հանձնվում են դատարանի իրեղեն ապացույցների պահպանության սենյակ: Ընդ որում, փաստաթղթերն ուղղակիորեն դրվում են գործի մեջ, իսկ մանր իրերը ծրարավորվում և կցվում են գործին:

Իրեղեն ապացույցները հանձնվում են ի պահ, եթե չեն կարող կցվել գործին կամ բերվել դատարան:

ՔԴՕ 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցները, որոնք չեն կարող բերվել դատարան, պահպանվում են դրանց գտնվելու վայրում: Դրանք պետք է մանրամասն նկարագրվեն և (կամ) կնքվեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լուսանկարվեն կամ տեսանկարահանվեն՝ համապատասխան լուսանկարը կամ տեսագրությունը կցելով գործին: Ընդ որում, անձը, ում ի պահ է հանձնվել իրեղեն ապացույցը, կամ դատարանի աշխա-

տակազմը պարտավոր է միջոցներ ձեռնարկել իրեղեն ապացույցներն անփոփոխ վիճակում պահպանելու համար¹:

Իրեղեն ապացույցների **տնօրինման կարգը** (ճակատագիրը), որպես կանոն, որոշվում է եզրափակիչ դատական ակտով: Դատարանի եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույցը *վերադարձվում է* այն ներկայացրած անձին կամ *հանձնվում է* այն անձին, որի իրավունքը դրա նկատմամբ ճանաչել է:

Առանձին դեպքերում գործի քննության ընթացքում դատարանն իրեղեն ապացույցը հետազոտելուց հետո կարող է այն վերադարձնել ներկայացրած անձին, եթե վերջինս այդ մասին միջնորդում է, և նման միջնորդության բավարարումը չի խոչընդոտում ապացույցների հետագա հետազոտմանը (ՔԴՕ 82 հոդ., մաս 3):

Օրենքով նախատեսված դեպքերում վեճի առարկա իրեղեն ապացույցները կողմերից և ոչ մեկին չեն հանձնվում, այլ *իրացվում են* դատարանի կողմից սահմանված կարգով: Այսպես, Քաղ. օր. 197-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Այն իրեղեն ապացույցները, որոնք օրենքի համաձայն չեն կարող գտնվել առանձին անձանց տիրապետման ներքո, *հանձնվում են համապատասխան իրավասու պետական մարմնին* (ՔԴՕ 82 հոդ., մաս 2):

Բոլոր դեպքերում գործի նյութերում պետք է պահվեն

¹ Վեճի առարկա գույքի պահատվության (սեկվեստրի) պայմանագրից բխող հարաբերությունները կարգավորվում են Քաղ. օր. 853-րդ հոդվածով:

իրեղեն ապացույցի պատճենը, լուսանկարը կամ տեսագրությունը:

§5. Լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները

ՔԴՕ 67-րդ հոդվածով օրենսդիրն ապացույցների (ապացուցման միջոցների) թվին է դասել նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Գիտատեխնիկական նոր նվաճումները, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային հաղորդակցության միջոցների ու համակարգչային տեխնիկայի զարգացումը, դրան զուգահեռ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեսաձայնային սարքերի լայն կիրառումը, այդ թվում հասարակական վայրերի, ֆինանսական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման կետերում տարածքի տեսահսկումը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների կողմից հեռախոսային և տեսակապի միջոցով իրականացվող գործնական հաղորդակցության ձայնագրումը և տեսաձայնագրումը, լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների համատարած ներբեռնումը սոցիալական և այլ բնույթի կայքեր էապես ընդլայնել են ապացուցման քննարկվող միջոցների կիրառման հնարավորությունները քաղաքացիական դատավարությունում:

Քաղաքացիական գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը հաստատող նման ապացուցողական նյութը դատարանի կողմից, բնականաբար, անտեսվել չի կարող, առավել ևս, որ այն հաճախ իրավունքների արդյունավետ պաշտպանության միակ միջոցն է:

Լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները արժանահավատության համեմատաբար բարձր աստիճան ունեցող ապացույցներ են, քանի որ այլ տեսա-

կի ապացույցների համեմատ ունակ են ավելի բարձր մակարդակով արտացոլել օբյեկտիվ իրականությունը՝ ժամանակի ընթացքում չենթարկվելով որակական փոփոխությունների և աղավաղումների:

Այսպես, եթե վկաների, գործին մասնակցող անձանց ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը և դրա կապակցությամբ փորձագետների ցուցմունքները, մասնագետների բացատրությունները, ելևելով որոշակի անձանցից, կարող են պարունակել դիտավորյալ կամ ակամայից աղավաղված, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, արտացոլում են ոչ թե օբյեկտիվ իրականությունը, այլ իրադարձությունների և երևույթների սուբյեկտիվ ընկալման արդյունք են, ապա լուսանկարների, ձայնագրությունների ու տեսագրությունների միջոցով ամրագրվում և վերարտադրվում են օբյեկտիվ իրականության մեջ տեղի ունեցած իրադարձությունները, գործողությունները, վերջիններիս մասնակիցներին ու նրանց վարքագիծը «իրենց բնական վիճակում»: Դրանք թույլ են տալիս գրեթե լիարժեք ընկալել բանավոր խոսքի իմաստային բովանդակությունը, արտասանական երանգավորումը (ինտոնացիան) և այլ կարևոր մանրուքները, մտքեր արտահայտողի միմիկան, ժեստերը, խոսակցության տոնը, մարդու էմոցիոնալ վիճակը, նրա վերաբերմունքն արտահայտված բառերի, մտքերի, գործողությունների, եղելությունների, այլ անձանց ներկայության և նրանց վարքագծի նկատմամբ և այլն: Ձայնագրությունների և տեսագրությունների վերարտադրության ժամանակ ստեղծում է այսպես կոչված «ներկայության տպավորություն», որը թույլ է տալիս յուրովի դառնալ դրանցում ֆիքսված իրադարձությունների «ականատես», քանի որ դրանց հետազոտման ընթացքում դատարանը և գործին մասնակցող անձինք հնարավորություն են ստանում գործի հանգամանքներն ընկալել գրեթե այն ծավալով, որով կընկալեին այդ իրադարձությունների անմիջա-

կան ականատեսը լինելու դեպքում¹:

Լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների ապացուցողական արժեքը մեծացնում է նաև այն, որ դրանք, ի տարբերություն անձնական բնույթի և մարդկանցից ելնող ապացույցների, զերծ են վերը նշված տարատեսակ սուբյեկտիվ ազդեցություններից, իսկ դրանց կեղծումը (բովանդակության ձևափոխումը, մշակումը, մոնտաժումը, աղավաղումը) շատ ավելի հեշտ է հայտնաբերել:

Հաշվի առնելով քննարկվող ապացույցների առանձնահատկությունները՝ գործող դատավարական օրենքը սահմանել է դրանք ներկայացնելու, թույլատրելու և հետազոտելու հատուկ կանոններ, որոնք ամփոփվել են ՔԴՕ 83-րդ հոդվածում:

Ինչպես բոլոր այլ ապացույցները, լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները գործին մասնակցող անձանց կողմից կարող են ներկայացվել ինչպես հայցադիմումին (դիմումին) կամ հայցադիմումի պատասխանին կից, այնպես էլ վարույթի հետագա ընթացքում: ՔԴՕ 83-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է, որ բոլոր դեպքերում քննարկվող տեսակի ապացույցները պետք է ներկայացվեն դրանք թույլատրելու վերաբերյալ միջնորդությամբ: Ըստ նշված նորմի՝ լուսանկարներ (լուսաժապավեններ), ձայնագրություններ, տեսագրություններ ներկայացնող գործին մասնակցող անձը դրանք թույլատրելու միջնորդության մեջ պարտավոր է ոչ միայն նշել այն փաստը, որը ցանկանում է ապացուցել, այլ նաև մանրամասն ներկայացնել, թե երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել այդ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները ու տեսագրությունները: Տվյալ պահանջը պայմանավորված է ներկայացված լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների ու տեսագրությունների

1 Տե՛ս **Боннер А.Т.** Аудио- и видеозаписи как доказательство в гражданском и арбитражном процессе // Законодательство, М., 2008, N 3, էջ 83-84:

րի թույլատրելիության նախնական գնահատումն իրականացնելու անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով այն, որ միայն թվարկված փաստերն ուսումնասիրելու միջոցով դատարանը կարող է ստուգել լուսանկարահանելու, ձայնագրելու ու տեսագրելու օրինականությունը:

Համաձայն ՔԴՕ 83-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրություններն անելու ժամանակի, վայրի, պայմանների, ինչպես նաև դրանք անող սուբյեկտի մասին փաստերը չբացահայտելու կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու դեպքում ներկայացված ապացուցողական նյութը չի հետազոտվում և հանվում է ապացույցների կազմից: Օրենքի նման ձևակերպումից բխում է, որ քննարկվող փաստերից որևէ մեկը չբացահայտելը կամ դրանց արժանահավատությունը հերքող բավարար ապացույցների առկայությունն ընդհանրապես բացառում են ներկայացված ապացուցողական նյութի հետազոտումը: Ակնհայտ է, որ օրենսդիրը քննարկվող պահանջի խախտման դեպքերի համար սահմանել է ապացույցի «անընդունելիության կանխավարկած», որը կարող է հաղթահարվել միայն նշված տեղեկությունները ներկայացնելու միջոցով:

Ըստ ՔԴՕ 83-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լուսանկարներ (լուսաժապավեններ), ձայնագրություններ, տեսագրություններ և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելիս գործին մասնակցող անձը պարտավոր է միջնորդության պատճենը տրամադրել գործին մասնակցող այլ անձանց՝ դրան կցելով համապատասխան ապացույցի կրկնօրինակը՝ էլեկտրոնային կրիչի վրա: Ընդհանուր կանոնի համաձայն՝ միջնորդության պատճենը և համապատասխան ապացույցի կրկնօրինակը էլեկտրոնային կրիչով գործին մասնակցող այլ անձանց չտրամադրելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում (ՔԴՕ 152 հոդ., մաս

5): Դրա քննարկմանը դատարանը կարող է անդրադառնալ գործին մասնակցող անձանց համապատասխան կյուբերը տրամադրվելուց հետո:

Լուսանկարները (լուսաժապավենները), ծայնագրություններն ու տեսագրությունները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունների քննարկմանը դատարանը, որպես կանոն, անդրադառնում է նախնական դատական նիստում ներկայացված ապացուցողական կյուբի վերաբերելիության և թույլատրելիության հարցը լուծելիս: Եթե դրանք ներկայացվում են դատաքննության ընթացքում համապատասխան դատավարական գործողությունը կատարվում է գործի ըստ էության քննության համար հրավիրված դատական նիստում, իսկ եթե գործը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու՝ ապացույցները գրավոր ընթացակարգով հետազոտելիս:

Ապացույցների քննարկվող տեսակների թույլատրելիության հարցը լուծելու բարդությունը նրանում է, որ դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է պարզի համապատասխան լուսանկարները (լուսաժապավենները), ծայնագրություններն ու տեսագրությունները կատարելու օրինականությունը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցների օգտագործումն արգելվում է (Սահմանադրության 63 հոդ., մաս 3, ՔԴՕ 59 հոդ., մաս 2), նման ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում, դրանք թույլատրելի ապացույցներ չեն:

ՔԴՕ 83-րդ հոդվածի 3-րդ մասը մասնավորեցնում է ապացույցների թույլատրելիության նշված կանոնը՝ ամրագրելով դրույթ առ այն, որ եթե անձի լուսանկարահանումը, նրա ծայնագրումը կամ տեսագրումն իրականացվել է առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապա ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը դա չի արգելում:

Շարադրվածից բխում է, որ դատավարական օրենսդրությունը նախևառաջ թույլատրելի է համարում նկարահանված կամ ձայնագրված **անձի կամահայտնությամբ** արված լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Ուշագրավ է, որ օրենքը թույլատրելի է համարում ոչ միայն անձի *համաձայնությամբ*, այլ նաև նրա *իմացությամբ* կատարված լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները: Այլ կերպ ասած՝ քննարկվող գործողությունները կատարելու արդյունքում ձեռք բերված ապացույցները պետք է համարվեն թույլատրելի ոչ միայն այն դեպքերում, երբ անձը գրավոր ձևով, խոսքով կամ այդ մասին վկայող գործողությունների կատարման միջոցով տվել է իր համաձայնությունը կատարելու իր մասնակցությամբ որոշակի եղելությունների լուսանկարահանում, ձայնագրում կամ տեսագրում, այլ նաև այն իրավիճակներում, երբ, ուղղակիորեն իմանալով այդ մասին և ունենալով իրական հնարավորություն, չի առարկել նշված գործողությունների դեմ, միջոցներ չի ձեռնարկել իր լուսանկարահանումը, ձայնագրումը կամ տեսագրումը բացառելու ուղղությամբ:

Հարկ ենք համարում նշել, որ անձի համաձայնության բացակայությամբ, սակայն նրա իմացությամբ վերջինիս լուսանկարահանելու, ձայնագրելու և տեսագրելու օրինականությունը որոշելիս դատարանը պետք է նկատի ունենա, որ եթե նշված գործողությունները կատարվել են տվյալ անձի հիմնարար իրավունքների խախտմամբ (օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության կամ բռնության, սպառնալիքի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կիրառմամբ, այսինքն՝ անձի ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների ոտնահարմամբ), սահմանադրական վերոնշյալ արգելքի ուժով, ներկայացված ապացույցներն ապացուցողական ուժ ունենալ չեն կարող:

Ուշագրավ է, որ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայում ձևավորված մոտեցման համաձայն՝ թեև հասարակական վայրում տեսախցիկի օգտագործմամբ անհատի գործողությունները և շարժումներն առանց տեսագրման վերահսկելն ինքնին մասնավոր կյանքին միջամտություն է, այդպիսի անձնական տվյալների (մասնավորապես՝ նույնականացված անձի պատկերների) համակարգված, մշտական կամ տևական ձայնագրումը՝ նույնիսկ տվյալ անձի իմացությամբ, լրջագույն աղերսներ ունի մասնավոր կյանքի անձեռնմխելիության կոնվենցիոն իրավունքի հետ¹, ուստի նման ձայնագրումը, իսկ ապա նաև դրա մշակումը, օգտագործումը և հրապարակումը պետք է համապատասխանաբար լինեն **չթիրախավորված, նպատակային** (հետապնդեն իրավաչափ նպատակ), **համաչափ**, տեսաձայնագրվող անձի համար **ողջամտորեն կանխատեսելի**, ինչպես նաև **ուղեկցվեն չարաշահման դեմ պատշաճ երաշխիքներով**²: Հատկանշական է, որ գործերից մեկով Եվրոպական դատարանը մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը միջամտություն է համարել դասավանդման ընթացքում դասախոսների ոչ գաղտնի (նրանց իմացությամբ) թիրախավորված տեսանկարահանումը, երբ տեսաձայնագրությունները պավել էին մեկ ամիս և քննարկվել ու հաշվի էին առնվել ֆակուլտետի դեկանի կողմից, քանզի թիրախավորել են կոնկրետ անձանց, եղել

¹ Եվրոպական դատարանն այդ կապակցությամբ նշել է, որ նույնականացված անձի պատկերը նրա գլխավոր հատկանիշներից է, քանի որ բացահայտում է տվյալ անձի յուրահատուկ հատկությունները և տարբերակում նրան այլ անձանցից: Յուրաքանչյուր անձի՝ իր պատկերի պաշտպանության իրավունքը անձնական զարգացման հիմնական բաղադրիչներից է և ենթադրում է այդ պատկերի օգտագործումը վերահսկելու իրավունք: Չնայած որ շատ դեպքերում նման օգտագործումը վերահսկելու իրավունքը ներառում է անհատի հնարավորությունը՝ հրաժարվելու իր նկարի հրապարակումից, այն նաև ներառում է անհատի իրավունքը՝ առարկել ձայնագրելու, այլ անձի կողմից այն պահելու և վերարտադրելու դեմ (P.G. և J.H. ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ 25.09.2001 թ. վճիռը, գանգատ թիվ 44787/98):

² Բարբուլետսկուն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ 28.10.1999 թ. վճիռը, գանգատ թիվ 28342/95, Կարին Կեպկեն ընդդեմ Գերմանիայի գործով ՄԻԵԴ 05.10.2010 թ. վճիռը, գանգատ թիվ 420/07:

են ոչ նպատակային և անհամաչափ¹:

Ինչ վերաբերում է առանց անձի համաձայնության կամ իմացության (**գաղտնի**) արված լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների ու տեսագրությունների թույլատրելիությանը, ՔԴՕ 83-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել է կանոն առ այն, որ նման ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ օրենքն ուղղակիորեն չի արգելում անձի լուսանկարահանումը, ձայնագրումն ու տեսագրումն առանց նրա համաձայնության կամ իմացության:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ՔԴՕ 83-րդ հոդվածի 3-րդ մասում ձևակերպված ապացույցների թույլատրելիության կանոնն անհրաժեշտ է դիտարկել բացառապես անձի հիմնական իրավունքների խախտմամբ ապացույցներ ձեռք բերելու սահմանադրական արգելքի լույսի ներքո. գաղտնի եղանակով արված լուսանկարը, ձայնագրությունը կամ տեսագրությունը թույլատրելի է, եթե այն կատարելիս չեն խախտվել անձի հիմնական իրավունքները²:

Նշվածը հաշվի առնելով՝ պետք է անընդունելի համարել գործնականում հաճախ հանդիպող այն իրավիճակները, երբ դատարանները գաղտնի եղանակով արված լուսանկարը, ձայնագրությունը կամ տեսագրությունը ճանաչում են անթույլատրելի ապացույց ոչ թե այն կատարելուց (ձեռք բերելուց), մշակելուց կամ պահպանելուց անձի հիմնական իրավունքները խախտելու (իրավունքի իրականացման անհարկի և ոչ իրավաչափ միջամտություն կատարելու) փաստի ուժով, այլ զուտ այն պատճառով, որ անձը տեսաձայնային այս կամ այն եղանակով ամրագր-

1 Մատովիչը և Միրկովիչն ընդդեմ Մոնտենեգրոյի գործով ՄԻԵԴ 28.11.2017 թ. վճիռը, գանգատ թիվ [70838/13](#):

2 Գաղտնի եղանակով ձայնագրություններ և տեսագրություններ կատարելիս առանձին հիմնական իրավունքների խախտման դրսևորումների և այդ եղանակով ձեռք բերված ապացույցների թույլատրելիության մասին առավել մանրամասն տե՛ս **Գրիգորյան Վ.Հ.**, Գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հետ կապված խնդիրները քաղաքացիական դատավարությունում, եր., «Հայրապետ» հրատ., 2019:

վել է իր կամքին հակառակ: Քննարկվող տեսակի ապացույցները չեն կարող a priori ճանաչվել անթույլատրելի ապացույց¹:

Հետևում է, որ անկախ կատարման եղանակից ներկայացված լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները թույլատրելու հարցը լուծելիս, ինչպես նաև հետագայում ապացույցները գնահատելիս դատարանի խնդիրն է ստուգել՝ ներկայացված լուսանկարահանումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարելիս արդյո՞ք թույլ չի տրվել Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ով ամրագրված որևէ հիմնարար իրավունքի խախտում, եթե թույլ է տրվել որևէ միջամտություն հիմնարար իրավունքին, արդյո՞ք այն կարող է գնահատվել որպես իրավաչափ: Հետևում է, որ եթե նշված գործողությունները կատարվել են, օրինակ, բնակարանի, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հեռախոսային խոսակցությունների կամ այլ հաղորդակցության գաղտնիության իրավունքների խախտմամբ կամ խոշտանգումների, բռնության, սպառնալիքի գործարմամբ, դատարանն այն պետք է անթույլատրելի ճանաչի՝ որպես «հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույց»: Մինչդեռ եթե լուսանկարը, ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարելիս որևէ հիմնական իրավունք չի խախտվել, ապա ստացված ապացույցները պետք է դիտարկել որպես թույլատրելի ապացույց:

Հարկ է նկատի ունենալ, որ առանց անձի համաձայնության կամ իմացության նրան լուսանկարելը, ձայնագրելը և տեսագրելը լրջագույն աղերսներ ունի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ և Սահմանադրության 31-րդ հոդվածներով նախատեսված անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև

1 Տե՛ս **Գ.Հովհաննիսյան, Ա.Ղամբարյան, Ա.Սարգսյան**, Մասնավոր անձի կատարած գաղտնի տարագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում, Եր., «ՎՄԿ Պրինտ» հրատ., 2017, էջ 101:

դրա կարևորագույն երաշխիքներ հանդիսացող բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության հիմնարար իրավունքների հետ: Բոլոր նշված իրավունքների սահմանափակումը (դրանց իրականացմանը միջամտությունը) չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման և բացահայտման, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 31-34-րդ հոդ.):

Նշված տեսանկյունից ուշագրավ են մասնավոր ածի կողմից կատարված գաղտնի ձայնագրությունների և տեսագրությունների իրավաչափության կապակցությամբ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վերլուծելով քննարկվող ապացույցների կիրառելիության հարցը Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների լույսի ներքո՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ մասնավոր անձ-գրուցակցի կողմից անձնական խոսակցությունների գաղտնի ձայնագրառումը և նման ձայնագրության օգտագործումն ինքնին (per se) չի խախտում Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե այն տվյալ անձի կողմից արվել է **կամավոր հիմունքներով**, սեփական **իրավաչափ նպատակներով** (իր պնդումների արժանահավատությունը ցույց տալու և անձնական անվտանգության նկատառումներով), **անձնական նախաձեռնությամբ և միջոցներով՝** ձայնագրառող անձի համար քննություն իրականացնող պաշտոնատար անձանց լռելյայն համաձայնության և տեխնի-

կական աջակցության բացակայության պայմաններում¹:

Մեկ այլ գործով արձանագրելով, որ աշխատանքային հարաբերություններում աշխատողի մասնավոր կյանքի անձեռնմխելիության ցանկացած միջամտություն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակների իրականացման համար և համաչափ՝ յուրաքանչյուր գործի հանգամանքներին՝ Եվրոպական դատարանն առանձնացրել է մի շարք գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն աշխատավայրում տեսանկարահանման միջոցների կիրառման իրավաչափությունը գնահատելիս²: Ըստ Եվրոպական դատարանի՝ միջամտության իրավաչափությունը ստուգելիս ներքին դատարանները պետք է պարզեն՝ արդյո՞ք աշխատակիցը ծանուցվել է գործատուի կողմից տեսանկարահանման միջոցների կիրառման հնարավորության և տեսանկարահանման իրականացման վերաբերյալ: Ընդ որում, վերահսկման բնույթի մասին **ծանուցումը պետք է լինի հստակ և արվի նախքան դրա իրականացումը**³: Ըստ Դատարանի՝ թեև համապատասխան միջազգային և եվրոպական ստանդարտները չեն պահանջում այն անձանց նախնական համաձայնությունը, ովքեր տեսանկարահանվում են կամ որոնց անձնական տվյալները հավաքվում են նմանատիպ միջոցների կիրառմամբ, այդ կանոնները սահմանում են, որ անհրաժեշտ է տեղեկացնել շահագրգիռ անձանց այդպիսի տվյալների հավաքագրման

1 Տե՛ս Վան Վոնդելն ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԴ՝ 25.10.2007 թ. վճիռը, գանգատ թիվ 38258/03:

2 Տե՛ս Լոպես Ռիբայոյան և մյուսներն ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ՝ 17.10.2019 թ. վճիռը, գանգատ թիվ [1874/13](#) և [8567/13](#): Այսուհետ՝ «Սուպերմարկետի գործ»: Տվյալ գործի շրջանակներում Եվրոպական դատարանը քննարկել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության և այլ անձանց էական շահերի պաշտպանության հիմնավորված հավասարակշռությունը գտնելու անհրաժեշտությունը:

3 Ինչպես նշվել է վերը, ըստ Եվրոպական դատարանի դիրքորոշման՝ նույնիսկ անձի իմացությամբ (յուր համաձայնությամբ) տեսաձայնագրման կատարումը, դրա հետագա մշակումը, օգտագործումը և իրապարակումը պետք է լինեն չթիրախավորված, նպատակային և համաչափ: Հակառակ դեպքում առկա է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում:

մասին: Դատարանի դիրքորոշմամբ **Նախնական տեղեկատվության բացակայությունը կարող է արդարացվել միայն հասարակական կամ մասնավոր շահերի պաշտպանության գերակշռող պահանջով**: Միևնույն ժամանակ, եթե այդպիսի տեղեկացումը բացակայում է, ապա առավել կարևորվում են հետևյալ չափանիշները.

1) Գործատուի կողմից իրականացվող **հսկողության չափը և աշխատողի անձնական տիրույթ ներխուժելու աստիճանը**: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել վերահսկվող տարածքում գաղտնիության մակարդակը՝ ժամանակի և տարածության սահմանափակումների և արդյունքներին հասանելիություն ունեցող անձանց քանակի հետ միասին¹:

2) Արդյո՞ք գործատուն ներկայացրել է **իրավաչափ հիմքեր վերահսկման և դրա չափի հիմնավորման համար**: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ յուրացման կամ որևէ այլ իրավախախտում կատարելու

1 Ուշագրավ է, որ Եվրոպական դատարանն անհրաժեշտ է համարել տարբերակել տեսավերահսկման վայրերը՝ ըստ նրա, թե որքանով տվյալ վայրում աշխատակիցը կարող էր ողջամտորեն ակնկալել մասնավոր կյանքի պաշտպանություն: Ըստ Դատարանի՝ այդ ակնկալիքը շատ բարձր է այն վայրերում, որոնք իրենց բնույթով խիստ անձնական են, ինչպիսիք են գուգարանները կամ հանդերձարանները, որտեղ ուժեղացված պաշտպանությունը կամ նույնիսկ տեսանկարահանումների լիակատար արգելքն արդարացված են: Այն բարձր է մնում փակ աշխատանքային տարածքներում, ինչպիսիք են աշխատանքային առանձնասենյակները: Այն ակնհայտորեն ցածր է այն վայրերում, որոնք տեսանելի կամ հասանելի են գործընկերների կամ հանրության համար: Սուպերմարկետի գործի շրջանակներում Դատարանը քննարկվող չափանիշով իրավաչափ է համարել տեսանկարահանումը՝ հաշվի առնելով այն, որ՝ ա. աշխատողի գաղտնի տեսանկարահանումը սուպերմարկետի տարածքում կատարվել է այնպիսի վայրում, որը բաց է հանրության համար և որտեղ կատարված գործողությունները՝ գնումների համար վճարումների ստացումը, մասնավոր բնույթ չեն կրում.

բ. տեսանկարահանման միջոցով հսկողությունը տևել է տասը օր և դադարել է հափշտակություն կատարող աշխատողներին հայտնաբերելուց անմիջապես հետո, հետևաբար եղել է չափավոր.

գ. տեսանկարահանման միջոցով ձեռք բերված ապացույցներին, նախքան դրանց մասին տեսանկարահանված անձանց տեղեկացնելը, ծանոթացել են խիստ սահմանափակ թվով անձինք՝ սուպերմարկետի մենեջերը, ընկերության պաշտոնական ներկայացուցիչը և արհմիության ներկայացուցիչը, հետևաբար տեսանկարահանված անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության միջամտությունը չի հասել մեծ լրջության:

աննշան կասկածը չի կարող արդարացնել գործատուի կողմից թաքնված տեսախցիկների տեղադրումը: Ծանրակշիռ արդարացում կարող է ճանաչվել բացառապես **հիմնավոր կասկածը** և իրավախախտման արդյունքում հայտնաբերված կորուստների նշանակալի չափը¹:

3) Արդյո՞ք **հնարավոր չէր կիրառել ավելի քիչ ներխուժող մեթոդներ**, այլ կերպ ասած՝ գործատուի հետապնդած նպատակին չէր կարելի հասնել աշխատողի անձնական գաղտնիությանն ավելի քիչ միջամտելու միջոցով²:

4) Ինչպիսի՞ն են վերահսկման ենթարկված աշխատողի համար **վերահսկման հետևանքները**: Պետք է հաշվի առնել գործատուի կողմից վերահսկման արդյունքների օգտագործումը և արդյո՞ք այդպիսի արդյունքներն օգտագործվել են նշված նպատակին հասնելու համար³:

5) Արդյո՞ք աշխատողին տրամադրվել են **համապա-**

1 Սուպերմարկետի գործով Դատարանը քննարկվող չափանիշով արդարացված է համարել 10 օր անընդմեջ դրամարկղի և դրա մերձակայքի գաղտնի տեսավերահսկումը և նկարահանումը, քանի որ գաղտնի տեսախցիկների տեղադրումը հիմնավորված է եղել մենեջերի այն հիմնավոր կասկածով, որ դրամարկղից պարբերաբար կատարվում են գողություններ, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել սեփականության իրավունքի պաշտպանության և ընկերության նորմալ գործունեության ապահովման նպատակով: Ինչ վերաբերում է տեսավերահսկման տևողությանը, այն ևս ճանաչվել է իրավաչափ, քանի որ չի գերազանցել գողության կասկածները հաստատելու համար անհրաժեշտ չափը:

2 Նշված գործի շրջանակներում քննարկվող չափանիշով Դատարանը գտել է, որ այլ միջոց չկար հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար, քանի որ գողություն կատարող անձանց շրջանակի անորոշության պայմաններում բացահայտ մեթոդների կիրառումը կարող էր անհնարին դարձնել իրավախախտումներ կատարող աշխատակիցների բացահայտումը: Հետևաբար կիրառված միջոցը պետք է համարել «անհրաժեշտ»:

3 Սուպերմարկետի գործի շրջանակներում քննարկվող չափանիշով Դատարանն տեսանկարահանումը համարել է իրավաչափ՝ հաշվի առնելով այն նաև հանգամանքը, որ թեև սուպերմարկետի դրամարկղի մերձակայքի գաղտնի տեսավերահսկման հետևանքները նշանակալից են եղել տեսանկարահանված անձանց համար, քանի որ այդ աշխատակիցներին աշխատանքից ազատել են այդ միջոցներով ձեռք բերված տեսագրությունների հիման վրա, տեսանկարահանումներն ու ծայնագրությունները գործատուի կողմից չեն օգտագործվել այլ նպատակներով, քան ապրանքների արձանագրված կորուստների համար պատասխանատուներին հետապնդելը և նրանց նկատմամբ կարգապահական միջոցներ ձեռնարկելն են:

տասխան երաշխիքներ, հատկապես այն դեպքում, երբ գործատուի վերահսկողական գործողությունները կրել են ներխուժող բնույթ: Տեսանկարահանված աշխատողի համար պետք է երաշխավորված լինի ներկայացված ապացուցողական նյութին ծանոթանալու, տեսանկարահանման միջոցով ձայնագրված կադրերի իսկությունը, լավորակությունը և ճշգրտությունը վիճարկելու, անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությամբ նախատեսված խախտումների համար գործատուի պատասխանատվության հարցը բարձրացնելու հնարավորությունը: Միաժամանակ պետք է ապահովվի գործով ձևավորված ապացուցողական զամբյուղում առկա այլ ապացույցներով ներկայացված տեսաձայնագրությունների բովանդակությունը ստուգելու հնարավորությունը¹:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը թիվ L7/0002/01/18 քրեական գործով 11.04.2019 թ. կայացված որոշման շրջանակներում բավականին արժեքավոր դիրքորոշում է արտահայտել քրեական դատավարությունում մասնավոր անձի կողմից հեռախոսային և այլ խոսակցության ձայնագրառման թույլատրելիության վերաբերյալ, որը մեր խորին համոզմամբ լիովին կիրառելի են նաև քաղաքացիական գործերով ներկայացված նման ապացուցողական նյութի թույլատրելիության հարցը լուծելիս:

Նախ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չպետք է նույնացնել քրեա-

¹ Այն հանգամանքը, որ Սուպերմարկետի գործով տեսաձայնագրությունները միակ ապացույցը չէին, և որոշում կայացնելիս ներքին դատարանները հաշվի են առել նաև կողմերի հայտարարությունները, սուպերմարկետի մենեջերի, ընկերության օրինական ներկայացուցչի, աշխատակազմի ներկայացուցչի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, որը համեմատում է տեսանկարահանմամբ արձանագրված պատկերները վճարման ստացականների պատկերների հետ, թույլ է տվել Եվրոպական դատարանին արձանագրելու, որ ապացույցների կազմում տեսանկարահանման միջոցով ձեռք բերված պատկերների օգտագործումը չի խաթարել գործով դատավարության արդարությունը:

կան հետապնդման մարմինների կողմից քրեադատավարական ճանապարհով անձի հաղորդակցության վերահսկման, այդ թվում՝ նրանց իրազեկվածությամբ՝ քրեական կամ այլ պաշտոնական քննության հետ համագործակցող անձանց կողմից իրականացված ձայնագրաման հետ, և դրանց համար սահմանված չափանիշները մեխանիկորեն կիրառել մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցությունների ձայնագրության նկատմամբ: Այսինքն, ի տարբերություն մասնավոր անձանց, որոնց գործողությունները ենթակա չեն իրավական կարգավորման և չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, քրեական վարույթի հանրային մասնակիցները, հանրային շահի պաշտպանությունն ապահովելու իրենց գործառույթի շրջանակներում, անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը կարող են սահմանափակել բացառապես օրենքով սահմանված դեպքերում, օրենքով սահմանված կարգով և դատարանի որոշմամբ: Նշված չափանիշները ենթակա են վերագրման պետական իշխանության մարմիններին, ովքեր, ի տարբերություն մասնավոր անձանց, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ուստի, նշված չափանիշները նպատակ են հետապնդում կանխելու պետական իշխանության մարմինների հնարավոր չարաշահումները և պաշտպանելու անձի մասնավոր ու ընտանեկան կյանքն անհարկի միջամտությունից:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչելու և քրեական դատավարությունում օգտագործելու հնարավորությունը գնահատելիս քրեադատավարական կարգավորումները չպետք է մեկնաբանվեն չափազանց ձևականացված: Այսինքն՝ **հեռախոսային խոսակցության ձայնագրությունը**

մասնավոր անձի կողմից կատարելն ինքնին չպետք է դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ դրա օգտագործումը բացառելու համար: Այլ կերպ, ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարած լինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես դատավարական այնպիսի խախտում, որի նկատմամբ կիրառելի կլինեն քրեական հետապնդման մարմիններին վերագրվող պահանջները և որն անվերապահորեն կվկայի այն որպես ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ մասնավոր անձի կողմից վարույթն իրականացնող մարմինն ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է ճանաչվել որպես ապացույց և ենթարկվել իրավական գնահատման՝ ըստ անհրաժեշտության նաև հիմք հանդիսանալով դատավարական գործողությունների կատարման համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը կարևորել է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնվեն մասնավոր անձի կողմից օրենքով չկանոնակարգված եղանակով կատարված հեռախոսային ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը գնահատելիս: Դրանք հանգեցվել են հետևյալին:

ա) Հեռախոսային խոսակցության ձայնագրաման իրականացման պայմանները.

Անհրաժեշտ է գնահատման ենթարկել այն հանգամանքները, որոնց պարագայում իրականացվել է հեռախոսային խոսակցության ձայնագրառումը: Այս առումով *առանցքային նշանակություն ունի այն, թե արդյո՞ք հաղորդակցվող անձը ողջամտորեն ուներ կամ կարող էր ունենալ իր մասնավոր կյանքի գաղտնիության լեգիտիմ ակնկալիք:* Այսինքն՝ անձի գտնվելու վայրից (օրինակ, հասարակական վայրում կամ մասնավոր տարածքում գտնվելը), այդ վայրում հնարավոր տեխնիկական սպասարկման միջոցների առկայությունից (օրինակ, տեսա-

ծայնագրող սարքերի հսկողության ներքո գրուցելը), հեռախոսագանգի նպատակից (օրինակ, անանուն, գործնական կամ անձնական բնույթի գրույց ունենալը), ծայնագրված լինելու կամահայտնությունից (օրինակ, ծայնագրված լինելուն համաձայնվելը կամ հրաժարվելը) և մասնավոր կյանքի գաղտնիության երաշխիքից օգտվելու մասին վկայող այլ հանգամանքներից ելնելով *պետք է պարզել, թե անձը կարո՞ղ էր «պահանջել մեկուսացում» և ողջամտորեն ակնկալել, որ գտնվում է անձնական կյանքի տիրույթում*: **Լեգիտիմ ակնկալիքի առկայության պայմաններում միայն կարող է քննարկման առարկա դարձվել իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցը**:

բ) Հեռախոսային խոսակցության ծայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության բնույթը.

Հեռախոսային խոսակցության ծայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության իրավաչափությունը գնահատման ենթարկելու համար էական նշանակություն ունի այն իրավունքների շրջանակը, որոնք շոշափվել են իրականացված գաղտնի ծայնագրությամբ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկ է պարզել՝ արդյո՞ք հեռախոսային խոսակցության ծայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացվել է միջամտություն և անձի ո՞ր իրավունքների նկատմամբ է իրականացվել այդ միջամտությունը: Թեև Վճռաբեկ դատարանը չի բացահայտում միջամտության բնույթը պարզելու նշանակությունը, կարծում ենք, որ դա անհրաժեշտ է ծայնագրվող անձի անձնական տիրույթ ներխուժելու աստիճանը և միջամտության չափավորությունը որոշելու համար:

գ) Հեռախոսային խոսակցության ծայնագրառման նպատակը.

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ծայնագրառումը որպես ապացույց օգ-

տագործելու հնարավորությունը որոշելիս պետք է գնահատման ենթարկել ձայնագրության իրականացման նպատակը: Կատարված թույլատրելի համարվելու համար **ձայնագրառումը պետք է հետապնդած լինի իրավաչափ նպատակ, այն է՝ պաշտպանելու անձի իրավունքներն ու օրինական շահերը, ուղղված լինի հակաիրավական վարքագծի կանխմանը, բացահայտմանը և նշանակալի մասնավոր շահերը (“significant private interest”) պաշտպանելուն:** Այլ կերպ ասած, հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է արդարացված համարվել, եթե հետապնդել է անձի իրավական պաշտպանությունն ապահովելու նպատակ:

դ) Հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը.

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը որոշելիս առանցքային նշանակություն ունի մրցակցող շահերի, այն է՝ մի կողմից՝ հաղորդակցվող անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի և մյուս կողմից՝ հանցագործության կանխման, բացահայտման հանրային շահի հարաբերակցության գնահատումը: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կարևոր է համարել այն, որ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը պետք է լինի առավել ծանրակշիռ և գերակայի այլ անձի իրավունքների նկատմամբ օրենքով կանոնակարգված ընթացակարգերի կիրառմամբ միջամտություն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ընտրված միջոցը՝ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը, արդարացված էր սպառնացող վտանգի բնույթին և հետևանքներին համապատասխան այն կանխելու, չեզոքացնելու կամ բացահայտելու համար ու ունե՞ր ծանրակ-

շիռ արդարացում («weighty justification»): Ըստ Վճռաբեկ դատարանի՝ մրցակցող շահերի միջև հարաբերակցությունը գնահատելիս կարևոր է պարզել՝ արդյո՞ք գործի փաստական հանգամանքների համատեքստում ողջամտորեն բացակայել են այլընտրանքային՝ անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտության միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունները:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարել ընդգծել, որ լիարժեք մասնավորության լեգիտիմ ակնկալիքի դեպքում, երբ խոսակցությունն առնչվում է խորապես անձնական բնույթ կրող տեղեկություններին (օրինակ, ինտիմ բնույթի), պաշտպանվող հանրային շահի կշիռը պետք է լինի առավել բարձր՝ արդարացնելով որպես իրավական պաշտպանության վերջին միջոց («last resort») հեռախոսային խոսակցության ձայնագրառումը:

ե) Հեռախոսային խոսակցության ձայնագրառման շարժառիթները.

Այս առումով կարևոր նշանակություն ունի հեռախոսային խոսակցության ձայնագրառման դրդապատճառների ուսումնասիրությունը: Մասնավորապես անհրաժեշտ է որոշել, թե արդյո՞ք անձը հեռախոսային խոսակցությունը ձայնագրելիս գործել է բարեխղճորեն, թե չարամիտ դիտավորությամբ: Որպես այդպիսին, դրանք ենթակա են գնահատման ըստ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների՝ համակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրման ենթարկելով ձայնագրառողի վարքագիծը: Չարամիտ դիտավորության մասին կարող է վկայել այն, որ անձը հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կանխամտածված կատարած լինի խաբեության կամ հաղորդակցվողի վստահությունը չարաշահելու միջոցով՝ ներկայացնելով խոսակցության հիմնական բովանդակությունից կտրված, օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրող տեղեկատվություն: Ձայնագրառողը չպետք է նպաստած

լինի հեռախոսային խոսակցության բովանդակության ձևավորմանը՝ սահրելով, դրդելով այլ անձի՝ իր համար «բարենպաստ» տեղեկատվություն հայտնել: Միաժամանակ, ներկայացված ձայնագրառման ամբողջականության այնպիսի խախտումը, մոնտաժումը կամ փոփոխությունը, որը ողջամտորեն կարող է խեղաթյուրել խոսակցության բովանդակությունը, ևս կարող է վկայել ձայնագրառողի չարամիտ դիտավորության մասին:

Է) Հեռախոսային խոսակցության ձայնագրառման սուբյեկտը.

Ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը գնահատելիս իրավակիրառողները պետք է ուշադրություն դարձնեն նաև այն հանգամանքին, թե ում կողմից է այն կատարվել՝ հեռախոսային խոսակցության անմիջական մասնակցի, թե երրորդ անձի: Վերջին դեպքում որպես բացառիկ միջոց հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է արդարացվել հանրային շահի, իրավական պաշտպանության առարկայի կարևորությամբ:

ը) Հեռախոսային խոսակցության ձայնագրառումը քրեական վարույթի ընթացքում.

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը որոշելիս էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ձայնագրությունն իրականացվել է մինչև քրեական վարույթի սկսվելը, թե դրանից հետո: Գործող քրեադատավարական մոդելի պայմաններում քրեական վարույթով ապացույցների հավաքման ծանրակշիռ դերը վերապահված է քրեական հետապնդման մարմիններին, ովքեր, օժտված լինելով համապատասխան քրեադատավարական գործիքակազմով և պետաիշխանական լիազորություններով, իրավասու են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով սահմա-

նափակել անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքը: Ուստի, հեռախոսային խոսակցության ձայնագրառումը չպետք է կրի անձի մեղա դրանքը հիմնավորելու համար քրեական վարույթին զուգահեռ գործով ապացույց ձեռքբերելու դատավարական նպատակ: Նշվածը գնահատելիս էական նշանակություն կարող է ունենալ նաև ձայնագրառողի հնարավոր նախաձեռնողականության դրսևորումը: Մասնավորապես պետք է պարզվի, թե արդյո՞ք խոսակցությունը կայացել է ձայնագրառողի ակտիվ, նախապես ծրագրված գործողությունների արդյունքում, թե նվազագույն ողջամիտ ջանքերի գործադրմամբ:

Միաժամանակ, քրեական վարույթի ընթացքում կատարված ձայնագրությունն օգտագործելու հնարավորությունը որոշելիս, մրցակցող շահերի տեսանկյունից, կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև անձի իրավունքների նկատմամբ իրականացվող ոտնձգության շարունակականության գնահատումը:

Ըստ էության վերահաստատելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Նույն որոշման շրջանակներում կարևորել է նաև հաղորդակցության գաղտնիության իրավունքը կրողի արդար դատաքննության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ նշելով, որ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես անձի մեղա դրանքը հիմնավորող ապացույց օգտագործելու դեպքում, վերջինիս համար պետք է երաշխավորված լինի այդ ձայնագրության բովանդակությունը, դրա իսկությունը մրցակցային դատավարության պայմաններում վիճարկելու, ձայնագրառողին հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորությունը: Բացի դրանից, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյո՞ք հեռախոսային խոսակցության ձայնագրությունն անձի մեղա դրանքը հիմնավորող միակ կամ վճռորոշ

ապացույցն է, թե ոչ: Այլ կերպ ասած, վարույթի ընդհանուր առմամբ արդարացիությունը գնահատելու համար առանցքային նշանակություն ունի այն, թե գործով ձևավորված ապացուցողական զամբյուղում առկա այլ ապացույցներով արդյո՞ք հնարավոր է ստուգել հեռախոսային խոսակցության բովանդակությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացություն անել, որ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ մասնավոր անձի կողմից ներկայացված լուսանկարները, ձայնագրությունները, տեսագրությունները a priori չեն կարող ճանաչվել անթույլատրելի: Յուրաքանչյուր կոնկրետ գործով դրանք պետք է թեստավորվեն ըստ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներով ձևակերպված չափանիշների՝ պարզելու համար՝ արդյո՞ք անձի լուսանկարահանումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարելիս թույլ չի տրվել նրա որևէ հիմնարար իրավունքի խախտում, եթե թույլ է տրվել որևէ միջամտություն հիմնարար իրավունքին, արդյո՞ք այն կարող է գնահատվել որպես իրավաչափ:

Լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների՝ որպես ապացույցների ինքնուրույն տեսակի հատկանիշները կանխորոշում են դրանց որոշակի **հետազոտման** առանձնահատկությունները:

Եթե լուսանկարները հետազոտվում են պարզ դիտման միջոցով, ապա լուսաժապավենների, ձայնագրությունների և տեսագրությունների ընկալումը և վերլուծությունը կատարվում է դրանք համապատասխան սարքավորումների կիրառմամբ վերարտադրելու միջոցով:

Դատական նիստում քննարկվող ապացույցների վերարտադրությունը կատարելիս պետք է ապահովվի դատավարության մասնակիցների և դատական նիստերի դահլիճում ներկա բոլոր անձանց հնարավորությունն անմիջականորեն ընկալելու հետազոտվող ապացույցի տեսաձայնային բովանդակությունը:

Ձայնագրությունները և տեսագրությունները հետագու-տելիս չափազանց կարևոր է նշել դրանց այն հատվածնե-րը, որոնք անմիջականորեն վերաբերվում են ապացուց-մանն ենթակա փաստերին: Ընդ որում, գործին մասնակ-ցող անձանց պահանջով կամ դատարանի նախաձեռ-նությամբ կարող է կատարվել այդ հատվածների կրկնակի վերարտադրություն՝ ապահովելով գործին մասնակցող յուրաքանչյուր անձի հնարավորությունը վերարտադրված նյութի վերաբերյալ ներկայացնելու իր դիրքորոշումը: Անհ-րաժեշտության դեպքում համապատասխան ապացուցո-ղական նյութը դատական նիստում կարող է վերարտադր-վել մի քանի անգամ:

Եթե լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագ-րությունների և տեսագրությունների հետազոտումը պա-հանջում է հատուկ գիտելիքների կիրառում, դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կարող է հրավիրել մասնագետ կամ նշանակել փորձաքննություն: Դա վերաբերվում է նաև այն դեպքերին, երբ ներկայաց-ված ապացուցողական նյութի տեխնիկական առանձնա-հատկությունների պատճառով այն չի կարող հետազոտ-վել դատարանում առկա սարքավորումների կիրառմամբ:

Քանի որ, ի տարբերություն գրավոր ապացույցների, լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրություն-ների և տեսագրությունների իսկությունը վիճարկելու դեպքերի համար օրենքը չի սահմանել ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ, ընդ-հանուր կանոնի ուժով, քննարկվող ապացույցները կեղծ-ված լինելու փաստը վիճելի մնալու անբարենպաստ հետևանքները պետք է կրի գործին մասնակցող այն ան-ձը, որը վիճարկում է տվյալ ապացույցի իսկությունը՝ վկա-յակոչելով դրա կեղծված լինելու փաստը:

ՔԴՕ 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լուսան-կարների (լուսաժապավենների), ձայնագրությունների և տեսագրությունների պահպանության և տնօրինման նկատմամբ *mutandis mutatis* կիրառելի են իրեղեն ապա-

ցույցները պահպանելու և տնօրինելու մասին կանոնները:

§6. Փորձագետի եզրակացությունը

ՔԴՕ 67-րդ հոդվածով ապացույցների թվին են դասվում նաև փորձագետների եզրակացությունները:

Գործի դատական քննության ընթացքում փորձաքննությունը նշանակելու անհրաժեշտություն է առաջանում այն դեպքում, երբ դատարանը բախվում է հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտության հետ:

ՔԴՕ 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **փորձագետի եզրակացությունը գործի քննության ընթացքում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով ձեռքբերված գրավոր փաստաթուղթն է, որը տրվում է փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով:** Հետևում է, որ փորձաքննությունը պետք է նշանակվի բոլոր այն դեպքերում, երբ ապացույցների ընկալման կամ հետազոտման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ, որոնց դատավորը, ելնելով իր մասնագիտության բնույթից, ենթադրաբար չի տիրապետում:

Դատավարագիտության մեջ **փորձաքննությունը** բնորոշվում է որպես ապացույցների ընկալման, հետազոտման և ստուգման գործընթաց, իսկ **փորձագետի եզրակացությունը**՝ փորձագետի հետազոտման արդյունք, փաստական հանգամանքներ պարզելու դատավարական միջոց¹:

Որպես դատական ապացույց է ծառայում ոչ թե փորձաքննությունը, այլ անցկացված փորձաքննության արդ-

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 386:

յունքում ձևավորված փորձագետի եզրակացությունը:

Փորձագետի եզրակացությունը, ըստ առաջացման աղբյուրի, խառը ապացույց է, քանի որ այն ձևավորվում է անձնական մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կիրառմամբ և գործի նյութերի ներգրավումով:

Փորձագետի եզրակացությունը հիմնվում է գործում եղած փաստական տվյալների վրա՝ հանդիսանալով նյութական օբյեկտների կամ գործում արտացոլված տեղեկությունների հետազոտման արդյունք: Սակայն բոլոր դեպքերում այն բովանդակում է գործի համար նոր էական տեղեկություններ, որոնք ստացվում են հատուկ գիտելիքների օգտագործմամբ կատարված փորձագիտական հետազոտության արդյունքում: Ներկայացված օբյեկտների հետազոտման արդյունքների հիման վրա փորձագետը կամ հայտնաբերում է նախկինում գործով անհայտ նոր փաստեր, կամ հստակորեն բացահայտում է ենթադրվող փաստերը, կամ նորովի է գնահատում այս կամ այն փաստը¹:

Դատական փորձաքննությունը կատարվում է հատուկ գիտելիքներով օժտված (գիտակ) անձանց՝ փորձագետների կողմից, որոնք փաստերի վերլուծությունը, դրանց բացատրությունը կատարում են հատուկ գիտելիքների և իրենց ունեցած հատուկ փորձի հիման վրա: Ընդ որում, հատուկ գիտելիքներ ասելով՝ պետք է հասկանալ բոլոր այն գիտելիքները, որոնք վերաբերվում են գիտության, գրականության, տեխնիկայի, արվեստի, արհեստի, մարդկային գործունեության որոշակի այլ բնագավառների և մատչելի են հասարակության ոչ բոլոր անդամներին, այլ միայն նշված բնագավառների մասնագետներին²:

Հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի թվին կարե-

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս, 4-րդ հրատ., Գ.Ս. Ղազինյանի խմբ., Եր., 2006, էջ 323:

2 Հատուկ գիտելիքների հասկացության և էության մասին մանրամասն տե՛ս **Ա.Ս. Չախոյան**, Հատուկ գիտելիքների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում // Պետություն և իրավունք, Եր., 2002, թիվ 1(15), էջ 74-79:

լի է դասել, օրինակ, անձի առողջական վիճակի վերաբերյալ վկայող փաստերը, իր գործողությունները ղեկավարելու և դրանց համար հաշիվ տալու անձի ունակության վերաբերյալ փաստերը, առողջությանը վնաս պատճառելու արդյունքում աշխատունակության կորստի աստիճանը, տեխնիկական նորմերի խախտման փաստերը և այլն:

Եթե անգամ դատավորն օժտված է հետազոտման հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ գիտելիքներով, միևնույն է դա նրան չի ազատում փորձաքննություն և շահանակելու անհրաժեշտությունից: Դատավորը չի կարող նույն գործով միաժամանակ հանդես գալ որպես փորձագետ՝ իր մեջ միավորելով գործը քննող ու լուծող դատարանի և դատավարությանն օժանդակող անձի գործառույթները¹:

Քաղաքացիադատավարական դոկտրինայում գլխավորապես ընդունված է այն մոտեցումը, որ իրավական հարցերով փորձաքննության նշանակումն անթույլատրելի է: Փորձագետը պետք է պատասխան տա ոչ թե իրավունքի, այլ փաստի հարցերով²: Փորձագետը «փաստի» վկա է³:

Տվյալ տեսակետի կողմնակիցները, հիմք ընդունելով ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերում ավանդաբար գործող «*jura novit curia*» («դատավորը գիտի օրենքը») սկզբունքը, միանշանակ պնդում են, որ դատավորներն իրենք են իրավունքի հարցերով փորձագետներ, հետևաբար՝ փորձագետին չպետք է առաջադրվեն իրավական բնույթի հարցեր, իսկ փորձագետի եզրակացությունը չի կարող պարունակել իրավական գնահատականներ և շոշափել իրավական բնույթի հարցեր⁴:

1 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 386:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 387:

3 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 190:

4 Տե՛ս, օրինակ, **Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р.** Экспертиза в российском гражданском, административном, уголовном процессе. М., 2003, էջ 134-135:

Նորմատիվ իրավական ակտերը և դրանցում ամրագրված իրավական նորմերն օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթներ են, որոնք ապացուցելու անհրաժեշտություն չկա: Դրանք ընդհանրապես դատական ճանաչողության օբյեկտ չեն: Օրենսդրության նորմերը դատարանի կողմից կիրառվում են, իսկ իրավակիրառական գործունեությունն ապացուցում դիտարկվել չի կարող:

Պետք է նշել, որ գործնականում կողմերը զրկված չեն այս կամ այն իրավական նորմի բովանդակության վերաբերյալ իրավագիտության որևէ բնագավառի մասնագետների կարծիքները վկայակոչելու, դրանք գրավոր ձևով դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց ներկայացնելու հնարավորությունից: Սակայն ակնհայտ է, որ նման կարծիքները կարող են դիտարկվել զուտ որպես կողմի իրավական դիրքորոշման մաս: Փաստաթուղթը, որում շարադրված է իրավական նորմի բովանդակության վերաբերյալ իրավագետների կարծիքը չի կարող դիտարկվել ո՛չ որպես փորձագետի եզրակացություն, ո՛չ որպես մասնագետի բացատրություն և ո՛չ էլ որպես գրավոր ապացույց, քանի որ ուղղված չէ գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցմանն ենթակա փաստերի հաստատմանը:

Ամենևին էլ պատահական չէ, որ կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը պարզելու նպատակով դատարանին վերապահվում է անհրաժեշտության դեպքում ոչ թե փորձաքննություն նշանակելու, այլ կողմերից համապատասխան հիմնավորում պահանջելու, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանում գտնվող իրավասու մարմինների աջակցությանը դիմելու հնարավորություն: Նման աջակցության կարգով տրված պարզաբանումն էլ, իր հերթին, «ամրապնդում է դատարանի իրավական դիրքորոշումը», այլ ոչ թե հետապնդում է գործով ապացույց ձեռք բերելու նպատակ:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ օրենքով չնա-

խատեսված («չգրված») համապարտադիր վարքագծի կանոնների՝ գործարար շրջանառության սովորույթների նկատմամբ «դատավորը գիտի օրենքը» սկզբունքը կիրառելի չէ: ԶԴՕ 4-րդ հոդվածի 2-րդ հոդվածը սահմանում է, որ կիրառման ենթակա գործարար շրջանառության սովորույթի առկայությունն ապացուցելու պարտականությունը կրում է այն վկայակոչող գործին մասնակցող անձը: Նման կարգավորումը պայմանավորված է այն իրողությամբ, որ «չգրված» ու «չիրապարակվող» վարքագծի համապարտադիր նման կանոնների առկայության ու դրանց բովանդակության մասին սպառիչ տեղեկություններ կարող են ունենալ միայն առևտրային գործունեության տվյալ բնագավառում ընդգրկված, մասնագիտացված և տվյալ բնագավառում վարքագծի «չգրված» կանոններին քաջատեղյակ անձինք ու կազմակերպությունները: Այս առումով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի կոնկրետ գործարար շրջանառության սովորույթի առկայության փաստը, այդ կապակցությամբ վեճի առկայության պարագայում, գործի լուծման համար կարող է ունենալ էական նշանակություն և ապացուցման կարիք զգալ: Ուստի, եթե գործին մասնակցող անձն իր պահանջների կամ առարկությունների հիմքում դնում է գործարար շրջանառության սովորույթ, որի գոյությունը հակառակ կողմը վիճարկում է, նա պարտավոր է ապացուցել և՛ նման սովորույթի առկայության փաստը, և՛ տվյալ սովորույթի բովանդակությունը: Տվյալ պարագայում ապացուցման գործուն միջոց կարող է հանդիսանալ նաև առևտրային գործունեության տվյալ բնագավառին քաջատեղյակ և անկողմնակալ փորձագետի եզրակացությունը կամ մասնագետի բացատրությունը: Ուստի, գտնում ենք, որ գործարար շրջանառության սովորույթների կիրառման հարցում «*jura novit curia*» սկզբունքից արված բացառությունը պետք է արդարացված համարել: Մնացած դեպքերում իրավունքի հարցերը պետք է դուրս մնան փորձաքննության միջոցով պարզման ենթակա հարցերի շրջանակից:

Դատական փորձաքննությունը համարվում է այն հիմնական ուղին, որի միջոցով գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի նվաճումները ներդրվում են դատական պրակտիկայում՝ նպաստելով գործի արդարացի քննությանը և ճշմարտության բացահայտմանը¹: Փորձաքննությունն ապացուցման գործուն միջոց է, քանի որ այն դատարանին հաղորդում է գիտահետազոտական, մասնագիտական բնույթի հատուկ տեղեկություններ, ուստի մարդկային գործունեության տարբեր բնագավառների զարգացման հետևանքով փորձաքննության դերը դատական պրակտիկայում գնալով մեծանում է, իսկ դատական փորձաքննություններն ընդգրկում են նորանոր բնագավառներ²:

Կախված կիրառման ենթակա հատուկ գիտելիքների բնագավառից, հետազոտման ենթակա օբյեկտից և այն հարցերի բնույթից, որոնց լուծման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, տարբերվում են դատական **փորձաքննության տեսակներ**՝ բժշկական, հոգեբուժական, հոգեբանական, սոցիոլոգիական, կենսաբանական, անասնաբուժական, տեխնիկական, ապրանքագիտական, հաշվապահական, արվեստագիտական, ձեռագրաբանական, շինարարական, գրաքննչական, ֆոտոտեխնիկական և այլն³: Ձեռագրաբանական փորձաքննության շնորհիվ, օրինակ, կարելի է պարզել գրավոր ապացույցներում առկա ստորագրությունների իսկությունը, ապրանքագիտական փորձաքննության շնորհիվ՝ պատրաստի ապրանքի հատկությունները, դրա համապատասխանությունը որակի չափանիշներին, դատահոգեբուժական փորձաքննությունը նշանակվում է անձին անգործունակ

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս, 4-րդ հրատ., Գ.Ս. Ղազիսյանի խմբ., Եր., 2006, էջ 323:

2 Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 386:

3 Փորձաքննության տեսակների և դրանց դասակարգման մասին ավելի մանրամասն տե՛ս **Ենգիբարյան Վ.Գ.**, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Եր., 2007, էջ 54-76:

ճանաչելու վերաբերյալ գործերով, բնակելի տարածության բաժանման գործերով նշանակվում է շինարարատեխնիկական փորձաքննություն և այլն:

Փորձաքննությունը դատարանի կողմից ներկայացված կյուրթի հետազոտումն է, որն անցկացվում է փորձագետի (փորձագետների) կողմից հատուկ մասնագիտական գիտելիքների հիման վրա, գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար, որը կատարվում է հստակորեն սահմանված դատավարական կարգով և դատավարական օրենքով սահմանված կանոններով, որոնց նպատակը հաղորդված տվյալների արժանահավատությունը հնարավորինս երաշխավորելն է:

Դատական փորձաքննություն նշանակելու և անցկացնելու կարգը, փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջները, այն հետազոտելու, դրա դեմ առարկելու առանձնահատկությունները սահմանվում են ՔԴՕ 84-91-րդ հոդվածներում:

Փորձաքննություն նշանակելու կարգը սահմանվում է ՔԴՕ 86-րդ հոդվածով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանը կարող է փորձաքննություն նշանակել բացառապես գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Դատարանի նախաձեռնությամբ փորձաքննության նշանակումը թույլատրելի է բացառապես օրենքով նախատեսված սահմանափակ դեպքերում:

Քաղաքացիական գործով փորձաքննություն կարող է նշանակվել ինչպես գործը դատաքննության նախապատրաստելու, այնպես էլ դատաքննության փուլում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատաքննության փուլում փորձաքննություն նշանակելը կարող է հանգեցնել գործի քննության հետաձգման (ՔԴՕ 156 հոդ., մաս 1, կետ 3) կամ վարույթի կասեցման (ՔԴՕ 157 հոդ., մաս 2, կետ 1), հետևաբար նաև՝ գործի քննությունն ու լուծումը ողջամիտ ժամկետում իրականացնելու ընդհանուր պահանջի խախտման՝ օրենսդիրը ՔԴՕ 167-րդ հոդ-

վածի 1-ին մասի 11-րդ կետում սահմանել է, որ փորձաքննությունն նշանակելու հարցը դատարանը լուծում է նախնական դատական նիստում: Ընդ որում, քանի որ դատական փորձաքննությունը ոչ միայն ապացույցների հետազոտման և ստուգման գործընթաց է, այլ նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց, դրա վրա լիովին տարածվում է ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը ներկայացնելու վերաբերյալ դատավարական օրենքի պահանջը (ՔԴՕ 63 հոդ., մաս 2-3):

Հետևում է, որ, ընդհանուր կանոնի համաձայն, գործին մասնակցող անձը **փորձաքննությունն նշանակելու նախաձեռնություն կարող են ցուցաբերել մինչև ապացուցմանն պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը:** Նման իրավակարգավորումը հետապնդում է գործը դատաքննության նախապատրաստելիս կողմերի ակտիվությունը, նրանց կողմից դատավարական պարտականությունների պատշաճ կատարումն ու դատավարական կարգապահությունը խթանելու, դատավարական իրավունքների չարաշահումները բացառելու, ապացուցողական նյութն ամբողջ ծավալով գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում հավաքելու, նախնական դատական նիստը ողջամիտ ժամկետում ավարտելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, գործի դատաքննության հետաձգումը կամ վարույթի կասեցումը հնարավորինս բացառելու նպատակ:

Միևնույն ժամանակ ընդհանուր կանոնից օրենսդիրն օբյեկտիվ պատճառներով կատարել է որոշ *բացառություններ:*

Ապացուցմանն պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո փոր-

ձաքննությունն նշանակելու վերաբերյալ կողմի ներկայացրած միջնորդությունը ենթակա է բավարարման, եթե նա հիմնավորում է մինչև դատարանի կողմից սահմանված ժամկետի ավարտը նման միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 63 հոդ., մաս 3): Խոսքը վերաբերում է, օրինակ, այնպիսի իրավիճակներին, երբ կողմը միջնորդում է փորձաքննությունն նշանակել հակառակ կողմի՝ սահմանված ժամկետն անցնելուց հետո ներկայացված գրավոր ապացույցի վրա առկա ստորագրության և/կամ կնիքի իսկությունը պարզելու, ներկայացված փորձագիտական եզրակացության արժանահավատությունը ստուգելու կամ լրացուցիչ փորձագիտական հետազոտություն կատարելու, դատարանում ցուցմունք տված վկայի տեսողության կամ լսողության աստիճանը որոշելու համար և այլն: Բոլոր դեպքերում միջնորդող կողմը պետք է հիմնավորի, որ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում չի եղել փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, և վերջինս օբյեկտիվորեն ծագել է դրանից հետո:

Սահմանված ժամկետում կողմից անկախ պատճառներով միջնորդություն ներկայացնելու անհնարինության մասին կարելի է խոսել նաև այն դեպքերում, երբ գործի համար էական նշանակություն ունեցող փաստը պարզելու նպատակով կողմը միջնորդություն ներկայացնելու համար սահմանված ժամկետում ներկայացրել է փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդություն, սակայն այն դատարանի կողմից մերժվել է: Եթե նման իրավիճակում կողմը գործի հետագա քննության ընթացքում կրկին հիմնավորված միջնորդություն է ներկայացնում փորձաքննություն նշանակելու մասին, գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության պահանջն ապահովելու տեսանկյունից դատարանը պարտավոր է նման միջնորդությունը բավա-

րարել¹:

Դատարանը պարտավոր է բավարարել սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացված միջնորդությունը նաև այն դեպքերում, երբ միևնույն հարցերի կապակցությամբ գործով ստացված փորձագիտական եզրակացությունները դատական նիստում հետազոտելու ընթացքում դրանց միջև հայտնաբերվում են էական հակասություններ: Բնականաբար, նման իրավիճակում դատարանը չի կարող մերժել կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ կողմի միջնորդությունը՝ այն պատճառաբանությամբ, որ վերջինս ներկայացվել է ապացուցմանն պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո: Դատարանը պարտավոր է նշանակել կրկնակի փորձաքննություն, եթե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով նշանակված երկու փորձաքննությունների արդյունքում տրված եզրակացությունների միջև առկա են հակասություններ, որոնց պայմաններում հնարավոր չէ եզրահանգում կատարել որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Փորձագիտական եզրակացություններում առկա հակասությունները բավարար հիմք են դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու համար²:

Հարկ է նկատել, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը դատարանին վերապահել է սեփական նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասություն (կամ սահմանել է իմպերատիվ պահանջ), դատարանի որոշմամբ փորձաքննություն կարող նշանակել և՛ գործի նախապատրաստման, և՛ դատաքննության փուլում: Նման դեպքերի նկատմամբ, բնականաբար, ՔԴՕ 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակային սահ-

1 Տե՛ս նաև Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԼԴ/2177/02/08 քաղաքացիական գործով 27.05.2008 թ. որոշումը:

2 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ2/0049/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ. որոշումը:

մանափակումները կիրառելի չեն: Այդուհանդերձ, հաշվի առնելով ԶԴՕ 167-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում ձևակերպված ընդհանուր պահանջը՝ դատարանը պետք է ձգտի փորձաքննություն նշանակելու հարցը լուծել գործը դատաքննության նախապատրաստելիս՝ նախնական դատական նիստում, եթե, իհարկե, գործը դատաքննության է նախապատրաստում նախնական դատական նիստով:

ԶԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը «կարող է» փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փորձաքննություն նշանակելու իրավասությանը և նշել է, որ օրենքով նախատեսված՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով փորձաքննություն նշանակելու հնարավորությունն իրականացվում է դատական հայեցողության իրավունքով¹:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը տարբեր գործերով ուշադրություն է հրավիրել մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի, որոնք կանխորոշում են փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը և սահմանափակում են դատական հայեցողության իրավունքը:

Մասնավորապես անդրադառնալով դատարանի կողմից այս կամ այն հայեցողական լիազորության իրականացման հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանի իրավունքը (այդ թվում՝ փորձաքննություն նշանակելու) բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-259 (ՎԴ) քաղաքացիական գործով 02.03.2007 թ., թիվ 3-168 (ՎԴ) քաղաքացիական գործով 23.04.2008 թ. և թիվ 3-459 (ՎԴ) քաղաքացիական գործով 25.07.2008 թ. որոշումները:

սկզբունքների եռթյունից¹:

Հղում կատարելով Անկլերն ընդդեմ Շվեյցարիայի գործով ՄԻԵԴ 23.10.1996 թ. վճռին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը (այդ թվում՝ ապացույցները) այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում²: Այս տեսանկյունից պետք է նկատի ունենալ, որ գործին մասնակցող անձինք ունեն ապացույցներ ներկայացնելու իրավունք: Այդ իրավունքի իրականացման հարցում դատարանը պարտավոր է օժանդակել նրանց, եթե գործին մասնակցող անձինք զրկված են այս կամ այն ապացույցն ինքնուրույն ձեռք բերելու հնարավորությունից: Ուստի դատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ ներկայացված փորձաքննությունն նշանակելու մասին միջնորդությունն անհիմն (կամայական կերպով) մերժելու արդյունքում ապացուցման պարտականություն կրող կողմը զրկվում է իր գործը դատարանին արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից, որով անվերապահորեն խախտվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՔԴՕ-ով երաշխավորված կողմերի իրավահավասարության և մրցակցության հիմնարար սկզբունքները³:

Հետևում է, որ փորձաքննությունն նշանակելու վերաբերյալ գործին մասնակցող անձի միջնորդությունը չի կա-

1 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-346(ՏԴ)2007 քաղաքացիական գործով 18.05.2007 թ. որոշումը:

2 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 0351/02/08-(ՇԴ)2008 քաղաքացիական գործով 31.10.2008 թ. որոշումը:

3 Տե՛ս նույն տեղում:

րող մերժվել կամայականորեն. միջնորդությունը մերժելու մասին որոշումը պետք է լինի հիմնավորված և բավարար չափով պատճառաբանված:

Մեկ այլ գործի շրջանակներում անդրադառնալով փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորության իրականացման հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քննարկվող լիազորությունն իրականացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ օրենսդրության նորմերը շատ հաճախ հստակորեն սահմանում են ապացույցի այն տեսակը, որով վեճի դեպքում պետք է հաստատվի տվյալ փաստը: Եթե գործով ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար օրենքը նախատեսում է փորձաքննություն նշանակելու պահանջ, ապա դատարանը պարտավոր է ապահովել վերջինիս կատարումը¹: Այսպես, փորձաքննության նշանակումը պարտադիր է, օրինակ, այն դեպքերում, երբ պատվիրատուի և կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ է առաջանում, և կողմերից մեկը պահանջում է փորձաքննության նշանակում (Քաղ. օր. 718 հոդ., մաս 5):

Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ, որը լիովին իրավաչափ ենք համարում, նմանատիպ իրավիճակներում փորձաքննության նշանակումը պարտադիր է:

Ուշագրավ է, որ մի շարք դեպքերում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները փորձաքննությամբ պարզելու պահանջը կախվածության մեջ չի դրվում կողմերի նախաձեռնությունից: Այսպես, ըստ ՔԴՕ 252-րդ հոդվածի 1-ին մասի, քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված գործով «...դատարանը քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերի առկայությունը պարզելու նպատակով նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն»: Հետևում է, որ նման դեպքերում դատարանը

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3494/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ. որոշումը:

պարտավոր է նշանակել փորձաքննություն, եթե նույնիսկ շահագրգիռ անձը (դիմողը) չի ներկայացնում համապատասխան միջնորդություն:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը պարտադիր է համարել փորձաքննության նշանակումը նույնիսկ այն դեպքերում, երբ գործը քննող դատարանի մոտ օբյեկտիվ պատճառներով քիչ թե շատ հիմնավոր կասկածներ են առաջանում կատարվելիք փորձաքննության արդյունքում արժանահավատ եզրակացություն ստանալու կամ ընդհանրապես որոնվող փաստը փորձաքննությամբ պարզելու հնարավորության կապակցությամբ: ուշագրավ է, որ նշված դիրքորոշումը ձևավորվել է մի գործով, որի շրջանակներում վերաքննիչ դատարանը փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդության մերժումը դիտարկել էր իրավաչափ, այն պատճառաբանությամբ, որ կատարված աշխատանքների որակի կապակցությամբ վեճի շրջանակներում անհնար է փորձաքննությամբ պարզել պատասխանողի կատարած աշխատանքների որակը՝ նկատի ունենալով այն, որ «ներկայացված նմուշները ... անհրաժեշտաբար ենթարկվել են ֆիզիկաքիմիական այնպիսի ազդեցությունների և փոփոխությունների, որոնց արդյունքում նմուշներից յուրաքանչյուրը դադարել է իր սկզբնական տեսքով և բաղադրությամբ գոյություն ունենալուց...»¹: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ նման իրավիճակներում որոնվող փաստը փորձաքննությամբ պարզելու հնարավորության հարցը հնարավոր է պարզել նույն փորձաքննության շրջանակներում, իսկ մինչ փորձաքննություն նշանակելը դատարանի կողմից հատուկ գիտելիքներ պահանջող հարցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը չի բխում ՀՀ քաղ. օր. 718-րդ հոդվածից:

Փորձաքննություն նշանակելու հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև արդարադատության արդյունավետության շահերը, գերծ մնա վարույթի անտե-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3494/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ. որոշումը:

դի ձգձգման հանգեցնող դատավարական գործողությունների կատարումից: Նման պահանջը բխում է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վարքագծային կանոնից, որի համաձայն՝ ի պաշտոնե գործելիս դատավոր պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

Գործերից մեկով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փորձաքննություն չպետք է նշանակվի այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում նշանակված փորձաքննության իրականացումը մեկ անգամ արդեն իսկ անկատար է մնացել առաջադրված հարցերին պատասխանելու համար միջնորդողի կողմից տրամադրման ենթակա փաստաթղթերի բացակայության պատճառով, իսկ նոր փորձաքննություն նշանակելու միջնորդություն ներկայացնելու ժամանակ նախորդ փորձաքննության արդյունքներով անհրաժեշտ համարված փաստաթղթերը չեն ներկայացրել: Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ փորձաքննության կատարման համար պահանջվող փաստաթղթերի բացակայության պայմաններում կրկին անգամ փորձաքննության նշանակումը և անցկացումն անհարկի կձգձգի գործի քննությունը՝ հակասելով արդարադատության արդյունավետության շահերին¹:

Մեկ այլ գործի շրջանակներում կրկին անդրադառնալով փորձաքննություն նշանակելու լիազորությունն իրականացնելիս արդարադատության արդյունավետության շահերը հաշվի առնելու անհրաժեշտությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության բավարարման կամ մերժման հարցը լուծելու ժամանակ դատարանը պետք է անդրադառնա այն հարցին, թե արդյոք ներկայացված միջնորդությամբ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ 3-459/47 քաղաքացիական գործով 25.07.2008 թ. որոշումը:

նշանակվող փորձաքննության արդյունքում կարող է պարզվել գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստ:

Ըստ Վճռաբեկ դատարանի, փորձաքննությունն չպետք է նշանակվի այն դեպքերում, երբ փորձաքննության արդյունքում տրվելիք փորձագետի եզրակացությամբ չի կարող ձեռք բերվել այնպիսի տեղեկություն, որի հիման վրա դատարանը կպարզի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ¹:

Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև առ այն, որ լրացուցիչ փորձաքննությունն նշանակելը նպատակահարմար չէ, եթե գրավոր եզրակացություններկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում կարող են լրացվել, ամբողջականացվել և հստակեցվել փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի պատասխանները, ինչը բխում է նաև արդարադատության արդյունավետության և ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջից²:

Անդրադառնալով կրկնակի փորձաքննությունն նշանակելու հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործում առկա փորձագիտական երկու եզրակացությունների՝ իրար չհակասելու և փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ օբյեկտիվ կասկածների բացակայության պայմաններում կրկնակի փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունը ևս բացակայում է³:

Ամփոփելով քննարկվող հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի կողմից տարբեր գործերով արտահայտված դիրքորոշումները՝ կարելի է եզրակացնել, որ դատարանը փորձաքննությունն նշանակելու հարցը պետք

1 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1406/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ. որոշումը:

2 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշումը:

3 Տե՛ս նույն տեղում:

Է լուծի՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների եռթյունից, ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության վերաբերյալ օրենսդրական պահանջներից, հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից, արդարադատության արդյունավետության շահերի և դատական խնայողության ապահովման սկզբունքներից:

Փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է **որոշում** (ՔԴՕ 86 հոդ., մաս 6):

Փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման մեջ նշում են՝

- փորձաքննություն նշանակած առաջին ատյանի դատարանի անվանումը,
- փորձաքննություն նշանակելու ամսաթիվը,
- գործի համարը,
- գործին մասնակցող անձանց անունները (անվանումները),
- ապացուցման ենթակա փաստը,
- փորձագետին առաջադրվող հարցերը,
- փորձագետի անունը կամ մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը,
- փորձագետին տրամադրվող նյութերի (փաստաթղթերի) ցանկը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանց հետ վարվելու պայմանները:

Փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու համար դատարանը ըստ եռթյան պետք է կողմերի հետ քննարկի և լուծի առնվազն երկու կարևորագույն հարց՝

1) ու՞մ պետք է հանձնարարվի փորձաքննության կատարումը,

2) ինչպիսի՞ հարցեր պետք է առաջադրվեն փորձաքննություն իրականացնողին:

Փորձագետի ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ փորձաքննության կատարումը կարող է հանձնարարվել գործի ելքում չչափազրգույն մասնագի-

տացված փորձագիտական հաստատություններին կամ դատարանի որոշմամբ որպես փորձագետ նշանակված հատուկ գիտելիքներով օժտված ֆիզիկական անձին:

Փորձաքննությունը կոնկրետ մասնագիտացված փորձագիտական հաստատության հանձնարարելու դեպքում, փորձագետը նշանակվում է վերջինիս ղեկավարի կողմից՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ստանալուց հետո, ուստի դատարանի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշվում է ոչ թե փորձագետի անունը, այլ այն մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը: Սակայն անկախ այդ հանգամանքից, դատավարական իրավահարաբերությունները ծագում են դատարանի և կոնկրետ ֆիզիկական անձի միջև, ում հանձնարարված է փորձագիտական հետազոտության կատարումը:

ՔԴՕ 86-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն նշելու այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը: Ընդ որում, եթե համապատասխան փորձաքննություն կատարելու համար պահանջվում է լիցենզիա կամ որակավորում, գործին մասնակցող անձը միջնորդությանը կից պետք է ներկայացնի առաջարկվող մասնագիտացված փորձագիտական հաստատության կամ փորձագետի կողմից այդպիսի փորձաքննություն կատարելու իրավասությունը հավաստող ապացույց:

Այն հարցը, թե ում պետք է հանձնարարվի փորձաքննության կատարումը, դատարանը լուծում է հաշվի առնելով գործին մասնակցող անձանց միջնորդությունները և կարծիքները, որոնք, սակայն, դատարանի համար պարտադիր չեն:

Փորձագետի եզրակացության՝ որպես դատավարական ապացույցի օբյեկտիվությունն ու արժանահավատությունը առաջին հերթին կախված է որպես փորձագետ

նշանակվող անձի ճիշտ ընտրությունից: Բարձրորակ եզրակացությունն ստանալու համար դատարանին անհրաժեշտ է դիմել համապատասխան լաբորատորիաներ և տեխնիկական բազա ունեցող փորձագիտական հիմնարկների կամ այլ մասնագետների¹: Այդ իսկ պատճառով փորձագետին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ ուղղված մի կողմից փորձաքննության ընթացքում կատարվող հետազոտությունների գիտական բարձր մակարդակի, մյուս կողմից՝ եզրակացության օբյեկտիվության ապահովմանը:

Որպես փորձագետ կարող է նշանակվել համապատասխան կրթություն, ունակություն, հմտություն կամ փորձ, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև որակավորում (թույլտվություն, լիցենզիա, արտոնագիր և այլն) ունեցող գործունակ ֆիզիկական անձը (ՔԴՕ 44 հոդ., մաս 1): Ընդ որում՝ տվյալ պահանջը վերաբերում է ոչ միայն դատարանի կողմից որպես փորձագետ նշանակվող ֆիզիկական անձին, այլ նաև դատարանի որոշման հիման վրա մասնագիտացված փորձագիտական հաստատության ղեկավարի կողմից որպես փորձագետ նշանակված աշխատակցին: Փորձագետ նշանակվող անձը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի համապատասխան հատուկ գիտելիքների, այսինքն՝ լինի ձեռնահաս, իսկ օրենսդրությանը նախատեսված դեպքերում ունենա նաև համապատասխան բնագավառի մասնագետի որակավորում, որը հաստատված է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետք է նկատել, որ գործադիր իշխանության համակարգում ստեղծված փորձագիտական հաստատություններում սահմանվում է փորձագետների որակավորման հաստատման հատուկ կարգ: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության համակարգում փորձագիտա-

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Ապացուցումը և ապացույցները քաղաքացիական դատավարությունում, Եր., 1984, էջ 88:

կան որոշակի մասնագիտությամբ դատական փորձագետի որակավորում շնորհելու կարգը սահմանվում է ՀՀ արդարադատության նախարարի 28.03.2000 թ. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորման կարգի հաստատման մասին» թիվ 151 հրամանով:

Միևնույն ժամանակ այն դեպքերում, երբ որպես փորձագետ նշանակվում է նման հաստատությունների աշխատակից չհանդիսացող անձը, համապատասխան որակավորման առկայության կամ բացակայության հարցը լուծում է դատարանը կամ փորձագիտական հաստատության ղեկավարը՝ հաշվի առնելով տվյալ մասնագետի կրթությունը, գիտական աստիճանը, աշխատանքային փորձը և նրա ձեռնահասության մասին վկայող այլ հանգամանքները:

Որպես արդարադատության իրականացմանն օժանդակող անձ՝ փորձագետը պետք է չունենա գործի ելքում իրավաբանական շահ: Այս առումով տեղին է նկատել, որ ՔԴՕ-ն փորձագետների եզրակացությունների օբյեկտիվությունն ու արժանահավատությունն ապահովելու անհրաժեշտ բոլոր դրույթները չի նախատեսում: Մասնավորապես չի սահմանում այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող հանդես գալ որպես փորձագետներ: Մինչև 2007 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը նախկին ՔԴՕ 21-րդ և 23-րդ հոդվածներով նախատեսվում էր փորձագետի դեմ բացարկ հայտնելու և փորձագետի կողմից ինքնաբացարկ հայտնելու հնարավորությունը՝ նրա անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերի և հանգամանքների հիման վրա¹:

¹ Տեղին է նշել, որ փորձագետին բացարկ ներկայացնելու ինստիտուտը նախատեսված է և բավականին արդյունավետ կիրառվում է մի շարք երկրների իրավական համակարգերում: Մասնավորապես՝ փորձագետին բացարկ ներկայացնելու հնարավորություն է նախատեսված Գերմանիայի ՔԴՕ 406-րդ հոդվածով, ՌԴ ՔԴՕ 18-րդ հոդվածով և այլն:

Սակայն նշված օրենքով փորձագետի բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտն առանց տեսանելի հիմնավորումների վերացվեց: Այն չնախատեսվեց նաև գործող ՔԴՕ-ով, ինչի արդյունքում դատարանի վրա ընկավ փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերը և հանգամանքները փորձագետի եզրակացությունը հետազոտելիս և գնահատելիս հաշվի առնելու ողջ ծանրությունը:

ՔԴՕ 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ անձը, ում հանձնարարված է փորձաքննություն կատարել, պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և օբյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջադրված հարցերի հիման վրա: Այդուհանդերձ օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ անձը չի կարող փորձագետ նշանակվել առանց իր համաձայնության: Բացառություն են միայն այն դեպքերը, երբ փորձագետ է նշանակվել փորձագիտական հաստատությունում տվյալ տեսակի փորձաքննություններ կատարելու իրավասություն ունեցող անձը, որը պարտավոր է կատարել պահանջվող փորձաքննությունը (ՔԴՕ 88 հոդ., մաս 3): Հետևում է, որ նախքան փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելը դատարանը գործնականում պետք է ստանա որպես փորձագետ հրավիրվող անձի (փորձագիտական հաստատության ղեկավարի) համաձայնությունը:

Հարկ է, սակայն նկատի ունենալ, որ պետական փորձագիտական հաստատությունը փորձաքննության կատարումը դատարանի որոշմամբ հանձնարարվելու դեպքում այդ հաստատության ղեկավարի համաձայնությունը չի պահանջվում, քանի որ դատարանների որոշումների հիման վրա փորձագիտական հետազոտությունների կատարումը և եզրակացությունների տրամադրումը նման հաստատությունների կանոնադրային հիմնական խնդիրներն է:

Դատարանը (փորձագիտական հաստատության ղեկավարը) կարող է նշանակել միևնույն կամ տարբեր մասնագիտություններ ունեցող մեկից ավելի փորձագետներ (ՔԴՕ 88 հոդ., մաս 2): Նույն մասնագիտությամբ մի քանի

մասնագետների փորձաքննության կատարումը հանձնարարվում է, որպես կանոն, այն դեպքերում, երբ կատարվելիք փորձագիտական աշխատանքի ծավալը մեծ է: Նման դեպքերում դատավարագիտության մեջ խոսվում է **կոլեկտիվ** կամ **հանձնաժողովային** փորձաքննության մասին¹: Այն դեպքերում, երբ փորձաքննության կատարումը հանձնարարվում է տարբեր մասնագիտություններ ունեցող մեկից ավելի փորձագետների, խոսում են **համալիր** փորձաքննության մասին: Վերջինս նշանակվում է այն դեպքերում, երբ առաջադրված հարցերին պատասխանելու համար պահանջվում է միաժամանակ օգտագործել տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ:

Փորձագետի (փորձագետների) կամ փորձագիտական հաստատության ընտրության հարցը քննարկելուց հետո դատարանը պետք է որոշի այն *հարցերի շրջանակը*, որոնք պետք է առաջադրվեն փորձագետին և պարզաբանվեն փորձաքննության ընթացքում:

ՔԴՕ 86-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ փորձաքննությունն նշանակելիս դատարանը փորձագետին կարող է առաջադրել միայն այն հարցերը, որոնք ներկայացվել են գործին մասնակցող անձանց կողմից: Ուշագրավ է, որ գործին մասնակցող անձի միջնորդությամբ փորձաքննությունն նշանակելիս դատարանը փորձագետին առաջադրվող հարցերի կազմում սեփական նախաձեռնությամբ այլ հարցեր ներառելու իրավունք չունի. դատարանը կարող է, ելնելով ապացուցման ենթակա փաստի էությունից և բովանդակությունից, միայն շտկել առաջադրված հարցը (ճիշտ ձևակերպել այն, շտկել ձևակերպումը)՝ չփոխելով դրա էությունը և չաղավաղելով դրա բովանդակությունը: Միևնույն ժամանակ օրենքը դատարանին վերապահել է

¹ Օրենքով նախատեսված դեպքերում կարող է նշանակվել բացառապես կոլեկտիվ փորձաքննություն: Այսպես, ՔԴՕ 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել միայն փորձագետների հանձնաժողովի կողմից: Այլ դեպքերում կոլեկտիվ փորձաքննությունը նշանակվում է դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով կատարվելիք փորձաքննության բնույթը և հետազոտության ծավալը:

գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված հարցերը մերժելու՝ փորձագետին չառաջադրելու իրավասություն, եթե գտնում է, որ այդ հարցերը վերաբերելի չեն, դրանց պատասխանները որևէ նշանակություն ունենալ չեն կարող գործի լուծման համար կամ ունեն գուտ իրավական բնույթ: Հետևում է, որ փորձագետին առաջադրվող հարցերի ցանկը և բովանդակությունը, շարադրված սահմանափակումների պահպանմամբ, վերջնականապես որոշում է դատարանը, և եթե նա մերժում է գործին մասնակցող անձանց առաջադրած հարցերը ներառել փորձաքննություն նշանակելու վերաբերյալ որոշման մեջ, ապա պարտավոր է պատճառաբանել նման մերժումը:

Օրենքով նախատեսված դեպքերում դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելիս նրա կողմից փորձագետին հարցեր առաջադրելու որևէ սահմանափակում նախատեսված չէ: Թեև նման դեպքերում ևս գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, դատարանն այդ հարցերի շրջանակով կաշկանդված չէ և իրավունք ունի իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետին առաջադրել այլ հարցեր (ՔԴՕ 86 հոդ., մաս 5):

Փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց առաջ դատարանը պետք է նաև որոշի փորձագետին տրամադրվող կյանքերի (փաստաթղթերի) շրջանակը:

Վերը նշված խնդիրները լուծելուց հետո միայն դատարանը կայացնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշում, որն ուղարկվում է համապատասխան փորձագիտական հաստատության ղեկավարին կամ դատարանի կողմից որպես փորձագետ նշանակված անձին:

Հարկ է նկատել, որ ՔԴՕ-ի՝ փորձաքննություն նշանակելու մասին կանոնները փորձաքննություն նշանակելու կամ փորձաքննություն նշանակելը մերժելու մասին որոշումները բողոքարկելու հնարավորություն չեն նախատեսում:

Դատարանի որոշմամբ կամ համապատասխան փորձագիտական հաստատության ղեկավարի կողմից որպես փորձագետ նշանակվելու պահից անձը ձեռք է բերում փորձագետի կարգավիճակ:

Որպես դատավարության մասնակից, փորձագետը դասվում է գործի քննությանն օժանդակող անձանց թվին, որը կրում է որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ:

Փորձագետն իրավունք ունի՝

1) ծանոթանալ գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, դատարանի թույլտվությամբ հարցեր տալ դատավարության մասնակիցներին, խնդրել դատարանին իրեն տրամադրելու լրացուցիչ նյութեր, եթե դա անհրաժեշտ է եզրակացություն տալու համար (ՔԴՕ 44 հոդ., մաս 3): Ընդ որում, իրեն տրամադրված նյութերի անբավարարության դեպքում փորձագետը կարող է հրաժարվել եզրակացություն տալուց՝ պատճառաբանելով իր դիրքորոշումը (ՔԴՕ 44 հոդ., մաս 5-6):

2) հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե չի տիրապետում անհրաժեշտ գիտելիքներին կամ հմտություններին (ՔԴՕ 44 հոդ., մաս 4, կետ 1):

3) դիմել գործը քննող դատարանին՝ փորձաքննությանը կամ դրա առանձին փուլերին գործին մասնակցող անձանց մասնակցությունն արգելելու խնդրանքով, եթե նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին կամ խախտել այլ անձանց իրավունքները (ՔԴՕ 87 հոդ., մաս 1-2):

4) դիմել գործը քննող դատարանին՝ մարդու, նյութի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող սմուլներ ստանալու վերաբերյալ որոշում կայացնելու առաջարկությամբ, եթե այդ սմուլների հետազոտումը նշանակված փորձաքննության անցկացման համար ունի նշանակություն (ՔԴՕ 87 հոդ., մաս 3):

5) փորձաքննության ընթացքին խոչընդոտող հանգամանքների առկայության, ինչպես նաև փորձաքննության

բնականոն ընթացքն ապահովելու անհնարինության այլ դեպքերում այդ մասին տեղեկացնել դատարանին՝ փորձաքննության կատարման ընթացքն ապահովելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու համար (ՔԴՕ 88 հոդ., մաս 4).

6) կոլեկտիվ կամ համալիր փորձաքննություն կատարելու դեպքում խորհրդակցել մյուս փորձագետների հետ և ընդհանուր հետևությունների գալու դեպքում տալ միասնական, իսկ ընդհանուր հետևությունների չգալու դեպքում՝ առանձին եզրակացություն (ՔԴՕ 88 հոդ., մաս 2).

7) միջնորդել դատարանին՝ դատական նիստին իր մասնակցությունը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ թույլատրելու վերաբերյալ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ (145 հոդ., մաս 1, 177 հոդ., մաս 2):

8) գործին մասնակցող անձի կամ պետական միջոցների հաշվին օգտվել թարգմանչի ծառայություններից (ՔԴՕ 16 հոդ., մաս 4).

9) մատուցված ծառայությունների համար ստանալ վճարում, եթե կատարված աշխատանքը չի մտնում նրա պաշտոնական պարտականությունների մեջ (ՔԴՕ 44 հոդ., մաս 4).

10) պետական միջոցների հաշվին ստանալ դատարան ներկայանալու հետ կապված ճանապարհածախսի հատուցում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև օրապահիկ և գիշերավարձ (ՔԴՕ 106 հոդ., մաս 1).

11) պետական միջոցների հաշվին օրենքով սահմանված չափով ստանալ ժամանակի կորստի համար փոխհատուցում (ՔԴՕ 106 հոդ., մաս 2), եթե կատարված աշխատանքը չի մտնում նրա պաշտոնական պարտականությունների մեջ:

Փորձագետը պարտավոր է՝

1) օբյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջադրված

հարցերի կապակցությամբ (ՔԴՕ 44 հոդ., մաս 2): Դատարանն իրավունք ունի դատական տուգանք նշանակել այն փորձագետի նկատմամբ, ով անհիմն հրաժարվում կամ խուսափում է փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշումը կատարելուց (ՔԴՕ 44 հոդ., մաս 7): Բացի դրանից, փորձագետը Քր. օր-ով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար (ՔԴՕ 44 հոդ., մաս 7): Ուստի օրենքը սահմանում է, որ դատարանը, իսկ փորձաքննությունը մասնագիտացված փորձագիտական հաստատության կատարմանը հանձնարարված լինելու դեպքում դատարանի հանձնարարությամբ այդ հաստատության ղեկավարը նախազգուշացնում է փորձագետին ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին՝ նախազգուշացման մասին փորձագետից վերցնելով ստորագրություն, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը, իսկ փորձաքննությունը մասնագիտացված հաստատությունում կատարելու դեպքում՝ եզրակացությանը (ՔԴՕ 86 հոդ., մաս 7)։

2) անհապաղ ստուգել հանձնարարված փորձաքննությունն իր մասնագիտական ոլորտին պատկանելու փաստը և առանց լրացուցիչ փորձագետների ներգրավման կատարելու հնարավորությունը (ՔԴՕ 88 հոդ., մաս 3): Նշված փաստի կամ հնարավորության բացակայության դեպքում փորձագետը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել համապատասխանաբար դատարանին կամ մասնագիտացված հաստատության ղեկավարին։

3) փորձաքննությունը կատարել անձամբ: Փորձագետն իրեն հանձնարարված փորձաքննությունը չի կարող վերահանձնարարել այլ անձի: Եթե փորձաքննությունն անցկացնում է մասնագիտացված փորձագիտական հաստատությունը, ապա դրա համար պատասխանատու են փորձագիտական եզրակացություն տված այն անձինք, որոնց

տվյալ հաստատությունում հանձնարարվել է կատարել փորձաքննություն (ՔԴՕ 88 հոդ., մաս 5-6).

4) ապահովել գործին մասնակցող անձանց հնարավորությունը՝ ներկա գտնվելու փորձաքննության անցկացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել իր բնականոն աշխատանքին կամ խախտել այլ անձանց իրավունքները (ՔԴՕ 87 հոդ., մաս 1)¹.

5) փորձաքննության ընթացքին խոչընդոտող հանգամանքների առկայության, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու անհնարինության այլ դեպքերում այդ մասին անհապաղ տեղեկացնել դատարանին (ՔԴՕ 88 հոդ., մաս 4).

6) մարդու, կյուբի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող նմուշներ ստանալու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա սահմանված կարգով իրականացնել նմուշառման գործողությունները², իսկ դատարանի որոշման պահանջը գործին մասնակցող անձի կողմից առանց հարգելի պատճառի չկատարելու կամ դրա կատարումից խուսափելու դեպքում այդ մասին հայտնել դատարանին (ՔԴՕ 87 հոդ., 5-10 մասեր).

7) գրավոր ձևով կազմել և գործը քննող դատարանին ներկայացնել փորձագիտական եզրակացությունը՝ պահպանելով դրա բովանդակությանը ներկայացվող պահանջները (ՔԴՕ 84 հոդ., մաս 4): Փորձագետը եզրակացությունը տալիս է իր անունից, ներքին համոզման հիման վրա և դրա համար կրում է անձնական պատասխանատվություն.

1 Օրենքը կարգավորում է փորձաքննության անցկացմանը գործին մասնակցող անձանց ներկայությունը բացառելու մեխանիզմը՝ սահմանելով, որ գործին մասնակցող անձանց մասնակցությունը փորձաքննությանը կարող է արգելվել դատարանի որոշմամբ՝ փորձագետի պատճառաբանված դիմումի հիման վրա (ՔԴՕ 87 հոդ., մաս 2):

2 Նմուշառման գործողությունների իրականացման կարգը սահմանվում է ՔԴՕ 87-րդ հոդվածի 3-10-րդ մասերով:

8) կղլեկտիվ կամ համալիր փորձաքննություն կատարելու դեպքում ընդհանուր հետևությունների չգալու դեպքում ներկայացնել առանձին եզրակացություն (ՔԴՕ 88 հոդ., մաս 2).

9) դատարանի կանչով ներկայանալ դատական նիստին և բանավոր ցուցմունքներ տալ իր կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ (ՔԴՕ 85 հոդ.):

Բացի դրանից, փորձագետը կրում է նաև իր դատավարական կարգավիճակից բխող այլ պարտականություններ: Մասնավորապես՝ պարտավոր է չհրապարակել փորձաքննության կատարման կապակցությամբ իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները, որոնց գաղտնիությունը պահպանվում է օրենքով, պետք է ապահովի փորձաքննության կատարման համար իրեն տրամադրված նյութերի ու փաստաթղթերի պահպանումը և եզրակացության հետ միասին դրանք վերադարձնի դատարանին, ներկայացնի փորձաքննության կատարման հետ կապված ծախսերի հաշվարկը և այլն:

Փորձագետի եզրակացության ձևը, կառուցվածքը, բովանդակությունը և տեսակները: ՔԴՕ 84-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կազմվում և ներկայացվում է բացառապես **գրավոր ձևով:** Գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե եզրակացությունը փորձագետի կողմից շարադրված է թղթի վրա և ստորագրված է նրա կողմից: Փորձագիտական հիմնարկներին հանձնարարված փորձաքննության շրջանակներում նախապատրաստված եզրակացությունը գործնականում նաև վավերացվում է համապատասխան հիմնարկի ղեկավարի ստորագրությամբ և հաստատության կնիքով:

Փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի ՔԴՕ 84-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված

տեղեկությունները՝ շարադրվելով որոշակի տրամաբանական հաջորդականությամբ:

Ինչպես իրավացիորեն արձանագրել է Վճռաբեկ դատարանը, փորձագետի եզրակացության բովանդակությանն օրենքով որոշակի պահանջներ ներկայացնելն օրենսդրի կողմից ինքնանպատակ չի արվել. փորձագետի եզրակացության բովանդակությունը էական նշանակություն ունի տվյալ ապացույցը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից արդյունավետ գնահատելու համար: Ըստ Վճռաբեկ դատարանի, փորձագետի եզրակացությունը պետք է բավարարի օրենսդրի կողմից սահմանված պահանջներին՝ պարունակելով առնվազն այն տվյալները, որոնք պարտադիր են համարվել ՔԴՕ-ով: ՈԲստի եթե փորձագետի եզրակացությունը չի պարունակում օրենքով պարտադիր համարվող պահանջները, ապա նման եզրակացությունը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ մասնավորապես դրա արժանահավատության տեսանկյունից¹:

Թեև օրենքում այդ մասին ուղղակիորեն չի նշվում, փորձագետի եզրակացության կառուցվածքում ավանդաբար առանձնացվում են ներածական, հետազոտական (նկարագրական) և եզրափակիչ մասեր՝ դրանց շրջանակներում ապահովելով օրենքով պարտադիր համարվող տեղեկությունների շարադրման տրամաբանական հաջորդականությունը:

Փորձագետի եզրակացության բովանդակությունը կազմող **ներածական մասում** շարադրվող տվյալների միջոցով հնարավոր է լինում տեղեկություն ստանալ փորձաքննության տեսակի, այն կատարող փորձագետի, փորձաքննություն անցկացնելու հիմքի և նման այլ տվյալների վերաբերյալ: Թեև օրենքը նման տվյալների

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0303/02/15 քաղաքացիական գործով 20.06.2017 թ. որոշումը:

շարադրման պարտադիր պահանջ չի սահմանում (բացառությամբ փորձագետի, նրա որակավորման և մասնագիտական ստաժի մասին տեղեկությունների), գործնականում այդ տվյալները չափազանց կարևոր նշանակություն ունեն ներկայացված եզրակացությունն անհատականացնելու տեսանկյունից, քանի որ թույլ են տալիս դյուրին կերպով տեսնելու ներկայացված փաստաթղթի և դատարանի վարույթում գտնվող գործի, տվյալ գործով համապատասխան տեսակի փորձաքննություն փորձաքննություն նշանակելու մասին որոշման միջև առկա կապը:

Գործնականում եզրակացության ներածական մասում նշվում են փորձաքննության տեսակը, եթե կատարված փորձաքննությունը կրկնակի է, լրացուցիչ, համալիր կամ կոլեկտիվ, ապա նշում է կատարվում նաև այդ մասին: Եզրակացության այս մասում նշվում են փորձաքննություն նշանակած դատարանի անվանումը, փորձաքննություն նշանակելու ամսաթիվը, գործի համարը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը, եթե փորձաքննությունը հանձնարարվել է նման հաստատության, տեղեկություններ փորձագետի (փորձագետների), այդ թվում՝ նրա ունեցած որակավորման և մասնագիտական ստաժի մասին, փորձաքննություն անցկացնելու հիմքը, ապացուցման ենթակա փաստերը, փորձագետի լուծմանն առաջադրված հարցերը, փորձագետին տրամադրված նյութերի անվանումը և դրանք ստանալու ամսաթիվը:

Փորձագետի եզրակացության հետազոտական (նկարագրական) և եզրափակիչ մասերի բովանդակությունը կանխորոշվում է ԶԴՕ 84-րդ հոդվածի 4-րդ մասով:

Եզրակացության **հետազոտական (նկարագրական) մասում** ներկայացվում են կիրառված մեթոդները, կատարված հետազոտության մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ հետազոտության ընթացքը, դրա արդ-

յունքները, պարզված փաստերի գիտական, տեխնիկական, արվեստագիտական կամ այլ բացատրությունը: Փորձագետի եզրակացության հետազոտական (սկարագրական) մասը, ըստ էության, պետք է արտացոլի փորձագիտական հետազոտության ողջ ընթացքը և պարունակի փորձագետի կողմից կատարված եզրահանգումների պատճառաբանությունը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով փորձագետի եզրակացության բովանդակության նշանակությանը, հատկապես կարևորել է եզրակացության քննարկվող մասում փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ մանրամասն տվյալների առկայությունը: Ըստ Վճռաբեկ դատարանի, կիրառված մեթոդների սկարագրությունն է կողմերին և դատարանին հնարավորություն տալիս գնահատելու եզրակացությունը դրա արժանահավատության, հիմնավորվածության, ամբողջականության տեսանկյունից, անհրաժեշտության դեպքում բարձրացնելու լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու հարցը: Փորձագետի եզրակացության մեջ կիրառված մեթոդները նշելով՝ փորձագետը հնարավորություն է տալիս այլ անձանց՝ պատկերացում կազմելու իր կազմած եզրակացության մասնագիտական հիմնավորվածության վերաբերյալ: Իրազեկվելով, թե ինչ մեթոդներ են կիրառվել փորձաքննություն իրականացնելիս՝ կողմերը և դատարանը հնարավորություն են ունենում, օրինակ, բացահայտելու փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը¹:

Եզրակացության **եզրափակիչ մասում** փորձագետն առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով և դրանց հերթականությամբ շարադրում է իր եզրահանգումները և հետևությունները:

Տեսության մեջ և դատական պրակտիկայում տարբերում են փորձագետի եզրակացության երեք **տեսակներ**²

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0303/02/15 քաղաքացիական գործով 20.06.2017 թ. որոշումը:

- 1) կատեգորիկ (որոշակի) եզրակացություն,
- 2) հավանական եզրակացություն,
- 3) ներկայացված ելակետային տվյալների հիման վրա փորձագետի առջև դրված հարցերին պատասխանելու անհնարինության մասին եզրակացություն:

Կատեգորիկ (որոշակի) եզրակացության շրջանակներում փորձագետը միանշանակ և միանգամայն որոշակի եզրահանգումներ է կատարում փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ըստ այդմ, ընդունված է սահմանազատել փորձագետի տվյալ տեսակի եզրակացության երկու տեսակ՝ կատեգորիկ դրական (հաստատողական) և կատեգորիկ բացասական (Ժխտող):

Հավանական եզրակացության շրջանակներում փորձագետը գործի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքի առկայության կամ բացակայության վերաբերյալ կատարում է ոչ թե միանշանակ եզրահանգում, այլ որոշակի հատկանիշների համակցության հիման վրա ենթադրական դատողություն է անում այդ առնչությամբ (օրինակ, տվյալ անձից սերված լինելու, որոշակի գործողության ազդեցության հետևանքով տվյալ հետքերի առաջացման հավանականության մասին և այլն):

Հավանական եզրակացության ապացուցողական նշանակությունը երկարատև տեսական բանավեճերի առարկա է հանդիսացել: Ներկայումս տեսաբանների մեծամասնության կարծիքով, փորձագետի հավանական եզրակացությունն ինքնին ապացուցողական նշանակություն չունի¹: Այդ դիրքորոշումն իր արտացոլումն է գտել նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեկում, որի շրջանակներում քննարկելով հավանական եզրակացության ապացուցողական ուժի հարցը՝ բարձրագույն դատական ատյանը միանշանակ արձանագրել է, որ փորձագետի եզրակացությունը չի կարող դիտարկվել որ-

¹ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ **Сахнова Т.В.** Судебная экспертиза. М., 1999:

պես որոնվող փաստը հաստատող ստույգ ապացույց, եթե դրանով փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ արվում է ոչ թե կատեգորիկ հետևություն, այլ միայն հավանական եզրահանգում¹:

Սիսթամանակ պետք է նշել, որ հավանական եզրակացության ապացուցողական նշանակությունն ընդհանրապես բացառելը ճիշտ չէ: Այն կարող է գործի քննության համար ունենալ որոշակի նշանակություն՝ նկատի ունենալով, որ եզրակացության հետազոտական մասում փորձագետը հաճախ շարադրում է իր կողմից կատարված հետազոտությունների արդյունքում ստացված այնպիսի տվյալներ, որոնք թեև չեն բավարարում որոշակի հետևության հանգելու համար, բայց մյուս ապացույցների ամբողջության մեջ կարող են որոշակի արժեք ստանալ: Եվ պատահական չէ, որ վերը նշված դիրքորոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը բացառել է հավանական եզրակացությունը որպես փաստի առկայության կամ բացակայության մասին «ստույգ» ապացույց դիտարկելու հնարավորությունը:

Ներկայացված ելակետային տվյալների հիման վրա փորձագետի առջև դրված հարցերին պատասխանելու անհնարինության մասին եզրակացությունը (ակտը) ներկայացվում է այն դեպքերում, երբ առաջադրված հարցերին հնարավոր չէ տալ ո՛չ կատեգորիկ և ո՛չ էլ հավանական եզրակացություն: Նման եզրակացությունը, ըստ էության, գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայություն կամ բացակայություն չի հաստատում, չի կարող ծառայել այդ նպատակին, հետևաբար՝ ապացույց չի համարվում:

Անդրադառնալով այն իրավիճակներին, երբ փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փորձագետի (փորձագիտական հաստատության) կողմից ըստ էության չի կատարվում՝ հիմքում դնելով անհրաժեշտ ելակետային տվյալների անբավարար լինելու հանգամանքը՝ Վճռաբեկ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ1/0207/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ. որոշումը:

դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ փորձաքննություն նշանակելը ինքնասպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ: Դատարանը պարտավոր է յուրաքանչյուր դեպքում փորձաքննության արդյունքների նկատմամբ լինել հետևողական և դատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված գործիքակազմի կիրառմամբ (լրացուցիչ ելակետային տվյալների տրամադրում, փորձաքննության կատարման վերահանձնարարում այլ անձի և այլն) պետք է առնվազն փորձ կատարի հաղթահարելու առաջադրված հարցերին պատասխանելու անհնարինությունը: Ըստ Վճռաբեկ դատարանի, միայն նման հետևողականություն ցուցաբերելու պարագայում դատարանը կարող է բավարարվել ներկայացված ելակետային տվյալների հիման վրա փորձագետի առջև դրված հարցերին պատասխանելու անհնարինության մասին եզրակացությամբ, շարունակել (վերսկսել) գործի վարույթը և կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ ապացուցման պարտականությունը բաշխելու կանոններին համապատասխան լուծելով նման անհնարինության բացասական հետևանքների հարցը¹:

Եզրակացություն տալու անհնարինության մասին ակտ գործնականում հաճախ տրվում է այն դեպքերում, երբ փորձաքննության անցկացումն անհնարին է դառնում փորձաքննության անցկացմանը ներկա գտնվող անձի կողմից փորձագետի բնականոն աշխատանքը խոչընդոտելու կամ գործին մասնակցող անձի այնպիսի վարքագծի հետևանքով, որը բացառում է անհրաժեշտ ելակետային տվյալների ձեռքբերումը (օրինակ՝ դատաձեռագրաբանական փորձաքննության անցկացման համար կողմը հրաժարվում է տալ ձեռագրի կամ ստորագրության նմուշներ, դատակենսաբանական կամ ԴՆԹ փորձաքննության համար՝ համապատասխան նմուշներ և այլն):

Քանի որ նման եզրակացությունը հաճախ լուրջ դժվարություններ է ստեղծում ապացուցմանն պարտականութ-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱԿԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով 24.05.2013 թ. որոշումը:

յունը կրող սուբյեկտների համար, որոնք գործին մասնակցող այլ անձի վարքագծի հետևանքով կարող են զրկվել իրենց պահանջի հիմքում ընկած փաստն ապացուցելու հնարավորությունից, օրենսդիրը սահմանել է այդ անձանց դատավարական շահերի պաշտպանության որոշ միջոցներ, որոնք թույլ են տալիս գործը քննող դատարանին հաղթահարել կողմի ոչ բարեխիղճ դատավարական վարքագծի հետևանքները:

Նախ ՔԴՕ 87-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվել է, որ նմուշ ստանալու մասին դատարանի որոշման պահանջը գործին մասնակցող անձի կողմից առանց հարգելի պատճառի չկատարելու կամ դրա կատարումից խուսափելու դեպքում փորձաքննությամբ պարզման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները կրում է այդ անձը, եթե առանց նմուշի տրամադրման հնարավոր է ավարտել փորձաքննությունը:

Բացի դրանից, ՔԴՕ 89-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է փորձաքննության ընթացքն ապահովելուն ուղղված որոշում կայացնելու հնարավորություն բոլոր այն դեպքերում, երբ փորձագետը դատարանին հայտնում է փորձաքննության ընթացքին խոչընդոտող հանգամանքների առկայության, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու անհնարինության մասին (այդ թվում պայմանավորված կողմի ոչ բարեխիղճ վարքագծով): Նման տեղեկություններ փորձագետից ստանալու դեպքում դատարանն առանց դատական նիստ հրավիրելու անհապաղ որոշում է կայացնում փորձաքննության կատարման ընթացքն ապահովելու մասին: Ընդ որում, որպես բացառություն, նման որոշում դատարանը կարող է կայացնել նաև կասեցված վարույթի շրջանակներում առանց վերսկսելու վերջինս (ՔԴՕ 158 հոդ.): Փորձաքննության կատարման ընթացքն ապահովելու մասին որոշման մեջ նշվում են բոլոր այն միջոցառումները, որոնք պետք է կատարվեն նշված խոչընդոտները վերացնելու, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն

ապահովելու համար, և դրանց կատարման ժամկետը: Որոշումը կամովին չկատարելու դեպքում որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը անհապաղ ուղարկվում հարկադիր կատարման և կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Չնայած նշված կարգավորումները էապես կարող են նպաստել փորձաքննության կատարմանը խոչընդոտող կողմի անբարեխիղճ վարքագծի հետևանքների հաղթահարմանը, այդուհանդերձ, ակնհայտ է, որ դրանք չեն կարող ապահովել ցանկալի արդյունք բոլոր դեպքերում և իրավիճակներում: Ռուստի կարծում ենք, որ ԶԴՕ-ով անհրաժեշտ է ուղղակիորեն սահմանել, որ *փորձագետի առջև դրված հարցերին պատասխանելու անհնարինության բոլոր անբարենպաստ հետևանքները կրում է գործին մասնակցող այն անձը, որի գործողությունների կամ անգործության արդյունքում փորձաքննության անցկացումը դարձել է անհնարին*¹: Հակառակ պարագայում անբարենպաստ վիճակում կարող է հայտնվել գործով ապացուցման պարտականություն կրող կողմը, որը միջևորդել է նշանակել փորձաքննություն, սակայն հակառակ կողմի վարքագծի հետևանքով զրկվել է իր պահանջի կամ առարկության հիմքում դրված փաստն ապացուցելու

¹ Ուշագրավ է, որ գրեթե նույն իմաստով նորմ նախատեսված է Ֆրանսիայի ԶԴՕ 275-րդ հոդվածով, որի համաձայն՝ եթե կողմը չի տրամադրում փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը, դատարանն իրավունք ունի կարգադրել հանձնելու դրանք՝ անհրաժեշտության դեպքում նշանակելով դատական տուգանք, կամ հանձնարարել փորձագետին շարունակելու աշխատանքը՝ ուշադրություն չդարձնելով նշված նյութերին, կամ եզրակացությունը ներկայացնելու այն ձևով, որով այն հնարավոր է ներկայացնել: Ընդ որում, նույն հոդվածով սահմանվում է, որ փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը չներկայացնելու կապակցությամբ դատարանը կարող է անել ցանկացած իրավաչափ հետևություն: Ст'а Новый Гражданский процессуальный кодекс Франции. Перев. В. Захватаева. Киев: «Истина», 2004, էջ 85-86: Նմանատիպ նորմ է սահմանվում նաև ՌԴ ԶԴՕ 79-րդ հոդվածի 3-րդ մասով: Հոդվածը և դրա մեկնաբանությունը տե՛ս Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ. Под ред. М.С. Шакарян. М.: «Кодекс», 2003, էջ 189, 192-193:

հնարավորությունից: Մեր կարծիքով, նման իրավակարգավորումը խիստ արդարացի է՝ հատկապես հաշվի առնելով այն շարժառիթները, որոնցով կողմը խոչընդոտում է փորձաքննության անցկացմանը կամ հրաժարվում է տրամադրել անհրաժեշտ նյութեր (սմուլներ) և այլ ելակետային տվյալներ:

Ավանդաբար դատական փորձաքննության սահմանման մեջ հատկապես մատնանշվում է, որ այն ոչ թե ցանկացած փորձաքննությունն է, այլ այնպիսին, որը նշանակվում է դատավարության շրջանակներում: Դատավարական ձևը դիտարկվում է որպես դատական փորձաքննության բնորոշ գիծ, որը երաշխավորում է դրա արժանահավատությունը¹:

Այս առումով դատական փորձաքննությունից պետք է տարբերել **ոչ դատական փորձագիտական հետազոտությունները**, որոնք պատվիրվում են գործին մասնակցող անձանց կողմից՝ դրանց արդյունքներն իրենց պահանջների և առարկությունների հիմքում դնելու նպատակով: Հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը հաստատելու նպատակով գործին մասնակցող անձինք ներկայացնում են նաև քրեական տարաբնույթ գործերի նախաքննության շրջանակներում ստացված փորձագիտական եզրակացություններ: Պրակտիկայում ոչ դատական փորձագիտական հետազոտությունների արդյունքների ներկայացման դեպքերը հանդիպում են բավականին հաճախ:

Քննարկվող հարցի կապակցությամբ ՔԴՕ 91-րդ հոդվածով սահմանվում է, որ գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունն իր ապացուցողական նշանակությամբ հավասարազոր է դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում ստացված փորձագետի եզրակացությանը, եթե այն տված

¹ Տե՛ս, օրինակ, Гражданский процесс. Под ред. Н.М. Корунова. М., 2005, էջ 201:

փորձագետը մինչև նախնական դատական նիստի ավարտը դատարանի առջև գրավոր հաստատում է այն՝ նախազգուշացվելով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: Այն պահից, երբ դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին՝ կցելով այն դատական նիստի արձանագրությանը, արտադատական եզրակացություն տված փորձագետը ձեռք է բերում դատական փորձագետի կարգավիճակ, իսկ ներկայացված եզրակացությունը, ըստ եության, «լեգալիզացվում» է:

Ըստ ՔԴՕ 91-րդ հոդվածի 3-4-րդ մասերի՝ արտադատական կարգով կատարված փորձագիտական եզրակացությունը պետք է բավարարի դատական փորձաքննության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Բացի դրանից, նման եզրակացությանը պետք է կցվեն այն տված փորձագետի որակավորումը և մասնագիտական գիտելիքները հավաստող փաստաթղթեր:

Արտադատական փորձագիտական եզրակացությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել հայցադիմումին (դիմումին) կամ հայցադիմումի պատասխանին կից: Այդ դեպքում ՔԴՕ 91-րդ հոդվածով սահմանված՝ «լեգալիզացիայի» գործընթացն իրականացվում է նախնական դատական նիստում ներկայացված ապացույցների վերաբերելիությունն ու թույլատրելիությունը որոշելիս: Եթե եզրակացությունը չի ներկայացվել վերը նշված փաստաթղթերին կից, ապա ընդհանուր կանոնի համաձայն՝ այն ներկայացվում է ապացույցը թույլատրելու վերաբերյալ միջնորդությամբ:

ՔԴՕ 91-րդ հոդվածով սահմանված՝ «լեգալիզացիայի» գործընթացն անցնելուց հետո արտադատական եզրակացությունը ենթակա է հետազոտման և գնահատման ընդհանուր հիմունքներով:

Պրակտիկայում որպես ապացույց հաճախ ներկայացվում են մեկ այլ դատական գործի

շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքում ստացված փորձագիտական եզրակացությունները: Բնականաբար նման եզրակացությունները ոչ դատական համարվել չեն կարող, հետևաբար դրանց նկատմամբ կիրառելի չէ ՔԴՕ 91-րդ հոդվածով սահմանված «լեգալիզացիայի» պահանջը: Վերջինս սահմանվում է որպես փորձագիտական եզրակացության օբյեկտիվությունը և արժանահավատությունն ապահովելու երաշխիք, իսկ քանի որ համապատասխան գործի շրջանակներում փորձագետն արդեն նախազգուշացվել է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին, մեկ այլ գործով տվյալ եզրակացությունը որպես ապացույց ներկայացվելու դեպքում այն իր ապացուցողական նշանակությամբ պետք է հավասարազոր համարվի այդ գործը քննող դատարանի կողմից նշանակված փորձաքննության արդյունքով ստացված փորձագետի եզրակացությանը՝ առանց լրացուցիչ ձևական պահանջների: Այլ կերպ ասած, այլ դատական գործի շրջանակներում ստացված փորձագիտական եզրակացությունները գործին մասնակցող անձանց կողմից ներկայացվելու դեպքում ենթակա են հետազոտման և գնահատման ընդհանուր հիմունքներով, առանց վերը նկարագրված «լեգալիզացիայի» գործընթացն իրականացնելու:

Փորձագետի եզրակացության հետազոտումը և գնահատումը: Փորձագետի եզրակացությունը **հետազոտվում** է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ (ՔԴՕ 84 հոդ., մաս 3):

Օրենսդիրը կարևորում է բոլոր ապացույցների, այդ թվում՝ փորձագետի եզրակացության հետազոտմանը գործին մասնակցող անձանց մասնակից դարձնելու հանգամանքը՝ սահմանելով, որ դատարանը պարտավոր է հնարավորություն ընձեռել գործին մասնակցող անձանց դիրքորոշում հայտնելու այդ ապացույցի և ապացուցման

ենթակա փաստի վերաբերյալ (ՔԴՕ 177 հոդ., մաս 3): Փորձագետի եզրակացությանը ծանոթանալու և դրա կապակցությամբ իր դիրքորոշումը ներկայացնելու՝ գործին մասնակցող անձի իրավունքի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով օրենսդիրը ՔԴՕ 84-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել է, որ դատարանը, ստանալով փորձագետի եզրակացությունը, պարտավոր է հնգօրյա ժամկետում այն ուղարկել գործին մասնակցող անձանց:

Մինևույն ժամանակ գործը պատշաճորեն դատաքննության նախապատրաստելու և դատաքննությունն անխափան իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով ՔԴՕ 89-րդ հոդվածով նախատեսվել են փորձագետի եզրակացության դեմ առարկելու՝ գործին մասնակցող անձի իրավունքի իրականացման ժամանակային սահմանափակումներ: Մասնավորապես ըստ գործող կարգավորումների, եզրակացությունը ստացած գործին մասնակցող անձը դրա վերաբերյալ գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարանին ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա. առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում.

բ. առարկություն ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում այն ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Նշանակում է, որ ընդհանուր կանոնի համաձայն, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ստացված եզրակացության արժանահավատության և լրիվության վերաբերյալ առարկությունները, ինչպես նաև նշված ենթադրյալ թերությունները (կասկածները) վերացնելուն ուղղված միջնորդությունները գործին մասնակցող անձը պետք է ներկայացնի մինչև նախնական դատական նիստի ավարտը:

Նշված սահմանափակումը կիրառելի չէ այն դեպքե-

րում, երբ, օրինակ, եզրակացության արժանահավաստության և լրիվության վերաբերյալ կասկածները կողմի մոտ առաջանում են դատական նիստում փորձագետի հարցաքննության կամ այլ ապացույցների հետազոտման ընթացքում (առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում) կամ առարկող կողմը հիմնավորում է, որ իրենից անկախ պատճառներով զրկված է եղել սահմանված ժամկետում եզրակացության դեմ առարկելու հնարավորությունից (իրեն չի ուղարկվել եզրակացության օրինակը, գործի քննությանը ներգրավվել է հետազայում, այլ օբյեկտիվ պատճառներով անհնար է եղել ներկայացնել առարկություն):

Նշված սահմանափակումը, բնականաբար, կիրառելի չէ նաև այն դեպքերում, երբ դատարանը գործը դատաքննության է նախապատրաստում առանց նախնական դատական նիստ նշանակելու (ՔԴՕ 165 հոդ., մաս 2):

Փորձագետի եզրակացության դեմ առարկելու ժամանակային սահմանափակումների խախտմամբ ներկայացված առարկությունները չեն կարող ընդունվել, իսկ դրանք վերացնելուն ուղղված միջնորդությունները մերժվել, եթե, իհարկե, դա չի վնասի արդարադատության շահերին և չի հանգեցնի ապացույցները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելու դատարանի պարտականության խախտման:

Փորձագետի եզրակացությունը դատարանում հետազոտվում է անմիջականորեն՝ դատական նիստում այն հրապարակելու և դրա կապակցությամբ փորձագետին (փորձագետներին) հարցաքննելու միջոցով, որի արդյունքում փորձագետի եզրակացության գրավոր ձևը վերածվում է ընկալման առումով առավել մատչելի բանավոր ձևի: ՔԴՕ 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետի հարցաքննությունն օրենքով սահմանված կարգով կարող է իրականացվել նաև տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

ՔԴՕ 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագետը կարող է հրավիրվել հարցաքննության և՛ դատարանի նախաձեռնությամբ, և՛ գործին մասնակցող անձի միջնորդությամբ, եթե դա թելադրված է ներկայացված եզրակա-

ցութիւնը պարզաբանելու անհրաժեշտութեամբ: Հարկ է նկատել, որ փորձագետի հարցաքննութիւնը, որպէս ապացուցման միջոց, չի կարող կիրառուել փորձաքննութիւնը լրացնելու, փորձագետին նոր հարցեր առաջադրելու կամ, առավել ևս, եզրակացութիւնը փոփոխելու նպատակով: Փորձագետը կարող է հարցաքննվել բացառապէս ներկայացված եզրակացության մեջ տեղ գտած հետազոտական մեթոդների, փորձաքննության նկարագրված ընթացքի, առաջադրված հարցերի վերաբերյալ կատարված եզրահանգումների կապակցությամբ (ՔԴՕ 85 հոդ., մաս 3):

Փորձագետի հարցաքննութիւնն իրականացվում է վկայի հարցաքննության կանոններով (ՔԴՕ 85 հոդ., մաս 2): Մ.Կ. Տրեուշնիկովի դիպուկ բնորոշմամբ փորձագետը «փաստի վկա» է¹, ինչով էլ բացատրվում է նրան վկայի հարցաքննության կանոններով լսելու անհրաժեշտութիւնը:

Փորձագետի եզրակացութիւնը հետազոտելիս, այդ թվում փորձագետին հարցաքննելիս, դատարանը պետք է պարզի, թե արդյոք փորձաքննության կատարման ընթացքում պահպանվել է փորձաքննության անցկացման կարգը, չկան արդյոք փորձագետի օբյեկտիվության (անաչառության) վրա ազդող հանգամանքներ, գործին մասնակցող անձանց ընձեռնվել է արդյոք փորձաքննության կատարմանը ներկա գտնվելու ռեալ հնարավորութիւն: Հատուկ ստուգման է ենթակա փորձագետի եզրակացության լրիվութիւնը, արժանահավատութիւնը և գործով հետազոտված այլ հանգամանքների և ապացույցների հետ համապատասխանութիւնը:

Ինչպէս նշվել է վերը, անցկացված փորձաքննության որակից և լրիվութիւնից ելնելով՝ դատարանը կարող է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննութիւն:

1 Տե՛ս **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004, էջ 190: Ուշագրավ է, որ Գերմանիայի ՔԴՕ 414-րդ ենթադրույթում փորձագետը բնորոշվում է որպէս «գիտակ վկա»: Նշված նորմի համաձայն, քանի որ հատուկ գիտելիքներով օժտված անձինք հարցաքննվում են անցյալում տեղի ունեցած փաստերի և հանգամանքների ընկալման ու ապացուցման համար, կիրառվում են վկայի հարցաքննության մասին կանոնները:

Ընդ որում, լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելը թույլտրելի է ոչ միայն տվյալ գործի շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքով, այլ նաև մեկ այլ դատական գործով ստացված փորձագիտական եզրակացության և «լեզալիզացված» ոչ դատական եզրակացության արժանահավատությունն ու լրիվությունը ստուգելու նպատակով:

ՔԴՕ 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է նշանակել *լրացուցիչ փորձաքննություն*՝ դրա կատարումը հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության): Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն կարող է ծագել, օրինակ, այն դեպքերում, երբ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությամբ փորձագետը հաստատել է քաղաքացու մոտ որոշակի հոգեկան խանգարման առկայությունը, սակայն չի պատասխանել այն հարցին, թե արդյոք այդ հիվանդությամբ տառապելը տվյալ անձին զրկում է իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու ունակությունից:

Եւ այն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե առաջին ատյանի դատարանի կամ գործին մասնակցող անձի մոտ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացությունների կամ փորձագետի եզրակացության և մասնագետի բացատրության միջև կամ խախտված են փորձաքննության կատարման դատավարական կանոնները¹, ապա դատարանն իր նախաձեռնությամբ կամ

1 Հարկ է նկատել, որ կրկնակի փորձաքննություն նշանակելու՝ ՔԴՕ 90-

գործին մասնակցող անձի միջնորդությամբ միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել *կրկնակի փորձաքննություն*, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Ակնհայտ է, որ լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների և նշանակման հիմքերի միջև առկա են էական և առանցքային տարբերություններ, որոնք հատուկ ընդգծվել են Վճռաբեկ դատարանի կողմից¹:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքը փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու հանգամանքն է: Այն կարող է նշանակվել միայն փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո, եթե պարզվի, որ փորձաքննությանն առաջադրված հարցադրումների կամ դրանց մի մասի վերաբերյալ պատասխանը հստակ կամ ամբողջական չէ, ինչպես նաև այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո դրանում լուսաբանված հարցերի վերաբերյալ նոր հարցադրումներ են առաջանում: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով և, ըստ այդմ, լրացուցիչ փորձաքննություն կարող է չնշանակվել, եթե գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում լրացվում, ամբողջա-

րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերն ինքնուրույն են, և դրանցից յուրաքանչյուրի առկայությունը բավարար հիմք է կրկնակի փորձաքննություն նշանակելու համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով փորձագետի եզրակացության դեմ առարկելու իրավունքի իրականացման ժամանակային սահմանափակումները, դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի նաև կողմի դատավարական վարքագիծը, այն դեպքերում, երբ վերջինս վիճարկում է եզրակացության հիմնավորվածությունը և արժանահավատությունը դրա դեմ առարկելու համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշումը:

կանացվում և հստակեցվում են փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի պատասխանները, ինչը բխում է նաև արդարադատության արդյունավետության և ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջից:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ լրացուցիչ փորձաքննությունն իր բնույթով ուղղված չէ սկզբնական փորձաքննության հետ մրցակցելուն, այլ ուղղված է սկզբնական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացության մեջ առկա անհստակությունները լրացնելուն, այդ պատճառով էլ, ի տարբերություն կրկնակի փորձաքննության, օրենսդիրը հնարավոր է համարել լրացուցիչ փորձաքննությունը հանձնարարել ինչպես մեկ այլ, այնպես էլ սկզբնական փորձաքննությունն իրականացրած փորձագետին:

Անդրադառնալով կրկնակի փորձաքննության ինստիտուտին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ առաջացած կասկածը չի կարող կրել բացառապես սուբյեկտիվ բնույթ, այն պետք է հիմնավորվի նաև օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին, փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու, փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացությունն տալու իրավասությունն չունի, եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս

ապացույցների ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննությունն նշանակելու մյուս հիմքին, այն է՝ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ երկու և ավելի եզրակացություններում հակասությունների մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, երբ եզրակացությունները տրվել են ըստ էության միևնույն հարցերի պարզաբանման նպատակով, և առաջադրված միևնույն հարցադրումների վերաբերյալ տարբեր փորձագետներ փորձաքննությունների արդյունքում հանգել են տրամագծորեն տարբեր և իրար հակասող հետևությունների:

Նշված մեկնաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործում առկա փորձագիտական երկու եզրակացությունների՝ իրար չհակասելու և փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ օբյեկտիվ կասկածների բացակայության պայմաններում կրկնակի փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունը բացակայում է¹:

Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունը նշանակվում է դատարանի որոշմամբ, որում, ի թիվս փորձաքննությունն նշանակելու մասին որոշմանը ներկայացվող այլ պահանջների, շարադրվում են նաև լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունն նշանակելու հիմքերը և դատարանի պատճառաբանությունները՝ նախկինում տրված փորձագիտական եզրակացությունների հետ նրա անհամաձայնության վերաբերյալ (ՔԴՕ 90 հոդ., մաս 3):

Փորձագետի եզրակացությունը **գնահատվում է** ընդհանուր հիմունքներով, որը բավականին բարդ մտածողական գործընթաց է:

Փորձագետի եզրակացությունը հատուկ մասնագիտա-

1 Տե՛ս նույն տեղում:

կան հետազոտության արդյունք է, որով էլ պայմանավորված են փաստերի վերաբերյալ դրանում արտացոլված տեղեկությունների հավաստիության երաշխիքները, ինչը, սակայն, չի նշանակում, որ փորձագետի եզրակացությունն ապացուցման բացառիկ միջոց է և պարտադիր է դատարանի համար: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի (ՔԴՕ 66 հոդ., մաս 4): Տվյալ կանոնը հավասարապես վերաբերում է նաև փորձագետի եզրակացությանը: Դատարանը պարտավոր է փորձագետի եզրակացությունը ևս գնահատել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ (ՔԴՕ 66 հոդ., մաս 1): Ինչպես գործով ձեռք բերված ցանկացած այլ ապացույց, այն ենթակա է գնահատման գործում առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ, ինչը հնարավորություն է տալիս ստուգել ոչ միայն փորձագետի եզրակացության տրամաբանությունը, այլ նաև կատարված հետևությունների լրիվությունը և հավաստիությունը:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել, որ փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց¹: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս: Դրանք, Մասնավորապես հանգում են հետևյալին.

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ3/0133/02/09 քաղաքացիական գործով 05.04.2013 թ. և թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշումները:

ա. Վերաբերելիության առումով փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագետի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

բ. Փորձագետի եզրակացությունը թույլատրելիության տեսանկյունից գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

գ. Արժանահավատության տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին¹:

Ի լրումն շարադրվածի, կարծում ենք, որ փորձագետի եզրակացությունը գնահատելիս դատարանը համակողմանի վերլուծության պետք է ենթարկի և հաշվի առնի ոչ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշումը:

միայն փորձաքննությունն անցկացնելիս սահմանված դատավարական կարգի պահպանված լինելու հանգամանքը, այլ նաև թույլ տրված խախտումների հնարավոր ազդեցությունը եզրակացության արժանահավատության և լրիվության վրա, եզրակացությանը ներկայացվող բովանդակային պահանջների պահպանված լինելը և դրա հավանական բնույթը:

Դատարանը, իհարկե, կարող է չհամաձայնվել փորձագետի հետևությունների հետ և, առանց կրկնակի փորձաքննություն նշանակելու, գործը լուծել ձեռք բերված մյուս ապացույցների հիման վրա, սակայն նա պարտավոր է եզրափակիչ դատական ակտի պատճառաբանական մասում արտացոլել փորձագետի հետևությունները մերժելու փաստարկները:

§7. Մասնագետի բացատրությունը

ՔԴՕ 67-րդ հոդվածով ապացույցների թվին է դասվում նաև մասնագետի բացատրությունը, որը ներդրվել է Հայաստանի քաղաքացիական դատավարությունում գործող ՔԴՕ-ի ընդունմամբ:

Մասնագետի բացատրությունը վարույթում հատուկ գիտելիքների կիրառման դատավարական ձև է: Ըստ առաջացման աղբյուրի, մասնագետի բացատրությունը խառը ապացույց է, քանի որ այն ձևավորում է անձնական մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կիրառմամբ և գործի նյութերի ներգրավումով: Միևնույն ժամանակ, ի տարբերություն փորձագետի եզրակացության, այն դասվում է բանավոր ապացույցների թվին, քանի որ հաղորդվում է դատարանին բացառապես բանավոր ձևով՝ վկայի հարցաքննության համար օրենքով սահմանված կանոններով (ՔԴՕ 92 հոդ., մաս 1):

Գործնականում մասնագետի օժանդակության անհրաժեշտություն կարող է առաջանալ գործի փաստերը պարզելիս, իրեղեն և գրավոր ապացույցները հետազոտելիս,

վկաներ հարցաքննելիս կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս, երբ առանձին հարցերի կապակցությամբ դատարանի մոտ առաջանում է գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառներում մասնագիտական խորհրդի և հմտությունների կիրառման կարիք:

Քաղաքացիական դատավարությունում մասնագետի ինստիտուտը ներդրվել է քաղաքացիական գործի քննությունը ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ ապահովելու նկատառումներից ելնելով, քանի որ առանձին դեպքերում թույլ է տալիս գործի փաստերը պարզելիս, ապացույցներն ընկալելիս և վերլուծելիս օգտագործել հատուկ գիտելիքներ՝ առանց այդ նպատակով խիստ ժամանակատար և ծախսատար փորձաքննություն նշանակելու:

ՔԴՕ 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնագետը տեսական կամ կիրառական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձն է, որը գործին մասնակցող անձի միջնորդությամբ հրավիրվում է դատական նիստին գործի քննության համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ առանց նախնական հետազոտությունների իրականացման մասնագիտական բացատրություններ տալու համար:

Հետևում է, որ ի տարբերություն փորձագետի, մասնագետը հատուկ հետազոտություններ չի կատարում և գրավոր եզրակացություն չի տալիս, այլ իր փորձով և հատուկ գիտելիքների ու հմտությունների օգտագործմամբ սոսկ օգնում, աջակցում է դատարանին ապացույցների հետազոտման ընթացքում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառներին վերաբերող և ապացուցման առարկային առնչվող հարցերի վերաբերյալ տալով բանավոր եզրակացություններ:

ՔԴՕ 45-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործով ձեռք բերված ապացուցողական նյութը հետազոտելիս ծագում է

հատուկ գիտելիքների կիրառման կարիք և, միևնույն ժամանակ, ակնհայտորեն բացակայում է այդ գիտելիքների կիրառմամբ որոնվող փաստերը պարզելու համար փորձագիտական հետազոտություն կատարելու անհրաժեշտությունը կամ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցում առկա են հիմնավոր կասկածներ, գործի քննությանը կարող է ներգրավվել մասնագետ: Վերջինս իր տեսական կամ կիրառական գիտելիքների հիման վրա կարող է գործի քննության համար նշանակություն ունեցող հարցերը պարզաբանել անմիջականորեն դատական նիստում բացառելով վարույթը տևական ժամանակով հետաձգելու կամ կասեցնելու անհրաժեշտությունը, իսկ առաջադրված հարցերին առանց նախնական հետազոտության պատասխանելու անհնարինության դեպքում օժանդակել գործին մասնակցող անձանց և դատարանին փորձաքննություն նշանակելու հիմքերի վերաբերյալ առկա կասկածները փարատելու, ինչու ոչ, նաև անհրաժեշտ փորձաքննության տեսակն ընտրելու, բանիմաց փորձագետի ընտրությունը կատարելու, փորձաքննության առաջադրվող հարցերն ուրվագծելու հարցում:

Դատարանը կարող է մասնագետ հրավիրել բացառապես գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Դատարանի նախաձեռնությամբ մասնագետ հրավիրելու հնարավորություն որևէ դեպքում ՔԴՕ-ը չի նախատեսում:

Քանի որ մասնագետի բացատրությունը ոչ միայն ապացույցների հետազոտման և ստուգման գործընթաց է, այլ նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց, դրա վրա լիովին տարածվում է ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը ներկայացնելու վերաբերյալ դատավարական օրենքի պահանջը (ՔԴՕ 63 հոդ., մաս 2-3): Հետևում է, որ, ընդհանուր կանոնի համաձայն, գոր-

ծին մասնակցող անձը **մասնագետ հրավիրելու նախա-
ձեռնություն կարող է ցուցաբերել մինչև ապացուցմանն
պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահ-
մանված ժամկետի ավարտը**, բացառությամբ այն դեպքե-
րի, երբ նա հիմնավորում է մինչև դատարանի կողմից
սահմանված ժամկետի ավարտը նման միջնորդությունը
ներկայացնելու անհնարիությունը՝ իրենից անկախ
պատճառներով (ՔԴՕ 63 հոդ., մաս 3):

Թեև այդ մասին ուղղակիորեն նշված չէ օրենքում, գոր-
ծին մասնակցող անձը մասնագետ հրավիրելու մասին
միջնորդություն ներկայացնելիս պարտավոր է նշել ապա-
ցուցման ենթակա այն փաստը, որը կարող է հաստատվել
մասնագետի բացատրությամբ, հիմնավորումներ առ այն,
որ որոնվող փաստերի և հետազոտվող ապացույցների
վերաբերյալ հնարավոր է տալ բացատրություններ
առանց նախնական հետազոտություններ կատարելու,
մասնագետի անունը և հասցեն: Միջնորդությանը պետք է
կցվեն նաև մասնագետի համապատասխան որակավոր-
ումը հաստատող ապացույցներ: Միջնորդությանը կա-
րող է կցվել նաև մասնագետի արտադատական կարգով
տրված գրավոր կարծիքը (եզրակացությունը):

Մասնագետ հրավիրելու վերաբերյալ դատարանը կա-
յացնում է որոշում: Ընդ որում, նման որոշումը կայացվում
է առանց հրավիրվող մասնագետի համաձայնությունը
նախապես ստանալու. ՔԴՕ 45-րդ հոդվածի 3-րդ մասի
համաձայն՝ անձը, ում դատարանը հրավիրել է որպես
մասնագետ, պարտավոր է ներկայանալ առաջին կանչով
և դատական նիստում տալ բանավոր բացատրություն-
ներ:

Մասնագետ ներգրավելիս անհրաժեշտ է հաշվի առնել,
որ նման կարգավիճակով կարող է հանդես գալ գործի ել-
քում նյութափրավական կամ դատավարական շահ չունե-
ցող և անհրաժեշտ հատուկ գիտելիքներով օժտված ֆիզի-
կական անձը: ՔԴՕ 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
որպես մասնագետ կարող է հրավիրվել համապատաս-
խան կրթություն, ունակություն, հմտություն կամ փորձ,

իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև որակավորում (թույլտվություն, լիցենզիա, արտոնագիր և այլն) ունեցող լրիվ գործունակ անձը:

Հարկ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն փորձագետի, որին նշանակելիս դատարանը կաշկանդված չէ գործին մասնակցող անձանց միջնորդություններով և կարծիքներով, մասնագետ կարող է նշանակվել բացառապես այն անձը, որն առաջարկվել է գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Դատարանը, իհարկե, կարող է մերժել տվյալ անձին որպես մասնագետ ներգրավելու վերաբերյալ միջնորդությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նա չի համապատասխանում ՔԴՕ 45-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ որպես մասնագետ հրավիրել այլ անձի:

Անձը ձեռք է բերում մասնագետի դատավարական կարգավիճակ դատարանի որոշմամբ որպես այդպիսին ներգրավվելու պահից: Իբրև դատավարության մասնակից, մասնագետը դասվում է գործի քննությանն օժանդակող անձանց թվին և կրում է որոշակի դատավարական իրավունքներ ու պարտականություններ:

Մասնագետն իրավունք ունի՝

1) դատարանի թույլտվությամբ ծանոթանալ գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, խնդրել դատարանին տրամադրելու լրացուցիչ նյութեր (ՔԴՕ 45 հոդ., մաս 4).

2) հրաժարվել բացատրություններ տալ այն հարցերի վերաբերյալ, որոնք դուրս են գալիս իր հատուկ գիտելիքների շրջանակներից, պահանջում են փորձաքննության անցկացում, ինչպես նաև այն դեպքերում, երբ իրեն տրամադրված նյութերն անբավարար են դատարանի և գործին մասնակցող անձանց հարցերին պատասխանելու համար (ՔԴՕ 45 հոդ., մաս 4).

3) միջնորդել դատարանին՝ դատական նիստին իր մասնակցությունը տեսաձայնային հեռահաղորդակցու-

յան միջոցների կիրառմամբ թույլատրելու վերաբերյալ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ (145 հոդ., մաս 1, 177 հոդ., մաս 2):

4) գործին մասնակցող անձի կամ պետական միջոցների հաշվին օգտվել թարգմանչի ծառայություններից (ՔԴՕ 16 հոդ., մաս 4).

5) պետական միջոցների հաշվին ստանալ դատարան ներկայանալու հետ կապված ճանապարհածախսի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ ծախսերի հատուցում (ՔԴՕ 106 հոդ., մաս 1),

6) պետական միջոցների հաշվին օրենքով սահմանված չափով ստանալ ժամանակի կորստի համար փոխհատուցում (ՔԴՕ 106 հոդ., մաս 2):

Մասնագետը պարտավոր է՝

1) ներկայանալ դատարանի առաջին կանչով և դատական նիստում տալ բանավոր բացատրություններ (ՔԴՕ 45 հոդ., մաս 3): Ուշագրավ է, որ ի տարբերություն փորձագետի, դատարան ներկայանալու և բացատրություններ տալու իր պարտականությունը կատարելուց խուսափող մասնագետի նկատմամբ դատական տուգանք նշանակելու հնարավորություն օրենքը չի նախատեսում.

2) պատասխանել գործին մասնակցող անձանց և դատարանի հարցերին և տալ ճիշտ բացատրություններ: Մասնագետը Քր. օր-ով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ակնհայտ կեղծ բացատրություն տալու համար (ՔԴՕ 45 հոդ., մաս 6): Ուստի օրենքը սահմանում է, որ դատարանը նախազգուշացնում է մասնագետին ակնհայտ կեղծ բացատրություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին՝ նախազգուշացման մասին նրանից վերցնելով ստորագրություն, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը (ՔԴՕ 92 հոդ., մաս 2):

ՔԴՕ 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնագե-

տի **բացատրության հետազոտումը** (հարցաքննություն-
ներ) իրականացվում է վկայի հարցաքննության համար
օրենքով սահմանված կանոններով:

Մասնագետը կարող է հարցաքննվել բացառապես դա-
տական նիստում: Ընդ որում, ինչպես վկայի և փորձագե-
տի դեպքում, մասնագետի հարցաքննությունը ևս օրեն-
քով սահմանված կարգով կարող է իրականացվել տեսա-
ձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառ-
մամբ (ՔԴՕ 145 հոդ., մաս 1, 177 հոդ., մաս 2):

Մասնագետի բացատրությունները **գնահատվում** են
ընդհանուր հիմունքներով:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխություններով և լրացումներով (2015):
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (Հռոմ, 04.11.1950):
3. «Քաղաքացիական դատավարության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիա:
4. «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թ. կոնվենցիա:
5. «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի 1963 թ. կոնվենցիան:
6. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիա:
7. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002 թ. հոկտեմբերի 7-ի Քիշնևի կոնվենցիա:
8. «Տնտեսական գործունեության հետ կապված վեճերի լուծման կարգի մասին» ԱՊՀ 1992 թ. մարտի 20-ի համաձայնագիր:
9. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենք (07.02.2017), ՀՀՊՏ 10(1368), 12.02.2018:
10. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.02.2018), ՀՀՊՏ 16(1374), 05.03.2018:

11. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (05.12.2013), ՀՀՊՏ 73(1013).1, 28.12.2013:
12. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.1998:
13. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք (09.11.2004), ՀՀՊՏ 2005/4(376), 19.01.2005:
14. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք (09.11.2004), 2004/69(368):
15. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (18.02.2004), ՀՀՊՏ 2004/18(317), 31.03.2004:
16. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք (04.12.2001), ՀՀՊՏ 2002/2(177), 10.01.02:
17. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1964 թ.):
18. ՀՀ արդարադատության նախարարի 28.03.2000 թ. թիվ 151 հրամանը «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորման կարգի հաստատման մասին»:
19. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը և դրա հիմնավորումները // ՀՀ արդարադատության նախարարության պաշտ. կայքը՝ <http://moj.am/am/download.php?view.314>:

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՍԱԳՐԵՐ,
ՁԵՆՆԱՐԿՆԵՐ,
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ**

1. **Գրիգորյան Վ.Հ.**, Գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրու-

- յունների թույլատրելիության հետ կապված խնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., «Հայրապետ» հրատ., 2019:
2. **Գ.Հովհաննիսյան, Ա.Ղամբարյան, Ա.Սարգսյան**, Մասնավոր անձի կատարած գաղտնի տարագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում, Եր., «ՎՄՎ Պրինտ» հրատ., 2017:
 3. **Դավթյան Ա.Հ.**, Քաղաքացիական դատավարություն, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2007:
 4. **Ենգիբարյան Վ.Գ.**, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Եր., 2007:
 5. **Չոհրաբյան Ա.Գ.**, Ապացուցման միջոցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., «Հայրապետ» հրատ., 2016:
 6. **Չոհրաբյան Ա.Գ.**, Փորձաքննության հասկացությունը և դրա հիմնական առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում // օրենք և իրականություն, Եր., 2011, թիվ 8 (օգոստոս):
 7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի խմբ.**, «Իրավունք» հրատ., Եր., 2010:
 8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս երկրորդ, **Ռ.Գ. Պետրոսյանի և Գ.Հ. Ղարախանյանի խմբ.**, Եր., Երևանի համալս. հրատ., 2001.
 9. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս, - 4-րդ հրատ., լրացումներով և փոփոխություններով, **Գ.Ս. Ղազինյանի խմբ.**, Եր., Երևանի համալս. հրատ., 2006:
 10. **Ղամբարյան Ա.Ս.**, Ապացույցների թույլատրելիությունը քրեական գործի հարուցման փուլում, Եր., 2003:

11. **Ղարսյան Ա.**, Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, Եր., 2010, թիվ 1-2(126-127):
12. **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007:
13. **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010:
14. **Չախոյան Ա.Ս.**, Հատուկ գիտելիքների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում // Պետություն և իրավունք, Եր., 2002, թիվ 1(15):
15. **Авдюков М.Г.** Распределение обязанностей по доказыванию в гражданском процессе // Советское государство и право, 1972, № 5.
16. **Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р.** Экспертиза в российском гражданском, административном, уголовном процессе. М., 2003.
17. **Архипова Ю.В.** Раскрытие доказательств в гражданском процессе Англии и США // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, 2010, № 3.
18. Арбитражный процесс: Учебник. Отв. ред. В.В.Ярков. М., 2003.
19. **Безруков А.М.** Преюдициальная связь судебных актов. М., 2007.
20. **Боннер А.Т.** Установление обстоятельств гражданских дел. М., 2000.
21. **Васьковский Е.В.** Учебник гражданского процесса. М., 1917 г. // www.allpravo.ru, 2005.
22. **Веденеев Е.Ю.** Роль суда в доказывании по делу в российском гражданском и арбитражном судопроизводстве // Арбитражный и гражданский

- процесс, 2001, № 2.
23. **Власов А.А.** Адвокат как субъект доказывания в гражданском и арбитражном процессе. М., 2000:
 24. **Гойденко Е.Г.** Неправильное определение обстоятельств, имеющих значение для дела, как основание для отмены судебного решения // Российский судья, 2009, № 8.
 25. Гражданский процесс России. Под ред. М.А. Видука. М., 2004.
 26. Гражданский процесс Российской Федерации. Под ред. А.В. Власова. М., 2003.
 27. Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. М.: «Городец», 2003.
 28. Гражданское процессуальное право. Под ред. М.С. Шакарян. М.: «Проспект», 2004.
 29. Гражданский процесс. Под ред. В.В. Яркова. М., 2004.
 30. **Гурвич М.А.** Учение об иске (состав, виды). М.: ВЮЗИ, 1981.
 31. **Гурвич М.А.** Судебное решение. Теоретические проблемы. М.: «Юридическая литература», 1976.
 32. **Гурвич М.А.** Является ли доказывание в гражданском процессе юридической обязанностью? // Советская юстиция. М., 1975.
 33. **Давтян А.Г.** Гражданский процесс в Германии и странах СНГ. Ер., 2000.
 34. **Жилин Г.А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. М.: «Городец», 2000.
 35. **Зайцев И., Афанасьев С.** Бесспорные обстоятельства в гражданских делах // Российская юстиция. М., 1998, № 3.
 36. **Клейнман А.Ф.** Основные вопросы теории доказательств в советском гражданском процессе. М., 1950.

37. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М.С. Шакарян. М.: «Кодекс», 2003.
38. **Курyleв С.В.** Основы теории доказывания в советском правосудии. Минск, 1969.
39. **Лим А.А.** Некоторые проблемы института раскрытия доказательств в арбитражном процессе // Журнал российского права, 2007, № 8.
40. **Макаров П.** Механизм концентрации процессуального материала как судейский инструмент по обеспечению своевременного разрешения судебных споров (опыт Германии) // Арбитражный и гражданский процесс, 2009, № 10,11,12.
41. **Новицкий В.А.** Теория российского процессуального доказывания и правоприменения. Монография. -Ставрополь, изд. СГУ, 2002.
42. **Перетерский И.С.** Очерки судоустройства и гражданского процесса иностранных государств. М., 1952.
43. **Перетерский И.С.** Дигесты Юстиниана: Избранные фрагменты. М., 1984.
44. **Решетникова И.В.** Доказательственное право Англии и США. М.: «Городец», 1999.
45. **Решетникова И.В., Ярков В.В.** Гражданское право и гражданский процесс в современной России. Екатеринбург, 1999.
46. **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе. М.: «Юрайт», 2010.
47. **Сахнова Т.В.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008.
48. **Сахнова Т.В.** Судебная экспертиза. М., 2000.
49. **Сериков Ю.А.** Презумпции в гражданском

- судопроизводстве. М.: «Волтерс Клувер», 2006.
50. Теория правосудия. В 3-х томах. **Фурсов Д.А., Харламова И.В.** Т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия. М.: «Статут», 2009.
51. **Ткачев Н.И.** Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам. Саратов, 1987.
52. **Треушников М.К.** Судебные доказательства. М., 1999.
53. **Треушников М.К.** Судебные доказательства. М., 2004.
54. **Шамшурин Л.** О диспозитивности и злоупотреблении процессуальными правами в состязательном процессе в сфере гражданской юрисдикции: вопросы теории и практики // Арбитражный и гражданский процесс, 2009, № 12.
55. **Юдельсон К.С.** Курс советского гражданского процессуального права. Т. 1. М., 1981 // www.allpravo.ru, 2005.
56. **Юдельсон К.С.** Проблема доказывания в советском гражданском процессе. М., 1951 // www.allpravo.ru, 2005.
57. **Яблочков Т.М.** К учению о принципе диспозитивности в гражданском процессе. Казань, 1917 // www.allpravo.ru, 2005.

ИСТЕЦЫ И ИССЛЕДОВАТЕЛИ В ЧУЖДОМ

58. **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. ... д.ю.н. М., 2005:
59. **Нахова Е.А.** Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию.

Автореф. дисс... к.ю.н. - Саратов, СГУ, 2006.

60. **Кузнецова О.А.** Презумпции в российском гражданском праве. Автореф. дисс... к.ю.н. Екатеринбург, 2002.
61. **Фильченко Д.Г.** Современные проблемы подготовки дела к судебному разбирательству в арбитражном процессе Российской Федерации. Дис. ... к.ю.н. Воронеж, 2005.
62. **Шилов А.В.** Подготовка дела к судебному разбирательству в арбитражном процессе. Дис. ... к.ю.н. Томск, 2004.

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԼՅՈՒԹԵՐ

63. ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշումը «Քաղաքացի Լարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:
64. Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով ՄԻԵԴ 12.07.1988 թ.-ի վճիռը:
65. Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի ՄԻԵԴ 25.02.1993 թ.-ի վճիռը:
66. «Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով» ՄԻԵԴ 23.10.1996 թ.-ի վճիռը:
67. Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Լիդերլանդների գործով ՄԻԵԴ 23.04.1997 թ.-ի վճիռը:
68. Բարբուլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ 28.10.1999 թ. վճիռը, գանգատ թիվ 28342/95:
69. P.G. և J.H. ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ 25.09.2001 թ. վճիռը, գանգատ թիվ 44787/98:
70. Վան Վոնդելն ընդդեմ Լիդերլանդների գործով ՄԻԵԴ՝ 25.10.2007 թ. վճիռը, գանգատ թիվ 38258/03:

71. Կարին Կեպլեն ընդդեմ Գերմանիայի գործով ՄԻԵԴ 05.10.2010 թ. վճիռը, գանգատ թիվ 420/07:
72. Անտովիչը և Միրկովիչն ընդդեմ Մոնտենեգրոյի գործով ՄԻԵԴ 28.11.2017 թ. վճիռը, գանգատ թիվ [70838/13](#):
73. Լոպես Ռիբալդան և այլոք ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 17.10.2019 թ.-ի վճիռը, գանգատ թիվ [1874/13](#) և [8567/13](#):
74. Վճռաբեկ դատարանի թիվ 3-34(ՎԴ) քաղաքացիական գործով 26.01.2007 թ.-ի որոշումը:
75. Վճռաբեկ դատարանի թիվ 3-259 (ՎԴ) քաղաքացիական գործով 02.03.2007 թ.-ի որոշումը:
76. Վճռաբեկ դատարանի թիվ 3-299/ՏԴ քաղաքացիական գործով 01.06.2007 թ.-ի որոշումը:
77. Վճռաբեկ դատարանի թիվ 3-1848(ՎԴ) քաղաքացիական գործով 25.12.2007 թ.-ի որոշումը:
78. Վճռաբեկ դատարանի թիվ 3-346(ՏԴ) քաղաքացիական գործով 18.05.2007 թ.-ի որոշումը:
79. Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը:
80. Վճռաբեկ դատարանի թիվ 3-132 (ՎԴ) քաղաքացիական գործով 27.03.2008 թ. որոշումը:
81. Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԴ) քաղաքացիական գործով 23.04.2008 թ.-ի որոշումը:
82. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/2177/02/08 քաղաքացիական գործով 27.05.2008 թ.-ի որոշումը:
83. Վճռաբեկ դատարանի թիվ 3-459/ՎԴ քաղաքացիական գործով 25.07.2008 թ.-ի որոշումը:
84. Վճռաբեկ դատարանի թիվ 3-657 (ՎԴ) քաղաքացիական գործով 28.11.2008 թ.-ի որոշումը:
85. Վճռաբեկ դատարանի թիվ 0351/02/08-(ՇԴ)2008 քաղաքացիական գործով 31.10.2008 թ.-ի որոշումը:
86. Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0681/02/08 քաղաքա-

- ցիական գործով 13.02.2009 թ.-ի որոշումը:
87. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով 13.02.2009 թ.-ի որոշումը:
 88. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0020/02/08 քաղաքացիական գործով 12.04.2009 թ.-ի որոշումը:
 89. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ2/0049/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը:
 90. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ1/0207/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը:
 91. Վճռաբեկ դատարանի թիվ ԵՔԴ/0636/02/08 քաղաքացիական գործով 16.10.2009 թ.-ի որոշումը:
 92. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1452/02/09 քաղաքացիական գործով 04.03.2011 թ.-ի որոշումը:
 93. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3494/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ.-ի որոշումը:
 94. Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1406/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ.-ի որոշումը:
 95. Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ3/0133/02/09 քաղաքացիական գործով 05.04.2013 թ. որոշումը:
 96. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով 24.05.2013 թ. որոշումը:
 97. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թ. որոշումը:
 98. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1107/02/16 քաղաքացիական գործով 08.01.2019 թ. որոշումը:
 99. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0303/02/15 քաղաքացիական գործով 20.06.2017 թ. որոշումը:
 100. Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0002/01/18 քրեական գործով 11.04.2019 թ. որոշումը:

Մեղրյան Սերգեյ Գուրգենի
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
meghryan@ysu.am

**ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Мегрян Сергей Гургенович
кандидат юридических наук, доцент
meghryan@ysu.am

**ДОКАЗЫВАНИЕ И ДОКАЗАТЕЛЬСТВА
В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**



Երևան
Արդարադատության ակադեմիա
2020

Հանձնվել է տպագրության 03.03.2020:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ծավալը՝ 21.4 տպ. մամուլ: